Ծավալուն և հետևողական աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ մասնաշենքերին հարող պուրակներում, որտեղ բարձր մակարդակով կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման աշխատանքներ:

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Ժամհարյան Հրանտ Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ*

Վարչության գործունեության հիմնական գործառույթներն են՝

- բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի պլանավորում, կազմակերպում և վերահսկում,
- համալսարանական կրթության ներքին որակի ապահովմանն առնչվող գործառույթների համակարգում և վերահսկում,
- ուսումնական գործընթացին մասնակցող ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի համակարգում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում և կատարման վերահսկում,
- ամբիոնային ուսումնական բեռնվածությունների ստուգում և կատարման վերահսկում,
- ժամավճարային հիմունքներով աշխատողների ձևակերպում և հաշվառում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի դասատախտակների ստուգում և ուսումնական գործընթացի ապահովում լսարանային ֆոնդով,
- ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների օպտիմալացում,
- առկա և հեռակա ուսուցման դասերի կայացման վերահսկում,
- ֆակուլտետային կուրատորների և մագիստրոսական ծրագրերի ղեկավարների աշխատանքների կոորդինացում,
- ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում,
- պետական քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,
- ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում,
- մագիստրատուրայի և 2-րդ մասնագիտության գծով առկա և հեռակա ուսուցման ընդունելության կազմակերպում,
- դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կազմակերպում,
- ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կազմակերպում,
- ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպում,
- ուսանողների շարժի հետ կապված (ընդունելության, հեռացման, ուսանողական իրավունքների վերականգնման, տեղափոխության, տարկետման և այլն) գործընթացի կազմակերպում, հրամանագրում և վերահսկում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի անվճար-վճարովի համակարգում ուսանողների փոխատեղման /ռոտացիա/ անցկացում, ուսման վարձի զեղչման գործընթացի կազմակերպում, ձևակերպում և ամփոփում,
- վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,
- ԵՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների համար տվյալների նախապատրաստում,
- Կրթության և գիտության նախարարության համար ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվա-վիճակագրական տվյալների նախապատրաստում,
- ուսանողների տվյալների հենքի ստեղծում և պահպանում,
- ուսումնական պլանների, դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ստուգարքային և քննական տեղեկագրերի ու դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգով գործընթացի կազմակերպում:

Վարչության կազմում գործում են 5 բաժիններ.

- Բակալավրիատի
- Մագիստրատուրայի
- Կազմակերպչական
- Համալսարանական կրթության որակի ապահովման և վերահսկման
- Պրակտիկայի

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում վարչությունն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

❖ Ուսանողների և դասախոսների իրազեկության մակարդակի բարձրացման և համալսարանական կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար հաշվետու տարում վերահրատարակվել են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, որոնք ներկայացվել են նաև լազերային սկավառակի տեսքով և տրամադրվել բակալավրիատի ու մագիստրատուրայի առաջին կուրսեցիներին: Առաջնորդվելով Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան չափորոշիչներով, այն է՝ կարևորելով ուսանողների ինքնուրույն աշխատանքը, պակասեցվել է նրանց շաբաթական բեռնվածությունը, հստակեցվել է քննությունների քանակը:

❖ Կրեդիտային համակարգի ներդրման շրջանակներում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ կապված բակալավրի և մագիստրոսի պատրաստման հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի հետ: Մասնավորապես ԵՊՀ գիտխորհրդի նիստում քննարկվել և հաստատվել են հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, ԿԳՆ է ներկայացվել հեռակա ուսուցմամբ մագիստրոսական կրթական ծրագրի փաթեթը՝ մագիստրատուրայում հեռակա ուսուցման գործընթացի կազմակերպման թույլտվություն ստանալու համար:

Վարչության մեթոդական աջակցությամբ ֆակուլտետների բակալավրիատի հեռակա ուսուցմամբ ուսումնական պլանները ևս կազմվել են կրեդիտային համակարգին համապատասխան:

❖ Ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցությունն օպտիմալացնելու, մասնագիտությունների ուսումնական, աշխատանքային ուսումնական պլանները գործող չափորոշիչներին համապատասխանեցնելու, ամբիոնների բեռնվածությունները սահմանված նորմերով կազմելու նպատակով ավտոմատացման աշխատանքները հասցվել են վերջնական փուլին:

❖ Հաշվետու տարում բակալավրիատի և մագիստրատուրայի գործող բոլոր ուսումնական պլանները մուտքագրվել են ՏՏԿՀ կենտրոնում մշակված SuperVisionYSU (SVYSU) ծրագրում, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնելու ուսումնական աշխատանքային պլանների և ամբիոնային բեռնվածությունների կազմման գործընթացը: Նշվածը իրականացնելու նպատակով ֆակուլտետների դեկանատների աշխատակիցների համար կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ և խորհրդատվություններ:

Գործընթացի արդյունավետությամբ պայմանավորված՝ էլեկտրոնային ավտոմատացված տեղեկատվական կառավարման համակարգը ներդրվեց նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

❖ Կրթության որակի բարելավման նպատակով շարունակվել են հետևողական աշխատանքները պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրանց աշխատածավալների օպտիմալացման, ինչպես նաև լսարանային ֆոնդի արդյունավետ օգտագործման և դասերի իրականացման ուղղությամբ:

Հետևողական աշխատանքներ են կատարվել հիմնական և համատեղող պրոֆեսորադասախոսական կազմի փաստաթղթերի ձևակերպման, նրանց կատարողականի վերահսկման, ուսումնական գործընթացի իրականացման, ուսանողների և դասախոսների բացակայությունների գրանցման և ամփոփման առումով:

❖ Հաշվետու ժամանակահատվածում մասնակի փոփոխության է ենթարկվել ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը՝ առաջադիմության նկատմամբ առավել խիստ պահանջներով:

❖ Հաշվետու տարում վերամշակվել և փոփոխվել են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը և հարցաշարը, ինչպես նաև մշակվել է նոր կանոնակարգ ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման համար, և վերամշակվել է համապատասխան հարցաշարը, որոնք այնուհետև հաստատվել են ԵՊՀ գիտխորհրդում:

Ինչպես և նախորդ, այնպես էլ այս ուստարում ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին շարունակվել է ուսանողական նպաստների հատկացումը: 2009-2010 ուստարվա առաջադիմության արդյունքներով նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 2488

ուսանողների, որոնցից 684-ը՝ բակալավրիատի 1-ին կուրսում, 705-ը՝ 2-րդում, 702-ը՝ 3-րդում, իսկ 397-ը՝ մագիստրատուրայի 1-ին կուրսում: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատի 1-ին կուրսի 293 ուսանող (42,8%), 2-րդ կուրսի՝ 136 (19,2%), 3-րդ կուրսի՝ 134 (19,1%) և 97 ուսանող (24,8%) մագիստրատուրայի 1-ին կուրսում:

Բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին հատկացվել է նաև կրթաթոշակ: Բացի պետական կրթաթոշակից՝ հատկացվում են ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված կրթաթոշակներ: 2009-2010 ուստարում 57 ուսանողներ արժանացել են այդպիսի կրթաթոշակների:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից օգտվել են 3660 ուսանողներ, որոնցից 2936-ը՝ բակալավրիատից, 402-ը՝ մագիստրատուրայից և 322-ը՝ աշխատակիցների երեխաներ: Կիրառված զեղչերի գումարը կազմում է մոտավորապես 239.8 մլն դրամ:

Կատարված գործընթացը, ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների, մանրամասն ներկայացվել է առանձին գրքով:

Զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով Ուսումնամեթոդական վարչության կողմից շարունակվել են առաջադիմության վերահսկման աշխատանքները ՏՏԿՀ կենտրոնում մշակված համապատասխան ծրագրով: ՏՏԿՀ կենտրոնում քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ֆակուլտետների դեկանատների աշխատակիցների հետ շարունակվել են ուսուցողական աշխատանքները՝ միտված համակարգչային ծրագրից օգտվելու հմտությունների զարգացմանը: Տվյալների մշակումն ու վերահսկումը կազմակերպվում են Ուսումնամեթոդական վարչության համալսարանական կրթության որակի ապահովման և վերահսկման բաժնում գործող ներքին ցանցի միջոցով:

❖ Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2009-2010 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 3832 դիպլոմ, որոնցից 2418-ը՝ բակալավրիատում, 1275-ը՝ մագիստրատուրայում, 139-ը՝ 5-րդ կուրսեցիներին (Իրավագիտության, Քիմիայի և Տնտեսագիտության ֆակուլտետներ): Վերականգնվել և տրվել է շրջանավարտների 18 դիպլոմի կրկնօրինակ:

❖ Համալսարանական կրթության զարգացման բաժնի հետ համատեղ մշակվել, տպագրվել և բակալավրիատի ու մագիստրատուրայի շրջանավարտներին է հանձնվել միջազգային չափանիշներին համապատասխան երկլեզու (հայերեն և անգլերեն) տարբերակով դիպլոմի նոր հավելված:

❖ Ընթացիկ տարում հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերահսկման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

❖ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ է ներկայացվել 3-ԳՄ ձևաչափով վիճակագրական հաշվետվությունը, որը ներառում է քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն:

❖ Հաշվետու տարում մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանի արդյունքների տվյալները:

❖ Որպես ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրատարր՝ հաշվետու ուսումնական տարում ևս, համաձայն հաստատված ուսումնական պլանների, համապատասխան հաստատությունների, հիմնարկների հետ կնքված պայմանագրերի, կազմակերպվել են ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաներ: Դրանց նախորդել են նախապատրաստական համապատասխան աշխատանքները: Այս գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ֆակուլտետներում պրակտիկայի ղեկավարների անմիջական մասնակցությամբ կազմակերպվել են ժողովներ, խորհրդակցություններ և սեմինարներ:

Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա են անցել 4194 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա՝ 1883 ուսանող, որոնցից 931-ը՝ դաշտային:

❖ 2009-2010 ուստարում աշխատանքներ են իրականացվել արտասահմանյան դրամաշնորհային նախագծերի, գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում:

Արտասահմանյան դրամաշնորհային նախագծերն իրականացվել են Եվրամիության «Տեմպուս» ծրագրի կողմից օժանդակվող «Որակի ապահովման ներքին համակարգը ՀՀ բարձրագույն կրթության հաստատություններում» (Միասնական եվրոպական ծրագրի շրջանակներում) և «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան» ծրագրի կողմից օժանդակվող «Որակի ապահովման ներքին համակարգի շրջանակային մոդել՝ միջբուհական կոնսորցիումի օրինակով»:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Որակի ապահովման ներքին համակարգը ՀՀ բարձրագույն կրթության հաստատություններում (JEP-27178-2006):	Գրիգորյան Ա. Կ.
2. Որակի ապահովման ներքին համակարգի շրջանակային մոդել՝ միջբուհական կոնսորցիումի օրինակով (OSIAF-Armenia N 15885):	Գրիգորյան Ա. Կ.

Թեմա 1. Նախագծի նպատակը որակի ապահովման եվրոպական չափանիշներին համապատասխան ԵՊՀ որակի ապահովման ներքին համակարգի ստեղծումն է: Այն իրականացվել է հայաստանյան և եվրոպական համալսարանների հետ համագործակցության շրջանակներում: Նախագծի արդյունքում մշակվել է ԵՊՀ որակի ապահովման քաղաքականությունը և համապատասխան ռազմավարությունը, ինչն արտահայտված է «ԵՊՀ 2009/10-2013/14 ուստարիների զարգացման ռազմավարական ծրագրում»: ԵՊՀ որակի ապահովման մշակված ներբուհական համակարգը բաղկացած է 6 հիմնական կառուցամասերից. կրթական ծրագրերի որակի ապահովում, դասախոսական կազմի որակի ապահովում, ուսումնառության և ուսումնաօժանդակ ռեսուրսների որակի ապահովում, ուսանողների գնահատման թափանցիկ համակարգ, ներքին տեղեկատվական համակարգեր և արտաքին տեղեկատվական համակարգեր:

Նախագծի իրականացման արդյունքում պատրաստվել և հրապարակվել է «Որակի ներքին ապահովման հենքի մշակում ՀՀ բուհերի համար» զեկույցը, որն ամփոփում է ծրագրի հիմնական արդյունքները, ուղենիշային ցուցումների և երաշխավորությունների տեսքով՝ ուղղված որակի ներքին ապահովման բուհական քաղաքականության կազմակերպական մոդելների, մեթոդաբանության և ընթացակարգերի մշակման հարցերին:

Նախագծի շրջանակներում 2009 թ-ի հոկտեմբերի 5-6-ը կազմակերպվել է «Որակի բարելավում. Փորձը, մարտահրավերները և հեռանկարները Հայաստանի բարձրագույն կրթության համար» միջազգային գիտաժողովը: Վերոնշյալ զեկույցը և գիտաժողովի նյութերի ժողովածուն տպագրվել և տրամադրվել է ինչպես ԵՊՀ կառույցներին, այնպես էլ հանրապետության բուհական հանրությանը:

Թեմա 2. Նախագիծն իրականացվել է «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան» մասնաճյուղի «Որակի ապահովման ներքին համակարգի շրջանակային մոդել՝ միջբուհական կոնսորցիումի օրինակով» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Այն կոչված էր վերլուծելու, համադրելու և ի մի բերելու նախագծի մասնակից բուհերի (ԵՊՀ, ՀՊՃՀ, ՎՊՄԻ և ԵՊԲՀ) մշակումներն ու եվրոպական նորագույն փորձը որակի ներքին ապահովման ասպարեզում և այս հիմքի վրա ընդհանուր մեթոդաբանական հենք ու կառուցվածքային-կազմակերպական սկզբունքներ մշակելում՝ որակի ներքին ապահովման նորաստեղծ համակարգերի համար: Վերոնշյալ հիմնադրույթներն արտացոլվել են «Որակի ապահովման բուհական համակարգեր» ուղեցույցում, որը ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից երաշխավորվել է տպագրության և հրատարակվել 2009 թ-ին:

Ուղեցույցը հղվել է հանրապետության բուհերին և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող պետական կառույցներին:

Վերոնշյալ թեմաների իրագործումը կատարվել է Համալսարանական կրթության զարգացման բաժնի հետ համատեղ:

ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Գալստյան Վաչագան Սարգսի*

2009-2010 ուստարում Մինչհամալսարանական կրթության վարչությունը ժողովրդագրական բացասական միտումների պայմաններում դիմորդների հոսքի պահպանման նպատակով ընդլայնել և ակտիվացրել է ԵՊՀ-ի գովազդարշավը ՀՀ հանրակրթական հաստատություններում (հիմնական և ավագ դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, կրթահամալիրներ)՝ այդ գործընթացում առավելագույնս ներգրավելով ԵՊՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումները, ուսանողական կառույցները և շահագրգիռ այլ կազմակերպություններ: Ծավալուն աշխատանք է կատարվել ԵՊՀ-ի և հանրակրթական հաստատությունների միջև՝ փոխադարձ կապի ամրապնդման և դպրոց-բուհ համակարգի շարունակական կրթության սկզբունքի ապահովման ուղղությամբ: Հաշվետու ուստարում մայրաքաղաքի և մարզերի ավելի քան 160 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար վարչության աշխատակիցները ԵՊՀ բոլոր ֆակուլտետների դեկանների և պրոֆեսորադասախոսական կազմի ամենափորձառու անդամների աջակցությամբ կազմակերպել են ակնարկային դասախոսություններ:

ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգն ակտիվացնելու, անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով նախապատրաստվել և 2500 տպաքանակով հրատարակվել է «Դիմորդի ուղեցույց - 2010» ձեռնարկը, որը պարունակում է բավականաչափ տեղեկություններ ԵՊՀ ֆակուլտետների, մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և Իջևանի մասնաճյուղի մասին: Միևնույն նպատակով պատրաստվել է նաև ԵՊՀ ֆակուլտետների մասին պատմող տեսասկավառակ՝ ավելի քան 1500 հատ: Ուղեցույցներն և սկավառակներն անվճար բաժանվել են հանրապետության բոլոր հանրակրթական հաստատություններին:

Խիստ կարևորելով հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ վարչությունը ուստարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի շուրջ 50 դպրոցների 1700 աշակերտների համար կազմակերպել է «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր համալսարան՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով հանդիպելու համալսարանի և ֆակուլտետների ղեկավարության ու դասախոսական կազմի հետ, ծանոթանալու ուսումնական ծրագրերին և ուսումնառության առկա հնարավորություններին:

Արդեն ավանդական է դարձել հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաների անցկացումը ԵՊՀ-ում: 2010 թվականի օլիմպիադան կազմակերպվեց 14 հանրակրթական առարկաների գծով և անցկացվեց 2 փուլով. առաջին փուլը՝ Գյումրիում, որին մասնակցեցին Շիրակի, Արագածոտնի, Լոռու մարզերի և Ջավախքի 346 աշակերտներ, իսկ երկրորդ փուլը՝ ԵՊՀ-ում, որին մասնակցեցին Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի 856 աշակերտներ: Համեմատության համար նշենք, որ օլիմպիադայի մասնակիցների թիվը նախորդ տարի 600 էր: Օլիմպիադայի հաղթող 200 մասնակից ԵՊՀ ղեկավարության կողմից հանդիսավոր պայմաններում պարգևատրվել են I, II, III կարգի դիպլոմներով, գովասանագրերով և արժեքավոր գրքերով:

Դիմորդների հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են նաև հանրակրթական առարկաների գծով անցկացված հանրապետական օլիմպիադայի փակմանը և Գյումրիում կազմակերպված վարժարանային օլիմպիադային, որտեղ հաղթողները ԵՊՀ-ի կողմից պարգևատրվել են շուրջ 200 անուն գրքերով:

Կարևորելով համալսարանի և նոր կազմավորված ավագ դպրոցների համատեղ կրթական գործունեությունը՝ ավարտական դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման, բուհ ընդունվելուն նախապատրաստելու և ճանաչողական այլ գործունեություն իրականացնելու վերաբերյալ վարչությունը հաշվետու տարում ՀՀ 35 ավագ դպրոցների և վարժարանների հետ կնքել է երկարաժամկետ համաձայնագրեր:

Այժմ աշխատանք է տարվում այդ դպրոցներում բազային դասարանների ստեղծման և դրանց ու ԵՊՀ ֆակուլտետների միջև սերտ կապեր հաստատելու ուղղությամբ: Վարչության աշխատանքային ծրագրերում

ներառված է նաև դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով հենակետերի (հավաքագրման մշտական ծառայություններ) ստեղծումը հանրապետության բոլոր մարզերում:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես էլ 2009-2010 ուստարում վարչությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար կատարել է մշտական տեղեկատվական աշխատանք՝ մեծապես օժանդակելով ԵՊՀ 2010թ. ընդունելության կազմակերպման գործընթացին:

Վերոնշյալ համալիր աշխատանքների շնորհիվ է նաև վերջին 4 տարիներին ապահովվել ԵՊՀ դիմորդների թվի անընդհատ աճը: Որպես օրինակ՝ նշենք միայն այն փաստը, որ այս տարվա ընդունելության ժամանակ վերջին 10 տարիների կտրվածքով գրանցվեց դիմորդների ամենամեծ թիվը՝ ավելի քան 4800 հոգի, և դա այն դեպքում, երբ ՀՀ պետական բուհեր հայտագրած դիմորդների թիվը, անցած տարվա համեմատ, նվազել էր շուրջ 1700-ով:

Հաշվետու տարում վարչությունը ձգտել է կատարելագործել նախապատրաստական դասընթացների համակարգը՝ այդ նպատակով, ըստ կրթական ծրագրերի, ձևավորելով դասընթացների լայն ընտրանի և ապահովելով դրանց իրականացման ճկուն ժամանակացույցները:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու, ինչպես նաև 70 ունկնդիրների համար ավարտական քննությունների թեստեր պատրաստելու նպատակով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առավել հմուտ և փորձառու ներկայացուցիչներից ձևավորվել է փորձագիտական խորհուրդ՝ ըստ հանրակրթական առանձին առարկաների:

Ունկնդիրների ուսուցումը նույնպես կազմակերպվել է փորձագիտական խորհրդի կողմից նախապես քննարկված և հաստատված ուսումնական պլաններով:

Այստեղ դասավանդվող բոլոր առարկաներից 2010թ. փետրվար ամսին կազմակերպվել և անց են կացվել ստուգարքներ, ապրիլին՝ ստուգողական գրավոր աշխատանքներ, իսկ հունիսի վերջին տասնօրյակում՝ ավարտական քննություններ:

Ունկնդիրներից 15-ը, բարեհաջող հանձնելով 2010թ. ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել է ուսուցման առկա համակարգ, իսկ նրանցից 49-ը՝ հեռակա համակարգ:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Աղասյան Ժաամեն Արտաշեսի*

Կրթական ծրագրերը՝ որակավորման բարձրացում
մասնագիտական վերապատրաստում
կրթական ծառայություններ

2009-2010 ուսումնական տարում Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը երեք կրթական ծրագրերով իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Ա. ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

1. Ունկնդիրների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ունկնդիրների թիվը		
		ընդամենը	ԵՊՀ-ից	այլ հաստատություններից
1.	Որակավորման բարձրացում	215	208	7
2.	Մասնագիտական վերապատրաստում	254	-	254
3.	Կրթական ծառայություններ	20	20	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	**489**	**228**	**261**

1.1. ԵՊՀ և այլ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացում՝ ըստ մասնագիտությունների

Հ/հ	Մասնագիտության անվանումը	Ունկնդիրների թիվը			Ծանոթություն	
		ընդամենը	որից		ատենախոս. պաշտ.	ԵՊՀ-ից դուրս
			ԵՊՀ-ից	այլ բուհերից		
1.	Մաթեմատիկա	10	10	-	-	-
2.	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	1	1	-	-	-
3.	Ֆիզիկա	13	13	-	-	-
4.	Քիմիա	8	7	1	-	-
5.	Կենսաբանություն	7	7	-	-	-
6.	Երկրաբանություն	7	7	-	-	-
7.	Փիլիսոփայություն	8	8	-	-	-
8.	Հոգեբանություն	8	8	-	-	-
9.	Տնտեսագիտություն	11	10	1	1	-
10.	Պատմություն	13	13	-	-	-
11.	Հայոց լեզու	12	11	1	-	-
12.	Գրականագիտություն	11	11	-	-	-

13.	Ռուսաց լեզու	54	53	1	-	-
14.	Անգլիական բանասիրություն	34	34	-	1	-
15.	Իսպանական բանասիրություն	9	8	1	-	-
16.	Ֆրանսիական բանասիրություն	9	7	2	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	**215**	**208**	**7**	**2**	-

1.2. Մասնագիտական վերապատրաստում՝ ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ունկնդիրների թիվը		
		ընդամենը	որից	
			ԵՊՀ-ից	այլ հաստա-տություններից
1.	ՀՀ պաշտպանության նախարարության քաղաքացիական հատուկ ծառայողների վերապատրաստում	55	-	55
2.	ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստում	84	-	84
3.	«Անշարժ գույքի գնահատում» մասնագիտական որակավորման և վերարակավորման դասընթացներ	98	-	98
4.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	17	-	17
	ԸՆԴԱՄԵՆԸ	**254**	**-**	**254**

1.3. Կրթական ծառայություններ

Հ/հ	Դասընթացի անվանումը	Ունկնդիրների թիվը		
		ընդամենը	որից	
			ԵՊՀ-ից	այլ հաստատություններից
1.	Համակարգչագիտության հիմունքներ	20	20	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	**20**	**20**	**-**

Բ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ժամաքանակը		
		ընդամենը	բեռնված.	ժամավճար
	Ա. Դասախոսների որակավորման բարձրացում	**2 434**	**144**	**2 290**
	Բ. Մասնագիտական վերապատրաստում	**2 252**	**-**	**2 252**
1.	ՀՀ քաղծառայողների վերապատրաստում	413	-	413
2.	«Անշարժ գույքի գնահատում» մասնագիտական որակավորման և վերարակավորման դասընթացներ	591	-	591
3.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	1 248	-	1 248
	Գ. Կրթական ծառայություններ	**60**	**-**	**60**
	Վարչական աշխատանք	**60**	**-**	**60**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**4 806**	**144**	**4 662**

2. Ըստ դասավանդողների մասնագիտությունների

Հ/հ	Մասնագիտության անվանումը	Ժամաքանակը		
		ընդամենը	որից	
			բեռնվածություն	ժամավճար
1.	Հոգեբանություն	1 239	-	1 239
2.	Տնտեսագիտություն	533	-	533
3.	Կենսաբանություն	263	-	263
4.	Անգլիական բանասիրություն	377	144	233
5.	Վարչական աշխատանք	231	-	231
6.	Ֆիզիկա	219	-	219
7.	Ռուսաց լեզու	215	-	215
8.	Փիլիսոփայություն	187	-	187
9.	Ռոմանական բանասիրություն	187	-	187
10.	Մաթեմատիկա	169	-	169
11.	Պատմություն	161	-	161
12.	Հայոց լեզու	160	-	160
13.	Երկրաբանություն	143	-	143
14.	Իրավագիտություն	142	-	142
15.	Գրականագիտություն	139	-	139
16.	Քաղաքացիական ծառայություն	138	-	138
17.	Քիմիա	124	-	124
18.	Կրթական ծառայություններ	60	-	60
19.	Սոցիոլոգիա	55	-	55
20.	Գերմանական բանասիրություն	32	-	32
21.	Ժուռնալիստիկա	16	-	16
22.	Միջազգային հարաբերություններ	16	-	16
	ԸՆԴԱՄԵՆԸ	**4 806**	**144**	**4 662**
	որից՝ ԵՊՀ դասախոսներ	**4 187**	**144**	**4 043**
	հրավիրված դասախոսներ	**619**	**-**	**619**

Գ. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

1. Ըստ մասնագիտությունների և գիտական աստիճանների

Հ/հ	Մասնագիտության անվանումը	Դասախոսների թիվը			
		ընդամենը	որից		
			գիտություններ դոկտոր	գիտություններ թեկնածու	գիտական աստիճան չունեցող
1.	Ֆիզիկա	14	14	-	-
2.	Կենսաբանություն	15	14	1	-
3.	Մաթեմատիկա	9	6	3	-
4.	Պատմություն	8	6	2	-
5.	Քիմիա	7	6	1	-
6.	Տնտեսագիտություն	22	5	16	1

7.	Հայոց լեզու	4	4	-	-
8.	Գրականագիտություն	6	4	2	-
9.	Փիլիսոփայություն	7	4	3	-
10.	Երկրաբանություն	14	4	10	-
11.	Հոգեբանություն	17	3	9	5
12.	Անգլիական բանասիրություն	8	3	5	-
13.	Գերմանական բանասիրություն	1	1	-	-
14.	Ռուսաց լեզու	16	1	11	4
15.	Ռոմանական բանասիրություն	6	-	6	-
16.	Իրավագիտություն	3	-	3	-
17.	Սոցիոլոգիա	4	-	3	1
18.	Միջազգային հարաբերություններ	4	-	3	1
19.	Ժուռնալիստիկա	1	-	1	-
20.	Քաղաքացիական ծառայություն	6	-	-	6
21.	Վարչական աշխատանք	4	-	-	4
22.	Կրթական ծառայություններ	1	-	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	**177**	**75**	**79**	**23**
	որից՝ ԵՊՀ դասախոսներ	**164**	**75**	**75**	**14**
	հրավիրված դասախոսներ	**13**	**-**	**4**	**9**

Հաշվետու ժամանակաշրջանում վարչության պետը մասնակցել է լրացուցիչ մասնագիտական կրթության զարգացման հարցերին նվիրված հետևյալ միջազգային գիտաժողովներին.

ա) 2010 թ-ի ապրիլի 26-ից 28-ը Հանքավանում կայացած «Հետբուհական և շարունակական կրթության հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտական գիտաժողովին՝ «Լրացուցիչ մասնագիտական կրթության որակի ապահովման խնդիրները» զեկուցումով,

բ) 2010 թ-ի հունիսի 16-ից 18-ը Երևանում կայացած «Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիայի» գլխավոր համաժողովին և «Մասնագիտական կրթություն և ուսումնառություն մեծահասակների և երիտասարդների համար» միջազգային գիտաժողովին,

գ) 2010 թ-ի հուլիսի 1-ից 16-ը ԳԴՀ Կոբլենց քաղաքում TEMPUS IV նախագծի շրջանակներում կայացած «Հանրային կառավարման մարմինների վարչական աշխատողների վերապատրաստման կրթական կենտրոնների ցանցի ստեղծում» ծրագրով ամառային դպրոցի դասընթացներին:

2009-2010 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	1	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Աղասյան Ժ. Ա.,* Լրացուցիչ մասնագիտական կրթության որակի ապահովման խնդիրները, «Հետբուհական և շարունակական կրթության հիմնախնդիրները» միջազգային գիտական գիտաժողովի հոդվածների ժողովածու, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 46-50:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի, քաղ. գիտ. դոկտոր, դոցենտ*

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 175 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց շարքում են՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը (Ռուսաստան), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանը (Ռուսաստան), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի համակարգային ծրագրավորման ինստիտուտը (Ռուսաստան), Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը (Ռուսաստան), Բոլոնիայի համալսարանը (Իտալիա), Ռոստոկի համալսարանը (Գերմանիա), Տրիերի համալսարանը (Գերմանիա), Կա'Ֆոսկարի համալսարանը (Իտալիա), Փոլ Վալերի համալսարանը (Մոնպելիե-III) (Ֆրանսիա), Արևելյան լեզուների և մշակույթների ազգային ինստիտուտը (Ֆրանսիա), Մոնպելիե-I համալսարանը (Ֆրանսիա), Կալիֆորնիայի համալսարանը, (Բերկլի, ԱՄՆ), Անն-Արբոր Միչիգանի համալսարանը (ԱՄՆ), Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանը (Հունաստան), Վարշավայի համալսարանը (Լեհաստան), Կահիրեի համալսարանը (Եգիպտոս), Հալեպի համալսարանը (ՍԱՀ), Ի. Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանը (Վրաստան) և այլն:

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել են 15 (վերակնքվել 1) պայմանագրեր բուհերի, հետազոտական կենտրոնների, հիմնադրամների և ընկերությունների հետ:

Դրանք են՝

- Հյուսիսարևելյան պետական համալսարան, Ռուսաստան
- Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան, Ռուսաստան
- Սանկտ Պետերբուրգի ինժեներատնտեսագիտական համալսարան, Ռուսաստան
- Ազգային դեղագործական համալսարան, Խարկով, Ուկրաինա
- Բեռլինի ազատ համալսարան, Գերմանիա
- Մենեջմենթի և տնտեսագիտության համալսարան, Վիլնյուս, Լիտվա
- Զիգենի համալսարան,Գերմանիա
- Հալեպի համալսարան, ՍԱՀ
- Ղազախստանի պետական տեխնիկական համալսարան, Ղազախստան
- Պրովանսի համալսարան (Մարսել I), Ֆրանսիա
- «Երևան» գիտական փոխհամագործակցության կենտրոն, Իրաք
- Ախալցխայի պետական կրթական համալսարան, Վրաստան
- Ջորջ-Ավգուստ Գոթթինգեն համալսարան, Գերմանիա
- Տաջիկստանի ազգային համալսարան, Տաջիկստան
- Ստավանգերի համալսարան, Նորվեգիա *(վերակնքվել է)*

Ինչպես և նախորդ տարիներին, այնպես էլ 2009-2010 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միևնույն ժամանակ ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպման գործում աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպություններին և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանություններին:

ԵՊՀ-ի և արտասահմանյան համալսարանների ու հաստատությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում հաշվետու տարում կազմակերպվել են փոխայցելություններ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի հետաքրքրության ոլորտներ, իրականացվել են ճանաչողական այցեր՝ դրանով իսկ ամրապնդելով և էլ ավելի զարգացնելով արդեն առկա համագործակցությունները:

Այսպես՝

- ԵՊՀ-ի և Անտվերպենի համալսարանի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում 2009թ. սեպտեմբերի 11-ից 21-ը Անտվերպենի համալսարանից ԵՊՀ են ժամանել 10 ուսանողներ՝ իրենց ղեկավարի ուղեկցությամբ, որոնց համար կազմակերպվել են դասախոսություններ և մշակութային շրջագայություն Հայաստանի տեսարժան վայրերով:
- ԵՊՀ-ի և Հալեպի համալսարանի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում 2009թ. սեպտեմբերի 13-ից 20-ը ԵՊՀ էր ժամանել Հալեպի համալսարանի դասախոսների և ուսանողների 17-հոգանոց պատվիրակությունը, որը հանդիպում է ունեցել համալսարանականների հետ, ինչպես նաև ճանաչողական այց է կատարել Հայաստանի տեսարժան վայրերով:
- 2009թ. սեպտեմբերի 26-ից 28-ը «TEMPUS» ծրագրի շրջանակներում ԵՊՀ են ժամանել օտարերկրյա համալսարանների ներկայացուցիչներ՝ Կոշիցե համալսարանից, Մարի Կյուրի-Սկլոդովսկայայի անվան համալսարանից, Մոսկվայի պետական տարածաշրջանային համալսարանից, Տամբովի պետական համալսարանից, Սամի պետական համալսարանից, Լվովի ազգային համալսարանից, Դնեպրոպետրովսկի տարածաշրջանային աղմինիստրացիայից, ինչպես նաև Կոմրատի պետական համալսարանից, Դնեպրոպետրովսկի Կոբլենց-Լանդաուի ազգային համալսարանից:
- 2010թ. հուլիսի 6-ից 18-ը La Conference Olivaint de Belgique կազմակերպության և ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության միջազգային կապերի բաժնի հետ համատեղ ջանքերով ճանաչողական այցով Հայաստան է ժամանել բելգիացի ուսանողների խումբը՝ ծանոթանալու թե՛ համալսարանի, թե՛ հայաստանյան այլ բուհերի աշխատանքին: Պատվիրակության անդամները Հայաստանում այցելել են տեսարժան վայրեր, ծանոթացել Հայաստանի պատմամշակութային կոթողներին:

2009-2010 ուսումնական տարում միջազգային միջոցառումներից առավել ուշագրավ է 2009թ. հոկտեմբերի 1-ից 4-ը ԵՊՀ-ի 90-ամյակին նվիրված միջոցառումների շարքը: Շնորհիվ ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության աշխատանքի՝ կազմակերպվել է օտարերկրյա պատվիրակությունների ընդունելություն: ԵՊՀ-ի 90-ամյակին նվիրված միջոցառումների շարքին ներկա էին հյուրեր օտարերկրյա բուհերից և միջազգային ընկերություններից՝ Բելառուսի պետական համալսարանից, Բելառուսի գիտությունների ակադեմիայից, Բոլոնիայի համալսարանից, Գեորգ-Ավգուստ Գոթթինգեն համալսարանից, Դնեպրոպետրովսկի ազգային համալսարանից, Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանից, Կալիֆորնիայի պետական համալսարանից (Ֆրեզնո), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետից, Սբ. Կլիմենտ Օհրիդսկու Սոֆիայի համալսարանից, Հարավային դաշնային համալսարանից, Համազգային հայ կրթական և մշակութային միությունից, Վարշավայի համալսարանից, Լեման քոլեջից, Լատվիայի համալսարանից, Դոնեցկի ազգային համալսարանից, Ռոստոկի համալսարանից, Կահիրեի համալսարանից, Միդլսեքսի համալսարանից, Մարտին Լյութեր Հալլե-Վիտենբերգ համալսարանից, Մոնպելիե-3 Փոլ Վալերի համալսարանից, Միչիգանի համալսարանից, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտից (Դուբնա), Մոսկվայի պետական համալսարանից, Կոստրոմայի պետական համալսարանից, Կա'Ֆոսկարի համալսարանից, Կոմրատի պետական համալսարանից, Կոբլենց-Լանդաուի ինստիտուտից, «Սուխոյ» ավիացիոն ընկերությունից, Տրիերի համալսարանից, Ճենովայի համալսարանի քաղաքական գիտությունների, բժշկական, ճարտարագիտության ֆակուլտետներից, Ֆրիդրիխ Շիլլերի անվան համալսարանից, Վոլգոգրադի պետական համալսարանից: ԵՊՀ 90-ամյա հոբելյանի առթիվ բազմաթիվ արտասահմանյան բուհերի ներկայացուցիչներ և Մայր բուհի գործընկերներ շնորհավորական ուղերձներ են հղել՝ բարձր գնահատելով ԵՊՀ-ի տեղն ու դերը համաշխարհային գիտակրթական համակարգում: Ներկայացնում ենք այդ բուհերի և գործընկերների ցանկը.

1. Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի նախագահ Իգոր Վոյտով
2. Բերքլիի (Կալիֆորնիա) համալսարանի նախագահ Ռոբերտ Բիրգենաու
3. Մոսկվայի պետական համալսարանի կողմից պրոռեկտոր Պյոտր Վրժեշչ
4. Սանկտ Պետերբուրգի համալսարանի նախագահ Լյուդմիլա Վերբիցկայա, Լեոն Պետրոսյան և հատուկ շնորհավորանքներ Արևելագիտության ֆակուլտետի դեկան Եվգենի Ջելենևի կողմից

5. Ֆրեզնոյի (Կալիֆորնիա) պետական համալսարանի նախագահ Ջոն Ուելթի և Բարլոու Տեր-Մկրտչյան
6. Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայդոստյան
7. Կոնեկտիկուտի համալսարանի նախագահ Մայքլ Հոգան և Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Ջոն Դեյվիս
8. Միչիգանի համալսարանի նախագահ Մարի Սյու Կոլման և Ժիրայր Լիպարիտյան
9. Հալեպի համալսարանի նախագահ Մոհամադ Նիզար Աքիլ
10. Արիզոնայի պետական համալսարանի նախագահ Մայքլ Քոու, «Մելիքյան» կենտրոնի տնօրեն Արա Բարսամ և Վիկտոր Աղաջանյան
11. Մոնպելիե-3 Պոլ Վալերի համալսարանի նախագահ Անն Ֆրեզ, Շմիդտ Բուրգարտ և Ժիրայր Դեդեյան
12. Շտուտգարտի համալսարանից Տիեզերական համակարգերի ինստիտուտի տնօրեն Հանս Փիթեր Ռյոսեր
13. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն Ալեքսեյ Սիսակյան
14. Բելառուսի ԳԱԱ ակադեմիկոս Միխայիլ Մյասնիկովիչի անունից Նոր նյութերի քիմիայի ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Ագաբեկով
15. ՌԴ հարավային դաշնային պետական համալսարանի կողմից ինստիտուտի տնօրեն Յուրի Վոլկով
16. Արևելյան լեզուների և մշակույթի ազգային ինստիտուտի ռեկտոր Ժակ Լեգրան և Անահիտ Դոնապետյան
17. Սոֆիայի Սբ. Կլիմենտ Օհրիդսկու անվան համալսարանի ռեկտոր Իվան Իլչև և պրոռեկտոր Իվան Պետկով
18. Կիևի Տարաս Շևչենկոյի անվան ազգային համալսարանի ռեկտոր Լեոնիդ Հուբերսկի
19. Տրիերի համալսարանի ռեկտոր Փիթեր Շվենկմեզգեր և Վոլֆգանգ Լուհ
20. Տարտուի համալսարանի ռեկտոր Ալար Կարիս
21. Լատվիայի համալսարանի ռեկտոր Մարսիզ Աուզինս, Օջարս Յուդրուփս և Ատիս Պեյս
22. ՀՀ-ում ՌԴ դեսպանատան կողմից Վ. Բրյուսովի անվան հուշամեդալ
23. Լեհման քոլեջի ռեկտոր Մարի Փափազյան
24. Ռոստոկի համալսարանի ռեկտոր Վոլֆգանգ Շարեկ
25. Կիպրոսի համալսարանի ռեկտոր Ստավրոս Զենիոս
26. Գոթինգենի Գեորգ Ավգուստինի անվան համալսարանի ռեկտոր Կուրտ Ֆոն Ֆիգուրա և Մարտին Տամկե
27. Կա՛Ֆոսկարի համալսարանի ռեկտոր Պիեռ Ֆրանչեսկո Գետտի և Պողոս Լևոն Զեքյան
28. Ի. Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր Գեորգի Խուբուա
29. Կոբլենց Լանդաուի անվան համալսարանի ռեկտոր Ռոման Հայլեհթալ, Կլաուս Տրոյչ և Իռեն Լաթշար
30. Կոշիցեի համալսարանի ռեկտոր Անտոն Չիժմար և Յան Գենչի
31. Դոնեցկի ազգային համալսարանի ռեկտոր Վլադիմիր Շևչենկո և Նիկոլայ Իվանիցին
32. Վոլգոգրադի համալսարանի ռեկտոր Օլեգ Ինշակով և Պավել Տիմաչով
33. Կոստրոմայի Ն. Ա. Նեկրասովի անվան պետական համալսարանի ռեկտոր Նիկոլայ Ռասսադին
34. ՌԴ ԳԱԱ փոխնախագահ Վլադիսլավ Խոմիչ
35. ՌԴ ԳԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի տնօրեն Վիկտոր Իվաննիկով
36. Եվրասիական համալսարանների ասոցիացիայի նախագահ Ալեքսանդր Սիդարովիչ
37. Համազգային հայ կրթական և մշակութային միության ատենապետ Մկրտիչ Մկրտչյան
38. «ԱՐՓԱ» հիմնադրամի նախագահ Հակոբ Փանոսյան
39. Մոսկվայի պետական տարածաշրջանային համալսարանից Սերգեյ և Տատյանա Տրայտակներ
40. «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Ռիչարդ Գոլդման
41. Արտասահմանյան դասընթացների Հանկուկի համալսարանի պրոռեկտոր Կյուչին Կիմ և Հոնգ Վան Սեոկ
42. Վարշավայի համալսարանի պրոռեկտոր Վտոձիմիերզ Լենգաուեր և Յան Մալիցկի
43. Ճենովայի համալսարանի պրոռեկտոր Միշել Մարսոնետ և Անգելա Մուսայո
44. Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանի պրոռեկտոր Աթանասիա Ցացակու

45. Բելառուսի պետական համալսարանի պրոռեկտոր Օլեգ Իվաշկևիչ
46. Կոմրատի պետական համալսարանի պրոռեկտոր Լյուդմիլա Ֆեդոտովա և Յովչու Միխայիլ
47. Նովոսիբիրսկի պետական համալսարանի կողմից Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Մկրտչյան
48. Մարի Կյուրի-Սկլոդովսկայի անվան համալսարանից Ադամ Չմելիվսկի և Անդրեյ Վոդեցկի
49. Հալլե Վիտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանից Ֆելիքս Բլոխեր և Արմենուհի Դրոստ Աբգարյան
50. Մյունսթերի համալսարանից Մագդալեն Շտեմեր Լաք, Ջորջ Ալբերս և Տիրան Դանիելյան
51. Միդլսեքս համալսարանից Էլլի Ջեորջիադու, Գեթա Աբեսինգխ, Ջորջ Դաֆոլաս, Բալբիր Բարն, Ռիչարդ Քոմլեյ և Յան Միտչել
52. ՌԴ ԱԳՆ միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտի կողմից Միջազգային լրագրության ֆակուլտետի դեկան Յարոսլավ Սկվորցով
53. Սումի պետական համալսարանից Կոնստանտին Կիրիչենկո
54. Տամբովի պետական համալսարանից Նատալյա Ջենկովա
55. Բոլոնիայի համալսարանից Գաբրիելա Ուլուհոջյան և Աննա Սիրինյան
56. Լվովի ազգային համալսարանից Վիտալի Կուխարսկի և Սվետլանա Տերլեցկա
57. Ժենևի համալսարանից Վալենտինա Կալզոլարի
58. Գրեգորի և Էմմա Մելիքյաններ
59. Կարապետ Գալֆայան
60. Արմեն Սմբատյան
61. Արմեն Եսայան
62. Պրովանսի համալսարանից (Այաքս, Մարսել I) Ժան Վիվիե (միջազգային համագործակցության գծով փոխնախագահ, պրոռեկտոր):

Այս շրջանակներում կազմակերպվել են ԵՊՀ ռեկտորի և օտարերկրյա համալսարանների պատվիրակությունների հետ անհատական հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի համագործակցության և գիտահետազոտական ու կրթության զարգացմանը վերաբերող հարցեր: Անց է կացվել միջազգային գիտաժողով՝ «Համալսարանական կրթությունը 21-րդ դարում» խորագրով: Գիտաժողովի ընթացքում մասնակիցներին հնարավորություն է տրվել մասնակցելու իրենց հետաքրքրությունների շրջանակներում գործող բաժինների (սեկցիա) աշխատանքներին: Այդ բաժիններն էին՝ Որակի ապահովում և համալսարանի կառավարում, Կրթությունը փոփոխվող աշխարհում, Հայագիտության դերը համալսարանական կրթության շրջանակներում, Կրթության միջազգայնացում, Բնական գիտությունների դասավանդման խնդիրները համալսարանական կրթության շրջանակներում: Միջազգային գիտաժողովի ընթացքում ներկայացված զեկույցները կտպագրվեն մեկ ժողովածուի մեջ:

2009թ. հոկտեմբերի 5-ից 6-ը TEMPUS JEP «ARMQA» (Internal Quality Assurance for Armenian HEIs) նախագծի շրջանակներում կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Որակի բարելավում. փորձը, խնդիրներն ու հեռանկարները Հայաստանի բարձրագույն կրթության համար» խորագրով: Նախագծի կոնսորցիումի անդամներն էին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Լոնդոնի Միդլսեքսի համալսարանը (Մեծ Բրիտանիա) և Ճենովայի համալսարանը (Իտալիա):

2009թ. հոկտեմբերի 16-ին ԵՊՀ-ում «TEMPUS» ազգային գրասենյակի հետ համատեղ կազմակերպվել է հանդիպում Լիտվայից ժամանած մասնագետների և հայաստանյան կողմի միջև՝ նվիրված բարձրագույն կրթության բնագավառում համագործակցությանն ու ակադեմիական շարժունությանը, ինչպես նաև բարձրագույն կրթական համակարգերի բարեփոխման և արդիականացման գործին: Բացի նրանից, որ հանդիպումը խրախուսված էր «TEMPUS» ծրագրի կողմից, այն միտված էր նաև ԵՄ և գործընկեր երկրների միջև փոխըմբռնման զարգացման փորձի փոխանակմանը:

ԵՊՀ և Բեռլինի ազատ համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2009թ. հոկտեմբերի 20-ից 21-ը ԵՊՀ է ժամանել Բեռլինի ազատ համալսարանի պատվիրակությունը, որի հետ հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալը և ՀՀ-ում ԳԴՀ դեսպանատան ներկայացուցիչը:

2009թ. նոյեմբերի 30-ին ՀՀ-ում ԳԴՀ դեսպանատունը ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպել է «20 Jahre Mauerfall» խորագրով լուսանկարչական ցուցահանդես՝ նվիրված Բեռլինի պատի փլուզման 20-րդ տարեդարձին:

2009թ. հոկտեմբերի 25-ից 30-ը «TEMPUS QUATMI» (Quality Assurance Tools for the Management of Internationalization) ծրագրի շրջանակներում ԵՊՀ է այցելել Նայմեգենի Ռադբաուդ համալսարանի (Նիդեռլանդներ), Բելգորոդի պետական համալսարանի (ՌԴ), Զապորոժիեի ազգային համալսարանի (ՌԴ), Տարաս Շևչենկոյի անվան ազգային համալսարանի (Կիև) և Կարլ վոն Օսիետսկի Օլդենբուրգի համալսարանի (Գերմանիա) պատվիրակությունը: Քննարկվել են ԵՊՀ-ի՝ միջազգայնացման ուղղությամբ իրականացվող ռազմավարությունը, ինչպես նաև այդ խնդրի վերաբերյալ մի շարք հարցեր:

2009թ. հոկտեմբերի 30-ին ԵՊՀ-ում ՌԴ բուհերի ներկայացուցիչների հետ կայացել է հանդիպում՝ «Expo-Russia Armenia 2009թ.» երկրորդ ամենամյա արտադրական ցուցահանդեսի շրջանակներում: Հանդիպմանը ներկա էին ՌԴ տնտեսագիտության բարձրագույն դպրոցի, Տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի Մոսկվայի պետական համալսարանի, Ն. Է. Բաումանի անվան Մոսկվայի պետական տեխնիկական համալսարանի, ինչպես նաև Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի ներկայացուցիչները: Հանդիպման արդյունքում Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի հետ համագործակցություն սկսելու վերաբերյալ ձեռք է բերվել համաձայնություն:

2010թ. փետրվարի 26-ից 28-ը ԵՊՀ-ի և Մոսկվայում Ճապոնիայի դեսպանատան համատեղ ուժերով ԵՊՀ-ում կազմակերպվել է ճապոնական թեյախմության, ծաղկարվեստի (իկեբանա) և նկարչության (սումիե) ցուցադրում-դասընթաց: 2010թ. հունիսի 19-ին և 20-ին ՌԴ-ում Ճապոնիայի դեսպանատան հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ-ում կազմակերպվել է ճապոնական դրամաշնորհային ծրագրի քննություն:

2010թ. մարտի 11-ին ԵՊՀ-ում կայացել է հանդիպում ԵԱՀԿ պառլամենտական վեհաժողովի խոսնակ Ջոան Սոարեսի հետ, որին մասնակցել են ԵՊՀ իրավագիտության, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, պատմության, ժուռնալիստիկայի, ռոմանագերմանական բանասիրության և սոցիոլոգիայի ֆակուլտետների ուսանողները: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ-ում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2010թ. մարտի 26-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնը և ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնը Հայաստանում Ֆրանկոֆոնիայի տոնի շրջանակներում համատեղ կազմակերպել են «Ֆրանսիական երգի փառատոն», որին ներկա էին հյուրեր ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատնից, Ֆրանկոֆոն երկրների միջազգային կազմակերպության ասոցիացիայի ներկայացուցիչներ և ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողներ:

2010թ. ապրիլի 10-ին ԵՊՀ ուսանողության համար կազմակերպվել է հանդիպում-դասախոսություն Հայաստանում «Խաղաղության կորպուս» ընկերության ներկայացուցիչների հետ: Դասախոսության նպատակն էր երիտասարդ սերնդին տեղեկացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման, կանխարգելման և բուժման մասին:

ՀՀ ԿԳ նախարարության, Տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի Մոսկվայի պետական համալսարանի, Մոսկվայի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության և ինֆորմատիկայի Երևանի մասնաճյուղի, Խ. Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման խնդիրների ինստիտուտի, Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանի, ինչպես նաև Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի հետ համատեղ 2010թ. ապրիլի 10-ից 30-ը Ծաղկաձորում կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Էլեկտրոնային ուսուցում. Ռուսաստան-Հայաստան: Գիտության և կրթության բնագավառում համագործակցության զարգացման նոր հնարավորություններ» խորագրով:

2010թ. մայիսի 10-ից 17-ը ԵՊՀ-ում հյուրընկալվել է Նովոսիբիրսկի պետական համալսարանի պատվիրակությունը: ՄՀՎ-ն կազմակերպել է մի շարք հանդիպումներ Նովոսիբիրսկի պետական համալսարանի պատվիրակության և ԵՊՀ ռեկտորի, ԵՊՀ տնտեսագիտության, պատմության, ռուս բանասիրության ֆակուլտետների դեկանների հետ, ինչպես նաև հանդիպումներ ՀՀ ԿԳ փոխնախարարի, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի, Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ռեկտորի հետ:

հանդիպումների ընթացքում քննարկվել են համագործակցության փոխշահավետ կազմակերպման հնարավորությունները:

Հաշվետու տարում ԵՊՀ են ժամանել մի շարք պատվիրակություններ Ռուսաստանի Դաշնությունից, Եգիպտոսի Արաբական Հանրապետությունից, Ֆրանսիայի Հանրապետությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

2010թ. հուլիսի 12-ից 15-ը Վարշավայի համալսարանի Արևելյան Եվրոպայի ինստիտուտի կովկասյան գրասենյակը կազմակերպել է միջազգային գիտաժողով՝ «Որտե՞ղ ենք մենք: Հետկոմունիստական և հետսովետական երկրները վերջին 20 տարիների ընթացքում» խորագրով, որին մասնակցել են ԵՊՀ 4 ներկայացուցիչներ:

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպանների հետ: Համալսարան են ժամանել օտարերկրյա համալսարանների պրոֆեսորներ՝ ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում և կենտրոններում մասնագիտական դասընթացներ անցկացնելու նպատակով:

Այսպես `

- 2009թ. հոկտեմբերի 6-ին ԵՊՀ-ում կազմակերպվել է հանդիպում ԵՊՀ ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի և ԳԴՀ Բունդեսթագի նախագահի և փոխխոսնակի հետ: Հանդիպման ժամանակ հնչել են զեկույցներ ԳԴՀ Բունդեսթագի կողմից ներկայացվող ամենամյա ծրագրի վերաբերյալ, ինչպես նաև նույն ծրագրի վերաբերյալ ցուցադրվել է տեսաֆիլմ:
- 2009թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի առաջարկով ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում անց է կացվել «Իրանահայոց հանրագիտարան» գրքի շնորհանդեսը:
- 2009թ. հոկտեմբերի 29-ին ԵՊՀ է այցելել Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, ում հետ կայացած հանդիպմանը ներկա էին ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը:
- 2009թ. նոյեմբերի 1-ից 8-ը Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Եվրոպական ուսումնասիրություններ» միջառարկայական մագիստրոսական ծրագրի 2009-2010 ուստարվա 2-րդ կուրսում «Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի տնտեսական ձևափոխումները և ԵՄ ընդլայնումը» դասընթացն ապահովելու համար ԵՊՀ է հրավիրվել Կենտրոնական Եվրոպայի համալսարանների պրոֆեսոր, Պանֆոնիայի համալսարանի ֆինանսների ամբիոնի ղեկավար Պետեր Միհայլին (Հունգարիա):
- 2009թ. նոյեմբերի 6-ին ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ հանդիպել է ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանը:
- 2009թ. նոյեմբերի 16-ին ԵՊՀ է այցելել ԱՊՀ միջխորհրդարանական ասամբլեայի քարտուղարը, ում հետ կայացած հանդիպմանը ներկա էին ԵՊՀ միջազգային հարաբերությունների և իրավագիտության ֆակուլտետների ուսանողները:
- «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Եվրահինտեգրումը և գենդերային հարցերը» ծրագրի շրջանակներում 2009թ. նոյեմբերի 26-ին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ են այցելել Հայաստանի և Թուրքիայի կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր հանդիպել են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոսների և ուսանողների հետ՝ քննարկելու մի շարք գենդերային հարցեր, մասնավորապես եվրոպական և ազգային արժեքների ու եվրահինտեգրման գործընթացում կանանց դերի ու նշանակության խնդիրները: Քննարկվել են նաև հետագա հնարավոր համագործակցության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Հաշվետու տարում ԵՊՀ-ում շարունակվել է օտարերկրյա մասնագետների դասավանդումը: 2009-2010 ուսումնական տարում ԵՊՀ-ում դասավանդել են Գերմանիայից, Իսպանիայից, Բրազիլիայից, Լեհաստանից, Բուլղարիայից, Իրանից, Վրաստանից և Ռուսաստանից ժամանած դասախոսներ: Օտարերկրյա մասնագետներին, ինչպես և նախորդ տարիներին, ԵՊՀ-ն դիմավորել է «Զվարթնոց» օդանավակայանում, օգնել է համապատասխան փաստաթղթերի ձևակերպման գործում, տեղավորել է ԵՊՀ հյուրերի տանը և

ճանապարհել է «Զվարթնոց» օդանավակայանից: Օտարերկրյա դասախոսներին ԵՊՀ գրադարանից անվճար օգտվելու հնարավորություն է տրվել, նրանք ապահովվել են աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններով, հարկ եղած դեպքերում կազմակերպվել են նաև մշակութային ծրագրեր և ճանաչողական այցեր Երևանից դուրս: ԵՊՀ ֆակուլտետներում շարունակվել է գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, լեհերեն և արաբերեն լեզուների դասավանդումը:

ԵՊՀ և օտարերկրյա համալսարանների միջև համագործակցության պայմանագրերի շրջանակներում շարունակվել է ԵՊՀ դասախոսների գործուղումը արտասահմանյան բուհեր: Այսպես՝ 2009-2010 ուսումնական տարում ԵՊՀ և Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկու անվան համալսարանի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում Սոֆիայի համալսարան է գործուղվել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասիստենտը՝ ժամանակակից հայոց լեզու դասավանդելու նպատակով: ԵՊՀ և Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում 2010-2011 ուստարվա համար նախատեսվում է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում կազմակերպել 3-ամսյա վերապատրաստման դասընթաց՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մասնագետի համար, ում նաև հնարավորություն կտրվի իրականացնելու գիտահետազոտական աշխատանք, ինչպես նաև ուսանելու հնարավորություն է տրվել ԵՊՀ 1 մագիստրոսի՝ թյուրքագիտություն և 1 ասպիրանտի՝ Իրանի ժամանակակից պատմություն մասնագիտություններով: 2010-2011 ուսումնական տարում նախատեսվում է կազմակերպել ճանաչողական այց Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանից ժամանող ուսանողական խմբի համար: Ինչպես նաև հաջորդ ուստարում ՍՊՊՀ-ի ուսանողներին հնարավորություն կտրվի ուսանելու ԵՊՀ-ում՝ հայագիտություն մասնագիտությամբ:

ԵՊՀ-ի և Հալեպի համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2010-2011 ուսումնական տարվա համար նախատեսվում է Հալեպի համալսարան գործուղել հայոց լեզվի մասնագետ:

ԵՊՀ և Վոլգոգրադի պետական համալսարանի միջև քննարկվել են համատեղ կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները, ինչպես նաև Վոլգոգրադի պետական համալսարանում բացվել է հայ մշակույթի կենտրոն:

ԵՊՀ-ն այսօր լայնորեն ներգրավված է միջազգային ծրագրերում և հանդիսանում է Համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սևծովյան երկրների համալսարանների ցանցի ընկերակցության, Ռեկտորների ռուսաստանյան միության և Համալսարանների ղեկավարների միջազգային ընկերակցության լիիրավ անդամ:

2009-2010 ուստարում ԵՊՀ ստորաբաժանումներն ու մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտական և կրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր:

Հաշվետու տարում առավել ուշագրավ են՝

- Սիրիայի Արաբական Հանրապետությունում 2009-2010 ուսումնական տարվա համար նախատեսված արաբերեն լեզվի 10-ամսյա պրակտիկա անցնելու կրթաթոշակային ծրագրին մասնակցել են ԵՊՀ 25 ուսանողներ:
- Հունաստանի Հանրապետության կրթության նախարարության կողմից ներկայացված 2010-2011 ուսումնական տարում Հունաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար ներկայացվել է կրթաթոշակային ծրագրի մրցույթ, որի մասին տեղեկացվել են ԵՊՀ ֆակուլտետները:
- 2009թ. դեկտեմբերի 11-ին «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված «Օտարերկրյա որակավորումների ճանաչում, Լիսաբոնի կոնվենցիա» թեմայով սեմինարին մասնակցել է ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության ներկայացուցիչը:
- Միջազգային համագործակցության վարչության գրանտների բաժնի ներկայացուցիչը 2010թ. հունվարի 18-ից մինչև ապրիլի 26-ը կատարել է գիտահետազոտական աշխատանք Տեսական ֆիզիկայի Աբդուս Սալամ միջազգային կենտրոնում (Իտալիա):
- 2010թ. մարտին Թբիլիսիի պետական համալսարանին կից տնտեսագիտության միջազգային դպրոցի (ISET) նախաձեռնությամբ Երևանի պետական համալսարանում կազմակերպվել է «Գարնանային

դպրոց»՝ բակալավրիատի բարձր կուրսերի ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների և հայցորդների համար:

- 2010թ. մարտի 4-ին Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) հայաստանյան գրասենյակում կազմակերպվել է Բաց հասարակության ինստիտուտի «Վերադարձող դասախոսների կրթաթոշակ» ծրագրի ներկայացումը, որի մասին տեղեկացվել են ԵՊՀ ստորաբաժանումները:
- 2010թ. մարտին Բաց հասարակության ինստիտուտի կողմից ներկայացվել է 2011թ. համար նախատեսված ֆակուլտետի զարգացման դրամաշնորհային ծրագիրը, որում ընդգրկված են Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Մոնղոլիան, Տաջիկստանը և Ուզբեկստանը: Ծրագրի մասին տեղեկացվել են ԵՊՀ համապատասխան ֆակուլտետները:
- ԵՊՀ ասպիրանտները տեղեկացվել են Կենտրոնական եվրոպական համալսարանի (CEU) կողմից ներկայացված 2010-2011 ուսումնական ծրագրի հետազոտական կրթաթոշակների վերաբերյալ, ինչպես նաև հասարակական և հումանիտար ուղղվածության մասնագետներն ու ուսանողները տեղեկացվել են Կենտրոնական եվրոպական համալսարանի (CEU), Բաց հասարակության ինստիտուտի (OSI), Ռեսուրս կենտրոնի (CRC) և Բարձրագույն կրթության աջակցության ծրագրի (HESP) կողմից ֆինանսավորվող դասավանդման և ուսուցման կրթաթոշակների ծրագրերի վերաբերյալ:
- ԵՊՀ ստորաբաժանումներին ներկայացվել է ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից տրամադրված հայտարարությունը՝ Հյուբերտ Համֆրի ուսումնական կրթաթոշակի 2011-2012թթ. մրցույթի վերաբերյալ: Համֆրի կրթաթոշակը ծրագիր է, որը հնարավորություն է տալիս մասնագիտական գործունեության որոշակի փորձ ունեցող մասնագետներին մեկնելու Միացյալ Նահանգներ՝ մեկ տարի ամերիկյան առաջնակարգ համալսարաններում ուսանելու և համապատասխան մասնագիտական փորձառություն ձեռք բերելու նպատակով:
- Շարունակվել է համագործակցությունը թուրքմենական կողմի հետ, որի շրջանակներում Թուրքմենստանի Աշխաբադ քաղաքում Թուրքմենստանի կրթության նախարարության նախաձեռնությամբ 2009թ. սեպտեմբերի 9-ից 13-ը կազմակերպվել է միջազգային գիտաժողով, այնուհետև՝ 2009թ. սեպտեմբերի 21-ից 26-ը, Թուրքմենստանի «Միրաս» գիտակրթական կենտրոնի նախաձեռնությամբ կայացել է միջազգային գիտաժողով, որին մասնակցել են համալսարանականներ:
- Եվրոպական կրթաթոշակների քոլեջը 2010-2011 ուսումնական տարվա համար նախատեսել է կրթաթոշակներ, որոնք երիտասարդ շրջանավարտներին հնարավորություն են տալիս շարունակելու իրենց կրթությունը՝ ստանալով մագիստրոսի կոչում Եվրոպայի քոլեջում (Բրյուգե և Նատոլին (Վարշավա)): Այս կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ ՄՀՎ-ն տեղեկացրել է համապատասխան ֆակուլտետներին:
- 2010թ. ապրիլի 2-ին Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) հայաստանյան գրասենյակում կազմակերպվել են «Կարնեգի հետազոտական դրամաշնորհի ծրագրի» ներկայացում և հարց-պատասխան, որի մասին տեղեկացվել են ԵՊՀ ստորաբաժանումները:
- 2010թ. մայիսի 7-ից 8-ը Թբիլիսիում կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Հանդուրժողականությունը որպես համագործակցության նախադրյալ» խորագրով, որին ներկա էր ԵՊՀ պատվիրակությունը: Պատվիրակությանը ցուցաբերվել է ջերմ ընդունելություն, որի շրջանակներում քննարկվել են փոխշահավետ համագործակցության հարցեր՝ աշխատակազմի, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների, ինչպես նաև գիտական աշխատողների փոխայցելություններ, փորձի փոխանակում և գիտակրթական գործունեության խորացում:
- 2010թ. մայիսի 19-ից 21-ը Թբիլիսիում կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Եվրոպայի և Արևելքի միջև գիտահետազոտական և բարձրագույն կրթությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում» խորագրով, որին ներկա էր նաև ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորը:
- 2010թ. մայիսի 12-ից 15-ը Ժողովուրդների բարեկամության ռուսաստանյան համալսարանում տեղի է ունեցել համակարգող խորհրդի հանդիպում, որին ներկա է եղել ԵՊՀ գիտական քաղաքականության

և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը: Հանդիպման ընթացքում ստորագրվել է ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի կոնսորցիումին անդամակցության հուշագիր:

- «TEMPUS QUATMI» ծրագրի շրջանակներում ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության ներկայացուցիչները 2010թ. մայիսի 26-ից մինչև հունիսի 9-ը այցելել են Տորունի համալսարան (Լեհաստան), Օլդենբուրգի համալսարան (Գերմանիա), Նայմեգենի համալսարան (Նիդեռլանդներ) և Ալիկանտեի համալսարան (Իսպանիա): Ծրագրի ավարտին համալսարանականները ստացել են հավաստագրեր՝ ծրագիրն ավարտելու վերաբերյալ:
- 2010թ. մայիսի 30-ից հունիսի 5-ը Թբիլիսիում անցկացվել է Տնտեսական և հասարակական հետազոտությունների կովկասյան ինստիտուտի (CIESR) կողմից հայտարարված «Տարածաշրջանային տնտեսական ինտեգրում, տեղական ապակենտրոնացում և կոնֆլիկտների կանխում. Հարավկովկասյան տարածաշրջանում ժողովրդավարական առաջընթացի և կայունության հեռանկարներ» ծրագիրը:
- ԵՊՀ-ի և Ռոստոկի համալսարանի համագործակցության շրջանակներում Ռոստոկի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոն են մեկնել ԵՊՀ ուսանողներ՝ էքսպերիմենտալ աշխատանքների, մագիստրոսական, ասպիրանտական և դոկտորանտուրայի դասընթացներին մասնակցելու նպատակով:
- 2010թ. հունիսի 28-ից 30-ը Հալլե-Վիտենբերգի Մարթին Լյութեր համալսարանում կազմակերպվել է հայագիտական շաբաթ, որին ներկա են եղել հայագետներ, ինչպես նաև Հին Արևելքի մասնագետներ:
- 2010թ. հուլիսի 18-ից օգոստոսի 7-ը Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկու անվան համալսարանում «Բուլղարերեն լեզու և մշակույթ օտարերկրա գիտնականների և ուսանողների համար» խորագրով ամառային դպրոցին մասնակցել են ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները:

ԵՊՀ ստորաբաժանումները և մասնագետները տեղեկացվել են տարբեր ոլորտներում՝ քաղաքագիտություն, իրավագիտություն, սոցիոլոգիա, մաթեմատիկա և այլն, համագործակցության ծրագրերի, միջազգային գիտաժողովների վերաբերյալ, ինչպես նաև ստացել են օժանդակություն հայտերի լրացման գործում:

- Ներկայացվել է տեղեկատվություն 2009թ. նոյեմբերի 9-ից 13-ը Թբիլիսիում կայանալիք «Կոնֆլիկտների մոդելավորում. Կովկաս» գիտաժողովի վերաբերյալ:
- ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան կողմից տրամադրվել է տեղեկատվություն 2010-2011թթ. Ֆուլբրայթ ծրագրի վերաբերյալ:
- ԵՊՀ տարբեր ֆակուլտետներին ներկայացվել է ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից տրամադրված հայտարարությունը «University Request for a U.S. Fulbright Scholar» ծրագրի վերաբերյալ, որը ԵՊՀ ֆակուլտետներում 2011-2012 ուստարում դասավանդելու նպատակով ԱՄՆ-ից դասախոսներ հրավիրելու հնարավորություն է ընձեռում:
- Ներկայացվել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան կողմից տրամադրված «ԱՄՆ ազգային անվտանգության քաղաքականության կազմակերպում 2010» ծրագրի հայտարարությունը:
- Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետին ներկայացվել է ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից տրամադրված հայտարարությունը՝ Հյուբերթ Համֆրիի ամենամյա ուսումնական կրթաթոշակի 2011-2012 ուստարվա մրցույթի վերաբերյալ: Այն մասնագիտական որոշակի փորձ ունեցող մասնագետներին հնարավորություն է տալիս մեկնելու Միացյալ Նահանգներ՝ մեկ տարի ամերիկյան առաջնակարգ համալսարաններում ուսանելու և համապատասխան մասնագիտական փորձառություն ձեռք բերելու համար:
- Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD) և Բաց հասարակության ինստիտուտը (OSI) 2010-2011 ուսումնական տարվա համար ուսանողներին, ասպիրանտներին և գիտնականներին առաջարկել են մի շարք դրամաշնորհային ծրագրեր:
- Վրաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանությունը տրամադրել է կրթաթոշակային ծրագիր՝ բակալավրիատի ծրագրով Չեխիայի Հանրապետությունում ուսանելու համար:

- ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանությունը և «Զարդ» մշակութային հասարակական կազմակերպությունն իրականացրել են «Չինաստանի ուղին» թեմայով մրցույթ, որը նվիրված էր ՉԺՀ-ի 60-ամյակին:
- ԵՊՀ ուսանողները տեղեկացվել են Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ (ԱԿՍԵԼՍ) կազմակերպության կողմից ներկայացված Էդմունդ Ս. Մասկիի անվան կրթաթոշակների ծրագրի (MUSKIE) վերաբերյալ:
- ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողները տեղեկացվել են 2010թ. հունիս-հուլիս ամիսներին Իտալիայի Բոլոնիայի համալսարանում իտալերեն լեզվի ամառային դպրոցի վերաբերյալ:
- ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողները տեղեկացվել են ՌԴ-ում Իսպանիայի դեսպանատան կողմից տրամադրված 2010-2011 ուստարվա համար նախատեսված «Միջհամալսարանական մագիստրոս դիվանագիտության և միջազգային հարաբերությունների ոլորտում» ծրագրի վերաբերյալ:
- Բոլոր ֆակուլտետները տեղեկացվել են ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության դեսպանատան կողմից ներկայացված Հնդկաստանի բուհերի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանելու ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետներին տեղեկացվել է Աբու Դաբիում հիմնված տեխնոլոգիաների MASDAR կրթահամալիրի կողմից տրամադրված կրթաթոշակների վերաբերյալ, որին դիմել են 2 համալսարանականներ:
- Նովոսիբիրսկի պետական համալսարանի կողմից ստացվել և ԵՊՀ-ում տարածվել է «Ուսանող և գիտատեխնիկական առաջընթաց» միջազգային գիտաժողովի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Ներկայացվել է Բաց հասարակության ինստիտուտի կողմից տրամադրված 2011թ. ֆակուլտետի զարգացման դրամաշնորհի ծրագիրը:
- Ներկայացվել է ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության դեսպանության կողմից ստացված տեղեկատվությունը՝ Իտալիայի ԱԳ նախարարության կողմից տրամադրված 2010-2011 ակադեմիական տարվա համար նախատեսված կրթաթոշակային ծրագիրը:
- Ներկայացվել է Եվրոպական քոլեջի՝ 2010-2011 ուսումնական տարվա համար նախատեսված դասընթացների կրթաթոշակների հայտարարությունը Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների բուհերի շրջանավարտների համար:
- Ներկայացվել է Չանիայի (Հունաստան) միջերկրածովյան գյուղատնտեսական ինստիտուտի հայտարարությունը: Ծրագիրն առաջարկում է երկամյա ինտենսիվ ուսուցման դասընթացներ և միջազգային ճանաչում ունեցող մագիստրոսի գիտական աստիճան ստանալու հնարավորություն է ընձեռում:
- Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության կողմից 2010թ. մայիսի 30-ից հունիսի 5-ը կազմակերպված վերապատրաստման դասընթացների ծրագրի հայտարարությունը տրամադրվել է ԵՊՀ բակալավրիատի և մագիստրանտների անգլիախոս ուսանողներին, ինչպես նաև ասպիրանտներին, ովքեր հետաքրքրված են տնտեսագիտության ինտեգրացիա, հիմնական տնտեսագիտություն, ժողովրդավարացում, կոնֆլիկտների կանխարգելում, ֆինանսական պահանջարկ և ժամանակակից քաղաքական տնտեսագիտություն բնագավառներով:
- Տնտեսագիտության ֆակուլտետին ներկայացվել է Տնտեսական և հասարակական հետազոտությունների կովկասյան ինստիտուտի (CIESR) կողմից տրամադրված հայտարարությունը «Տարածաշրջանային տնտեսական ինտեգրում, տեղական ապակենտրոնացում և կոնֆլիկտների կանխում. Հարավկովկասյան տարածաշրջանում ժողովրդավարական առաջընթացի և կայունության հեռանկարներ» ծրագրի վերաբերյալ: Ծրագիրը 2010թ. մայիսի 30-ից հունիսի 5-ը իրականացվել է Թբիլիսիում:
- Տնտեսագիտության ֆակուլտետին տեղեկացվել է «Տնտեսական կրթության և հետազոտման կոնսորցիում» կազմակերպության կողմից տրամադրված դրամաշնորհի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը, որը նախատեսված է գիտնականների և փոքր գիտական խմբերի համար: Լավագույն խմբին հնարավորություն է տրվել մասնակցելու «Տնտեսական կրթության և

հետազոտման կոնսորցիում»-ի կողմից 2010թ. հունիսի 25-ին Կիևում կազմակերպված միջազգային աշխատաժողովին:

- ԵՊՀ բոլոր ֆակուլտետներին ներկայացվել է Ֆրիդրիխ Նաումանի անվան գերմանական ֆոնդի հայտարարությունը, որը հնարավորություն է ընձեռում սովորելու Գերմանիայի Դաշնային Հանրապետության ցանկացած բուհում: Ֆոնդը կրթաթոշակ է հատկացնում մագիստրանտների և ասպիրանտների համար:
- Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողներին տեղեկացվել է Լեհաստանում՝ Լոձ քաղաքում գտնվող Սորբոնա (SORBONA) լեզվի դպրոցի վերաբերյալ տեղեկատվությունը: Դպրոցը ԵՊՀ ուսանողներին Լեհաստանում լեհերեն լեզվի և մշակույթի դասընթացներին մասնակցելու հնարավորություն է ընձեռում:
- Ներկայացվել է Անտվերպենի համալսարանի մշակութային կառավարման, թանգարանագիտության, մշակութային քաղաքականության դասընթացների (2010թ. հուլիսի 1-ից 8-ը) վերաբերյալ հայտարարությունը:
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողները տեղեկացվել են 2010թ. օգոստոսի 2-ից մինչև 20-ը Բելգիայի Լիեժի համալսարանում կազմակերպվող ֆրանսերեն լեզվի դասընթացների վերաբերյալ, որոնք նախատեսված են ֆրանսերեն դասավանդող դասախոսների կամ ֆրանսերեն լեզվի ուսուցչի որակավորում ստացող ուսանողների համար:
- ԵՊՀ ադմինիստրատիվ աշխատակազմը տեղեկացվել է Հայաստանում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և «Փի-Էյչ Ինթերնեշնլ»-ի կողմից ներկայացված «Համայնքային կապեր» ծրագրի շրջանակներում «Աշխատուժի զարգացմանն ուղղված համագործակցություն համալսարանների միջև և համալսարանների հետ» թեմայով մրցույթի վերաբերյալ:
- Ժուռնալիստիկայի ֆակուլտետին տեղեկացվել է Կիևի Մեդիա իրավունքի ինստիտուտում 2010թ. հունիսի 5-ից 23-ը կազմակերպվող ամառային դպրոցի վերաբերյալ:
- Գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) կողմից ԵՊՀ 19 ուսանողների և դասախոսների շնորհվել է կրթաթոշակ, որի շնորհման պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել 2010թ. հունիսի 13-ին «Կոնգրես» հյուրանոցի մեծ դահլիճում: Կրթաթոշակի շնորհման արարողությանը ներկա են եղել ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության լիազոր դեսպան տիկին Անդրեա Վիկտորինը, ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարը:
- ԱՄՆ-ի Կառավարությունը՝ հանձինս ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական և մշակութային գործերի բաժնի, Հայաստանում «Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ» կազմակերպության միջոցով (Ամերիկյան խորհուրդներ) ԵՊՀ-ին է ներկայացրել «Երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագիր» (JFDP) մրցույթի հայտարարությունը, որի նպատակն է դասախոսներին վերապատրաստվելու հնարավորություն ընձեռել հումանիտար և հասարակական գիտությունների ասպարեզում:
- ԵՊՀ և Հունաստանի Սալոնիկի համալսարանի հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում Սալոնիկի համալսարանն առաջարկել է հունարեն լեզվի արագացված ամառային դասընթաց 2010թ. օգոստոսի 16-ից մինչև սեպտեմբերի 14-ը, որը նախատեսված է ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի հունարեն լեզու ուսումնասիրող ուսանողների համար:
- Վենետիկի համալսարանը Պո-Արքա մշակութային ընկերակցության հետ համատեղ 2010թ. օգոստոսի 2-ից 18-ը Իտալիայում կազմակերպել է Հայոց լեզվի և մշակույթի ամառային խտացված դասընթաց:
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողները տեղեկացվել են ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի 2010-2011թթ. ուսումնական տարվա ընդունելության վերաբերյալ:
- Իրավագիտության ֆակուլտետին տեղեկացվել է Սոչիում 2010թ. հոկտեմբերի 14-ից 17-ը կայանալիք «Իրավունքների պաշտպանությունը Ռուսաստանում և Եվրոպայի խորհրդի այլ երկրներում. ներկա վիճակը և ներդաշնակեցման խնդիրները» միջազգային գիտաժողովի վերաբերյալ:
- ԵՊՀ արևելագիտության և պատմության ֆակուլտետներին տեղեկացվել է ՀՀ-ում Թուրքմենստանի դեսպանատան, Թուրքմենստանի Գիտությունների ակադեմիայի և Պատմության ինստիտուտի

կողմից կազմակերպվող միջազգային գիտական կոնֆերանսի վերաբերյալ, որը նախատեսված է անցկացնել 2010թ. դեկտեմբերի 1-ից 3-ը Դաշոգյուզում (Թուրքմենստան):

- Իրավագիտության ֆակուլտետին ներկայացվել է Հարավաֆրիկյան Հանրապետության Պրետորիա քաղաքում 2010թ. դեկտեմբերի 8-ից 9-ը կայանալիք մարդու իրավունքների պաշտպանության թեմայով մրցույթի վերաբերյալ հայտարարությունը:

ԵՊՀ ֆակուլտետներից ստացված արձագանքների շնորհիվ ԵՊՀ մասնագետներին և ուսանողներին հնարավորություն է տրվել մասնակցելու վերոհիշյալ գիտակրթական սեմինարներին, գիտաժողովներին, կրթական և հետազոտական ծրագրերին: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Այսպես՝ հաշվետու տարում, ինչպես և նախորդ 5 ուսումնական տարիների ընթացքում, համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Գերմանիա, ԱՄՆ, Վրաստան և Իտալիա:

2009-2010 ուստարում ԵՊՀ-ում իրականացված դրամաշնորհները

- 2009թ. սեպտեմբերին ԵՊՀ ֆակուլտետներին և կենտրոններին ներկայացվել է հարցում՝ 2009-2010 ուսումնական տարում նշված կենտրոններում և ֆակուլտետներում իրականացված գիտական դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, որը ներկայացվել է ԳՊԿ-ին: 2009-2010 ուստարվա գիտական ծրագրերը՝

1. «Internal quality assurance system in Armenian HEIs», Tempus Tacis JEP No. 27178-2006 MUL,
2. «Երևանի պետական համալսարանում ռուսաց լեզվի հեռաուսուցման կենտրոն», «Ռուսկի միր» հիմնադրամ (Ռուսաստանի Դաշնություն),
3. «Տերահերցային ճառագայթման մոդուլում Բրյուստերի անկյան տակ GaAs-ի մակերևույթից անդրադարձման ղեկավարմամբ՝ ֆեմտովայրկյանային լազերի լուսավորման միջոցով», ANSEF,
4. «Բաշխված միջավայրերում պրոցեսների վերլուծության և օպտիմիզացիայի խնդիրներ», ՀՀ ԿԳՆ,
5. «Հարավային Կովկասի ռեգիոնի համար գիտական հաշվողական գրիդի մշակում Armcluster-ի հիման վրա», ISTC #A-1451,
6. Assistance to the Centre of European Law and Integration (Gopa Consultants),
7. ՀՀ կանոնակարգող միջավայրի կատարելագործում. Մոդելը-Եվրոպական հանձնաժողովի կողմից մշակված «Լավ կառավարման» հայեցակարգը, բնագավառը՝ ՀՀ օրենսդիր գործընթաց, ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
8. «Արատներ (իզոտոպ կամ անիզոտոպ) պարունակող ֆոտոնիկ բյուրեղներ», TOTAL PROGRAM EXPENSES CONVERED BY ANSEF CONVERED N1718-PS,
9. «Լույսի տարածումը նախապատրաստված միջավայրում», «Ալեքսանդր ֆոն Հումբոլդտ» հիմնադրամ, Սարքավորումների ֆինանսավորում «Լույսի տարածումը նախապատրաստված միջավայրում» գիտահետազոտական ծրագրի համար, «Ալեքսանդր ֆոն Հումբոլդտ» հիմնադրամ,
10. «Մակերևութային հիշողություն և կապի սահք հեղուկ բյուրեղներում. Ֆիզիկական մեխանիզմներ ու առնչությունը կապի էներգիայի հետ», ECO-NET Project: 18843TM 2008,
11. Ultrafast Optical Oscilloscope, NATO SFP # 978027,
12. «SUPERCONDUCTIVITY & Scientific Instrumentation», «Համալսարանական կատարելության կենտրոններ» ծրագիր, NFSAT-CRDF «University Centers of Exellence» ծրագիր,
13. Development of Armenian-Georgian Grid Infrastructure in the fields of high energy physics, astrophysics and quantum physics, ISTC A-1606,
14. Extended supersymmetry, strings and noncommutativity in field theory, INTAS-05-7928,
15. Geometric quantum mechanical models for nanostructures, ANSEF-1730-PS,
16. Algebraic and geometric studies for condensed matter physics, NFSAT-CRDF UC 06/07,
17. Algebraic and geometric properties (conformal) mechanics with extended supersymmetry, Volkswagen Foundation,

18. «Ֆունկցիոնալ և տրամաբանական ծրագրերի ձևափոխություններ և իրականացում», ՀՀ Կառավարության դրամաշնորհ,
19. «Տարբեր տրամաբանական համակարգերում արտածումների տարաբնույթ բնութագրիչների հետազոտում», ՀՀ Կառավարության դրամաշնորհ,
20. «Արագ հաշվողական ալգորիթմների մշակում մեծ չափողականության հանրահաշվական խնդիրների լուծման համար», ՀՀ Կառավարության դրամաշնորհ,
21. «Բազմաչափ բազմանդամային միջարկում», ՀՀ Կառավարության դրամաշնորհ,
22. «Մոլեկուլային փոխազդեցությունները սուլֆոքսիդներ պարունակող կենսամոլեկուլների լուծույթներում», ANSEF # 1534,
23. «Study of antimicrobial and hypoallergenic c products of lactic acid bacteria», Proj. N:SfP 982 164, NATO,
24. «Application of Bacterial Melanin as of the Phytostimulat or in Agriculture, Viticulture and Dendrology» CRDF,
25. «ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակում (սնկեր)», ՀՀ Կառավարության դրամաշնորհ,
26. «Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն», ԵԱՀԿ երևանյան գրասենյակ.
    - 2009թ. սեպտեմբերին նախապատրաստվել և ներկայացվել է ԵՊՀ-ում ռուսաց լեզվի հեռաուսուցման կենտրոնի ստեղծման և գործունեության բիզնես-պլանը:
    - 2009թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ԵՊՀ գրանտների բաժինը մասնակցել է ԵՊՀ-ում կազմակերպված «TEMPUS IV» ծրագրի «ECESIS» նախագծի շրջանակներում «21-րդ դարում համալսարանական կրթությունը» գիտաժողովների անցկացման նախապատրաստմանը:
    - 2009թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում «Սևծովյան համատեղ գործունեություն» 2007-2013 ծրագրի շրջանակներում նախապատրաստվել և ներկայացվել են մի շարք համատեղ նախագծեր:
    - 2009թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում նախապատրաստվել և ներկայացվել է «Ռուսկի միր» (Ռուսաստանի Դաշնություն) դրամաշնորհ «Արտաքին քաղաքականության կողմնորոշման հետազոտում և ՀՀ քաղաքացիների վերաբերմունքը երկրի քաղաքական ինստիտուտների հանդեպ» նախագիծը:
    - 2009թ. նոյեմբերին «EuropeAid/128764/C/ACT/Multi» ծրագրի շրջանակներում էթնիկ և տարածաշրջանային ուսումնասիրությունների ինստիտուտի (ISCOMET, Սլովենիա, Վիադրինա), Եվրոպական համալսարանի (Ֆրանկֆուրտ, Գերմանիա), Տրիեստի համալսարանի, I.G.E.S. – Istituto Internazionale di Alti Studi Giuridico Economici per lo Sviluppo-ի (Գորիզիա, Իտալիա), Մարիբորի համալսարանի էթնիկ, տարածաշրջանային և սոցիալական ուսումնասիրությունների եվրոպական կենտրոնի (Սլովենիա, ECERS), Իրավական և տնտեսական կրթության կենտրոնի (Բաքու, Ադրբեջան), Մոլդովայի տնտեսագիտական ուսումնասիրությունների ակադեմիայի (ASEM, Չիսինաու, Մոլդովա), էթնիկ և տարածաշրջանային ուսումնասիրությունների ասոցիացիայի (ASER, Չիսինաու, Մոլդովա), Սոցիալական գիտությունների ինստիտուտի, Օդեսայի ազգային ինստիտուտի (Ուկրաինա), Սպառողական համագործակցության բելառուսական առևտրատնտեսական համալսարանի (BTEU, Գոմել, Բելառուս) հետ համատեղ նախապատրաստվել և ներկայացվել է «Համագործակցության թեմատիկ ծրագիր երրորդ երկրների հետ՝ միգրացիայի տարածքում ապաստարան» նախագիծը:
    - 2009թ. դեկտեմբերին «TEMPUS IV» ծրագրի շրջանակներում Հելսինկիի համալսարանի շարունակական կրթության Պալմենիա կենտրոնի հետ համատեղ նախապատրաստվել և ներկայացվել է «Միասին բարեփոխենք համալսարանական շարունակական կրթությունը» նախագիծը:
    - 2010թ. ապրիլին «ERASMUS MUNDUS 2009-2013, Action 3» ծրագրի շրջանակներում Բրիտանական խորհրդի, Իա պետական համալսարանի (ISU), Բաքվի պետական համալսարանի (BSU) հետ համատեղ նախապատրաստվել և ներկայացվել է «Կովկասում եվրոպական բարձրագույն կրթության և միջազգային ուսանողների և աշխատակազմի

շարժունակության բարելավում: INTMOB-CAUCASUS ուսանողական տեղեկատու և խորհրդատվական ծառայություն» նախագիծը:

- 2010թ. ապրիլին «Erasmus Mundus / Action 2 – Strand 1, lot nr. 6» շրջանակներում Կիրառական գիտությունների հոլանդական համալսարանի (Նիդեռլանդներ) հետ համատեղ նախապատրաստվել և ներկայացվել է նախագիծ:
- 2010թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում նախապատրաստվել և «Ռուսկի միր» (Ռուսաստանի Դաշնություն) հիմնադրամին ներկայացվել է «Հայաստանի ՁԼՄ-ները և Ռուսաստանի դրական կերպարի ձևավորումը» դրամաշնորհային նախագիծը:
- 2009թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում նախապատրաստվել և «Ռուսկի միր» (Ռուսաստանի Դաշնություն) հիմնադրամին ներկայացվել է «ԵՊՀ-ում ռուսաց լեզվի հեռաուսուցման կենտրոնի ստեղծում» դրամաշնորհային նախագծի հաշվետվությունը:
- 2010թ. հունիսի 14-ին ֆակուլտետներին է ներկայացվել USIP-ի կողմից տրամադրված կրթաթոշակային ծրագիրը:

№	Դրամաշնորհի անվանումը	Ղեկավար
1.	Որակի ապահովման միջոցներ բուհերի միջազգայնացման գործընթացում (Tempus Project 144882 – TEMPUS - 2008-DE – JPGR): Quality Assurance for Management of Internationalization Processes, “QATMI”, Tempus 144882-TEMPUS-1-2008-1-DE-TEMPUS-JPGR.	Գևորգյան Գ. Գ. Մարգարով Ա. Ա.
2.	Կրթական կենտրոնների ցանց. ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տեղական կառավարման մեջ (144742 –Tempus-2008-DE-JPHES (2008-4744): Educational centers’ network on modern technologies of management, “ECESIS”, Tempus 144742-TEMPUS-1-2008-1-DE-TEMPUS-JPHES	Մարգարով Ա. Ա.
3.	Создание Центра дистанционного обучения русскому языку в Ереванском государственном университете (грант № 229Гр/813-09 фонда “Русский Мир”).	Մարգարով Ա. Ա. Բալայան Պ. Բ.

Դրամաշնորհ 1. «Որակի ապահովման միջոցներ բուհերի միջազգայնացման գործընթացում» դրամաշնորհը մեկնարկել է 2009թ.: Նպատակն է աջակցել համալսարանի միջազգայնացման քաղաքականությանը՝ ելնելով միջազգայնորեն ընդունված որակի ապահովման չափանիշներից:

Դրամաշնորհ 2. Մշակվել և ներդրվել են ուսումնական դասընթացներ Ուկրաինայի, Հայաստանի, Մոլդովայի և Ռուսաստանի քաղծառայողների համար: Դրամաշնորհը մեկնարկել է 2009թ., ստեղծվել են դասախոսների միջազգային խմբեր, որոնք մշակում են համապատասխան դասընթացներ:

Դրամաշնորհ 3. «ԵՊՀ-ում Ռուսաց լեզվի հեռաուսուցման կենտրոն» նախագծի հիմնական նպատակն է մշակել և ընդգրկել ԵՊՀ-ում ռուսաց լեզվի հեռաուսուցման տեխնոլոգիաներ, ստեղծել ռուսաց լեզվի հեռաուսուցման էլեկտրոնային գրադարան, էլեկտրոնային ուսումնական կուրսեր, կահավորել ռուսաց լեզվի հեռաուսուցման կաբինետը: Նախագիծը մեկնարկել է 2009թ.:

Արտերկրից ԵՊՀ-ում սովորող ուսանողները

2009-2010 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 739 օտարերկրացի ուսանողներ և ասպիրանտներ, այդ թվում՝ 28 ուսանող ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում (ՕՔՆՖ), բակալավրիատում՝ 303 (259-ը՝ վճարովի, 44-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 52 (46-ը՝ վճարովի, 6-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 320 (317-ը՝ վճարովի, 3-ը՝ անվճար հիմունքներով) և հեռակա՝ 36 ուսանող: Վճարովի հիմունքներով սովորող օտարերկրացիներից գանձված ուսման վարձը կազմել է 463.975.330. 00 դրամ:

2009-2010 ուստարվա օտարերկրյա ուսանողների, ասպիրանտների և հեռակա ուսանողների կազմը.

Արտերկրից ԵՊՀ-ում սովորած օտարերկրյա ուսանողների կազմը 2004-2009 տարիների ընթացքում

N	Կարգավիճակը	2004/05	2005/06	2006/07	2007/08	2008/09	2009/10
I	II	III	IV	V	VI	VII	VIII
1.	ՕՔՆՖ	123	76	83	73	67	28
2.	Բակալավրիատ	289	330	346	353	343	303
3.	Մագիստրատուրա	43	63	65	63	69	52
4.	Ասպիրանտուրա	59	64	132	275	404	320
5.	Հեռակա ուսուցում	-	-	-	10	20	36
	Ընդամենը	514	533	626	774	903	739

«Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատկացված ֆինանսական միջոցներով 2009-2010 ուստարում հրատարակվել են գիտական մենագրություններ և ուսումնական ձեռնարկներ (ընդամենը՝ 11): «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են համալսարանի 20 երիտասարդ գիտնականների կարճաժամկետ և երկարաժամկետ արտասահմանյան գործուղումների ծախսերը՝ ընդամենը 47.000.00 ԱՄՆ դոլարի չափով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Հովհաննիսյան Արշալույս Լյովայի*

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում վարչությունն առաջարկություններ է մշակել տեղեկատվական ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ, աջակցել համալսարանի ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթների իրականացմանը, ապահովել է ներհամալսարանական տեղեկատվական համակարգերի աշխատանքը, սպասարկել և արդիականացրել է համալսարանի համակարգչային տեխնիկան, ապահովել ինտերնետ կապը ստորաբաժանումներում, ինչպես նաև իրականացրել է իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքներ ու գործառույթներ:

2009-2010 ուստարում վարչության կողմից մասնավորապես իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ներհամալսարանական ցանցի զարգացում և կառավարում

- ԵՊՀ համակարգչային ցանցում տեղադրվել են ժամանակակից արագագործ սերվերներ, որոնք ապահովում են էլեկտրոնային փոստի և ինտերնետ կապի հասանելիության անխափան աշխատանքները:
- Տեղադրվել և կոնֆիգուրացվել են նոր էլեկտրոնային փոստի և proxy ինտերնետ հասանելիություն ապահովող սերվերներ:
- Սպասարկվել և արդիականացվել է համալսարանի էլեկտրոնային փոստի համակարգը:
- ԵՊՀ համակարգչային ցանցին, ինչպես նաև ինտերնետ ցանցին է միացվել շուրջ հարյուր նոր համակարգիչ, ամբողջությամբ վերաձևավորվել և արդիականացվել է 5-րդ և 7-րդ մասնաշենքերի համակարգչային ներքին ցանցը:
- ԵՊՀ 3-րդ ուսումնական մասնաշենքում, գրադարանի մասնաշենքում և Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանատի տարածքում գործի է դրվել ԵՊՀ WiFi ցանցը, որը հյուրերին, ինչպես նաև ուսանողներին հնարավորություն է ընձեռում WiFi անլար ցանցի միջոցով ելք ունենալ դեպի ինտերնետ:
- ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներում ապահովվել է ինտերնետ կապի հասանելիությունը, փորձնականորեն գործարկվել են ինտերնետ կապի հուսալիությունը բարձրացնող ծրագրային և գործիքային միջոցներ:
- Իրականացվել են ինտերնետում ԵՊՀ կայքի տեղադրման և դրա հետ կապված ընթացիկ տեխնիկական սպասարկման աշխատանքներ:

Համակարգչային տեխնիկայի կոմպլեկտավորում, վերանորոգում, շահագործում և հաշվառում

- Համակարգչային պահեստամասերից հավաքվել և շահագործման են հանձնվել շուրջ 140 նոր համակարգիչներ:
- Մշակվել և ստեղծվել է համակարգչային տեխնիկայի էլեկտրոնային գույքագրման, ընթացիկ սպասարկման կանչերի ընդունման և գրանցման համակարգ, որը համակարգչային տեխնիկան առցանց գույքագրելու և տեխնիկայի մանրամասն նկարագրությունը տվյալների բազայում պահելու, ինչպես նաև համակարգում համակարգչային տեխնիկայի վերանորոգման պատմությունը գրանցելու հնարավորություն է ընձեռում:
- Կատարվել են ընթացիկ համակարգչային տեխնիկայի վերանորոգման և ցանցի սպասարկման աշխատանքներ (ըստ մակագրված զեկուցագրերի՝ վերանորոգվել են շուրջ 200 համակարգիչներ, տեղադրվել են նաև ծրագրային ապահովումներ):
- Համակարգչային տեխնիկայի էլեկտրոնային գույքագրման համակարգի միջոցով գույքագրվել է մի շարք ֆակուլտետների համակարգչային տեխնիկան: Էլեկտրոնային գույքագրման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2011 թ-ի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում:

- Համակարգչային տեխնիկայի շահագործման տարբեր հարցերի վերաբերյալ մասնագիտական աջակցություն և խորհրդատվություն է տրամադրվել համալսարանի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներին:

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ

- ԵՊՀ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը «Mulberry» համակարգով իրականացնելու նպատակով ԵՊՀ կենտրոնական սերվերում նախապատրաստվել են համապատասխան ծրագրային միջոցներ: Դիտարկվել են համալսարանում փաստաթղթաշրջանառության հիմնական բիզնես պրոցեսները, և դրանց համապատասխան մշակվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի համապատասխան ծրագրային գործիքները:
- Աջակցություն է ցուցաբերվել համակարգից օգտվողների ուսուցման գործընթացին: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ընձեռած գործիքների, գործավարության ընդունված ընդհանուր ընթացակարգերի և ԵՊՀ բիզնես գործընթացների վերլուծության արդյունքների համաձայն՝ աջակցություն է ցուցաբերվել ԵՊՀ գործավարության կարգի նախագծի մշակման աշխատանքներին:

Ծրագրային գործիքների մշակում և այլ աշխատանքներ

- Աշխատանքներ են իրականացվել հաշվապահական ծրագրերի կենտրոնացված համակարգի ստեղծման ուղղությամբ:
- Ստեղծվել և շահագործման է հանձնվել էլեկտրոնային հեռախոսագիրքը, որը տեղադրվել է ԵՊՀ պաշտոնական կայքում:
- Աշխատանքներ են իրականացվել ուսանողների՝ էլեկտրոնային թերթիկ ունենալու կենտրոնացված համակարգի ստեղծման ուղղությամբ:
- ԵՊՀ մասնաշենքերում իրականացվել են անվտանգության տեսախցիկների տեղադրման մոնտաժային և սպասարկման աշխատանքներ:
- Վարչության աշխատակիցներն աջակցել են ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների կողմից կազմակերպված ավելի քան 15 միջոցառումների ընթացքում համակարգչային տեխնիկայի շահագործման աշխատանքներին:

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ *Ավետիսյան Արմեն Ռուդոլֆի*

ԵՊՀ արհկոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են.

- մասնակցել գործատուի կողմից արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին,
- համալսարանի աշխատողների աշխատանքային, սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով նախաձեռնել ու գործատուի հետ կնքել կոլեկտիվ պայմանագիր, հսկողություն իրականացնել դրա կատարման նկատմամբ,
- համաձայն գործող օրենսդրության՝ մասնակցել կոլեկտիվի աշխատանքային վեճերի կարգավորմանը,
- համագործակցել հանրապետության և օտարերկրյա արհեստակցական կազմակերպությունների, միավորումների և այլ կազմակերպությունների հետ, ուսումնասիրել և կիրառել արհեստակցական կազմակերպությունների աշխատանքային փորձը, կազմակերպել արհկոմիտեի ակտիվի ուսուցում,
- ստանալ և տարածել արհկոմիտեի անդամների սոցիալ-տնտեսական և աշխատանքային հարցերին առնչվող տեղեկատվությունը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,
- մշակել և իրականացնել աշխատողների առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման, զբոսաշրջության, մշակութային և մարզական միջոցառումների ծրագրեր, ինչպես նաև օժանդակել սոցիալական համագործակցության զարգացմանը,
- ԵՊՀ վարչակազմի առջև հանդես գալ ներհամալսարանական կյանքին վերաբերող նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով բարելավել ԵՊՀ աշխատակիցների սոցիալական վիճակն ու աշխատանքային պայմանները:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ արհկոմիտեն առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով ԵՊՀ արհկոմիտեն իր միջոցներից օգնության կարգով համալսարանի 579 աշխատակիցների, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացրել է քսաներկու միլիոն երեք հարյուր իննսուն հազար դրամ:

ԵՊՀ արհկոմիտեն աշխատողների և ուսանողների 2278 երեխաների և թոռնիկների համար կազմակերպել և իրականացրել է ամանորյա միջոցառումներ՝ հատկացնելով ամանորյա ներկայացման տոմսեր և նվերներ: 1697 կին աշխատակիցների համար իրականացվել է նաև Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված համահամալսարանական միջոցառում:

Ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել է թատերական տարբեր ներկայացումների 2351 տոմս:

Հաշվետու տարում ԵՊՀ արհկոմիտեն կազմակերպել է աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների և ուսանողների հանգիստը Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում: Իրականացվել է հանգստյան մեկնողների համար ուղեգրերի արժեքի մասնակի զեղչման անհատական մոտեցման համակարգ: Սոցիալապես առավել անապահով աշխատակիցների նկատմամբ կիրառվել է ուղեգրերի արժեքը 50%-ով, իսկ առանձին դեպքերում՝ նաև 100%-ով զեղչելու սկզբունքը: Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաների ծանրաբեռնվածությունը հուլիս-օգոստոս ամիսներին կազմել է իրական հնարավորության 30%-ը, ինչը բազաների սանիտարական, նյութատեխնիկական ոչ բավարար վիճակի հետևանքն է:

Հանքավանի ուսումնաարտադրական բազայում հուլիս-օգոստոս ամիսներին հանգստացել են համալսարանի 139 աշխատակիցներ և ուսանողներ, որը կազմել է 1196 մարդ-օր, Բյուրականում՝ 104 (359 մարդ-օր): Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում, որը, ի տարբերություն Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաների, աշխատում է կլոր տարին, հանգստացել է մոտ 1000 մարդ (5302 մարդ-օր): Ընդհանուր առմամբ համալսարանի երեք ուսումնաարտադրական բազաներում հաշվետու ժամանակահատվածում իրենց հանգիստն են կազմակերպել համալսարանի ավելի քան 1243 աշխատակիցներ, նրանց ընտանիքների անդամներ և ուսանողներ (6857 մարդ-օր):

Դիլիջանի մարզաառողջարանային ճամբարն այս ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ ֆինանսական միջոցներով և ԵՊՀ ՈՒԽ-ի ջանքերով մասնակիորեն բարեկարգվել է, որը մոտ 500 ուսանողի իրենց ամառային հանգիստն այնտեղ կազմակերպելու հնարավորություն է տվել:

Արհկոմիտեին կից գործում է «Անի» ուսանողական-տուրիստական ակումբը, որը գլխավորում էր սպորտի վաստակավոր վարպետ, ԵՊՀ ֆիզիկական դաստիարակության և սպորտի համահամալսարանական ամբիոնի դոցենտ, երջանկահիշատակ Հարություն Երանոսյանը: Ակումբն իր վրա է վերցրել ԵՊՀ ուսանողության հայրենագիտական, ճանաչողական և ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները՝ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպելով և հաջողությամբ իրականացնելով ԵՊՀ ավելի քան 600 ուսանողների ճանաչողական արշավները դեպի մեր հանրապետության, ինչպես նաև Ջավախքի և Արցախի տեսարժան վայրեր: Արշավների ընթացքում ուսանողները ծանոթացել են մեր հայրենիքի պատմամշակութային արժեքներին, հայրենապաշտպանության գործում նրանց ունեցած դերին: Արշավները կրում են շարունակական բնույթ. ԵՊՀ արհկոմիտեն դրանք գնահատում է որպես ռազմահայրենասիրական դաստիարակությանը և հայրենագիտությանը նպաստող լավագույն միջոց:

2010 թվականի հունվարին ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի կնքման նպատակով ստեղծվել է կոլեկտիվ պայմանագրի նախագծի մշակման և քննարկման հանձնաժողով՝ ԵՊՀ-ի և ԵՊՀ արհկոմիտեի հավասար անդամության սկզբունքով (յուրաքանչյուր կողմից՝ երեքական ներկայացուցիչ): Հանձնաժողովի կողմից քսանօրյա ժամկետում մշակված և 2 կողմերի կողմից համաձայնեցված ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի նախագիծը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 58-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, քսանօրյա քննարկման է ներկայացվել ԵՊՀ ֆակուլտետների և ենթակառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների կոլեկտիվների ժողովներում: Առաջնորդվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ կետով՝ քվեարկությամբ ստացված ձայների հանրագումարով (2031 կողմ, 52 դեմ, 53 ձեռնպահ) հավանության արժանացած ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի նախագիծը հանձնվել է ԵՊՀ ռեկտորին և արհկոմիտեի նախագահին՝ կնքելու համար: Փետրվարի 22-ին ԵՊՀ ռեկտորի և ԵՊՀ արհկոմիտեի նախագահի կողմից 3 տարով կնքված ԵՊՀ կոլեկտիվ պայմանագիրը բազմացվել է 2500 օրինակով և բաժանվել համալսարանի աշխատակիցներին:

Ի կատարումն ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի 4.3.2. կետի՝ ԵՊՀ ռեկտորի և ԵՊՀ արհկոմիտեի նախագահի հրամանով հավասար անդամության սկզբունքով և 3 տարի ժամկետով ստեղծվել է աշխատողների անվտանգության ապահովման և առողջության հարցերով համատեղ հանձնաժողով: Հանձնաժողովն ուսումնասիրել է ԵՊՀ գիտական գրադարանի աշխատակիցների՝ իրենց աշխատանքային պայմանների վերաբերյալ բողոք-դիմումը, ինչի արդյունքում հիմք ընդունելով հանձնաժողովի հաշվետվությունը՝ ԵՊՀ ռեկտորի և ԵՊՀ արհկոմիտեի նախագահի փոխհամաձայնությամբ, ռեկտորի հրամանով 2010 թվականի հունիսի մեկից գրապահոցի 12 աշխատակիցների աշխատավարձերը բարձրացվել են 20%-ով:

Հաշվետու տարում ԵՊՀ արհկոմիտեն ռեկտորատի հետ համատեղ Երևանի թիվ 4 պոլիկլինիկայում իրականացրել է ԵՊՀ 2433 աշխատակիցների պարտադիր բժշկական զննություն, որի նպատակով ԵՊՀ աշխատակիցներին նախապես անվճար բաժանվել են անձնական սանիտարական (բժշկական) գրքույկներ:

2010 թվականի հունիսի մեկից ԵՊՀ արհկոմիտեն սկսել է «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագրի իրականացումը: Համաձայն այդ ծրագրի՝ այսուհետ ծնվող յուրաքանչյուր առաջին երեխայի համար աշխատակցին հատկացվելու է 35000 ՀՀ դրամ, երկրորդ երեխայի համար՝ 70000, երրորդի համար՝ 105000, այնուհետև՝ յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար 35000 ՀՀ դրամով ավելի: Զույգ երեխա ծնվելու դեպքում հաշվարկը կատարվելու է առաջին և երկրորդ երեխայի սկզբունքով, երկրորդ զույգ երեխայի դեպքում՝ երկրորդ և երրորդ երեխայի սկզբունքով: Արդեն 20 աշխատակից օգտվել է ծրագրից, և ընդհանուր առմամբ հատկացվել է մեկ միլիոն հարյուր քսան հազար դրամ (10-ը՝ առաջին երեխայի համար, 8-ը՝ երկրորդի, 1-ը՝ երրորդի, 1-ը՝ առաջին զույգ երեխայի):

Ստեղծվել է ԵՊՀ աշխատակիցների բջջային հեռախոսահամարների հենք, որն անհրաժեշտության դեպքում ԵՊՀ աշխատակիցներին sms-հաղորդագրությունների միջոցով տեղեկատվություն տրամադրելու հնարավորություն է տալիս:

Հաշվետու տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես Հայաստանի պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների հանրապետական կոնֆեդերացիայի, այնպես էլ Եվրասիական համալսարանների արհմիութենական կազմակերպությունների ասոցիացիայի և Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հետ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության (Արհկոմիտեի) կազմը

1. *Ավետիսյան Արմեն* - Արհկոմիտեի նախագահ
2. *Մամաջանյան Արտաշես* - Արհկոմիտեի քարտուղար, հաշվապահության և գնումների բաժնի արհբյուրոյի նախագահ
3. *Ալիխանյան Մարիամ* - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
4. *Աղաջանյան Անահիտ* - Արևելագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
5. *Առուստամյան Ժաննա* - Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական հետազոտական կենտրոնի արհբյուրոյի նախագահ
6. *Գրիգորյան Հովիկ* - Պատմության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
7. *Էլոյան Ռուբիկ* - Հայ բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
8. *Թորոսյան Միտուշ* - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
9. *Թորոսյան Սվետլանա* - Ռեկտորատի և կենտրոնական վարչական ապարատի արհբյուրոյի նախագահ
10. *Թոքմաջյան Զինաիդա* - Սոցիոլոգիայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
11. *Խաչատրյան Մասիս* - Վարչատնտեսական մասի արհբյուրոյի նախագահ
12. *Խաչատրյան Մեդորա* - Կենսաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
13. *Կարապետյան Արամ* - Տնտեսագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
14. *Կարապետյան Դավիթ* - Ֆիզիկական դաստիարակության և սպորտի համահամալսարանական ամբիոնի արհբյուրոյի նախագահ
15. *Հարությունյան Նարինե* - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
16. *Ղուշչյան Գևորգ* - Աստվածաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
17. *Մանուշյան Հասմիկ* - Քաղաքացիական պաշտպանության համահամալսարանական ամբիոնի արհբյուրոյի նախագահ
18. *Մարգարյան Ալեքսան* - Իջևանի մասնաճյուղի արհբյուրոյի նախագահ
19. *Մարտիրոսյան Անուշ* - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
20. *Միքայելյան Գագիկ* - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
21. *Մխիթարյան Ռազմիկ* - Քիմիայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
22. *Չոբանյան Հրաչ* - Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
23. *Պապոյան Արգամ* - Ֆիզիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
24. *Պետրոսյան Աշոտ* - Իրավագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
25. *Զահուկյան Նարինե* - Գրադարանի արհբյուրոյի նախագահ
26. *Սաղոյան Էմմա* - Ռուս բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
27. *Մերոբյան Ռուբեն* - Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
28. *Վարդանյան Հայկանուշ* - Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
29. *Քալանթարյան Վիտալի* - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ

ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տնօրեն՝ *Ալեքսանյան Աշոտ Սեյրանի, քաղաք. գիտ. թեկնածու, դոցենտ*
Տնօրենի տեղակալ՝ *Միրզոյան Եզնիկ Սահակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

Գրադարանի բաժինների կատարած աշխատանքների ընդհանուր ուղղությունները
Աշխատանքային ցուցանիշները

Բաժին՝ 6	Գրքային ունեցվածքը՝ 2010960
Ընթերցասրահ՝ 8	Ընթերցող՝ 14816
	Հաճախում՝ 1212003
Աշխատողների թիվը՝ 85	Գրքատացք՝ 1900531

Հաշվետու ժամանակաշրջանում գրադարանային ենթակառուցվածքների աշխատանքային գործունեությունն իրականացվել է հետևյալ ուղղություններով՝ գրականության համալրում, մշակում, էլեկտրոնային քարտարանի համալրում, աշխատանքային գործընթացների ավտոմատացում, հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության վերամշակում ու մուտքագրում, ընթերցողների էլեկտրոնային և քարտային պատվերների սպասարկում, առձեռն և շրջանառու ֆոնդերի ձևավորում:

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Մխիթարյան Անահիտ Մաքսիմի*

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը, գիտաուսումնական ծրագրերի և համալսարանական կրթության զարգացման պահանջներով պայմանավորված, իրականացրել է գրականության ֆոնդերի համալրում:

Գրադարանի գրքային ֆոնդ է մուտք գործել 1894 անուն 10999 միավոր գրականություն, այդ թվում՝ 9028 միավոր գիրք, 1633 ամսագիր, 36 գիտական թեզ, թերթերի 116 հավաքածու, 185 քարտեզ, 1 CD-ROM: 494 անուն 4515 միավորն ուսումնական է:

Համալրման հիմնական աղբյուրներն են եղել դրամաշնորհները, դրամական փոխանցումները, միջազգային գրքափոխանակությունը և նվիրատվությունը: Գրքային ֆոնդը համալրվել է Գերմանական հետազոտական ընկերակցության (DFG), ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի, ՄԱԿ-ի, Միջազգային դրամական ֆոնդի և Գլենդելի Միացյալ հայկական հիմնադրամի օժանդակությամբ: Մասնավորապես Գլենդելի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ստացվել է 90 հազար ԱՄՆ դոլարի ընդհանուր արժողությամբ նոր գրականություն: Անհրաժեշտ ուսումնաօժանդակ և գիտական գրականություն է տրամադրվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, Մ. Նալբանդյանի անվան Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի, Արցախի պետական համալսարանի, ինչպես նաև մարզային ու հանրակրթական դպրոցների գրադարաններին:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Սարգսյան Միդա Ստեփանի*

Բաժինը շարունակել է էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման, համալրման և գործարկման աշխատանքները: Էլեկտրոնային քարտարանում առկա 705489 գրառումներից 290830-ը ստեղծվել է ԵՊՀ գրադարանի աշխատակիցների կողմից: Հաշվետու տարում բաժնում կատարվել է շուրջ 6098 էլեկտրոնային գրառում և 92517 միավոր գրականության մուտք: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների համար շարունակվել է նաև էլեկտրոնային հոդվածների պատվերների իրականացումը: Բուհական գրադարանների քարտագրողների համար անցկացվել է նաև գիտագործնական սեմինարների շարք, որոնց ընթացքում ուսուցանվել են էլեկտրոնային քարտարանի գործառնական հնարավորությունները:

Բաժնում ընթացքի մեջ է ինչպես գրքերի, այնպես էլ ամսագրային հավաքածուների, ատենախոսությունների մատենագիտական նկարագրությունների ձևավորումը:

Շարունակվել է նաև էլեկտրոնային ընթերցողական տոմսերի մշակման և կատարելագործման գործընթացը: Ստեղծվել են 9125 ընթերցողական նոր տոմսերի էլեկտրոնային տարբերակներ: Ստեղծվում է ԵՊՀ ընթերցողների տվյալների բազա: Մուտք են արվել 2952 ընթերցողական տոմսերի էլեկտրոնային տարբերակներ:

ՀՆԱՏԻՊ, ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Դուրգարյան Հասմիկ Արշակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

Հաշվետու տարում բաժնում շարունակվել են պահպանվել և սպասարկվել հնատիպ, հազվագյուտ գրքերը, պատմամշակութային և թանգարանային արժեք ունեցող ձեռագրերի լուսապատճենները, արտերկրի արժեքավոր նվիրատվությունները, պարբերականներն ու հանդեսները: Բաժնում իրականացված վերանորոգման շնորհիվ վերադասավորվել և վերակազմավորվել են արվեստի, իրավունքի, քաղաքականության, պատմության, աշխարհագրության, լեզվաբանության վերաբերյալ գրականությունը: Ստեղծվել են առանձին հավաքածուներ, որոնք ունեն մասնագիտական ուղղվածություն և նշանակություն: Վերանայվել են նաև հնատիպ գրականության քարտարանները և մատյանները, ինչպես նաև ստուգվել է առկա հավաքածուների ամբողջականությունը: Բաժինը շարունակել է իրականացնել ԵՊՀ-ում պաշտպանված ատենախոսությունների մատենագիտական և անվանի գիտնականների կենսամատենագիտական պրակների կազմման ու հրատարակման գործընթացը:

ԱԲՈՆԵՄԵՆՏԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Խաչիկօղլյան Քրիստինե Ալիկի*

Հաշվետու տարում բաժինը կատարել է 2952 ընթերցողների, այդ թվում՝ 750 հեռակա ուսուցման և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆակուլտետների ուսանողների գրանցում: Շուրջ 5200 միավոր գրականությամբ համալրվել են բաժնում առկա գեղարվեստական և գիտական գրականության ֆոնդերը: Վերակազմավորվել և ստուգվել են նաև ընթերցողների գրականության պատվերների շտեմարանները: Թղթային գրքատացքին զուգահեռ՝ իրականացվել է նաև առցանց 322 էլեկտրոնային պատվեր: Գրապահոցի բաժնի հետ համատեղ իրականացվում է երկրորդ առձեռն ֆոնդի դարակավորման և համակարգման գործընթացը: Ֆակուլտետային գրադարանավարների համար անցկացվել են սեմինար-պարապմունքներ:

ԳՐԱՊԱՀՈՑ

Բաժնի վարիչ՝ *Առաքելյան Մարիա Ալեքսանդրի*

Բաժնում կատարվել են գրականության տեղափոխման և վերադասավորման աշխատանքներ: Ընթերցասրահների ու առձեռն ֆոնդերի համար գրապահոցային հավաքածուներից առանձնացվել է համապատասխան գրականություն: Միաժամանակ շարունակվել է նաև արդիականությունը կորցրած գրականության զտումը: Թիվ 400 և 500 սրահներում, որտեղ գրականության տրամադրումը կատարվում է ինքնասպասարկման եղանակով, գրադարակավորվում են շրջանառու և առձեռն ֆոնդերը, որոնք այժմ կազմում են շուրջ 125 հազար միավոր: Առձեռն և շրջանառու ֆոնդի միջոցով սպասարկվել է 163315 գիրք: Պարբերաբար ավելացվում է առձեռն ֆոնդում առկա գրքերի քանակը: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որը զբաղվում է գրապահոցում գտնվող հնատիպ գրքերի մաքրման և համապատասխան բաժին տեղափոխելու աշխատանքներով:

Հաշվետու տարում գրապահոց է մուտք գործել 102547 պատվիրաթերթ: Գրապահոցի կազմատանը վերանորոգվել է նաև 12453 միավոր գրականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Առաքելյան Մելանյա Սահակի*

Ընթերցասրահների վերանորոգման աշխատանքներից հետո բաժնում իրականացվել են առկա ֆոնդերի վերադասավորում և համապատասխանեցում արդիական չափանիշներին: Հատուկ ուշադրություն է դարձվել ընթերցողների կողմից պահանջարկ ունեցող ուսումնական և գիտական գրականության համալրմանն ու սպասարկմանը: Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել նաև բոլոր ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների հետ՝ ներկայացնելով գրադարանային շտեմարաններից օգտվելու կանոնները: Կատարվել է նաև նոր գիտական գրականության ու ամսագրերի վերաբաշխում: Գրականության ներկա ֆոնդը կազմում է 181457 միավոր գրականություն, որից՝ գիրք - 64524, ամսագիր - 116933: Ընթացիկ տարում ստացվել է՝ 27694 միավոր գիրք, 897 միավոր ամսագիր, սպասարկված գրականության քանակը՝ 1134561, հաճախումները՝ 1357938:

Իրականացվել են նաև ԵՊՀ-ում հրատարակված նոր գրքերի շնորհանդեսներ, կազմակերպվել են հրապարակային քննարկումներ:

Հաշվետու ժամանակահատվածում գրադարանն ակտիվորեն համագործակցել է հայաստանյան, ԱՊՀ և եվրոպական համալսարանական գրադարանների հետ: Մասնավորապես գրադարանի համար կարևոր նշանակություն է ունեցել ԱՊՀ անդամ երկրների Հումանիտար աջակցության միջպետական հիմնադրամի կողմից տրամադրված մեկ տարվա դրամաշնորհը, որի շրջանակներում ընթերցողները կարող են օգտվել ռուսալեզու էլեկտրոնային գրականության պաշարներից ու ամսագրերից: Գրադարանային ենթակառուցվածքների զարգացման առումով առանցքային նշանակություն է ունեցել նաև գրադարանի երեք մեծ ընթերցասրահների վերանորոգումը, ինչը գրադարանի աշխատակազմին ընթերցողներին մատուցվող ծառայություններն ընդլայնելու և դրանց որակը բարձրացնելու հնարավորություն կտա:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը նաև Գերմանական հետազոտական ընկերակցության (DFG), ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան տեղեկատվական ռեսուրս կենտրոնի և «ԼԻԲԵՐ» եվրոպական հետազոտական գրադարանների լիգայի հետ, ինչն առկա օտարալեզու ֆոնդերն արդիական գրականությամբ համալրելու հնարավորություն է տվել:

Ժողովուրդների բարեկամության ռուսական համալսարանի կողմից կազմակերպված Եվրասիական էլեկտրոնային գրադարանային գիտագործնական համաժողովի շրջանակներում գրադարանի ներկայացուցիչը մասնակցել է վերապատրաստման դասընթացների:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Տնօրեն՝ *Մանուկյան Ժակ Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

ՖՈՆԴ

Հաշվետու ժամանակաշրջանում ֆոնդում շարունակվել են հավաքչական աշխատանքները: Այդ նպատակով թանգարանը համագործակցել է ԵՊՀ ֆակուլտետների, լաբորատորիաների, զոհված համալսարանականների ընտանիքների հետ:

Մշտական պահպանության և ցուցադրության նպատակով ֆոնդ է մուտք գործել 150 թանգարանային իր (լուսանկար, գիրք, դրոշ և այլ առարկաներ):

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հնագիտության լաբորատորիայում շարունակվել է ֆոնդում պահպանվող հնագիտական առարկաների վերականգնումը. վերականգնվել է հնագիտական 4 առարկա (ամբողջական և բեկորային):

ԱՐԽԻՎ

Թանգարանի արխիվային փաստաթղթերը համալրելու նպատակով թանգարանը համագործակցել է Հայաստանի ազգային արխիվի, Ազգային գրադարանի, ԵՊՀ նախկին ու ներկա աշխատակիցների և անվանի շրջանավարտների հետ: Արխիվ են մուտք գործել 75 անվանի շրջանավարտների անձնական գործեր, իսկ Ազգային արխիվից ու Ազգային գրադարանից՝ ԵՊՀ պատմությունը վավերագրող 120 փաստաթղթերի պատճեններ:

Թանգարանի արխիվ է փոխանցվել ԵՊՀ նախկին ռեկտոր Ս. Համբարձումյանի՝ 1988-1989 թթ. ընթացքում ԽՍՀՄ Գերագույն խորհրդում Արցախյան հիմնահարցի քննարկմանը վերաբերող 702 փաստաթուղթ, որից 46-ը բնօրինակ են (նամակներ, հեռագրեր, ելույթներ և այլն), 656-ը՝ պատճեն:

Արխիվում պահվող փաստաթղթերը վերականգնելու նպատակով թանգարանը համագործակցել է Հայաստանի ազգային արխիվի հետ. վերականգնվել է Ալեքսանդրապոլ քաղաքի 1890-ական թթ. հատակագիծը:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թանգարանի աշխատակիցները զբաղվել են ԵՊՀ պատմության, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթության պատմության ուսումնասիրությամբ: Կազմվել են մշտական ցուցադրությունում ներկայացված 20 ֆակուլտետների էքսկուրսիոն և անոտացիոն տեքստեր: Տպագրության է պատրաստվել «ԵՊՀ-ն Արցախյան ազատամարտի տարիներին. 1988-1994 թթ.» գրքի նյութերը:

ՄՇՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2009 թ-ի հոկտեմբերի 1-ին՝ ԵՊՀ 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում, հանդիսավոր պայմաններում տեղի է ունեցել թանգարանի մշտական ցուցադրության բացումը, որը բաղկացած է երկու բաժիններից՝ ԵՊՀ պատմություն և հնագիտություն:

Հաշվետու տարում թանգարան է այցելել 1058 այցելու: Կազմակերպվել է 20 դաս-էքսկուրսիա (այդ թվում՝ ՀՊՄՀ-ի ուսանողների և հանրակրթական դպրոցների աշակերտների համար):

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2009 թ-ի հոկտեմբերին թանգարանում կազմակերպվել է Պատմության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի հանձնման հանդիսավոր արարողությունը:

2009 թ-ի նոյեմբերի 6-ին թանգարանի ժամանակավոր ցուցահանդեսների սրահում բացվել է «ԵՊՀ-ն 90 տարեկան է» խորագիրը կրող ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են ԵՊՀ 90-ամյակի առթիվ ստացված հուշանվերները:

2009 թ-ի դեկտեմբերին թանգարանի աջակցությամբ կազմակերպվել է Պատմության ֆակուլտետի 90-ամյակին նվիրված ցուցահանդես:

2010 թ-ի փետրվարի 16-ին ժամանակավոր ցուցահանդեսների սրահում բացվել է Լյուբիկ Չիբուխչյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը:

2010 թ-ի հուլիսին թանգարանում կազմակերպվել է Պատմության ֆակուլտետի 130 շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	1	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Մանուկյան Ժ. Ս.,* «Երևանի համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովի գործունեությունը. 1919 թ. հուլիս», Բանբեր Հայաստանի արխիվների, հ. 2, Երևան, 2009, էջ 72-76:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Եսայանց Արմեն Վալտերի (մինչև 2010 թ-ի մայիսը)*
Հակոբյան Լիլիթ Տարոնի (2010 թ-ի մայիսից)

2009-2010 ուսումնական տարում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, համաձայն ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014 թթ.) VIII. Բ խնդրի պահանջների, նախաձեռնել և իրականացրել է մի շարք միջոցառումներ, ձեռք է բերել նոր գործնական կապեր բազմաթիվ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, ընդլայնել համագործակցության շրջանակը ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորում:

Կենտրոնի 2009-2010 ուստարվա գործունեությունը նպատակաուղղված է եղել համալսարանականների մրցունակության բարձրացմանը, աշխատաշուկայի մարտահրավերների դիմակայմանը, գործատուին ճիշտ ներկայանալու հմտությունների ձեռքբերմանը, շրջանավարտների և համալսարանի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը:

Հաշվետու տարում կենտրոնի կողմից ուսանող-գործատու ձևաչափով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ և թեմատիկ սեմինար-դասընթացներ, որոնք նպաստել են աշխատաշուկայի վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների տեղեկացվածության բարձրացմանն ու կարիերայի կայացմանը:

- Կենտրոնը հատուկ ուշադրություն է դարձրել համալսարանականների համար ինտենսիվ ծրագրերի իրականացման գործին: Այսպես՝ «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի կողմից 2009 թ-ի հունիս-սեպտեմբեր ամիսներին իրականացված «Ինտերնշիպ» փորձնական (պիլոտային) ծրագրի գործընկերներից մեկն էլ ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնն էր: Ծրագրում ընդգրկվել է մոտ 60 համալսարանական:
- 2009 թ-ի հոկտեմբերին պայմանավորվածություններ են ձեռք բերվել «Գործք» և «Ադամիում» ՍՊԸ-ների հետ, որոնց արդյունքում 10 համալսարանական ընդունվել են աշխատանքի:
- 2009 թ-ի հոկտեմբերի 27-ին UNFP (Միավորված ազգերի բնակչության հիմնադրամ) միջազգային կազմակերպության հետ ձեռք բերված համագործակցության շրջանակներում ԵՊՀ հունագիտության կենտրոնում համալսարանականներին են ներկայացվել UNFP-ի գործունեության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ նաև կամավորական ծրագրերը:
- 2009 թ-ի հոկտեմբերի 28-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի է ունեցել «Տաղանդների կառավարման լավագույն փորձը, մարտահրավերները և հայաստանյան կազմակերպությունները» խորագիրը կրող առաջին ազգային խորհրդաժողովը: Մասնակցության արդյունքում կենտրոնը համագործակցության պայմանավորվածություններ է ձեռք բերել մի շարք ընկերությունների հետ, այդ թվում՝ «Լիկվոր» ՓԲԸ-ի, «Orange Արմենիա» ՓԲԸ-ի, «Մենեջմենտ միքս» կազմակերպության և «AIESEC» միջազգային երիտասարդական կազմակերպության ներկայացուցիչների հետ:
- 2009 թ-ի հոկտեմբերին «Կոնգրես» հյուրանոցում տեղի է ունեցել «LEADER SCHOOL»-ի կողմից կազմակերպված սեմինար-դասընթաց, որին մասնակցել են նաև ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատակիցները: Դասընթացը նվիրված էր տեղեկատվական տեխնոլոգիաների վերջին զարգացումներին ու տնտեսական զարգացման հիմնախնդիրներին:
- 2009 թ-ի նոյեմբերի 21-ից 22-ը ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում տեղի է ունեցել «Աշխատաշուկայի մարտահրավերները և դրանց արձագանքելու ուղիները» խորագրով երկօրյա սեմինար-դասընթաց, որին մասնակցել են ԵՊՀ ֆակուլտետների ավարտական կուրսերի 35 ուսանողներ:

- 2009 թ-ի նոյեմբերին համագործակցություն է սկսվել Բրիտանական խորհրդի (BRITISH COUNCIL) հայաստանյան գրասենյակի հետ: Համագործակցության արդյունքում 3 համալսարանական ընդունվել են աշխատանքի:
- «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (CAPS) ծրագրի շրջանակներում 8 համալսարանական՝ 2-ը դեղագիտական, 6-ը SS և մարքեթինգի ոլորտի, 2009 թ-ի նոյեմբերին մասնակցել են վճարովի պրակտիկայի մրցույթին և ընդգրկվել ծրագրում:
- 2010 թ-ի ապրիլին «Դեմոկրատիան այսօր» ու «Միավորված մեթոդիստների կոմիտե» հասարակական կազմակերպությունների հետ կենտրոնը կազմակերպել է «Թրաֆիքինգի գործոնը՝ որպես կարիերայի զարգացման խոչընդոտ» խորագրով սեմինար-դասընթաց, որի ընթացքում ծրագրի պատասխանատուները մանրամասն ներկայացրել են թրաֆիկինգի վտանգների կանխարգելման ուղիները:
- 2010 թ-ի ապրիլի 16-ից 18-ը ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում ԵՊՀ ուսանողական խորհրդի հետ կենտրոնը կազմակերպել է «Ուսանողական հասարակական ակտիվությունը՝ որպես կարիերայի զարգացման խթան» խորագրով եռօրյա սեմինար-դասընթաց: 2 փուլից բաղկացած մրցույթի արդյունքում ընտրվել են 40 համալսարանական, ովքեր ունեին հասարակական ակտիվության ներուժ, հետաքրքրված էին իրենց կարիերայի զարգացմամբ և պատրաստակամ՝ մասնակցելու ամբողջ ծրագրին: Միջոցառման շրջանակներում կազմակերպվել են այսբրեյքերներ և այլ ինտերակտիվ խաղեր, անցկացվել են անհատական և խմբային վարժություններ, որոնց ժամանակ մասնակիցները ծանոթացել են ուսանողական ակտիվության, լիդերության, հաղորդակցության հմտություններին ու դասընթացի խնդիրներին վերաբերող մի շարք այլ հարցերի:
- Համագործակցության շրջանակներում 2010 թ-ի ապրիլ-մայիս ամիսներին ԵՊՀ գրեթե բոլոր ֆակուլտետներում հանդիպումներ են կազմակերպվել «Ինգո Արմենիա» ապահովագրական կազմակերպության ներկայացուցիչների հետ: «Ուսանող-գործատու» ծրագրի շրջանակներում ուսանողները ստացել են աշխատանքի առաջարկ և ծանոթացել ապահովագրական պարտադիր վիճակագրերի կնքման ու առաքման գործնական աշխատանքների հիմնադրույթներին:
- 2010 թ-ի մայիսի 13-ին կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում տեղի է ունեցել հանդիպում Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի ազգությամբ հայ շրջանավարտների ու նրանց համակարգողի հետ: Հանդիպման ընթացքում ուսանողների և ավագ սերնդի շրջանավարտների միջև կայացել է փորձի և մտքերի փոխանակում: Մասնակիցները հնարավորություն են ունեցել նաև մանրամասն ծանոթանալու ԿԵՀ-ի ընդհանուր կառուցվածքին, ընդունելության պայմաններին և ուսումնական գործընթացի առանձնահատկություններին:
- «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում կենտրոնը 2010 թ-ի մայիսին կազմակերպել է ԵՊՀ ուսանողների այցն ընկերություն, որի ժամանակ ուսանողները ծանոթացել են կազմակերպության պատմությանը, գործունեությանն ու կադրային քաղաքականությանը:
- Շարունակելով համագործակցությունը «HSBC Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ՝ ԵՊՀ 3 ուսանող 2010 թ-ի մայիսին մասնակցել են բանկի կողմից կազմակերպվող ամենամյա ամառային պրակտիկային: Ուսանողներից 2-ը բանկում անցել են աշխատանքի:
- 2010 թ-ի հունիսի 29-ին ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կայացել է «Ուսանողների և շրջանավարտների կարիերայի խնդիրները արդի աշխատաշուկայի համատեքստում» խորագրով հանրապետական սեմինար-քննարկում, որին մասնակցել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մ. Բաղալյանը, ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետի տեղակալ Ա. Սիմոնյանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունների ներկայացուցիչներ, ՀՀ կրթական համակարգում լուրջ դերակատարություն ունեցող մի շարք բուհերի պրոռեկտորներ,

շրջանավարտների և կարիերայի հարցերով պատասխանատուներ, միջազգային փորձագետներ և գործատուների ներկայացուցիչներ: Հանդիպման ժամանակ քննարկվել են ՀՀ բուհերում ուսանողների կարիերայի զարգացմանը, ուսանողական պրակտիկային և կարիերային վերաբերող մի շարք հարցեր:

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի հետ սկսված համագործակցության արդյունքում կենտրոնը ներկայացրել է 40 համալսարանականների տվյալներ՝ հիշյալ ինստիտուտի կողմից 2010 թ-ին կազմակերպվելիք ՀՀ սոցիալական ոլորտին վերաբերող շուրջ մեկ տասնյակ հետազոտական ծրագրերին մասնակցելու համար: Ներկայացված համալսարանականները, հաղթահարելով մրցույթի փուլերը, ընդգրկվել են հետազոտությունների ծրագրի մեջ:
- Կենտրոնը, կարևորելով կամավորական աշխատանքի զարգացումը ուսանողների շրջանում, հավաքագրել է տարբեր ֆակուլտետների ուսանողներից բաղկացած կամավորական խումբ: Ուսանողները կամավորական հիմունքներով աջակցել են կենտրոնի աշխատանքներին, մասնակցել կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումներին, քննարկումներին, սեմինարներին և թրեյնինգներին, ինչի արդյունքում ձեռք են բերում աշխատանքային հմտություններ և գիտելիքներ: Կենտրոնի կամավորներին խրախուսելու նպատակով 2010 թ-ի հուլիսի 3-ին Հունագիտության կենտրոնում նրանք պարգևատրվել են ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի շնորհակալագրերով:
- Հաշվետու ուստարվա առաջին ամիսներին համագործակցություն է ծավալվել «Intra Call Center» կազմակերպության հետ, որի արդյունքում 10 համալսարանական ընդունվել են աշխատանքի:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցության արդյունքում ԵՊՀ 10 շրջանավարտ ընդունվել են աշխատանքի:
- Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ, որի արդյունքում վերջինս թափուր հաստիքների մասին տվյալներ է տրամադրում կենտրոնին:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Դավթյան Կարինե Ավետի*

2009-2010 ուստարում ԵՊՀ մշակույթի կենտրոնը շարունակել է իրականացնել իր առջև դրված խնդիրները, որոնք են՝ համակարգել և գեղարվեստական բարձր չափանիշներով անցկացնել ԵՊՀ շրջանակներում և նրանից դուրս կազմակերպվող մշակութային միջոցառումները և համապատասխան աշխատանքներ իրականացնել համալսարանական ուսանողության մշակութային դաստիարակության ուղղությամբ:

ԵՊՀ մշակույթի կենտրոնն իր գործուն մասնակցությունն է ունեցել ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման գործում: Այդ միջոցառումների գագաթնակետը 2009 թ-ի հոկտեմբերի 3-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կազմակերպված մեծածավալ հանդիսությունն էր, որին ներկա էին բազմաթիվ հյուրեր ինչպես Հայաստանի Հանրապետության տարբեր գերատեսչություններից, այնպես էլ աշխարհի տարբեր համալսարաններից:

2009 թ-ի սեպտեմբերի 29-ին ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակներում կենտրոնը կազմակերպել է նկարիչների մրցույթ, որին մասնակցել են և՛ ուսանողներ, և՛ դասախոսներ: Մրցույթը ներառել է գեղանկարչություն, լուսանկարչություն, գրաֆիտի, ձեռքի աշխատանք, հուլունագործություն, գոբելեն և այլ բնագավառներ: Կազմվել էր արհեստավարժ ժյուրի, որի նախագահն էր ՀՀ երիտասարդ նկարիչների միության նախագահ Աննա Հարությունյանը:

2009 թ-ի սեպտեմբերի 15-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպվել և անցկացվել է արդեն ավանդույթի վերածված «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման արարողությունը»:

2009 թ-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ԵՊՀ ՈՒՀԱ ակումբը Ամերիկյան համալսարանում մասնակցել է «Ուսանողական լիգայի» խաղերին՝ հասնելով մինչև կիսաեզրափակիչ փուլ:

Մշակույթի կենտրոնի և Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի համատեղ ջանքերով 2009 թ-ի հոկտեմբերի 9-ին իրականացվել է Երևանի հիմնադրման 2791-ամյակին նվիրված միջոցառում՝ «Երևանի հին ու նոր պատմությունը» խորագրով:

2009 թ-ի հոկտեմբերի 11-ին Մշակույթի կենտրոնի մեներգիչները մասնակցել են Էրեբունի-Երևան տոնակատարությանը, որը կազմակերպվել էր Երևանի քաղաքապետարանի կողմից:

2009 թ-ի նոյեմբերի 11-ին Մշակույթի կենտրոնի դահլիճը լի էր Դանիել Վարուժանի պոեզիայի երկրպագուներով. կազմակերպվել էր թատերականացված ներկայացում՝ նվիրված Վարուժանի ծննդյան 125-ամյակին, որն անցկացվում էր պետական միջոցառումների շրջանակներում:

2009 թ-ի նոյեմբերի 17-ին Ուսխորհրդի և Մշակույթի կենտրոնի համատեղ ջանքերով ԵՊՀ-ում 1-ին անգամ իրականություն դարձավ «Ուսանող-2009» համերգ-մրցանակաբաշխությունը՝ նվիրված Ուսանողի միջազգային օրվան: Մրցանակաբաշխությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու հասարակական ակտիվություն և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին: Ուսանողական խորհրդի հետ համագործակցությունը բարձր մակարդակով իրականացնելու համար Ուսխորհուրդը Մշակույթի կենտրոնին պարգևատրել է շնորհակալագրով:

2009 թ-ի դեկտեմբերի 15-ից 25-ը Մշակույթի կենտրոնը (մեներգիչներ, աղջիկների և տղաների պարային համույթներ, երգչախումբ, թատրոն-ստուդիա) ակտիվորեն մասնակցել է համապետական մշակութային երիտասարդական քարոզարշավին՝ «Մենք հայ ենք, մենք երիտասարդ ենք, մենք ուժեղ ենք» կարգախոսով, որը կազմակերպել էր ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը: 10 օր շարունակ քարոզարշավի մասնակիցները համերգներով հանդես են եկել ԼՂՀ մի շարք զորամասերում, ինչպես նաև Ստեփանակերտի մշակույթի տանը: Ծրագրի շրջանակներում մասնակիցները ելույթներ են ունեցել նաև Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի մարզերում և Ջավախքում:

«ԵՊՀ ռեկտորը ներկայացնում է» խորագրի ներքո կենտրոնը հանդիպումներ է կազմակերպել ֆրանսիացի շանսոնիե Վալերի Օմբղուազի (Ֆրանսիական բանասիրության ամբիոնի հետ համատեղ) և Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի դերասանուհի, ՀՀ ժողովրդական արտիստուհի

Լեյլի Խաչատրյանի հետ («Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի հետ համատեղ): Վերջին հանդիպման ընթացքում Մշակույթի կենտրոնի մեներգիչները հանդես են եկել անհատական կատարումներով, իսկ ԵՊՀ ռեկտորը դերասանուհու ծննդյան 80-ամյակի առթիվ նրան շնորհել է ԵՊՀ ոսկե մեդալ:

2010 թ-ի փետրվարին ԵՊՀ գրադարանում բացվել է Չինական անկյուն, որի բացման արարողությունը իրականացվել է Գիտության, կրթության և մշակույթի չինական կենտրոնի և Մշակույթի կենտրոնի ջանքերով:

2010 թ-ի փետրվարի 18-ին Ուսանողական խորհրդի, Մշակույթի կենտրոնի և Սբ. Էջմիածնի առաջնորդարանի երիտասարդական թևի ջանքերով Մշակույթի կենտրոնի դահլիճում նշվել է Սուրբ Վարդանանց տոնը, որին մասնակցել են Մշակույթի կենտրոնի խմբերը, Գևորգյան ճեմարանի երգչախումբը և հրավիրված այլ խմբեր:

2010 թ-ի փետրվարի 26-ին Մշակույթի զարգացման հիմնադրամի և Մշակույթի կենտրոնի ջանքերով ԵՊՀ կամարների ներքո կազմակերպվել է հեղինակային երգի փառատոն, որին մասնակցել են ինչպես սկսնակ, այնպես էլ անվանի երաժիշտներ (Ռուբեն Հախվերդյան, Դավիթ Ամալյան և ուրիշներ):

2010 թ-ին մարտի 19-ին կենտրոնի աղջիկների պարային համույթը «Մոսկվա» կինոթատրոնում մասնակցել է Բրիտանական կինոփառատոնի բացման արարողությանը՝ կատարելով փառատոնի խորհրդանշական պարը:

2010 թ-ի մարտ 26-ին՝ Հայաստանում անցկացված «Ֆրանսիական օրեր»-ի շրջանակներում, ԵՊՀ մեծ դահլիճում Ֆրանսիական բանասիրության ամբիոնը և Մշակույթի կենտրոնը կազմակերպել են ֆրանսիական երգի փառատոն, որին բացառապես մասնակցել են համալսարանականները: Կենտրոնի երգչախումբը և մեներգիչները հանդես են եկել ֆրանսիական երգերի կատարմամբ:

2010 թ-ի մարտի 26-ից մինչև 29-ը Ուսանողական խորհուրդը և Մշակույթի կենտրոնը ԵՊՀ ղեկավարության գլխավորությամբ մեկնել են Արցախ: Քաշաթաղում և Քարվաճառում համալսարանականները կազմակերպել են ծառատունկ, որից հետո Մշակույթի կենտրոնը Լաչինում և Քարվաճառում հանդես է եկել համերգային ծրագրով, որը մեծ ոգևորություն է առաջացրել տեղի բնակչության շրջանում: ԼՂՀ-ում կատարած աշխատանքների համար մասնակիցները ԵՊՀ ռեկտորի և Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի կողմից պարգևատրվել են պատվոգրերով:

2008-2009 ուստարում Հայաստանի գրողների միության հետ համատեղ կենտրոնը կազմակերպել էր ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված միջբուհական գրական մրցույթ, որին մասնակցել էին Հայաստանի գրեթե բոլոր պետական բուհերը: Եվ ահա 2010 թ-ի մարտի 30-ին լույս տեսավ «Բարի երթ» խորագրով անթոլոգիան, որում տեղ էին գտել մրցույթին մասնակցած լավագույն ստեղծագործությունները:

2010 թ-ի ապրիլի 7-ին Մշակույթի կենտրոնի պարային համույթները և մեներգիչները մասնակցել են Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից ՀՀ Ազգային ժողովի բակում կազմակերպված համերգին՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին:

2010 թ-ի ապրիլի 14-ին Ուսանողական խորհուրդը և Մշակույթի կենտրոնը ԵՊՀ-ում կազմակերպել են հնդկական երաժշտության օր: Միջոցառումը համալսարանականներին հնդկական երաժշտությանը և հնդկական յոգայի գաղտնիքներին հաղորդակցվելու հնարավորություն է ընձեռել:

2010 թ-ի ապրիլի 28-ին լրացավ «Համալսարանական» թատրոն-ստուդիայի հիմնադրման 5-ամյակը, որի կապակցությամբ թատրոն-ստուդիան համալսարանականներին ներկայացել է «Ընկեր Բ. Փանջունի» նոր ներկայացմամբ: Ներկայացման օրը ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը թատրոն-ստուդիայի հիմնադիր անդամներին պարգևատրել է պատվոգրերով, իսկ «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ի նախագահ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Ա. Քարամյանը թատրոնին նվիրել է 1000000 դրամ:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակի առթիվ 2010 թ-ի մայիսին ԵՊՀ-ում անցկացված հոբելյանական միջոցառմանը ակտիվորեն մասնակցել է նաև կենտրոնի երգչախումբը և ստացել մասնակցության վկայագիր: Երգչախումբը մասնակցել է նաև ՌԴ դեսպանատան կողմից Մոսկվայի տանը կազմակերպված՝ Հայրենական մեծ պատերազմին նվիրված երգերի փառատոնին և ճանաչվելով լավագույն երգչախումբ՝ ստացել պատվոգիր:

2010 թ-ի մայիսի 13-ին կենտրոնը Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համատեղ կազմակերպել է մեծ մարդասեր Ֆ. Նանսենին նվիրված մեծարման երեկոն, որն արդեն ավանդական է դարձել:

2010 թ-ի մայիսի 18-ին Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի հետ համատեղ 5-րդ անգամ կազմակերպվել է «Լավագույն ուսանող-2010» ամենամյա համերգ-մրցանակաբաշխությունը:

2010 թ-ի հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, Մշակույթի կենտրոնի «Նիկե» ջոկատը և մեներգիչները ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպել են յուրօրինակ միջոցառում. ողջ բակը լի էր երեխաներով, ովքեր գույնզգույն կավիճներով ներկեցին տարածքը: Միջոցառմանը մասնակցել են ինչպես ուսանողները, այնպես էլ ԵՊՀ աշխատակիցների երեխաները:

Մշակույթի կենտրոնն իր աշխատանքներն իրականացնում է նաև իր կազմում գործող մշակութային խմբերի շնորհիվ:

Թատրոն-ստուդիան հաշվետու ժամանակաշրջանում ներկայացրել է 3 բեմադրություն, ինչպես նաև մասնակցել է մեներգիչների երգերի համար բեմադրված համարներին:

Հիմնադրման 5-ամյակի կապակցությամբ թատրոն-ստուդիան 2010 թ-ի մայիսին լույս է ընծայել բուկլետ, որը, ըստ էության, նախորդ 5 տարիների յուրատեսակ հաշվետվությունն է:

Թատրոն-ստուդիան ունի 20 անդամ և 5 բեմադրություն: Պարապմունքների ընթացքում անցկացվում են դերասանի վարպետության, պլաստիկայի, ձայնի և խոսքի մշակման, ինչպես նաև թատրոնի պատմության և անվանի դեմքերի մասին դասեր: Թատրոն-ստուդիան արդեն 4 տարի է՝ մասնակցում է «Հայֆեստ» միջազգային թատերական փառատոնին:

Մշակույթի կենտրոնում արդեն 3 տարի է, ինչ ձևավորվել է **մեներգիչների խումբը**, որում ընդգրկված է մոտ 20 ուսանող: Բացի անհատական կատարումներից՝ հաճախ բեմադրվում են նաև բազմաձայն խմբային երգեր, ինչպես նաև զուգերգեր: 2009-2010 ուստարում մեներգիչների խումբը ներկայացել է 15 նոր համարներով:

Հաշվետու ժամանակաշրջանում Մշակույթի կենտրոնը համալսարանականներին է ներկայացրել նոր վերակազմավորված **ԵՊՀ կամերային նվագախումբը**, որն ունի 10 անդամ: Նորաստեղծ խումբը 1 տարում պատրաստել է 10 համար և մասնակցել համալսարանում կազմակերպված միջոցառումներին:

Նախորդ ուսումնական տարվա վերջում կենտրոնի կազմում ձևավորված **տղաների պարային համույթում** ընդգրկված են 8 տղաներ: Համույթի պարացանկում կան 5 բեմադրված պարեր, ինչպես նաև բեմադրված համարներ:

Աղջիկների պարային համույթը հաշվետու ժամանակաշրջանում համալրվել է նոր անդամներով և ունի 20 պարուհի: Համույթի կատարումները համալրվել են 3 նոր պարերով, ինչպես նաև բեմադրված նոր համարներով:

ԵՊՀ երգչախումբը հաշվետու ժամանակաշրջանում նույնպես համալրվել է նոր անդամներով, իսկ երգացանկը՝ նոր երգերով: Երգչախումբը բաղկացած է 15 անդամից, երգացանկն էլ՝ 30 երգից: 2009-2010 ուստարում երգչախումբն արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և վկայագրերի:

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Երևանի պետական համալսարանում գիտական աշխատանքներ են տարվում 147 թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում, որոնցից 116-ը պետական ֆինանսավորմամբ գիտական թեմաներ են, 31-ը՝ միջազգային դրամաշնորհներ: 2005 թ-ից գործում են նաև պետական բազային ֆինանսավորմամբ գիտահետազոտական լաբորատորիաներ /18/ և կենտրոններ /11/:

Ամփոփվում են թեմատիկ ֆինանսավորման հետազոտական արդյունքները: Մեծ տեղ է հատկացվել հասարակագիտական և հայագիտական ուսումնասիրություններին: Պետական ֆինանսավորմամբ գործող 116 թեմաներում և 29 լաբորատորիաներում ու կենտրոններում ընդգրկված են ավելի քան 915 ԵՊՀ աշխատակիցներ, որոնցից 460-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից:

Գիտական գործունեության կարևոր բաղադրիչներից է բարձր որակավորմամբ գիտական կադրերի պատրաստումը: Առաջադրված խնդրի լուծումներից մեկը գիտական աշխատանքներում ուսանողների և ասպիրանտների ակտիվ ներգրավումն է: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս 2011թ. պետական բյուջեից ֆինանսավորվող թեմաների հայտերը կազմելիս պարտադիր պայման է համարվել ասպիրանտների, հայցորդների և մագիստրոսների ընդգրկվածությունը գիտական թեմաներում:

Շարունակել են գիտական գործունեություն ծավալել նախորդ տարիներին հիմնված մի շարք կառույցներ՝ Քաղաքակրթությունների և մշակութային հետազոտությունների, Եգիպտագիտության, Հունագիտության, Տեղեկատվական տեխնոլոգիաների, Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնները, ԵՊՀ պատմության թանգարանի գիտահետազոտական լաբորատորիան, 2007թ. հունվարից ԵՊՀ առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող Սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների ինստիտուտը /ՔԵՆԴԼ/, որում գործող հինգ գիտահետազոտական խմբերում ընդգրկված են մեկ տասնյակից ավելի գիտաշխատողներ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը: Գիտահետազոտական այս կենտրոններն իրենց տեսակով եզակի են հանրապետության գիտական համակարգում, ուստի այստեղ կատարվող աշխատանքները կարևոր ներդրում են գիտության բնագավառում:

ԵՊՀ ղեկավարության ջանքերով կազմվել է վերը նշված ստորաբաժանումները լաբորատոր սարքավորումներով համալրելու ծավալուն ծրագիր, որն արժանացել է նաև հանրապետության նախագահի ուշադրությանը և գտնվում է նրա հոգածության ներքո:

2009-2010 ուսումնական տարում Գիտակազմակերպական բաժնի աշխատակիցները ՀՀ Գիտության պետական կոմիտեի պատվերով կազմել են «ԵՊՀ անձնագիրը», որտեղ ամփոփված է տեղեկատվություն ԵՊՀ գիտաշխատողների 2008-2009 թթ. գիտական աշխատանքների, գիտաշխատողների կադրային տվյալների, ԵՊՀ գիտական սեկտորի պետական ֆինանսավորման ծավալների վերաբերյալ: Անձնագրում մանրամասն ներկայացված է վերջին երկու տարիներին ԵՊՀ աշխատակիցների կողմից հրապարակված գիտական աշխատանքների ցանկը: Անձնագրի լրացման և շարունակական թարմացման աշխատանքները կրելու են պարբերական բնույթ:

Գիտակազմակերպական բաժնի կողմից ձևակերպվել և պետական գրանցում են ստացել 5 գյուտերի արտոնագրեր, որոնցից 3-ը՝ քիմիայի բնագավառում, 2-ը՝ ֆիզիկայի: Բաժնի աշխատակիցները պարբերաբար ուսումնասիրել են արտոնագրային գրականությունը՝ «Մտավոր սեփականության գործակալության» տրամադրած գյուտերի նկարագրությունները և օրենսդրական ակտերը:

Գիտակազմակերպական բաժինն անմիջականորեն մասնակցել է ԵՊՀ-ում անցկացված տարբեր միջոցառումներին. արշավներ, գիտաժողովներ, թեմատիկ դասախոսություններ և այլն:

Կատարված աշխատանքների ամփոփման տեսանկյունից կարևոր էր Եվրասիական համալսարանների ասոցիացիայի նախաձեռնությամբ 2010թ. Մոսկվայի համալսարանի տպագրած «Եվրասիական համալսարանները 21-րդ դարում» հանդեսում «Երևանի պետական համալսարանում գիտության զարգացման միտումները 2005-2009 թթ.» խորագիրը կրող հոդվածի հրատարակումը: Հոդվածում ներկայացված են ԵՊՀ կենտրոնների և լաբորատորիաների, ինչպես նաև ինստիտուտների կատարած աշխատանքները 2005-2009 թթ. կտրվածքով /տես՝ «Тенденции развития науки в Ереванском государственном университете в 2005-2009 гг.», Издательство Московского университета, ст. 83-88, Москва, 2010 г./:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Համակարգող՝ *Բուդաղյան Արմեն Ստեփանի, ուս. աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ*

2009-2010 ուստարում Համալսարանական կրթության զարգացման բաժինը համալսարանի տարբեր ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ կատարել է հետևյալ աշխատանքները.

1. ***Ռազմավարական պլանավորման գործընթաց***

Շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ռազմավարական պլանավորման գործընթացի ուղղությամբ: Մասնավորապես՝

- Ավարտվել, ԵՊՀ խորհրդի կողմից հաստատվել (2009 թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 34 որոշմամբ), հրատարակվել և ԵՊՀ ստորաբաժանումներին է տրվել 2010-2014 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը, որտեղ ներկայացված են համալսարանի առաքելությունը, տեսլականը, հիմնարար արժեքները, ռազմավարական և աջակցող նպատակները, ընթացիկ գերակայությունները, դրանց իրականացման խնդիրները և անհրաժեշտ գործողությունները:
- Կազմվել և ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել է (2010 թ-ի հուլիսի 8-ի թիվ 5 նիստում) «ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան»-ը, որը բաժանվել է համալսարանի բոլոր ստորաբաժանումներին՝ կատարման համար:
- Լրամշակվել, հրատարակվել և համալսարանի համապատասխան ստորաբաժանումներին է տրվել ԵՊՀ գործունեության գնահատման ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը վերջին 5 ուստարիների համար, որն ընդգրկում է համալսարանի գործունեության բոլոր հիմնական բնագավառները:

2. ***Կրեդիտային համակարգ***

- Լրամշակվել է ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատված (2009 թ-ի հունվարի 29-ի թիվ 1 նիստում) և հրատարակված «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի համար: Կատարված փոփոխությունները մասնավորապես վերաբերում են գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի հիմնադրույթներին:
- Մշակվել և ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել է (2009 թ-ի սեպտեմբերի 28-ի թիվ 5 նիստում) «Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը, որի նպատակը ԵՊՀ հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի՝ կրեդիտային հենքով կազմակերպման համար միասնական նորմատիվային, կանոնակարգային և կազմակերպական հենքի ձևավորումն է:
- Համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների ուսումնառությունը կրեդիտային համակարգով կազմակերպելու նպատակով լրամշակվել և հրատարակվել են միասնական ֆակուլտետային *«Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»* տեղեկատվական փաթեթները, որոնք պարունակում են ուսանողներին անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ իրենց ուսումնառությունը կրեդիտային համակարգով կազմակերպելու համար:
- Մշակվել և ֆակուլտետներին է տրամադրվել համաեվրոպական նմուշի (Եվրոպական հանձնաժողով, Եվրախորհուրդ և ՅՈՒՆԵՍԿՕ) դիպլոմի հավելվածի ԵՊՀ ձևաթերթը բակալավրի կրթական ծրագրի

համար, որը կոչված է դյուրացնելու ԵՊՀ շնորհած որակավորումների միջազգային ճանաչումը: Համակարգվել են 2009-2010 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմի հավելվածների պատրաստման աշխատանքները համալսարանի ֆակուլտետների հետ:

- ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի հետ համատեղ ստեղծվել է հետազոտողի գիտակրթական ծրագրի վերակառուցման և կրեդիտային հենքով իրականացման կանոնակարգային, ծրագրային և նորմատիվային փաստաթղթային բազան:

3. *Որակի ապահովում*

- Եվրոպական չափանիշներին համապատասխան՝ մշակվել են ԵՊՀ որակի ապահովման ներքուհական համակարգի ռազմավարությունը և համակարգի մի շարք տարրեր: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ 2009 թ-ի հոկտեմբերի 5-6-ին Երևանում կազմակերպվել է «Որակի բարելավում: Փորձը, մարտահրավերները և հեռանկարները Հայաստանի բարձրագույն կրթության համար» միջազգային գիտաժողովը, որի նյութերի ժողովածուն հրատարակվել և բաժանվել է ֆակուլտետներին:
- Ուսումնամեթոդական վարչության հետ համատեղ լրամշակվել են ուսանողական հարցման և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման նպատակով կազմված հարցաշարերը և կանոնակարգերը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	1	1	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս. Բ.* Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, «Թասակ» ՍՊԸ, Երևան, 2010, 110 էջ:

Հոդված

1. *Բուդաղյան Ա. Ս., Սարգսյան Յու. Լ., Բալաբանյան Հ. Ա.*, Ռազմավարական ուղենիշներ ՀՀ բուհերի որակի ներքին ապահովման համակարգերի համար, «Որակի ներքին ապահովում. փորձ, խնդիրներ և միտումներ» տեղեկատվության տարածման աշխատաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 11-16:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Հակոբյան Միհրան Տարոնի*

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է ուսանողական կյանքի ակտիվացմանը, ինտելեկտուալ զարգացմանը, հասարակական և մշակութային կյանքին ուղղված մի շարք ծրագրեր:

2010թ. մայիսի 16-ին կազմակերպվել է «Լավագույն ուսանող-2010» ավանդական մրցանակաբաշխությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի նախաձեռնությամբ և աջակցությամբ իրականացվել են 57 ծրագրեր, այդ թվում՝

- «Ուսանողական ինքնակառավարումը Երևանի պետական համալսարանում. երեկ և այսօր» (2010թ. ապրիլ),
- «Արցախյան հիմնահարցը» թեմայով սեմինար-քննարկումների շարք (մայիս-հուլիս 2010թ.),
- «ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների արդյունավետ համագործակցության հիմնախնդիրները» արտագնա քննարկում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (սեպտեմբեր 2010թ.),
- Ծառատունկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում (2009թ. նոյեմբեր, 2010թ. մարտ):

Կազմակերպվել են մի շարք հանդիպումներ գիտության, արվեստի և սպորտի հայտնի գործիչների հետ:

Բաժնի վարիչ Մ. Հակոբյանը 2010թ. հունվարին գործուղվել է Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա)՝ մասնակցելու «ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության» կազմակերպության նախաձեռնությամբ Մոսկվայի պետական համալսարանում կազմակերպված «Ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների առաջնորդների» 6-րդ ֆորումին:

2010թ. փետրվարին Մ. Հակոբյանը գործուղվել է Հունգարիայի Հանրապետություն (ք. Բուդապեշտ)՝ մասնակցելու «Երիտասարդական կենտրոնների եվրոպական 1-ին խորհրդաժողովին»:

2010թ. մայիսին Մ. Հակոբյանը և բաժնի աշխատակից Վ. Վարագյանը մեկնել են Բելառուսի Հանրապետություն (ք. Մինսկ)՝ մասնակցելու Բելառուսի պետական համալսարանի նախաձեռնությամբ կազմակերպված հայրենական մեծ պատերազմի 65-ամյակին նվիրված «Մեծ հաղթանակի լույսը» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին:

2010թ. սեպտեմբերին Վ. Վարագյանը գործուղվել է Տաջիկստանի Հանրապետություն (ք. Դուշանբե)՝ մասնակցելու «Բնապահպանական հիմնախնդիրները ԱՊՀ երկրներում և երիտասարդական կազմակերպությունների աշխատանքները» խորագիրը կրող միջազգային երիտասարդական գիտարշավին:

2010թ. հունիսին Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի աջակցությամբ Ժուռնալիստիկայի և Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներից մեկական ուսանող գործուղվել են Ռուսաստանի Դաշնություն (ք. Տոմսկ) մասնակցելու Սելիգեր լճի ափին կազմակերպված «Մենք ԱՊՀ-ի ապագան ենք» միջազգային երիտասարդական ճամբարին:

2010թ. հուլիսին ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի աջակցությամբ 3 երիտասարդ տնտեսագետներ գործուղվել են Ուկրաինայի Հանրապետություն (ք. Դոնեցկ)՝ մասնակցելու ամենամյա «Երիտասարդ տնտեսագետների ամառային դպրոցին»:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են նաև ուսանողական 17 արշավներ դեպի մարզային մշակութային կոթողներ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ *Ակոպյան Յոլակ Արամի, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ*

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ուսանողական խորհուրդն իրականացրել է ՈՒԽ կանոնադրությամբ նախատեսված իր գործառույթները, այն է՝ պաշտպանել է ուսանողների շահերը, ակտիվորեն մասնակցել է բուհի կառավարման գործընթացին, օգնել է սոցիալապես անապահով ուսանողներին, կազմակերպել է ուսանողների հանգիստը, իրականացրել է տարաբնույթ բազմաթիվ միջոցառումներ և այլն:

2010 թ-ի փետրվարի 19-ին կայացել է ԵՊՀ ՈՒԽ հերթական համագումարը, որից հետո տեղի ունեցած ԵՊՀ ՈՒԽ նախագահության նիստում ՈՒԽ նախագահի պաշտոնում վերընտրվել է Յոլակ Ակոպյանը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ ՈՒԽ արտաքին կապերի հանձնաժողովը զարգացրել է կապերը ՀՀ և արտասահմանյան գործընկերների հետ: ԵՊՀ ՈՒԽ նախագահը 2010 թ-ի հունվարի 25-26-ին մասնակցել է Մոսկվայում անցկացված և Ռուսաստանի ուսանողության օրվան նվիրված միջոցառմանը, իսկ 2010 թ-ի փետրվարին ՈՒԽ 6 ներկայացուցիչներ մեկնել են Սիրիա, որտեղ ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ: 2010 թ-ի ապրիլին ՈՒԽ նախագահը գործուղվել է Մոսկվա և մասնակցել Մոսկվայի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Լոմոնոսով-2010» գիտական կոնֆերանսին, իսկ մայիսին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակին նվիրված «Մեծ հաղթանակի լույսը» խորագրով միջոցառմանը: ՈՒԽ-ն շարունակել է համագործակցել Ուկրաինայի գործընկերների հետ, ինչի արդյունքում ՈՒԽ 3 ներկայացուցիչներ մասնակցել են Դոնեցկ և Սվյատիգորսկ քաղաքներում անցկացված Ամառային տնտեսագիտական դպրոցին:

Արտաքին կապերի հանձնաժողովի ներկայացուցիչները բազմիցս գործուղվել են նաև Վրաստանի Հանրապետություն և Արցախ:

ԵՊՀ ուսանողներն ակտիվորեն մասնակցել են միջբուհական բազմաթիվ մրցույթների: 2010 թ-ի օգոստոսին ԵՊՀ ուսանողները հաջողությամբ մասնակցել են «Բազե-2010» համահայկական երիտասարդական հավաքին:

ԵՊՀ ՈՒԽ իրավական հանձնաժողովը կազմակերպել է քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ ԵՊՀ ուսանողներին, հատկապես առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու համար: ԵՊՀ ՈՒԽ-ն հետևողական աշխատանքներ է իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ. մասնավորապես ՈՒԽ-ի աջակցությամբ շուրջ 300 ուսանողների տրվել են ուսման վարձի զեղչեր, կրթաթոշակներ, և ցուցաբերվել է այլ աջակցություն:

Ուսանողական խորհրդի ջանքերով զգալիորեն կարգի է բերվել ԵՊՀ Դիլիջանի մարզաառողջարանային ճամբարը, ինչի շնորհիվ շուրջ 500 ուսանողներ (8 հերթափոխ, յուրաքանչյուրում՝ շուրջ 60 ուսանող) 2010 թ-ի օգոստոսին այդտեղ իրենց ամառային հանգիստն են անցկացրել:

ՈՒԽ մշակույթի և սպորտի հանձնաժողովը կազմակերպել է մի շարք միջոցառումներ և մարզական առաջնություններ (հանդիպումներ մշակութային գործիչների հետ, տարբեր ոճերի համերգներ, ցուցահանդեսներ, բասկետբոլի, վոլեյբոլի, ձեռքի ուժի, շախմատի, սեղանի թենիսի ներբուհական առաջնություններ, որոնց հաղթողներին տրվել են մեդալներ և փոխանցիկ գավաթներ): 2010 թ-ի հունվարին հանձնաժողովի կողմից կազմակերպվել է Սուրբ Սարգսի տոնին նվիրված միջոցառում: Հանձնաժողովը կապեր է հաստատել Երևանի մի շարք թատրոնների հետ, ինչի արդյունքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ, որոնց համաձայն՝ ԵՊՀ ուսանողների համար սահմանվել են տոմսերի ձեռքբերման որոշակի զեղչեր:

Գիտակրթական հանձնաժողովը աշխատանքներ է իրականացրել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Հանձնաժողովն անցկացրել է նաև ԵՊՀ բանավեճի, «Բրեյն ռինգի» և այլ ինտելեկտուալ խաղերի առաջնություններ, որոնց հաղթողներին տրվել են գրքեր և պատվոգրեր:

Գիտակրթական հանձնաժողովի կողմից 2009 թ-ի նոյեմբերի 17-ին՝ Ուսանողության միջազգային օրը, կազմակերպվել է «Ուսանող-2009» մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ԵՊՀ մշակույթի կենտրոնի հետ

համատեղ կազմակերպվել է համերգ, և հասարակական ակտիվություն դրսևորած ուսանողները ԵՊՀ ռեկտորի կողմից պարգևատրվել են ԵՊՀ բրոնզե մեդալով:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության հանձնաժողովն ակտիվորեն շարունակել է իր գործունեությունը: 2010 թ-ի հունվարից գործում է ԵՊՀ ՈՒԽ պաշտոնական կայքը՝ www.ysusc.am հասցեով:

Ֆինանսատնտեսական հանձնաժողովը աշխատանքներ է իրականացրել ԵՊՀ ՈՒԽ բյուջեի միջոցների օգտագործման վերստուգման ուղղությամբ, ինչպես նաև ՈՒԽ մի շարք միջոցառումներ ֆինանսավորելու վերաբերյալ պայմանավորվածություններ է ձեռք բերել ձեռնարկատերերի հետ:

ԵՊՀ 90-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման ժամանակավոր հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ 90-ամյակին նվիրված միջոցառումներին, ինչպես նաև հանդես է եկել սեփական նախաձեռնություններով:

2010 թ-ի փետրվարի 19-ին տեղի ունեցած ՈՒԽ նախագահության նիստում որոշում է ընդունվել ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ: Հանձնաժողովի առջև նպատակ է դրվել ԵՊՀ ուսանողության շրջանում աշխատանքներ իրականացնել ուսանողների ռազմահայրենասիրական ոգու բարձրացման ուղղությամբ:

2009-2010 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈՒԽ-ն կազմակերպել է շուրջ 300 միջոցառում: Այսպես.

- ՈՒԽ նախագահության անդամները հանդիպել են ԵՊՀ առաջին կուրսեցիների հետ, նրանց իրազեկել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին (2009 թ-ի սեպտեմբեր),
- կազմակերպվել են մի շարք քննարկումներ և կլոր սեղաններ՝ նվիրված հայ-թուրքական հարաբերություններին (2009 թ-ի հոկտեմբեր),
- անցկացվել է «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ԵՊՀ միջֆակուլտետային առաջնությունը (2009 թ-ի դեկտեմբեր),
- Բանակի օրվա առթիվ տեղի են ունեցել միջոցառում և այց դեպի Եռաբլուր պանթեոն (2010 թ-ի հունվարի 28),
- կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Տեառնընդառաջին (2010 թ-ի փետրվար),
- կազմակերպվել է միջոցառում Կանանց միջազգային տոնի առթիվ (2010 թ-ի մարտի 8),
- ԵՊՀ մոտ հարյուր ուսանողներ, շարունակելով ՀՀ Ազգային հերոս, համալսարանական Թ. Կրպեյանի գործը, ի նշան բողոքի՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը ուխտագնացություն են կատարել՝ բարձրանալով Արտին լեռան գագաթը (2010 թ-ի ապրիլի 24),
- ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում կազմակերպվել է ռոք համերգ (2010 թ-ի մայիս),
- անցկացվել է վոլեյբոլի առաջնություն (2010 թ-ի հունիս),
- մի շարք ֆակուլտետների ՈՒԽ-ների կողմից կազմակերպվել են ավարտական դիպլոմների հանձնման արարողություններ (2010 թ-ի հուլիս),
- ֆակուլտետային ՈՒԽ-ները կազմակերպել են բազմաթիվ միջոցառումներ, ուխտագնացություններ, հանդիպումներ, այցելություններ և այլն:

Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ ԵՊՀ ՈՒԽ-ն բարեխիղճ աշխատանքի համար ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի կողմից 2009 թ-ի նոյեմբերին պարգևատրվել է շնորհակալագրով:

ՈՒԽ նախագահության կազմը

1. Ցոլակ Ակոպյան, նախագահ
2. Նարեկ Մելքոնյան, փոխնախագահ
3. Հարություն Ազգալդյան, քարտուղար, ԵՊՀ 90-ամյակին նվիրված ժամանակավոր հանձնաժողովի նախագահ
4. Ալեքսանդր Սարգսյան, արտաքին կապերի հանձնաժողովի նախագահ
5. Լուսինե Կոշեցյան, մշակույթի և սպորտի հանձնաժողովի նախագահ
6. Ասպրամ Կրպեյան, իրավական հանձնաժողովի նախագահ
7. Վարդան Ասատրյան, գիտակրթական հանձնաժողովի նախագահ
8. Արթուր Փոքրիկյան, ֆինանսատնտեսական հանձնաժողովի նախագահ
9. Ռուզան Գիշյան, լրատվության և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովի նախագահ
10. Հասմիկ Վարդանյան, սոցիալական հանձնաժողովի նախագահ

11. Անի Գրիգորյան, ԵՊՀ ուսանողության շրջանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի տարածման հանձնաժողովի նախագահ
12. Ռաֆայել Հովհաննիսյան, ԵՊՀ հեռակա բաժնում սովորող ուսանողների հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ
13. Ժենյա Յայլոյան, ԵՊՀ եվրոպական իրավունքի և ինտեգրման ու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոններում սովորող ուսանողների հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ
14. Արմենակ Հարությունյան
15. Անահիտ Նալբանդյան
16. Էդգար Մակարյան
17. Աննա Մարմարյան
18. Բաբկեն Մակարյան
19. Գևորգ Կարապետյան
20. Գոհար Մելոյան
21. Աննա Հակոբյան
22. Գայանե Դալլաքյան
23. Հայկ Ավագյան
24. Արգամ Երանոսյան
25. Արտյոմ Թորոսյան
26. Տարոն Թարվերդյան
27. Արևիկ Սիմոնյան
28. Սաթենիկ Աֆրիկյան
29. Շուշանիկ Գրիգորյան
30. Մուշեղ Գրիգորյան
31. Շալիկո Քոսյան
32. Թաթուլ Թամրազյան
33. Նարեկ Սարգսյան

Ֆակուլտետների ՈՒԽ նախագահներ

1. Նինա Հարությունյան, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ
2. Անահիտ Նալբանդյան, Արևելագիտության ֆակուլտետ
3. Աննա Մարմարյան, Աստվածաբանության ֆակուլտետ
4. Ծովինար Կարապետյան, Ժուռնալիստիկայի ֆակուլտետ
5. Հովհաննես Սարգսյան, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ
6. Արսեն Թավադյան, Իրավագիտության ֆակուլտետ
7. Աշոտ Ալեքսանյան, Կենսաբանության ֆակուլտետ
8. Արփինե Պողոսյան, Հայ բանասիրության ֆակուլտետ
9. Հայկ Ավագյան, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ
10. Ալեքսանդր Սարգսյան, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ
11. Արգամ Երանոսյան, Պատմության ֆակուլտետ
12. Գևորգ Աբգարյան, Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ
13. Տարոն Թարվերդյան, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ
14. Արմինե Հաջաթյան, Ռուս բանասիրության ֆակուլտետ
15. Արփինե Աղջոյան, Սոցիոլոգիայի ֆակուլտետ
16. Տիգրան Աբովյան, Տնտեսագիտության ֆակուլտետ
17. Վահագն Գասպարյան, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ
18. Շուշանիկ Գրիգորյան, Քիմիայի ֆակուլտետ
19. Մուշեղ Գրիգորյան, Ֆիզիկայի ֆակուլտետ
20. Արազ Թանգամյան, Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետ
21. Թաթուլ Թամրազյան, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ *Խաչատրյան Կառլեն Գագիկի, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ*

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող գործառույթներ ու քայլեր, սատարել է գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնություններին, նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

Կազմակերպվել են մի շարք ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, գիտահանրամատչելի դասախոսություններ, քննարկումներ և այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ (ավելի քան 300 միջոցառում):

Հանրապետական և միջբուհական 10 գիտաժողովներ, որոնց թվում՝

- «Տրանսպլանտոլոգիայի բժշկահիրավական հիմնախնդիրները» թեմայով միջբուհական գիտաժողով, Իրավագիտության ֆակուլտետ (10.11.2009):
- Արամ Մանուկյանի 130-ամյակին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողով (26.11.2009):
- Միջբուհական ուսանողական գիտաժողով, Հայ բանասիրության ֆակուլտետ (12-16.04.2010): Գիտաժողովին մասնակցել են 5 բուհերի 67 ուսանողներ:
- «Փաստաբանության արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները ՀՀ-ում» թեմայով միջբուհական գիտաժողով, Իրավագիտության ֆակուլտետ (15.04.2010):
- Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողով (27-29.04.2010): Գիտաժողովին մասնակցել են հայաստանյան 6 բուհերի 41 ուսանողներ և ասպիրանտներ: ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ հրատարակվել է գիտաժողովի թեզիսների ժողովածուն, իսկ լավագույն աշխատանքները գիտական հոդվածների տեսքով տպագրվել են Պատմության ֆակուլտետի «Տարեգրքում»:
- «Քրեական դատավարության արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները ՀՀ-ում» թեմայով միջբուհական գիտաժողով, Իրավագիտության ֆակուլտետ (17.05.2010):
- «Բնօգտագործումը և բնապահպանությունը Հայաստանի Հանրապետությունում. էկոլոգիական հիմնախնդիրներ» խորագրով հանրապետական ուսանողական գիտաժողով (31.05-01.06.2010): Գիտաժողովին մասնակցել են հայաստանյան 4 բուհերի 25 ուսանողներ և ասպիրանտներ: ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ու քիմիայի ֆակուլտետների խորհուրդների երաշխավորությամբ հրատարակվել է գիտաժողովի թեզիսների ժողովածուն:

Ֆակուլտետային 18 գիտաժողովներ, որոնց թվում՝

- «Հեղինակային հեռուստահաղորդումները ՀՀ հեռուստաեթերում» - Ժուռնալիստիկայի ֆակուլտետ (05.11.2009):
- Սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 5-ամյակին նվիրված գիտաժողով - Սոցիոլոգիայի ֆակուլտետ (10.11.2009):
- Դանիել Վարուժանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտաժողով - Հայ բանասիրության ֆակուլտետ (24.11.2009):
- «ՀՀ-Սփյուռք տնտեսական փոխհարաբերություններ» - Տնտեսագիտության ֆակուլտետ (27.11.2009):
- Հովհաննես Թումանյանի ծննդյան 140-ամյակին նվիրված գիտաժողով - Հայ բանասիրության ֆակուլտետ (15.12.2009):

- Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հիմնադրման 75-ամյակին նվիրված գիտաժողով - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ (09.03.2010):
- Ֆակուլտետային գիտական նստաշրջան - Քիմիայի ֆակուլտետ (16-17.03.2010):
- «Ջավախքը՝ Հայաստանի հյուսիսային դարպաս» - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ (15.04.2010):
- «Էթիկական չափանիշների պահպանման հիմնահարցը հեռուստաեթերում» - Ժուռնալիստիկայի ֆակուլտետ (15-16.04.2010):
- «Նորագույն տեխնոլոգիաների առանձնահատկությունները» - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ (17.04.2010):
- «Հանրային կառավարման հիմնահարցերը» - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ (07.05.2010):
- «Լեզուների և գրականության աշխարհում-2010» - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ (20.05.2010):

Սեմինար-քննարկումներ, կլոր սեղաններ (93), որոնց թվում՝

- Անգլալեզու սեմինար-քննարկում միջմշակութային հաղորդակցման վերաբերյալ - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ (28.10.2009):
- «Սոցիալական աշխատողի դերն ու կարգավիճակը ՀՀ-ում» թեմայով սեմինար - Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ (30.10.2009):
- Քննարկում՝ նվիրված պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության հիմնախնդիրներին - Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ (10.11.2009):
- Գ. Խանջյանի «Հիվանդանոց» վեպի քննարկում - Հայ բանասիրության ու Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների ՈՒԳԸ-ներ (13.11.2009):
- «Նավթային գործոնը Մերձավոր Արևելքի երկրներում» թեմայով սեմինար-քննարկում - Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ (30.11.2009):
- «Adobe CS4» ծրագրային փաթեթին նվիրված սեմինար - Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (04.12.2009):
- Կլոր սեղան-քննարկում՝ «Գիտական աշխատանքներ գրելու հմտություններ» թեմայով - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ (11.03.2010):
- «Մուսուլմա՞ն, թե՞ մահմեդական» թեմայով սեմինար-քննարկում - Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ (12.03.2010):
- Քննարկում՝ «Բարոյական վնասի նյութաիրավական և բարոյական կողմերը» թեմայով - Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ (16.03.2010):
- Ռուս բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն անցկացրել է «Ռուսական տոները, ավանդույթները, խորհրդանիշերը» թեմայով կլոր սեղան (18.03.2010):
- «Թուրքիայի իսլամացած և ծպտյալ հայերը» թեմայով սեմինար-քննարկում - Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ (02.04.2010):
- Սեմինար-քննարկում՝ նվիրված ՀՀ Սահմանադրության 15-ամյակին - Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ (19.04.2010):
- «Տեղեկատվության հավաքման մեթոդներ» թեմայով սեմինար - Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ (22.04.2010):

Հանդիպում-դասախոսություններ (64), որոնց թվում՝

- «Կարին» ավանդական երգ ու պարի համույթի գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանի հետ - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (08.10.2009):

- «Հայկական Stonehange-ի առեղծվածը բացահայտված է. Քարահունջ» թեմայով - Ֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (06.11.2009): Դասախոսությունը կարդացել է մաթեմատիկոս Վաչագան Վահրադյանը:
- Հանդիպում անվանի պրոֆեսոր Լևոն Աբրահամյանի հետ - Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ՈՒԳԸ (22.02.2010):
- Հանրային ռադիոյի «Ապրելու բանաձև» ծրագրի հեղինակ և վարող Գոհար Մարտիկյանի հետ - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (01.03.2010):
- Հանդիպում գրող, հրապարակախոս, կինոսցենարիստ Վահրամ Մարտիրոսյանի և լրագրող Արթուր Բախտամյանի հետ - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (12.03.2010):
- Դասախոսություն՝ «Գերմեծ սև խոռոչներ և երկնային մարմիններ» թեմայով: Դասախոսությունը կարդացել է ֆակուլտետի դեկան Յու. Վարդանյանը - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (16.03.2010):
- Հանդիպում՝ «Հայկական բլոգոսֆերան և սոցիալական ցանցերը տեղեկատվական պատերազմների համատեքստում» թեմայով: Հանդիպումը վարել են բլոգերներ, տեղեկատվական պատերազմների հարցերով փորձագետներ Կարեն Վրթանեսյանը, Սամվել Մարտիրոսյանը և Տիգրան Քոչարյանը - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (17.03.2010):
- Հանդիպում «Այքն քոմյունիքեյշնզ»-ի գործադիր տնօրեն Ռաֆֆի Քասարջյանի հետ: Հանդիպման թեման էր «Ինտերնետ տեխնոլոգիաներն ու ինտերնետ ժուռնալիստիկան» - Ժուռնալիստիկայի ու Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ՈՒԳԸ-ներ (26.03.2010):
- Հանդիպում Մոսկվայում ԼՂՀ մշտական ներկայացուցչության լրատվության և վերլուծության բաժնի պետ Արսեն Մելիք-Շահնազարովի հետ: Հանդիպման թեման հայ-ադրբեջանական տեղեկատվական հակամարտությունն էր - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (26.03.2010):
- Հանդիպում բանաստեղծ Հովիկ Հովեյանի հետ - Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ (26.03.2010):
- Հանդիպում հեռուստամեկնաբան, «Թի Վի 5» հեռուստաընկերության լրատվական ծառայության ղեկավար Գևորգ Ալթունյանի հետ - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (09.04.2010):
- Հանդիպում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի հետ - Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ (07.05.2010):
- Հանդիպում «Արարատ» հեռուստաընկերության գեղարվեստական ղեկավար Մերուժան Տեր-Գուլանյանի հետ - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ (21.05.2010):
- Կլոր սեղան-քննարկում գրող, հրապարակախոս Վ. Մարտիրոսյանի հետ՝ «Մենք և մեր քաղաքը» թեմայով - Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ (03.06.2010):

Ֆիլմի դիտումներ (47), որոնց թվում՝

- Դոստոևսկու «Ապուշը» վեպի հիման վրա նկարահանված ֆիլմ - Ռուս բանասիրության ֆակուլտետ (13.11.2009):
- Աշխարհահռչակ ֆիզիկոս, գյուտարար Նիկոլա Տեսլայի մասին պատմող ֆիլմ - Ֆիզիկայի ֆակուլտետ (03.12.2009):
- «Գերմեծ սև խոռոչներ» խորագրով ֆիլմ - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ (09.03.2010):
- Միջուկային ֆիզիկայի հետազոտությունների եվրոպական կենտրոնի (CERN) մեծ հադրոնային արագացուցչի մասին պատմող ֆիլմ - Ֆիզիկայի ֆակուլտետ (30.04.2010):
- «Բալենու այգին» խորագրով ֆիլմ - Ռուս բանասիրության ֆակուլտետ (03.05.2010): Մասնակցել են Չեխովի անվան դպրոցի աշակերտները: Ֆիլմի դիտմանը հաջորդել է տվյալ ստեղծագործության քննարկումը, իսկ դիտումից առաջ աշակերտները ներկայացրել են Չեխովի կյանքն ու ստեղծագործությունը:

- «Ժայռապատկերներից մինչև այբուբեն» խորագրով ֆիլմ - Հայ բանասիրության ֆակուլտետ (14.05.2010): Ներկա է եղել ֆիլմի հեղինակ, պատմաբան Արտակ Մովսիսյանը:
- Բորբոսների մասին պատմող ֆիլմ - Քիմիայի ֆակուլտետ (25.05.2010):

Արտահամալսարանական 52 միջոցառումներ, որոնց թվում՝

- Թարգմանչաց տոնի կապակցությամբ այց Օշական - Ռուս բանասիրության ֆակուլտետ (17.10.2009):
- Հայաստանի ազգային պատկերասրահ - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ (31.10.2009):
- «LT PYRKAL» ընկերության լաբորատորիա - Ֆիզիկայի ֆակուլտետ (26.11.2009):
- «Սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն» գիտահետազոտական ինստիտուտ (CANDLE) - Ֆիզիկայի ֆակուլտետ (10.12.2009):
- Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակ - Սոցիոլոգիայի ֆակուլտետ (19.02.2010): Ուսանողներին է ներկայացվել ՄԱԿ-ի «Կամավորներ» ծրագիրը, եղել է կլոր սեղան-քննարկում:
- Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ - Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ (19.02.2010):
- Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ - Հայ բանասիրության ֆակուլտետ (03.03.2010):
- Երկրաբանության թանգարան - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ (10.03.2010):
- Ե. Չարենցի տուն-թանգարան - Ժուռնալիստիկայի ֆակուլտետ (16.03.2010):
- Ս. Փարաջանովի տուն-թանգարան - Սոցիոլոգիայի ֆակուլտետ (20.03.2010):
- Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտ - Ֆիզիկայի ֆակուլտետ (31.03.2010):
- Բնության պետական թանգարան - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ (02.04.2010):
- Պատմության թանգարան - Արևելագիտության ֆակուլտետ (17.04.2010):
- Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ (15-16.05.2010):
- Ժողովրդական արվեստների թանգարան - Հայ բանասիրության ֆակուլտետ (19.05.2010):
- Գիտարշավ դեպի Խոսրովի պետական արգելոց (19.06.2010):

Այլ աշխատանքներ

- Կազմակերպվել են նաև տարաբնույթ թեմաներով բանավեճեր, դերային խաղեր և դատախաղեր, վիկտորինաներ, օլիմպիադաներ:
- 2010 թ-ի մայիսին տեղի է ունեցել ԵՊՀ 90-ամյակին նվիրված ՈՒԳԸ հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների 5-հատորյա ժողովածուի շնորհանդեսը: Ժողովածուի հրատարակման նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս 2009 թ-ի սեպտեմբերից: Ժողովածուն հրատարակության է երաշխավորել ԵՊՀ գիտական խորհուրդը: Այն ներառում է ՈՒԳԸ հոբելյանական գիտական նստաշրջանի լավագույն աշխատանքները (215 աշխատանք, 1428 էջ):
- ԵՊՀ ՈՒԳԸ-ն սատարել է տարբեր կազմակերպությունների կողմից ԵՊՀ-ում կազմակերպված և գիտակրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների անցկացմանը, ինչպես նաև կազմակերպել է համատեղ միջոցառումներ, որոնց թվում՝
  - Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն ԵՊՀ էկոլոգիական իրավունքի կենտրոնի հետ կազմակերպել է միջբուհական գիտաժողով՝ «Շրջակա միջավայրի պահպանություն և տնտեսական զարգացում» թեմայով (03.12.2009):
  - ԵՊՀ ՈՒԳԸ-ն «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի հետ կազմակերպել է սեմինար-քննարկում՝ «Կայուն զարգացման համաշխարհային գործընթացը և Հայաստանը. ձեռքբերումներ, մարտահրավերներ, հիմնախնդիրներ» թեմայով (14.12.2009):

- ԵՊՀ ՈՒԳԸ-ն «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» ՀԿ-ի հետ կազմակերպել է Երկրի օրվա 40-ամյակին նվիրված սեմինար՝ «Ինչպես ապրել կանաչ և կանգնեցնել կլիմայի փոփոխությունը» խորագրով (15.04.2010):
- Ֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն Օպտիկայի և ֆոտոնիկայի միջազգային SPIE կազմակերպության ԵՊՀ մասնաճյուղի հետ կազմակերպել է լազերի ստեղծման 50-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանս: Կոնֆերանսին հրավիրվել են մասնագետներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից (03-05.05.2010):

- ԵՊՀ ՈՒԳԸ-ն հետևողական աշխատանք է տարել ուսանողների շրջանում ՈՒԳԸ-ի մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետներում տեղի են ունեցել ՈՒԳԸ ներկայացուցիչների հանդիպումներ ուսանողների, կուրսերի ավագների հետ, որոնց ընթացքում ոչ միայն քննարկվել է ՈՒԳԸ-ի գործունեությունը, այլև արծարծվել են ուսանողներին հուզող տարաբնույթ խնդիրներ:
- Շարունակվել են ԵՊՀ ՈՒԳԸ ինտերնետային կայքի (կայքի հասցեն է՝ www.sssysu.am) զարգացմանը միտված աշխատանքները: Կայքի միջոցով ուսանողները կարող են ծանոթանալ ԵՊՀ ՈՒԳԸ նպատակներին, գործառույթներին, կառուցվածքին, տեղեկանալ ՈՒԳԸ-ի կազմակերպած միջոցառումներին և գործունեությանը, ինչպես նաև հետադարձ կապի միջոցով ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:
- ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհուրդն ակտիվորեն շարունակել է կապեր հաստատել այլ բուհերի ՈՒԳԸ-ների և գիտական կենտրոնների հետ: Այդ կապերը նպաստել են ուսանողների միջբուհական շփումների ակտիվացմանը, գիտական համատեղ ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:
- ԵՊՀ ՈՒԳԸ-ի գործուն աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ այլ բուհերում կայացած գիտաժողովներին: ԵՊՀ ՈՒԳԸ-ի միջոցով ԵՊՀ ուսանողներն ու ասպիրանտները մասնակցել են Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի կողմից կազմակերպված գիտաժողովներին ու սեմինար-քննարկումներին:
- 2010 թ-ի ապրիլի 15-ին Մոսկվայում ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության և Տ. Շևչենկոյի անվան Ուկրաինայի ազգային համալսարանի ուսանողների և ասպիրանտների գիտական ընկերակցության (ՈՒԱՀ ՈՒԱԳԸ) միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը ստորագրել են ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ Կառլեն Խաչատրյանը և ՈՒԱՀ ՈՒԱԳԸ նախագահ Վյաչեսլավ Սավրանը:
- ԵՊՀ ՈՒԳԸ-ի գործուն աջակցությամբ 2010 թ-ի ապրիլի 12-ից 15-ը ԵՊՀ 4 ուսանողներ Մոսկվայում մասնակցել են Լոմոնոսովի անվան պետական համալսարանում անցկացված ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային «Լոմոնոսով-2010» գիտաժողովին:
- 2010 թ-ի մայիսի 19-ից 23-ը ԵՊՀ ՈՒԳԸ արտաքին կապերի հանձնաժողովի ղեկավար Տիգրան Քեռյանը մասնակցել է Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանի ուսանողների և ասպիրանտների գիտական ընկերակցության կազմակերպած «Էկոլոգիա, մարդ, հասարակություն» միջազգային գիտապրակտիկ գիտաժողովին:

Հրատարակություններ

1. ԵՊՀ 90-ամյակին նվիրված ՈՒԳԸ հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու (5 հատորով): Հատոր 1-5, Երևան, ԵՊՀ հրատ. 2010 - 1428 էջ:
2. Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողովի թեզիսների ժողովածու: Երևան, ԵՊՀ հրատ. 2010 - 74 էջ:
3. «Բնօգտագործումը և բնապահպանությունը Հայաստանի Հանրապետությունում. էկոլոգիական հիմնախնդիրներ» խորագրով հանրապետական ուսանողական գիտաժողովի թեզիսների ժողովածու: Երևան, ԵՊՀ հրատ. 2010 - 70 էջ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Գրիգորյան Մարատ Արիսի, երկրաբ.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ*
Դեկանի տեղակալներ՝ *Գրիգորյան Արսեն Թորգոմի, աշխարհ. գիտ. թեկնածու, դոցենտ*
Վարդանյան Վահրամ Պանդուխտի, երկրաբ.-հանք. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	Մասնագիտություն
020300	Երկրաբանություն
020400	Աշխարհագրություն
020600	Ջրաօդերևութաբանություն
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ
100100	Սերվիս

Մասնագիտացումներ՝ (մագիստրատուրա) երկրաֆիզիկա, ռեգիոնալ երկրաբանություն, օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում, երկրաքիմիա, ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն, ֆիզիկական աշխարհագրություն, ջրաօդերևութաբանություն, հասարակական աշխարհագրություն, բնօգտագործում և բնապահպանություն, քարտեզագրություն, գեոմորֆոլոգիա

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ եւ թղթակից անդամներ

1. Գրիգորյան Սերգեյ Վաղարշակի

Պատվավոր կոչումներ ունեցողներ

1. Սարգսյան Հողմիկ Հմայակի, ՀՀ վաստակավոր երկրաբան
Լաբորատորիան մասնակցել է «ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման (սնկեր)» ծրագրին: Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքին վերաբերող աշխատանքներն ավարտվել են, գիրքը հանձնվել է հրատարակության: Պատրաստվել է Կարմիր գրքում ընտրվելիք սնկերի վերջնական ցուցակը, որն ընդգրկում է 40 տեսակի գլխարկավոր սնկեր: Ընդհանրացվել են մակրոսկոպիկ սնկերի տեսակային կազմի վերաբերյալ եղած տվյալները՝ օգտագործելով Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր գրքի դասակարգերը և չափորոշիչները: Հաշվետու ժամանակաշրջանում պաշտպանվել է երեք թեկնածուական ատենախոսություն:

Թեմա 2. Ուսումնասիրվել է Երևան քաղաքի հողի նմուշների գենոտոքսիկությունը տրադեսկանցիայի առէջաթելերի մազիկների և միկրոկորիզների տեստ-համակարգերի կիրառմամբ: Հաշվի է առնվել քաղաքի տարբեր շրջանների հողում ծանր մետաղների պարունակության հնարավորին ազդեցությունը դիտված գենետիկական խաթարումների հաճախականության վրա: Ուսումնասիրված կետերից առավել գենոտոքսիկ են Պռոշյան, Լենինգրադյան, Ազատամարտիկների և ավելի պակաս՝ Ալեք Մանուկյան և Ծարավաղբյուր փողոցների հողի նմուշները: Ցույց է տրված դրական կորելյացիան հողի նմուշներում դիտված գենետիկական խաթարումների և ծանր մետաղների խտությունների հետ:

Մարդու գենետիկայի ինստիտուտի (Ենա, Գերմանիա) հետ համատեղ կատարվել է 3D FISH (fluorescence in situ hybridization) հետազոտություն AML (acute myelogenous leukemia) և ALL (acute lymphoblastic leukemia) հիվանդների մոտ: Հետազոտության համար օգտագործվել են MCB (multicolor banding) և ԴՆԹ-զոնդեր: Որոշվել են 8 և 21 քրոմոսոմների դիրքը և համատեղ տեղադրումն ինտերֆազային կորիզներում: Ոսկրածուծի միելոիդ բջիջներում 8 և 21 քրոմոսոմներն առավելապես տեղակայված են միասին, ինչը, հավանաբար, նպաստում է նշված երկու քրոմոսոմների միջև տրանսլոկացիային և հանդիսանում է արյան որոշ չարորակ հիվանդությունների ծագման նախապայման:

Շարունակվել է Rosaceae Juss. ընտանիքի երեք ցեղերի արական հապլոիդ համակարգի հետազոտությունն ինչպես հիմնական ֆերտիլության հատկանիշով, այնպես էլ մորֆոմետրիկ: Ստացված տվյալները վկայում են, որ ուսումնասիրվող պտղատուների մոտ ծաղկափոշու ձևավորումը կախված է գենոտիպից և տվյալ ժամանակահատվածի կլիմայական պայմաններից. վաղ ծաղկող ծիրանենու մոտ փոշեհատիկների ամլությունը պահպանվում է բարձր մակարդակի վրա (54,40±0,50%), տանձենու մոտ՝ միջին (16,22±0,37%), իսկ ավելի ուշ ծաղկող խնձորենու մոտ՝ ամենացածր (0,86±0,09%): Ուսումնասիրված պտղատուների փոշեհատիկների միջին մեծությունը համեմատաբար կայուն է, այն հսկվում է գենոտիպով, և տարբեր գործոնների ազդեցությունն էական դեր չի կատարում: Միկրոգամետոֆիտային համակարգի հետազոտությունը՝ նոր գենոտիպերի և նոր չափանիշների ընդգրկմամբ, տեղեկատվական է ինչպես մոնիթորինգի, այնպես էլ սելեկցիոն առումով:

Կատարվել է միկրոկորիզների մակարդակի ուսումնասիրություն Երևանի և Արարատի մարզի կանանց (ծննդկանների) բերանի էքսֆոլիատիվ բջիջներում: Բացահայտված է, որ այս երկու խմբերում միկրոկորիզների մակարդակի վիճակագրորեն հավաստի աճ չի արձանագրվում: Սակայն բացահայտված է նաև, որ գյուղերում բնակվող կանանց մոտ այդ ցուցանիշները որոշակի չափով բարձր են:

Թեմա 3. Հաշվետու շրջանում իրականացվել է հետևյալ թեման՝ «Թթվածնաքաղցի պայմաններում սպիտակ երեքնուկի դերը շնչառական նեյրոնների իմպուլսային ակտիվության կարգավորման գործընթացում»: Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս ենթադրելու, որ սպիտակ երեքնուկի օգտագործման ժամանակ օրգանիզմի դիմացկունությունը բարձրանում է ոչ միայն համակարգային, այլև բջջային մակարդակով: Փորձերն իրականացվել են թթվածնաքաղցի երկու փուլով՝ 4000-5000 մ և 7500-8000 մ «բարձրության» վրա: Թթվածնաքաղցի առաջին և երկրորդ՝ ծանր փուլում դիտվել է շնչառական նեյրոնների գործունեության առավել բարձր կայունություն ստուգիչ կենդանիների համեմատությամբ: Կենդանիներին «իջեցնելուց» հետո երեքնուկ ստացած կենդանիների մոտ ավելի մեծ քանակով նեյրոններ են վերականգնել ելակետային ակտիվությունը՝ ստուգիչ կենդանիների համեմատությամբ: Ստացված տվյալներից հետևում է, որ սպիտակ երեքնուկը կարևոր դեր ունի շնչառության կարգավորման գործընթացում թթվածնաքաղցի պայմաններում:

Ուսումնասիրվել են առնետների ուղեղիկի միջանկյալ կորիզի նեյրոնային ակտիվության փոփոխությունները երկարատև թրթռահարման պայմաններում: Նշված պայմաններում իմպուլսային ակտիվության փոփոխությունները կրում են փուլային բնույթ: Ազդակահոսքի միջին հաճախականության զգալի բարձրացումը թրթռահարման 5-րդ և հատկապես 10-րդ օրերին թույլ է տալիս եզրակացնել նշված ժամկետներում թրթռահարման ակտիվացնող ազդեցության մասին: Նեյրոնների միջազդակային ինտերվալների վարիացիայի գործակցի առավելագույն փոփոխություն դիտվել է թրթռահարման 5-րդ օրը, ինչը վկայում է ազդեցության հարաբերականորեն վաղ ժամկետներում ազդակահոսքերի կառուցվածքայնության ուժեղացման մասին:

15-օրյա թրթռահարման դինամիկայում ֆոնային իմպուլսային ակտիվության որոշ ցուցանիշների փոփոխությունները եղել են ոչ հավաստի, ինչը վկայում է երկարատև թրթռահարման պայմաններում իմպուլսային ակտիվության տվյալ ցուցանիշների վերաբերյալ ուղեղում հարմարողական վերակառուցումների զարգացման մասին:

Հետազոտությունների առանձին տարբերակում ստորին անդաստակային կորիզի բարձր հաճախությամբ էլեկտրական խթանման պայմաններում ուսումնասիրվել են ենթատեսաթմբի հարփորոքային ու վերտեսողական կորիզների ազդակահոսքի փոփոխությունները տարբեր ժամկետներով թրթռահարումից հետո: 5-օրյա թրթռահարումից հետո զգալիորեն պակասած առեակտիվ նեյրոնների քանակը վկայում է ստորին ան-դաստակային կորիզի ակտիվության կարգավորման հարցում ենթատեսաթմբային կորիզների զգալի մասնակցության մասին: Հետազոտությունների հաջորդ տարբերակում էլեկտրական խթանմամբ հետազոտվել

են վերին անդաստակային կորիզի ազդակահոսքի փոփոխությունները պրոլինով հարուստ պեպտիդի ներարկման և երկարատև թրթռահարման համակցված պայմաններում: Բացահայտվել է պրոլինով հարուստ պեպտիդի վերականգնողական ազդեցությունը գլխուղեղի գործառական կապերի վրա: Թրթռահարված կենդանիների պրոլինի ներարկման պայմաններում դիտվել են դրդման և արգելակման հետխթանային ռեակցիաների հավասարակշռված դրսևորում, նեյրոմիջնորդանյութերի ակտիվության հարմարողական փոփոխություններ, վերին անդաստակային նեյրոնների վերապրման ակտիվության ու թթվային ֆոսֆատազի ակտիվության բարձրացում:

Ուսումնասիրվել են աղմուկի երկարատև ազդեցության պայմաններում ճագարների շրջանառու արյան լեյկոցիտների ընդհանուր քանակի լեյկոցիտային և լիմֆոցիտային բանաձևումը, ինչպես նաև լյարդում ու երիկամներում անօդակյաց փոխանակություն իրականացնող սուկցինատդեհիդրոգենազի ակտիվության փոփոխությունների շտկումը մատուտակի արմատներով կերակրելու դեպքում: Կատարված փորձերի արդյունքները վկայում են, որ մատուտակի արմատներում պարունակվող կենսաբանորեն ակտիվ նյութերը զգալիորեն կարգավորում են աղմկահարված կենդանիների արյունաստեղծ օրգանների լեյկոցիտա-լիմֆոցիտոպոեզը՝ ապահովելով շրջանառու արյան լեյկոցիտների ընդհանուր քանակի, լեյկոցիտային և լիմֆոցիտային բանաձևերում քանակական մեղմ շարժեր, սպիտակ արյան ձևաբանական կազմի հարմարողական մեխանիզմների ակտիվացում, կանխում երկարատև աղմուկի սթրեսային ազդեցությունը:

Պարզվել է նաև, որ աղմուկի պայմաններում կենդանիներին մատուտակի արմատներով կերակրելիս բարձրանում է սուկցինատդեհիդրոգենազի ակտիվությունը լյարդում և երիկամներում, ինչը վկայում է այդ օրգանների հյուսվածքներում նյութափոխանակության բարելավման և փոխհատուցողական էներգոապահովման մասին:

Թեմա 4. «Ողնաշարավոր կենդանիների էվոլյուցիոն պրոցեսներն ապահովող մի շարք օրինաչափությունների ուսումնասիրությունը անհատական զարգացման և պոպուլյացիոն մակարդակով» թեմայի ուղղությամբ հաշվետու տարում, ըստ օրացուցային պլանի, շարունակվել են ուսումնասիրությունները Darevskia ցեղին պատկանող երկսեռ և կուսածին ժայռային մողեսների և կրիաների մի շարք սիմպատրիկ պոպուլյացիաներում:

Իտալացի և պորտուգալացի գործընկերների հետ համատեղ սկսել ենք իրականացնել նոր նախագիծ ժայռային մողեսների ձևաբանության, գենետիկայի և էկոլոգիայի ուսումնասիրության վերաբերյալ: 2010 թ. հունիս-հուլիս ամիսներին համատեղ անցկացվել են դաշտային աշխատանքներ:

Իտալացի և ամերիկացի գործընկերների հետ համատեղ ավարտվել է Հայաստանի և ԼՂՀ-ի սողունների և երկկենցաղների քարտեզավորումը:

2010 թ. մայիս-հունիս ամիսներին գերմանացի գործընկերների հետ իրականացվել են դաշտային աշխատանքներ Հայաստանի Lacerta ցեղի կանաչ մողեսների էկոլոգիայի և բազմազանության վերաբերյալ:

Ավարտին են հասցվել Թուրքիայի Արևելյան Անատոլիայի տարածքից հավաքված Darevskia ցեղին պատկանող կուսածին ժայռային մողեսների ձևաբանության և կմախքաբանության վերաբերյալ կատարվող աշխատանքները, որոնց արդյունքները ներկայացվել են Իսպանիայում անցկացվող Lacertidae ընտանիքին վերաբերող 7-րդ միջազգային գիտաժողովին և պատրաստվել են հրատարակման:

2009 թ. դեկտեմբերից մինչև 2010 թ. հունվարը Պորտուգալիայի CIBIO լաբորատորիայում իրականացվել են Հայաստանի ժայռային մողեսների մակաբույծների գենետիկական և ձևաբանական ուսումնասիրություններ, ինչպես նաև շարունակվում է ժայռային մողեսների կուսածին և երկսեռ տեսակների մակաբույծներով վարակվածության աստիճանի համեմատական վերլուծությունը:

2009 թ. ուսումնասիրվել են Հրազդան գետի աղտոտվածության տարբեր աստիճաններով բնութագրվող Հրազդան գետի շրջակայքում բնակվող լճագորտի մաշկի, լյարդի, փայծաղի, աղիքի մորֆոֆունկցիոնալ առանձնահատկությունները: Գորտերը վերցվել են Հրազդան գետի 5 դիտակետերից, որոնք սահմանված են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից և գտնվում են Գեղանիստ, Դարբնիկ գյուղերի մոտ, գ. Արգելից 0,5 կմ ներքև, Արզնի ՀԷԿ-ից 0,5 կմ ներքև, գ. Քաղսիից 0,5 կմ ներքև:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Դարբնիկ և Գեղանիստ գյուղերի շրջակայքի դիտակետերից վերցված գորտերի մաշկում դիտվում են դեստրուկտիվ փոփոխություններ, որոնք իրենց արտահայտությունն են գտնում մասնավորապես եղջերացման ավելի բարձր ինտենսիվության, մաշկային գեղձերի կառուցվածքային փոփոխություններում: Առավել չափով աղտոտված տարածքներում բնակվող գորտերի մաշկի պարարտ բջիջների քանակությունը մեծանում է: Դա անուղղակիորեն խոսում է առավել

աղտոտված միջավայրում օրգանիզմի իմունային պաշտպանության պրոցեսների ինտենսիվացման մասին: Աղտոտվածության տարբեր բնութագիր ունեցող տարածքներում բնակվող գորտերի մաշկում պիգմենտային բջիջների քանակությունը վիճակագրորեն հավաստի տարբերություններ հանդես չի բերում: Այդ փաստը հիմք է ծառայում եզրակացնելու բջիջների՝ այդ պոպուլյացիայի և լյարդում ու փայծաղում գտնվող պիգմենտային բջիջների միջև գործառական և ծագումնաբանական տարբերությունների մասին:

Հրազդան գետի աղտոտվածության տարբեր ցուցանիշներով բնութագրվող հատվածների շրջակայքում բնակվող լճագորտի լյարդի հարաբերական զանգվածը տարբեր է: Ավելի բարձր աղտոտվածության պայմաններում բնակվող գորտերի լյարդը արձագանքում է հարաբերական զանգվածի մեծացմամբ:

Լյարդի զանգվածի մեծացումն ուղեկցվում է երկկորիզ բջիջների հարաբերական քանակության փոքրացմամբ, որը կարող է գնահատվել որպես օրգանում բջիջների պրոլիֆերատիվ ակտիվության մեծացման ցուցանիշ միջավայրի անբարենպաստ պայմաններում:

Աղտոտվածության տարբեր ցուցանիշներով բնութագրվող հատվածներում բնակվող լճագորտի լյարդի հեպատոցիտների թվում գործառական բարձր ակտիվությամբ բջիջների հարաբերական քանակությունը էական փոփոխությունների չի ենթարկվում:

Հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ լճագորտի փայծաղի զանգվածը չի կարող ծառայել որպես մոդել՝ օրգանիզմների վրա միջավայրի աղտոտվածության ազդեցությունը գնահատելու համար:

Հրազդան գետի ջրերի աղտոտվածությունը առաջ է բերում լճագորտի աղիքի ռեակտիվ փոփոխություններ, որոնք դրսևորվում են ինչպես դեստրուկտիվ փոփոխությունների, այնպես էլ պաշտպանողական-հարմարողական բնույթի երևույթների տեսքով: Առավել չափով աղտոտված շրջաններում բնակվող գորտերի աղիքային էպիթելում հայտնաբերվել են դեստրուկտիվ երևույթներ՝ որոշ քանակությամբ էնտերոցիտների նեկրոզ, բջիջների կորիզների պիկնոզային փոփոխություններ, արձանագրվել է նաև էպիթելի ֆիզիոլոգիական ռեգեներացիայի ինտենսիվության թուլացում, որի մասին վկայում է էնտերոցիտների միտոտիկ ակտիվության համեմատաբար ցածր մակարդակը:

Միջավայրի աղտոտվածության պայմաններում լճագորտի աղիքի պաշտպանողական-հարմարողական ռեակցիան դրսևորվում է էպիթելի մեջ թրոմբոցիտների և լիմֆոցիտների քանակության ավելացմամբ, ենթալորձային շերտում համեմատաբար մեծ քանակությամբ պարարտ բջիջների և լիմֆոիդ հյուսվածքի կուտակումների առկայությամբ:

Թեմա 5. Բնության պահպանության և նրա ռացիոնալ օգտագործման համար ամենակարևոր քայլերից մեկը տարածքի բնական պաշարների և նրա մատուցած ծառայությունների տնտեսական գնահատումն է:

Շրջակա միջավայրի գործառույթների գնահատումը, կապված համապատասխան շուկաների բացակայության հետ, դժվարանում է, և անհնար է դառնում ցույց տալ նրանց իրական արժեքը: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի գնահատմամբ (թեկուզ ոչ լիարժեք) բնությունը տնտեսական հարաբերություններում դառնում է մրցունակ:

Համալիր մոտեցման տեսանկյունից արդյունավետ մեթոդ է շրջակա միջավայրի ընդհանուր տնտեսական արժեքավորումը, որը շրջակա միջավայրի գնահատման ժամանակ հաշվի է առնում ոչ միայն բնական պաշարների ուղղակի օգտագործումը, այլև նրա աղտոտիչ նյութեր ու թափոններ կլանելու և մարդկությանը բնության ծառայություններով ապահովելու գործառույթները:

Օգտվելով վերը նշված մեթոդներից՝ շրջակա միջավայրի ուղղակի օգտագործման արժեքը կարելի է արտահայտել դրամական միավորով, ինչը չի կարելի ասել անուղղակի օգտագործման արժեքների մասին: Անուղղակի օգտագործման արժեքի մեջ մտնում են բնական պաշարների այնպիսի գործառույթները, որոնք հաճախ ունեն համամոլորակային կամ տարածաշրջանային նշանակություն:

Մեր կողմից իրականացվել է Արփի լճի և նրա ջրահավաք ավազանի բնական պաշարների միայն ուղղակի օգտագործման դրամական արժեքի հաշվարկը, քանի որ մնացած երեքի արժեքավորումը կրում է խիստ հարաբերական և սուբյեկտիվ բնույթ: Արփի լճի և նրա ջրահավաք ավազանի բնական պաշարների միայն ուղղակի օգտագործման դրամական արժեքի հաշվարկները հնարավորություն են տվել պարզելու, որ ներկայումս պաշարների խելամիտ օգտագործման դեպքում տարեկան ընդհանուր տնտեսական արժեքը կազմում է մոտ 290 մլն դրամ: Բայց չի կարելի ասել, որ այն հանդիսանում է առավելագույն սահմանը, քանի որ այս տարածքն ունի այն բոլոր անհրաժեշտ նախադրյալները, որպեսզի այստեղ զարգանա տուրիզմը, մասնավորապես ակտիվ հանգիստը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են մշակաբույսերի վայրի ցեղակից՝ վայրի այծակնի տարբեր տեսակների պոպուլյացիաների գենետիկական բազմազանության և գենետիկական էրոզիայի աստիճանի ուսումնասիրությունները:

Ուսումնասիրվել է Հայաստանի տարբեր մարզերում աճող բույսերի 132 պոպուլյացիա 20 RAPD ԴՆԹ մարկերների կիրառմամբ: Ամպլիֆիկացվել է 257 հատված, որոնցից 157-ը եղել են պոլիմորֆ: Որոշվել են պոպուլյացիաների միջև գենետիկական հեռավորությունը և գենետիկական էրոզիայի աստիճանը (Nei index) PhylTools ծրագրի կիրառմամբ:

Մշակվել են գենետիկորեն վերափոխված բույսերից դեպի հացազգիների վայրի ցեղակիցների պոպուլյացիաներ տրանսգեների հոսքի ռիսկերի գնահատման մոդելներ ԴՆԹ մարկերային համակարգի կիրառմամբ:

Թեմա 6. Հաշվետու տարում *Ajuga genevensis*-ի և *Ajuga chia*-ի ինտակտ բույսից և կալուսային կուլտուրաներից ստացված լուծամզվածքներից անջատվել են էկդիստերոիդներ: Կատարվել է էկդիստերոիդային ֆրակցիայի անալիզ բարձր արդյունավետ գազահեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով: 20 հիդրոքսիէկդիզոնը, որը համարվում է բույսերի հիմնական էկդիստերոիդը, հայտնաբերվել է միայն *Ajuga genevensis*-ի ինտակտ բույսում, իսկ կալուսային կուլտուրայում հայտնաբերվել են մեծ թվով չնույնականացված էկդիստերոիդային բնույթի նյութեր: Ի տարբերություն *Ajuga genevensis*-ի՝ 20 հիդրոքսիէկդիզոնը հայտնաբերվել է *Ajuga chia*-ի և կալուսային կուլտուրայում և ինտակտ բույսում, ընդ որում՝ կալուսային կուլտուրայում 20-հիդրոքսիէկդիզոնի պարունակությունը կրկնակի բարձր է, քան ինտակտ բույսում (կալուսային հյուսվածքի չոր զանգվածի 0,05%՝ ինտակտի 0,03%-ի դիմաց):

Համալրվել է ամբիոնում ստեղծված էքստրեմոֆիլ մանրէների հավաքածուն: Մեկուսացվել և նույնականացվել են աերոբ սպորառաջացնող մանրէների նոր շտամեր, ուսումնասիրվել են նրանց ամիլազային, լիպազային և պրոտեազային հատկությունները, ընտրվել են այդ ֆերմենտների ակտիվ արտադրիչները: Շարունակվում են աշխատանքները մանրէների ֆենոտիպական և գենոտիպական հատկությունների հիման վրա տվյալների բազայի համալրման աշխատանքները:

ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Դավթյան Միսակ Արշամի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Նավասարդյան Լիպարիտ Հայրապետի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Հովհաննիսյան Սոֆյա Պետրոսի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
3. Բարսեղյան Էռնեստինա Խիկարի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Գաբրիելյան Գոհար Արշալույսի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Գրիգորյան Աիդա Պետրոսի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
6. Թումանյան Լիլիթ Ռուբենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Խաչատրյան Մեղորա Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Չուբարյան Սիլվա Վարդանի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Աղաջանյան Անուշ Արամայիսի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
10. Գևորգյան Մարգարիտա Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
11. Հայրապետյան Նարինե Կոլյայի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
12. Ղուկասյան Ջուլիետա Գերասիմի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
13. Մարտիրոսյան Մարիա Սերգեյի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող

14. Սեմերջյան Գայանե Հենրիկի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
15. Հարությունյան Սիրանուշ Վարդգեսի, ավագ լաբորանտ
16. Սիմոնյան Թամարա Նվերի, ավագ լաբորանտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Ազոտ պարունակող միացությունների կատաբոլիզմը և ամոնիակի չեզոքացման մեխանիզմները համեմատական էվոլյուցիոն տեսանկյունից (պետական ֆինանսավորում):	Դավթյան Մ. Ա.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ուսումնասիրվել է ջրածնի պերօքսիդի ազդեցությունը պերօքսիսոմալ D- և L-ամինաթթվային օքսիդազների ակտիվության վրա: Ցույց է տրվել, որ H_2O_2-ի 0.03%-ից 0.15% կոնցենտրացիաների պայմաններում խթանվում է ամինաթթվային օքսիդազը: L-ալանինի կրկնակի կոնցենտրացիայի պայմաններում ջրածնի պերօքսիդը ավելի է խթանում ֆերմենտի ինդուկցիան: Ցույց է տրվել, որ R.ridibunda գորտի մետամորֆոզի ընթացքում կտրուկ ինդուկցվող ուրեոթելիկ արգինազը տրիմեր է, իսկ մետամորֆոզի ժամանակ էլիմինացվող իզոֆերմենտը՝ մոնոմեր: Պարզվել է, որ նախապես թթվային ինակտիվացման ենթարկված ուրեոթելիկ իզոֆերմենտը Mn^{++} առկայությամբ pH9.5 պայմաններում ինկուբացնելիս ռեակտիվանում է, իսկ ոչ ուրեոթելիկ իզոֆերմենտը չի ռեակտիվանում: Ուրեոթելիկ իզոֆերմենտի ռեակտիվացման ժամանակ ենթամիավորները ռեասոցիացվում են ոչ միայն տրիմերի, այլև տետրամերի, հեքսամերի և նույնիսկ օքտամերների ձևով: Ամենայն հավանականությամբ փաթեթավորման նման սխալները արդյունք են շապերոնների և շապերոնինների խիստ նոսրացման: NO-սինթեզի ազդեցությամբ առնետների օրգաններում սինթեզվում է NO, և միաժամանակ որպես միջանկյալ պրոդուկտ գոյանում է N-հիդրոքսիարգինին, որը վերածվում է ցիտրուլինի: N-հիդրոքսիարգինինը համարվում է արգինազի արգելակիչ: Մեր տվյալները ցույց են տալիս, որ N-հիդրոքսիարգինինի արգելակիչ ազդեցությունը դրսևորվում է միայն նրա ցածր կոնցենտրացիաների պայմաններում, իսկ բարձր կոնցենտրացիաների պայմաններում՝ ընդհակառակը, թողնում է ազդեցություն: Խմորասնկային բջիջներում պուրինային նուկլեոտիդները դեզամինացնող ֆերմենտների ակտիվության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռենտգենյան ճառագայթման ազդեցությամբ դրսևորվում է դեզամինացնող ֆերմենտների ակտիվության կտրուկ անկում բոլոր պուրինային նուկլեոտիդների դեպքում՝ բացի ԳԵՖ-ից, իսկ հետճառագայթային ռեպարացիայի դեպքում կտրուկ բարձրանում են ադենինային նուկլեոտիդները և ԳՄՖ-ը դեզամինացնող ֆերմենտների ակտիվությունը:

ԵՆԹԱԲՋՋԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Վարդևանյան Պողոս Հովհաննեսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Փանոսյան Գերասիմ Հարությունի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող
2. Մատինյան Կարինե Ստեփանի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Մինասբեկյան Լիա Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Յավրոյան Ժենյա Վաղինակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

5. Պողոսյան Գայանե Հմայակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Տիրացույան Սուսաննա Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Փոլադյան Աննա Արշակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
8. Այվազյան Նաիրա Մարտինի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
9. Հակոբյան Նունե Ռոմենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
10. Ղուկասյան Գայանե Բաբկենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
11. Սարգսյան Էվելինա Գեորգիի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
12. Փարսադանյան Մարինե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
13. Դարբինյան Մերի Ռազմիկի, կրտսեր գիտաշխատող
14. Թռչունյան Կարեն Արմենի, լաբորանտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Բջջի միասնական համակարգում կառուցվածքաֆունկցիոնալ փոխհարաբերությունները միջավայրի գործոնների ազդեցության ներքո (պետական ֆինանսավորում):	Վարդևանյան Պ. Հ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել են ջրի, NaCl-ի և Na-ցիտրատի ջրային (ջրա-աղային լուծույթ), ԴՆԹ-ի և ԴՆԹ-լիգանդ կոմպլեքսների ջրա-աղային լուծույթների վրա ցածր ինտենսիվությամբ, միլիմետրային տիրույթի, 50,3 և 64,5 ԳՀց հաճախությամբ, էլեկտրամագնիսական ալիքների (ՄՄ ԷՄԱ) ազդեցությունը: Ստացված տվյալներից բացահայտվել է, որ ՄՄ ԷՄԱ ազդեցության ներքո կրկնակի թորված ջրի խտությունը և ջերմաստիճանային ընդարձակման գործակիցը չեն փոխվում՝ չճառագայթված ջրի համեմատ, մինչդեռ ջրա-աղային լուծույթի դեպքում այդ պարամետրերը փոփոխվում են՝ չճառագայթված նմուշների համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ԳԲՀ ԷՄՃ ազդեցությունը կենսահամակարգերի վրա բույսերի աճի և զարգացման առումով, ինչպես նաև մարդու էրիթրոցիտների թաղանթների վրա, մասնավորապես թթվային հեմոլիզի պայմաններում էրիթրոցիտների դիմացկունության և էլեկտրակինետիկ պոտենցիալի վրա:

Ուսումնասիրվել է ԳԲՀ ԷՄՃ ալիքների ազդեցությունը սերմերի գենոմի վրա: Փոփոխությունների բնույթը բացահայտելու համար որոշվել են ԴՆԹ-ի հալման պարամետրերը, ԴՆԹ-ի մեթիլացման աստիճանի, ՖԼ կազմի փոփոխությունը I և II սերունդներում: Նաև ուսումնասիրվել է γ-ճառագայթման ազդեցությունը նույն տեսակի ցորենի վրա: Այդ փորձերը կատարվել են Հողագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոնի հետ համատեղ:

Ուսումնասիրվել է քրոմատինի ինտերնուկլեոսոմային ֆրագմենտավորման ազդեցությունը Պոլի(ԱԿՖռիբոզիլ)պոլիմերազ 1 (ՊԱՌՊ 1)-ի ակտիվության վրա առնետի լյարդի մեկուսացված բջջակորիզներում: Ցույց է տրվել, որ ԴՆԹ-ի ինտերնուկլեոսոմային ֆրագմենտավորումը լյարդի մեկուսացված բջջակորիզներում չի հանդիսանում ՊԱՌՊ 1- ի գերակտիվացման պատճառ:

Ուսումնասիրվել է նաև ՊԱՌՊ 1-ի սուբստրատ $ՆԱԴ^+$-ի, ինհիբիտորների և ԱԵՖ-ի ու $ՆԱԴ^+$-ի համատեղ ազդեցությունը քրոմատինի ինտերնուկլեոսոմային ֆրագմենտավորման ինտենսիվության վրա: Ցույց է տրվել, որ ՊԱՌՊ 1-ի ակտիվացումը, որը պայմանավորված է $ՆԱԴ^+$-ի առկայությամբ, ճնշում է ԴՆԹ-ի ինտերնուկլեոսոմային ֆրագմենտավորումը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են *Escherichia coli* բակտերիաներում գլիցերինի խմորման պայմաններում թթվային և հիմնային pH-ում մոլեկուլային ջրածնի արտադրության (H_2), պրոտոն-կալիումական փոխանակության ուսումնասիրությունները: Օգտագործվել են H_2 արտադրության համար

պատասխանատու այս բակտերիաներում առկա չորս տարբեր հիդրոգենազներում խախտումներ կրող մուտանտներ: Ցույց է տրվել, որ գլիցերինի խմորման ժամանակ, միջավայրի pH-ից կախված, տարբեր հիդրոգենազներ են մասնակցում H_2 արտադրմանը:

Ուսումնասիրվել են բնական դիանտրոնների և իզոֆլավանոլների ցիտոտոքսիկ, հակաուռուցքային, ֆոտոդինամիկ և հակաաթերոգեն հատկությունները: Ուսումնասիրվել են նաև կենսաբանորեն ակտիվ միացությունների և ֆիզիկական գործոնների ազդեցությունը ազատ ռադիկալային պրոցեսների վրա բջջային կառույցներում և արհեստական թաղանթների մոդիֆիկացումը: Հետազոտություններում կիրառվել են լաբորատորիայում ներդրված քիմլյումինեսցենտային վերլուծության ավտոմատ գրանցման և տվյալների մաթեմատիկական մշակման LabVIEW ծրագրային ապահովման մեթոդ, ինչպես նաև մալոնային դիալդեհիդի սպեկտրոմետրիկ որոշման, ՍՕԴ-ի ակտիվության սպեկտրոմետրիկ ուսումնասիրման, արհեստական թաղանթների վերակառուցման և այլ մեթոդներ:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավարներ՝ *Գևորգյան Էմիլ Սոսի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*
Հարությունյան Սամվել Գառնիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Դալյան Եվա Բենոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող
2. Անանյան Գայանե Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Անտոնյան Արա Պետիկի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Արծրունի Իրինա Գեղամի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Դեմիրխանյան Լուսինե Հովսեփի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Վարդապետյան Արմեն Ռուբենի, անասն. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Հարությունյան Տիգրան Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
8. Սուքիասյան Տիգրան Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
9. Փիրումյան Քրիստինե Վարդազարի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
10. Մելնիկովա-Շարովա Մարգարիտա Անատոլիի, կրտսեր գիտաշխատող
11. Ավետիսյան Անի Արթուրի, ավագ լաբորանտ
12. Թորոսյան Անահիտ Լևոնի, լաբորանտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Դեղաբանական նշանակություն ունեցող նյութերի ազդեցությունը կենսաբանական մակրոմոլեկուլների և վերմոլեկուլային կառուցվածքների (քրոմատին, քրոմոսոմներ, կենսաբանական մեմբրաններ) վրա (պետական ֆինանսավորում):	Գևորգյան Է. Ս. Հարությունյան Ս. Գ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ցածր ինտենսիվությամբ, միլիմետրային տիրույթի, 50,3 և 64,5 ԳՀց հաճախությամբ, էլեկտրամագնիսական ալիքների (ՄՄԷՄԱ) ազդեցությունը ԴՆԹ-ի հետ էթիդիումի բրոմիդի (ԷԲ) և Hoechst 33258 (H33258) միացության փոխազդեցության առանձնահատկությունների վրա: Ստացված տվյալներից ի հայտ է եկել, որ չճառագայթված կոմպլեքսների համեմատ՝ ՄՄԷՄԱ ճառագայթված նմուշների հալման պարամետրերը զգալիորեն փոխվում են:

Շարունակվել է հակառուցքային դեղամիջոցների ազդեցության մոլեկուլային մեխանիզմների հետազոտումը:

Ուսումնասիրվել են ցիսպլատինի ազդեցությունը քրոմատին-ասոցված սենսորային ֆերմենտ ՊԱՌՊ 1-ի վրա և ֆերմենտի ակտիվության փոփոխման նշանակությունը առնետի լյարդի բջիջների և թիմոցիտների ապոպտիկ Ca/Mg-կախյալ էնդոնուկլեազի ակտիվության կարգավորման մեջ:

Ցույց է տրվել, որ ցիսպլատինը ճնշում է ՊԱՌՊ 1-ի ակտիվությունը լյարդի բջիջների կորիզներում: Ցիսպլատինի ներգործությամբ պայմանավորված՝ ՊԱՌՊ 1-ի ակտիվացումը թիմոցիտների կորիզներում հավանաբար արտահայտում է այն իրողությունը, որ դեղամիջոցը չի կուտակվում թիմոցիտներում, իսկ նրա ԴՆԹ-ածանցյալները խթանում են բջիջների վերականգնմանն ուղղված ռեպարացիայի գործընթացները:

Ցիսպլատինը ակտիվացնում է ԴՆԹ-ի ֆրագմենտավորումը լյարդի բջջակորիզներում: Լյարդի և թիմոցիտների բջջակորիզներում ցիսպլատինը առաջացնում է տարբեր բնույթի ԴՆԹ-ածանցյալներ, ինչը արտացոլվում է ԴՆԹ-սանդղակի որակական փոփոխություններով:

Ուսումնասիրվել են արծաթ պարունակող մեզո-տետրա/4N-հիդրոքսիէթիլպիրիդիլ/ պորֆիրիններով և մետաղ չպարունակող պորֆիրիններով բուժված ուռուցքակիր առնետներից անջատված ԴՆԹ-ի կառուցվածքային առանձնահատկությունները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուռուցքից անջատված ԴՆԹ-ի հալման ջերմաստիճանը մոտ 2 աստիճանով, իսկ հալման էնթալպիան մոտ 1 կկալ/մոլ-ով նվազում են՝ առողջ օրգանիզմից անջատված ԴՆԹ-ի համեմատ: Արծաթ պարունակող պորֆիրիններով բուժված կենդանիների մոտ այս պարամետրերը համարյա վերականգնվում են, ինչը չի նկատվում մետաղ չպարունակող պորֆիրինների համար:

ՄՆԿԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Բաղալյան Սուսաննա Միքայելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Ղարիբյան Նարինե Գրիգորի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գրիգորյան Մարգարիտա Օգսենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
3. Սաքեյան Կարմեն Զոհրաբի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
4. Կարապետյան Համազասպ Վանիկի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Ուսումնասիրվել է որոշ ծառաբնակ դեղասնկերի (*G. lucidum, G. applanatum, F. fomentarius, L. sulphureus, P. betulinus, D. quercina*) կուլտուրալ հեղուկների (ԿՀ) հակաբակտերիալ ակտիվությունը 5 տեսակի Գրամդրական և Գրամբացասական պաթոգեն թեստ-բակտերիաների նկատմամբ: Բարձր ակտիվությամբ առանձնացել են *F. fomentarius, G. applanatum* և *D. quercina* տեսակների ԿՀ-ի նմուշները: Ստացված

տվյալները վկայում են, որ ուսումնասիրված ծառաբնակ դեղասնկերը կարելի է դիտարկել որպես հակաբակտերիալ միացությունների բնական աղբյուր:

Բացահայտվել է նաև նշված դեղատեսակների միցելիումների հակասնկային ակտիվությունը 16 տեսակի թեստ-միկրոմիցետների (ֆիտոպաթոգեն սնկեր, դրանց անտագոնիստներ և մարդու ու կենդանիների պոտենցիալ պաթոգեն սնկեր) նկատմամբ: Բարձր անտագոնիստական/հակասնկային ակտիվությամբ առանձնացել են *F. fomentarius, D. quercina* և *P. betulinus* տեսակների շտամերը, որոնք առաջարկվել են հետագա ուսումնասիրությունների համար՝ նոր հակասնկային կենսատեխարտադրանքներ ստանալու և կենսաբանական պայքարի նոր մեթոդներ մշակելու նպատակով:

Շարունակվում են աշխատանքները լաքապատ աբեթասնկի *(Ganoderma lucidum)* և կոպրինային սնկերի կենսաբանական և դեղաբանական առանձնահատկությունների ուսումնասիրման ուղղությամբ աշխատանքները Բոլոնիայի և Ուրբինոյի (Իտալիա), ինչպես նաև Գյոթինգենի և Ենայի (Գերմանիա) համալսարանների հետ գիտական համագործակցության շրջանակներում:

Ավարտին են հասցված Իրանի հյուսիսային շրջաններում մակրոմիցետների կենսաբազմազանության և կենսաբանական առանձնահատկությունների, ինչպես նաև նույն շրջաններում *Sclerotinia sclerotiorum* ֆիտոպաթոգեն սնկի գենոտիպային բազմազանության վերաբերյալ աշխատանքները Մազանդարանի շրջանի Գյուղատնտեսության և բնական ռեսուրսների գիտական կենտրոնի հետ համատեղ:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ավագյան Արծրուն Աբգարի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*
Դեկանի տեղակալներ՝ *Սարգսյան Արտաշես Լիպարիտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*
Եղիազարյան Վարդան Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Դեկանի օգնական՝ *Գալստյան Արշալույս Մերուժանի, դասախոս*

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
031000	Հայոց լեզու և գրականություն
050100	Կրթության կազմակերպում (մագիստրատուրա)

Մասնագիտացումներ՝ (մագիստրոսական ծրագրեր) ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ, հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն, հայ գրականության պատմություն, հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն, համաշխարհային գրականություն և գրականության տեսություն, սփյուռքագիտություն, հանրակրթության կառավարում, բարձրագույն կրթության կառավարում

Կրթական աստիճան, մասնագիտություն	***Ուսանողների թիվը՝ 737***							
	I կուրս		**II կուրս**		**III կուրս**		**IV կուրս**	
	անվճ	**վճ**	**անվճ**	**վճ**	**անվճ**	**վճ**	**անվճ**	**վճ**
Բակալավրիատ								
Հայոց լեզու և գրականություն	**43**	**104**	**50**	**80**	**49**	**98**	**54**	**92**
Մագիստրատուրա								
Հայոց լեզու և գրականություն	24	40	15	51	-	-	-	-
Կրթության կազմակերպում	1	13	0	23	-	-	-	-
Ընդամենը	**25**	**53**	**15**	**74**	-	-	-	-

Հեռակա ուսուցում

Մասնագիտություն	***Ուսանողների թիվը՝ 207***				
	I կուրս	**II կուրս**	**III կուրս**	**IV կուրս**	**V կուրս**
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.	81	74	52	-	-

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		անվճ	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	147	4	33	18	75
2-րդ	130	1	24	8	81
3-րդ	147	1	20	37	86
4-րդ	146	12	27	15	73
Ընդամենը	**570**	**18**	**104**	**78**	**79**
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	64	-	-	29	100
2-րդ	66	-	-	29	100
Կրթության կազմակերպ.					
1-ին	14	-	-	5	100
2-րդ	23	-	2	4	91
Ընդամենը	**167**	**-**	**2**	**67**	**99**

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		անվճ	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	148	11	51	5	58
2-րդ	131	5	14	27	85
3-րդ	150	5	24	32	81
Ընդամենը	**429**	**21**	**89**	**64**	**74**
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	64	-	2	28	**97**
Կրթության կազմակերպ.					
1-ին	14	-	-	7	**100**
Ընդամենը	**78**	**-**	**2**	**35**	**97**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 237 (15), այդ թվում նախորդ տարիներից՝ 20*	
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)	մագիստրատուրա
Հայոց լեզու և գրականություն	148(15)	66
Կրթության կազմակերպ.	-	23
Ընդամենը	148(15)	89

2009-2010 ուստարում իրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
2	9	5	8	97	6

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ *8*

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գաբրիելյան Վազգեն Արշալույսի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Աղաբեկյան Կիմ Բագրատի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Մնացականյան Լարիսա Հրանտի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Արզումանյան Արմենուհի Մարտունի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Գրիգորյան Սեյրան Զավենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ղազարյան Արմեն Պարույրի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Դվոյան Սիրանուշ Գառնիկի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Ավագյան Արծրուն Աբգարի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Դանիելյան Վահրամ Սամվելի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Շահնազարյան Անի Անդրանիկի, ավագ լաբորանտ, գործավար

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայոց եղեռնապատումի գրականությունը (պետական ֆինանսավորում):	Ավագյան Ա. Ա.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ամբիոնի պրոֆեսոր Ա. Ավագյանի ղեկավարությամբ Հայ նորագույն գրականության և Հայ գրականության ամբիոնների մի շարք անդամների կողմից արդեն երկրորդ տարին է՝ պետական ֆինանսավորմամբ ուսումնասիրվում է շատ կարևոր մի թեմա՝ «Հայոց եղեռնապատումի գրականությունը», որի մեջ պետք է ամփոփվի Եղեռնը և նրա հետևանքները պատկերող գեղարվեստական կարևոր ստեղծագործությունների վերլուծությունը, հայ գրողների բերած նպաստը մեր մեծագույն ողբերգության ճշմարտացի արտացոլմանը: Թեման ներառում է 1920-ականներից առ այսօր ստեղծված գրական կարևոր

ստեղծագործությունները, արևելահայ ու սփյուռքահայ գրողների (Ե. Չարենց, Ա. Բակունց, Վ. Դավթյան, Պ. Սևակ և այլք) գործերի վերլուծությունները: Հաշվետու ուստարում մամուլում ու առանձին ժողովածուներում լույս են տեսել Ա. Ավագյանի՝ Հ. Մնձուրուն, Շ. Շահնուրին, Ժ. Քալանթարյանի՝ Ա. Բակունցին, Ս. Մուրադյանի՝ Վ. Սարոյանին, Հովհ. Շիրազին, Հ. Թումանյանին, Պ. Յավորովին, Ս. Գրիգորյանի՝ Վ. Դավթյանին, Ս. Սրապիոնյանի՝ Ավ. Ահարոնյանին, Տ. Չյոկուրյանին նվիրված հոդվածները:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

2009-2010 ուստարում Հայ նորագույն գրականության ամբիոնը շարունակել է աշխատանքները «Հայ նորագույն գրականության զարգացման օրինաչափությունները» ընդհանուր թեմայի ուղղությամբ: Առանձին հոդվածներ (նշված են ցանկում) հրապարակվել են հանրապետության գրական-գիտական մամուլում: Այդ հոդվածներում քննարկվել են սփյուռքահայ և հայաստանյան գրականության ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից հեղինակների ստեղծագործությունները:

Հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ. Գաբրիելյանը հրատարակել է «Դանիել Վարուժան» մենագրությունը:

Պրոֆ. Ա. Ավագյանը շարունակել է աշխատանքը «Վահան Թեքեյան» մենագրության, իսկ դոց. Ս. Գրիգորյանը՝ «Պ. Սևակը և համաշխարհային պոեզիան» դոկտորական ատենախոսության պատրաստման ուղղությամբ:

Ամբիոնը կազմակերպել է գիտական նստաշրջան՝ նվիրված Դանիել Վարուժանի ծննդյան 125-ամյակին, որտեղ զեկուցումներով հանդես են եկել հայ գրականության ամբիոնների (և ոչ միայն) առաջատար գրականագետները:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	11	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Գաբրիելյան Վ. Ա.,* Դանիել Վարուժան, «Զանգակ» հրատ., Երևան, 2009, 334 էջ:
2. *Աղաբեկյան Կ. Բ.,* Հակոբ Օշական, «Զանգակ» հրատ., Երևան, 2010, 288 էջ:

Հոդված

1. *Գաբրիելյան Վ. Ա.,* Դանիել Վարուժան. քրիստոնյա՞ թե՞ հեթանոս, «Նարցիս» հանդես, թիվ 6, Երևան, 2009, էջ 38-47:
2. *Գաբրիելյան Վ. Ա.,* Դանիել Վարուժան՝ մեծագույն փառքերից մեկը մեր նոր քնարերգության, «Գրականագիտական հանդես», թիվ Ա /Բ/, Երևան, 2009, էջ 343-357:
3. *Աղաբեկյան Կ. Բ.,* Մեծ բարեկամության լուսեղեն հետագիծը, «Գրականագիտական հանդես», թիվ Ա /Բ/, Երևան, 2009, էջ 171-188:
4. *Ավագյան Ա. Ա.,* Նա մեր կորուսյալ աշխարհի խոսափողն էր. Հակոբ Մնձուրին և մեր ազգային աղետը, «Գրական թերթ», թիվ 32, Երևան, 2009, էջ 3:
5. *Ավագյան Ա. Ա.,* Խոհեր Վիլյամ Սարոյանի մի պատմվածքի շուրջ, «Վիլյամ Սարոյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ», ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 4-10:
6. *Ավագյան Ա. Ա.,* Հին Քանաքեռը և Աբովյանը, «Հայագիտական հանդես», թիվ 3/12/, Երևան, 2009, էջ 28-33:
7. *Ավագյան Ա. Ա.,* Ազատն Աբովյան, «Էջմիածին», ԿԵ, Էջմիածին, 2009, էջ 84-95:
8. *Ավագյան Ա. Ա.,* Չգրված հարյուր էջեր, «Քրիստոնյա Հայաստան», թիվ 13, Էջմիածին, 2010, էջ 4-6:

9. *Գրիգորյան Ս. Զ.,* Մեծ եղեռնի վերհուշը Վահագն Դավթյանի պոեզիայում, «Վեմ» հանդես, հ. 1, Երևան, 2010, էջ 67-82:
10. *Արզումանյան Ա. Մ.,* Ուսուցման ժամանակակից մեթոդներ. խճանկար, մեթոդի առանձնահատկությունները, «Մանկավարժություն և հոգեբանության հիմնախնդիրներ», թիվ 2 , Երևան, 2010, էջ 159-165:
11. *Դվոյան Ս. Գ.,* Սփռումի լեզուն, «Հորիզոն», թիվ 12, Մոնրեալ, 2009, էջ 30-32:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մուրադյան Սամվել Պարգևի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Մակարյան Ալբերտ Արշավիրի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Սաֆարյան Վազգեն Հմայակի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Եղիազարյան Վարդան Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Էլոյան Ռուբիկ Կառլենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Մխիթարյան Սարգիս Մխիթարի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Սրապիոնյան Սերժիկ Գագիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Վարդանյան Խաչատուր Գարուշի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Համբարձումյան Հայկ Աշոտի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Վարդանյան Նվարդ Խաչատուրի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
10. Գալստյան Արշալույս Մերուժանի, բան. գիտ. թեկնածու, դասախոս

Համատեղողներ

1. Ավետիսյան Զավեն Վասիլի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Խուրշուդյան Վալենտինա Հովհաննեսի, ավագ լաբորանտ, գործավար

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայ հին և միջնադարյան գրականության մեթոդի և պատմության հիմնահարցեր (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Զ. Վ.
2. Ռաֆֆու ակադեմիական հրատարակության 12 հատորից դուրս մնացած անտիպ գործերի հայտնաբերումն ու դրանց հրատարակությունը առանձին գրքով (պետական ֆինանսավորում):	Սամվելյան Խ. Ե.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Գիտական խումբն ավարտել է հին և միջնադարյան գրականության համապատասխան բնագրերի ուսումնասիրությունը: Գիտական մամուլում խմբի անդամների տպագրած հոդվածներն ու ուսումնասիրությունները համակարգման փուլում են: Անհրաժեշտ աշխատանքներ են կատարվել արդեն ստեղծված նյութը վերջնական համադրման ենթարկելու համար:

Արդեն կատարված աշխատանքների հիման վրա շարադրվել է շուրջ 200 տեսապատմական բնույթի տեքստ: Աշխատանքների ընթացքը ցույց է տալիս, որ նախատեսված ժամկետում հնարավոր կլինի ամբողջությամբ ավարտել ու տպագրության հանձնել գիտական թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը:

Թեմա 2. Թեմայի աշխատակիցները հաշվետու ժամանակահատվածում Ռաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյան) «Երկերի ժողովածու» (13-րդ հատորը) մենագրությունը նախապատրաստել են հրատարակության և հանձնել ԵՊՀ հրատարակչություն՝ լույս ընծայելու համար: Խումբը հայտնաբերել և 13-րդ հատորի մեջ է ընդգրկել Ռաֆֆու թարգմանություններից, 1872-1875 թթ. հոդվածներ, նամակներ, որոնք դուրս էին մնացել Ռաֆֆու ակադեմիական հրատարակության 12-րդ հատորից:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հայ գրականության ամբիոնը 2009-2010 ուստարում շարունակել է իր գիտական գործունեությունը թե՛ հայ հին և միջնադարյան, թե՛ հայ նոր գրականության ուղղություններով, մասնակցել է Դանիել Վարուժանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտական նստաշրջանին:

Հաշվետու ուստարում Ս. Մուրադյանը գիտական մամուլում հրատարակել է մի շարք հոդվածներ՝ նվիրված գրականության տարբեր հարցերին, զեկուցումներով հանդես է եկել հոբելյանական գիտական նստաշրջաններում և դպրոցներում, հրատարակել է «Գրական հանգրվաններ» գրքի երրորդ հատորը, որի նախորդները լույս են տեսել 2003 և 2007 թթ.:

Ամբիոնի դոցենտ Ս. Մխիթարյանը հրատարակել է «10-11-րդ դարերի հայ մշակութային դաշտը և գրականության զարգացման յուրահատկությունները» մենագրությունը և պաշտպանել դոկտորական ատենախոսություն: Ամբիոնում պաշտպանվել է նաև 2 թեկնածուական ատենախոսություն:

Գիտական զեկուցումներով և հոդվածներով հանդես են եկել ամբիոնի պրոֆեսոր Վ. Սաֆարյանը, դոց. Ս. Սրապիոնյանը, Ս. Մխիթարյանը, Վ. Եղիազարյանը, ասիստենտներ Ն. Վարդանյանը, Հ. Համբարձումյանը, Ա. Գալստյանը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	19	1

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Մուրադյան Ս. Պ.,* Գրական հանգրվաններ, հատոր Գ, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 388 էջ:
2. *Մխիթարյան Ս. Մ.,* 10-11-րդ դարերի հայ մշակութային դաշտը և գրականության զարգացման յուրահատկությունները, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 372 էջ:

Հոդված

1. *Մուրադյան Ս. Պ.,* Մեծ եղեռնի արձարձումները Հովհ. Շիրազի բանաստեղծություններում, «Էջմիածին», թիվ Դ, Էջմիածին, 2009, էջ 68-86:
2. *Մուրադյան Ս. Պ.,* Հայոց լեզվի և հայ գրականության աբովյանական ըմբռնումները, «Հայագիտական հանդես», թիվ 3, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2009, էջ 22-28:
3. *Մուրադյան Ս. Պ.,* Պ. Յավորովի «Հայերը» բանաստեղծությունը, «Էջմիածին», թիվ 7, Էջմիածին, 2009, էջ 89-92:
4. *Մուրադյան Ս. Պ.,* «Հին երկիրը», հեղինակն ու մյուս հայերը Վ. Սարոյանի «Իմ անունը Արամ է» պատմվածաշարում, Վ. Սարոյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 29-39:
5. *Մուրադյան Ս. Պ.,* Հ. Նալբանդյանի «Լույս» հանրագիտարանը, «Գրական թերթ», թիվ 6, Երևան, 2010, էջ 3:
6. *Սաֆարյան Վ. Հ.,* Կերպարը «Վերք Հայաստանի» վեպի ժամանակահատվածական համակարգում, «Հայագիտական հանդես», թիվ 3, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2009, էջ 34-42:
7. *Սաֆարյան Վ. Հ.*, Խ. Աբովյանի բառաշխարհը, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2-3, Երևան, 2009, էջ 111-119:
8. *Սաֆարյան Վ. Հ.*, Մեթոդի և պարբերացման հարաբերությունը 10-12-րդ դարերի գրականության մեջ, «Հայոց լեզու և գրականություն», թիվ 2, Երևան, 2010, էջ 26-37:
9. *Մակարյան Ալ. Ա.,* Արևմտահայ երևելի գրագետը /Թեոդիկ/, «Նոր Դար», թիվ 3-4, Երևան, 2009, էջ 28-34:
10. *Սրապիոնյան Ս. Գ.,* 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերի եղերական պատկերները Ավ. Ահարոնյանի «Իմ գիրքը» երկում, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 131.2, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 32-40:
11. *Մխիթարյան Ս. Մ.,* Աբգար Դպիր Թոխաթեցին և իր տպագրական գրքերը, «Գիրքը պատմամշակութային հաղորդակցությունների համակարգում», հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2010, էջ 44-49:
12. *Մխիթարյան Ս. Մ.,* Եղիշեի թղթագրության մեթոդական յուրահատկությունների շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 130.2, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 20-28:
13. *Վարդանյան Ն. Խ.,* Առասպելական տրիքսերի նախնական տիպը հեքիաթային մի սյուժեում, «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 1, Երևան, 2009, էջ 82-88:
14. *Եղիազարյան Վ. Վ.,* Թլկուրանցու աստվածաշնչյան թեմաներով երկու տաղերը, «Քրիստոնյա Հայաստան», թիվ 2, Երևան, 2010, էջ 4:
15. *Եղիազարյան Վ. Վ.,* Թլկուրանցու «Արարածոց մեկնութիւն» տաղը, «Քրիստոնյա Հայաստան», թիվ 3, Երևան, 2010, էջ 5:
16. *Համբարձումյան Հ. Ա.,* Առասպելական աշխարհայացք և ստեղծագործական մեթոդ, «Գրականագիտական հանդես», Ա-Բ /Թ-Ժ/, Երևան, 2009, էջ 120-135:
17. *Համբարձումյան Հ. Ա.,* Առասպելաստեղծ աշխատանքային դրսևորման առանձնահատկությունները հայ հին գրականության մեջ, «Եղիցի լույս», թիվ 12, Ստեփանակերտ, 2009, էջ 3-4:
18. *Համբարձումյան Հ. Ա.,* Հայկական «Սասնա ծռեր» էպոսն ու համաշխարհային էպիկական ժառանգությունը, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 1, Երևան, 2010, էջ 303-307:
19. *Գալստյան Ա. Մ.,* Քնարական հերոսուհու կերպարի զարգացման յուրահատկությունները հայ միջնադարյան քնարերգության մեջ, «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 1-2, Երևան, 2010, էջ 182-189:

Զեկուցումների թեզիս

1. *Վարդանյան Ն. Խ.,* Ժանրային խաչաձևումներ /իրապատում հեքիաթ-առակ-ասացվածք-հանելուկ/, «Հեքիաթի զարգացումը բանահյուսական և գրական միջավայրում» գիտաժողովի թեզիսներ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 31-32:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Եզեկյան Լևոն Կորյունի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Բաղիկյան Խաչիկ Գաբրիելի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Գալստյան Սերյոժա Աշոտի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Աբաջյան Աննա Հենրիկի, բան. գիտ. դոկտոր, դոցենտ
4. Աղիլխանյան Անահիտ Զավենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Թելյան Լեոնիդ Գուրգենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Թիրաբյան Նելլի Հարությունի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Կոստանդյան Դարիկո Մեսրոպի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Հայրապետյան Լևոն Հրանտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Մեյթիխանյան Փառանձեմ Գառնիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Միքայելյան Կարինե Ռոբերտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
11. Ներսիսյան Բագրատ Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
12. Ներսիսյան Նարինե Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
13. Սարգսյան Արտաշես Լիպարիտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
14. Սուքիասյան Քնարիկ Աշոտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
15. Տեր-Մինասյան Աշոտ Անդրանիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
16. Աղաջանյան Զարիկ Խաչատուրի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
17. Գաբրիելյան Սուսաննա Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
18. Գևորգյան Շուշանիկ Սամսոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
19. Մանուկյան Անահիտ Լևոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
20. Մարգարյան Ռեբեկա Հայկարամի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
21. Մովսիսյան Անահիտ Ժորայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
22. Մուրադյան Անի Սամվելի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
23. Ներսիսյան Գոհար Միշայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
24. Սաղաթելյան Ռիտա Գուրգենի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
25. Սարգսյան Հրաչիկ Գրիշայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
26. Քամալյան Արևիկ Սերգեյի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
27. Կիրակոսյան Մարիամ Վրույրի, ասիստենտ
28. Համբարձումյան Ռիմա Սերժիկի, ասիստենտ
29. Գրիգորյան Նելսոն Գրիգորի, դասախոս
30. Եզեկյան Լիլիթ Լևոնի, դասախոս

Համատեղողներ

1. Քոչատաշյան Սիլվա Սերյոժայի, բան. գիտ. թեկնածու, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մաղանյան Մաղլենա Նորիկի, բան. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ, գործավար
2. Մելքոնյան Լուիզա Արմենի, ավագ լաբորանտ, գործավար
3. Պապիկյան Լիլիթ Միհրի, ավագ լաբորանտ, գործավար

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայոց լեզվի գործնական ոճագիտություն (պետական ֆինանսավորում):	Եզեկյան Լ. Կ.
2. Բառապաշարային տեղաշարժերը արևմտահայերենում (պետական ֆինանսավորում):	Սաքապետոյան Ռ. Կ.
3. Իմաստափոխությունը հայերենում (պետական ֆինանսավորում):	Աբաջյան Ա. Հ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Եզեկյանի ղեկավարությամբ շարունակվել են «Հայոց լեզվի գործնական ոճագիտություն» գիտական թեմայի ուսումնասիրման աշխատանքները: Հաշվետու ուստարում Լ. Եզեկյանը թեմայի վերաբերյալ տպագրել է հոդվածներ:

Խմբի անդամներն ուսումնասիրել են ոչ միայն գեղարվեստական ստեղծագործությունների, այլև մամուլի, հեռուստատեսության լեզուն, խոսակցական լեզուն, արձանագրել դրանց հատկանիշները, վեր հանել զանազան առանձնահատկություններ: Այս ամենի ուսումնասիրության միջոցով հնարավոր է կազմել ուսանողների համար նախատեսված գործնական աշխատանքների ուսումնական ձեռնարկ, որում ընդգրկված բազմաթիվ ու բազմազան վարժությունների միջոցով հնարավոր կլինի գործնականում կիրառել ոճական տարբեր իրողությունները:

Թեմա 2. Ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր Ռ. Սաքապետոյանի ղեկավարությամբ շարունակվել են «Բառապաշարային տեղաշարժերը արևմտահայերենում» գիտական թեմայի ուսումնասիրման աշխատանքները:

Գիտական ղեկավար Ռ. Սաքապետոյանը շարունակել է սփյուռքահայ մամուլից և գրականությունից քաղված բառերն ու բառաձևերը դասակարգել և համադրել իր «Արևելահայերենի և արևմտահայերենի ուղղախոսական-ուղղագրական բառարան»-ի տվյալների հետ: 2009 տարեվերջին Ռ. Սաքապետոյանը գործուղմամբ եղել է ԱՄՆ-ում՝ տեղի հայ համայնքում տիրող լեզվավիճակն ուսումնասիրելու նպատակով:

Խմբի անդամներ Ա. Խաչատրյանը և Լ. Մելքոնյանը շարունակել են արևմտահայ և սփյուռքահայ մամուլից անհրաժեշտ բառերի ու բառաձևերի առանձնացումն ու համադրումը:

Թեմա 3. Ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր Ա. Աբաջյանի ղեկավարությամբ շարունակվել են «Իմաստափոխությունը հայերենում» գիտական թեմայի վերաբերյալ աշխատանքները:

Խմբի անդամները կատարել են տեսական նյութի հավաքում, ուսումնասիրում, անհրաժեշտ փաստերի առանձնացում: Կատարված իմաստափոխությունը նկատելու և փաստելու համար կատարվել է առանձնացված բառապաշարի համեմատում բառարանային նյութի հետ:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Դասավանդման հետ միաժամանակ ամբիոնի դասախոսները զբաղվել են նաև գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներով:

Հաշվետու ուստարում թարմացվել, ամբողջացվել ու ավարտին են հասցվել ամբիոնի գծով բոլոր դասընթացների ծրագրերը, նորացվել են հարցաշարերը և քննական (միջանկյալ և ավարտական) տոմսերը:

Ամբիոնի անդամները զեկուցումներով հանդես են եկել ներֆակուլտետային, հանրապետական, միջհանրապետական գիտական կոնֆերանսներում: Ամբիոնի վարիչ Լ. Եզեկյանը, պրոֆ. Ռ. Սաքապետոյանը և դոց. Ա. Սարգսյանը ավարտել ու տպագրության են պատրաստել ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի «Հայոց լեզու» դասագիրքը:

Հաշվետու ուստարում հաջողությամբ թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել և գիտությունների թեկնածուի աստիճան ստացել ամբիոնի ասպիրանտ Արամ Խաչատրյանը, հայցորդներ Սիլվա Քոշատաշյանը, Մաղլենա Մաղանյանը:

Փ. Մեյթիխանյանը և Զ. Աղաջանյանը շարունակել են աշխատել դոկտորական ատենախոսության պատրաստման ուղղությամբ:

Ամբիոնում համապատասխան աշխատանք է տարվել երիտասարդ կադրերի պատրաստման ուղղությամբ՝ ընդունելով երկու առկա ասպիրանտի և երեք հայցորդի:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
2	-	-	4	14	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Եզեկյան Լ. Կ., Սաքապետոյան Ռ. Կ., Սարգսյան Ա. Լ.,* Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար, «Մակմիլան-Արմենիա» հրատ., Երևան, 2010, 224 էջ:
2. *Եզեկյան Լ. Կ., Սաքապետոյան Ռ. Կ., Սարգսյան Ա. Լ.,* Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի համար, «Մակմիլան-Արմենիա» հրատ., Երևան, 2010, 208 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Մարգարյան Ռ. Հ.,* Ժամանակակից հայոց լեզվի գործնական պարապմունքների ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 82 էջ:
2. *Սաղաթելյան Ռ. Գ.,* /համահեղինակ/, Թեստերի ժողովածու. Հայոց լեզու և գրականություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 276 էջ:
3. *Կիրակոսյան Մ. Վ.,* /համահեղինակ/, Ռուս-հայերեն զրուցարան, «Արեգ» հրատ., Երևան, 2010,140 էջ:
4. *Ներսիսյան Գ. Մ.,* /համահեղինակ/, Ռուս-հայերեն թեմատիկ համառոտագրությունների և հապավումների բառարան, ՀՌՀ հրատ., Երևան, 2010, էջ 257:

Հոդված

1. *Մելթիխանյան Փ. Գ.,* «Եղեռն» բառի լեզվական քննություն, «Վեմ», թիվ 1, «Վեմ» հրատ., Երևան, 2009, էջ 144-148:
2. *Սարգսյան Ա. Լ.,* Ճարտասանական հարցը և բացականչությունը, «Լերան քարոզում», փետրվար Բ, թիվ 4, «Քրիստոնյա Հայաստան» հրատ., Երևան, 2010, էջ 5-6:
3. *Թիրաբյան Ն. Հ.*, Հովի. Շիրազի «Աստծո գլուխգործոցը» պոեմի պատկերավորման համակարգը, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 129:
4. *Գաբրիելյան Ս. Վ.,* Չարենցի բառի ոճական գունավորումը, «Հայոց լեզու և գրականություն», թիվ 4, Երևան, 2010, էջ 28-30:
5. *Կիրակոսյան Մ. Մ.,* Խորենացու «Հայոց պատմության» ոճի առանձնահատկությունները, «Հայոց լեզու և գրականություն», թիվ 4, Երևան, 2010, էջ 30-38:
6. *Թելյան Լ. Գ.,* Բայի քերականական ձևերի կազմության և կիրառության որոշ առանձնահատկություններ արդի խոսակցական հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», թիվ 8, ԳԱԱ հրատ., Երևան, 2009, էջ 63-75:
7. *Մուքիասյան Ք. Ա.,* Իմաստափոխության մի քանի հիմունքներ, «Հայոց լեզու և լեզվաբանություն», թիվ 2, Երևան, 2009, էջ 5:
8. *Տեր-Մինասյան Ա. Ա.,* Բառախաղը Ժորա (Գևորգ) Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմ» կատակերգությունում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, թիվ 1-2, ԳԱԱ հրատ., Երևան, 2010, էջ 264-273:

9. *Տեր-Մինասյան Ա. Ա.,* /համահեղինակ/, Հայոց լեզվի հեռաուսուցման մասին, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի երրորդ տարեկան գիտաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հրատ., Երևան 2009, էջ 155-163:
1. 2009-2010 ուստարում Հ. Ավետիսյանի կողմից շարունակվել են Արամուսի ամրոցի պեղումները: Շարունակելով պեղումներն ամրոցի արևմտյան մասում՝ արշավախումբը նպատակ ուներ ճշտելու բնակավայրի կառուցապատման փուլերը՝ հստակեցնելու ժամանակագրական խնդիրները, պարսպապատերի կառուցվածքը, շերտագրական իրողությունները և այլն: Այս խնդիրների պարզաբանման նպատակով պեղավայր ընտրվեց միջնաբերդի արևմտյան մասի կենտրոնական հատվածը: Կատարվել են տեղանքի և պեղավայրի փաստագրման և վավերացման աշխատանքները: Պեղված կացարաններից մեկը կառուցված է պարսպապատին կից: Այն հատակագծում ուղղանկյուն

է՝ հյուսիս-հարավ ուղղվածությամբ: Հյուսիսային պատը պարիսպն է՝ 2,1 մ հաստությամբ: Արևելյան պատի երկարությունը 4,5 մ է, իսկ հարավայինինը՝ 3,5 մ: Նշված պատերը շարված են կիսամշակ քարերով, ամրացված են կավաշաղախով: Կացարանի հատակը կավածեփ է: Տեղ-տեղ պահպանված են սալահատակի մնացորդները: Արևելյան և հարավային պատերի մոտ պեղվել են միջին չափսի ուրարտական երկու կարասների մնացորդներ և խեցեղեն: Նշված կացարանից հյուսիս-արևմուտք պարսպապատի հետազոտման ժամանակ պարզվել է, որ այն ձևափոխության է ենթարկվել հետուրարտական շրջանում՝ հանդիսանալով մուտք: Պեղված կացարաններից հյուսիս-արևելք պահպանվել են որմնախցերի հետքեր: Այստեղից արևելք բացվել է երկու ժայռաբեկորներից շարված երկշար պատ: Ժայռաբեկորների հատվածը կատարել է հարթակի դեր: Հայտնաբերված խեցանոթների մեջ աչքի են ընկնում երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման և պահպանման համար նախատեսված անոթները: Հայտնաբերվել է նաև ծիսական խեցեղեն:

2. Ֆ. Տեր-Մարտիրոսովի կողմից հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Երվանդաշատի քաղաքամերձ պալատի պեղումները: Հայտնաբերված խեցեղեն նյութը վերաբերում է մ.թ.ա. III-I դդ-ին՝ հիմք տալով ենթադրելու այստեղ մի քանի շինարարական հորիզոնների առկայությունը, որոնցից հնագույնը վերաբերում է Երվանդյան, իսկ նորը՝ Արտաշեսյան ժամանակաշրջանին: Պալատի ճարտարապետության ուսումնասիրությունը հաստատում է այս վարկածը: Պեղումները 2010 թ-ի սեպտեմբերի 8-ի դրությամբ շարունակվում են:
3. Բ. Գասպարյանի կողմից շարունակվել են Արենիի քարայրի պեղումները: Բացվել են մի շարք արտադրական, օժանդակ և, հավանաբար, պաշտամունքային համալիրներ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված պեղումներն առատ նյութ են տրամադրել մ.թ.ա. V-IV հազարամյակին թաղման ծեսերի վերաբերյալ: Հայտնաբերված խեցեղենի մանրամասն ուսումնասիրությունը թույլ կտա հստակեցնելու բազմաթիվ հարցեր՝ կապված Հայկական լեռնաշխարհում մշակույթների ծագումնաբանության և զարգացման, ինչպես նաև հարևան տարածաշրջանների հետ փոխառնչությունների հետ: Պեղումները 2010 թ-ի սեպտեմբերի 8-ի դրությամբ շարունակվում են:
4. Ն. Ավետիսյանի կողմից շարունակվել է ուրարտական մետաղի ուսումնասիրությունը: Ընդսմին՝ մետաղագործության նմուշները դիտարկվում են արվեստաբանական տեսանկյունից:
5. Վ. Հովհաննիսյանը շարունակել է Քարաշամբի նախկին պեղումներից ձեռք բերված նյութերի համակարգումը և թվագրումը՝ պատրաստելով 1980-ականներին ուսումնասիրված համալիրների համալիր տեղեկատու: Վ. Հովհաննիսյանի և Հ. Ավետիսյանի կողմից ուսումնասիրվել են նաև Ուրարտուի մշակույթի զարգացման հիմնախնդիրները:
6. Ա. Գնունու կողմից ուսումնասիրվել է Սևանի թերակղզու Վազգենյան դպրանոցի տարածքում հայտնաբերված միջնադարյան պարսպաշարը: Համադրելով պեղածո նյութը և գրավոր աղբյուրները՝ կարելի է ենթադրել, որ պարիսպը կարող էր կառուցված լինել X դարում: Այրված հորիզոնի ուսումնասիրությունը թույլ տվեց ենթադրելու, որ այն առաջացել է 913 թ-ի արաբական ներխուժման ժամանակ: Միևնույն ժամանակ այստեղ հայտնաբերվեցին մ. թ. I դարին վերաբերող նյութեր, ինչը վկայում է, որ կղզին բնակեցված է եղել դեռևս անտիկ ժամանակաշրջանում: Հատկանշական է նույն վայրից ուշ բրոնզեդարյան խեցեղենի գտածոն, ինչը սույն հնավայրի ուսումնասիրությունը հեռանկարային է դարձնում նաև վաղ հնագիտության տեսակետից: Շարունակվել են հետազոտությունները նաև Մայր տաճարի տարածքում: Այստեղից հավաքվել, համակարգվել և թվագրվել է վերգետնյա նյութը: Հայտնաբերված խեցեղեն նյութի վաղագույն օրինակները վերաբերում են վաղ բրոնզի դարին: Հայտնաբերվել է նաև մ.թ. առաջին դարերին առնչվող խեցեղեն: Հատկանշական է տաճարի հարավային հատվածում հզոր այրված հորիզոնի հայտնաբերումը: Հաշվետու ժամանակահատվածում ուղեգծային մի շարք արշավների միջոցով հետազոտվել է Շահումյան-Նորակերտ հատվածը: Այստեղ հաստատագրված ճարտարապետական կառույցները վկայում են ընդարձակ դամբարանադաշտերի և պաշտամունքային կառույցների առկայության մասին: Սյունիքում և Արցախում կատարված ուսումնասիրությունները կենտրոնանում էին Աղավնո գետի վերնահոսանքում, Ծիծեռնավանքի մերձակայքում, ինչպես նաև Ողջիի հովտում: Մասնավորապես հաստատագրվեցին Աղավնո 2 և 3 բնակավայրերը, որոնք գոյատևել են սկսած

մ.թ.ա. VII-VI դդ. մինչև միջնադար: Ողջիի հովտում հետազոտվել են Գրամփ, Կերեն 1 և Կերեն 2 բնակատեղիները: Ակներև է, որ բնակատեղիներն այստեղ հիմնականում տեղադրված են գետի հովտում՝ ներկայիս Կապան-Կովսական ճանապարհի երկայնքով:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

1. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանի ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Հ. Մահմուդյանը «Արևմտյան Իրանի հնագիտական հուշարձանները Լուրիստանյան բրոնզի տարածման ժամանակաշրջանում (մ.թ.ա. III-I հազ.)» թեմայով:
2. 2009 թ-ի դեկտեմբերին պ.գ.դ. Հ. Ավետիսյանը մասնակցել է Ինսբրուկում կայացած միջազգային գիտաժողովի աշխատանքներին և ընթերցել «Ուրարտական և էթիունյան խեցեղենի հիմնախնդիրները» զեկուցումը:
3. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանը և պ.գ.թ. Ֆ. Տեր-Մարտիրոսովը մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում:
4. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանը, պ.գ.թ. Ֆ. Տեր-Մարտիրոսովը, Ա. Գնունին և Բ. Գասպարյանը մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել «Հին Հայաստանի մշակույթը» XV հանրապետական գիտաժողովում:
5. Պ.գ.թ. Ֆ. Տեր-Մարտիրոսովը 2010 թ-ի ապրիլին մասնակցել և զեկուցումով հանդես է եկել Ռուանում (Ֆրանսիա) տեղի ունեցած միջազգային գիտաժողովում:
6. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանը մասնակցել է «Մարաշի ասեղնագործություն» (Հալեպ, 2010) գրքի խմբագրական խորհրդի աշխատանքներին:
7. Պ.գ.թ. Ա. Գնունին 2010 թ-ին մասնակցել է Բերձորի (ԼՂՀ) երկրագիտական թանգարանի նյութերի անձնագրավորման, ցուցակագրման և կատալոգացման աշխատանքներին:
8. Պ.գ.թ. Ա. Գնունին 2009-2010 թթ. մասնակցել է Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարանի նոր ցուցադրության կազմակերպմանը, ինչպես նաև անձնագրերի վերանայման և ճշգրտման աշխատանքներին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	17	3

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ավետիսյան Հ. Գ., Բորոխյան Ա. Ա.,* Ուրարտուի հնագիտություն (ամրոց-բնակավայրեր և դամբարանային համալիրներ), «Նաիրի» հրատ., Երևան, 2010, 233 էջ:

Հոդված

1. *Ավետիսյան Հ. Գ.,* Ուրարտուի մշակույթի հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2, Երևան քաղաքի պատմության թանգարանի հրատ., Երևան, 2009, էջ 9-14:
2. *Ավետիսյան Հ. Գ.,* Ուրարտական մետաղյա սպասքը, «Հայ աստվածաբան», մաս Գ, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 197-216:
3. *Ավետիսյան Հ. Գ.,* Բորիս Պիոտրովսկու կյանքն ու գործունեությունը, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, Երևան, 2010, էջ 159-162:
4. *Ավետիսյան Հ. Գ.,* Արամուսի հնագիտական համալիրները, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, Երևան, 2010, էջ 83-90:

5. *Ավետիսյան Հ. Գ.,* Հայկական մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», մաս Դ, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 233-269:
6. *Ավետիսյան Ն. Հ.,* Վանի թագավորության մետաղյա քանդակը, «Հայ աստվածաբան», մաս Գ, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 209-205:
7. *Gasparyan B., Liagre J., Arakelyan D., Nahapetyan S., Chataigner C.,* Mobilite des groupes prehistoriques et approvisionnement des matieres premieres a la fin du Paleolithique superieur dans le Petit Caucase: donnees resentes sur le site de plein air de Kalavan 1 (nord du lac Sevan, Armenie) Le concept de territories dans le Paleolithique superieur europeen Proceedings of the XV world congress BAR International Series Oxford, 2009, p. 75-84.
8. *Գասպարյան Բ. Զ., Պետրոսյան Ա., Փինհասի Ռ., Առաքելյան Դ., Գաբրիելյան Ի., Նահապետյան Ս.,* Քարեղարյան հուշարձանների ուսումնասիրությունը Աղստևի հովտում 2005-2008 թթ., Տավուշի նյութական և հոգևոր ժառանգությունը, «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 41-56:
9. *Գասպարյան Բ. Զ. , Փինհասի Ռ., Նահապետյան Ս., Ղուկասյան Ռ.,* Միջին պլեյստոցենյան նորահայտ հուշարձան Աղստևի հովտում, Հովք-1 քարայրի 2005-2008 թթ-ի ուսումնասիրության արդյունքները, Տավուշի նյութական և հոգևոր ժառանգությունը, «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 57-66:
10. *Գասպարյան Բ. Զ., Պետրոսյան Ա., Երիցյան Բ.,* Վահագնի-1 քարեղարյան բացօթյա հնավայրի ուսումնասիրության նախնական արդյունքները, «Երևան-2», գիտական հոդվածների ժողովածու, Երևան քաղաքի Պատմության թանգարանի հրատ., Երևան, 2009, էջ 35-39:
11. *Գնունի Ա. Վ., Խաչատրյան Գ. Ա.,* Նորահայտ հուշարձաններ Աղավնո գետի վերնահոսանքում, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, Երևան, 2010, էջ 53-66:
12. *Ղարիբյան Ի. Գ., Հակոբյան Հ. Պ., Գնունի Ա. Վ., Խաչատրյան Գ. Ա., Վրթանեսովա Տ. Վ.,* Բջնիի հուշարձանները, (պեղումների արդյունքները), «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, «ՍԻՄ» հրատ., Երևան, 2010, էջ 67-83:
13. *Тер-Мартиросов Ф. И.*, Город. Термин и градостроительная структура в истории Армении. «Ճարտարապետություն և շինարարություն», h. 12, «Անտարես» հրատ., Երևան, 2009, էջ 50-55:
14. *Ter-Martirosov F. I.,* Ervandashat. Des Orontides aux Artaxides. Les douze caqpitales d' Armenie. Sous la directionde P. Donabedian et C. Mutafian, Marsielle, 2009, p. 76-87.
15. *Ter-Martirosov F. I.,* La ville et La structure Les douze caqpitales d' Armenie. Sous la directionde P. Donabedian et C. Mutafian, Marsielle, 2009, p. 294-298.
16. *Тер-Мартиросов Ф. И.,* Прикладное искусство Армении в элленистическую эпоху, Պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 311-318:
17. *Տեր-Մարտիրոսով Ֆ. Ի.,* Նոր տվյալներ ուրարտական մշակույթի վերաբերյալ, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, «ՍԻՄ» հրատ., Երևան, 2010, էջ 131-136:

Զեկուցումների թեզիս

1. *Gasparyan B., Arimura M. Chataigner C.,* Kmlo-2. An Early Holocene Site in Armenia Neo-Lithics, The Newsletter of Southwest Asian Neolithic Research, 2009, 9-Feb, p. 17-19.
2. *Тер-Мартиросов Ф. И.,* Предание о Паруйре Скайорди и скифское царство в Передней Азии. Древность: Историческое знание и специфика источника. Материалы международной научной конференции, вып. IV ИВ РАН, Москва, 2010, с. 127.
3. *Тер-Мартиросов Ф. И.,* Форма власти в государствах Урарту (IX-VII) и Армении (VI), Пятая международная конференция ''Иерархия и власть в истории цивилизации'', Тезисы докладов, Москва, 2009, с. 86-87.

ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Հովհաննիսյան Միեր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Աղաջանյան Թագուհի Կամոյի, ավագ լաբորանտ
2. Մարտիրոսյան Հասմիկ Էդիկի, լաբորանտ
3. Նազարյան Ստելլա Կարենի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Կարևորելով ինտերնետի դերը ընդհանուր տեղեկատվական դաշտում՝ բաժինը ստանձնել է ինտերնետում հայագիտական և հակահայագիտական կայքերի մոնիթորինգի, դրանցում զետեղված նյութերի վերհանման, համակարգման, հասցեագրման գործը: Ինստիտուտի համապատասխան գիտաշխատողների կողմից ստացված համարժեք և նախահարձակ գիտական հոդվածների ու այլ բնույթի նյութերը բաժնի կողմից տեղադրվում են ինստիտուտի պաշտոնական կայքում /www.armin.am/, ինչպես նաև այլ ինտերնետային կայքերում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Բաժնի կողմից շարունակվել է իրականացվել ինստիտուտի պաշտոնական կայքի /www.armin.am/ սպասարկումը: Ավարտին է հասցվել հակահայկական ուղղվածության գիտական կամ գիտահանրամատչելի բովանդակությամբ նյութեր տարածող ադրբեջանական և թուրքական կայքերի վերլուծական տեղեկատու-գրքույկի կազմումը, որում նախկին 35 կայքերի փոխարեն այժմ ներկայացված է 49 կայք: Տեղեկատուն վերջնական խմբագրումից հետո կներկայացվի հրատարակման: Միաժամանակ սկսվել են աշխատանքներ հայկական այն կայքերի մշակման ուղղությամբ, որոնք հնարավոր համարժեք քայլեր են կիրառում մեր նշած ադրբեջանական և թուրքական կայքերի նկատմամբ: Նպատակը՝ զուգահեռներ տանել մեր և նրանց գործունեության միջև՝ հասկանալու համար առկա իրավիճակը, ինչը հնարավորություն կտա հետագայում ավելի արդյունավետ գործել այս դաշտում: Շարունակվել են հակահայկական գիտական և գիտահանրամատչելի բնույթի նյութերի արխիվավորումը և դրանց հասցեագրումն ինստիտուտի համապատասխան գիտաշխատողներին:

Սույն թվականի ապրիլի 19-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցած Հայոց մեծ եղեռնի 95-ամյակին նվիրված «Մեծ եղեռն. ճանաչում, դատապարտում, հատուցում» խորագրով միջազգային գիտաժողովին մասնակցել է նաև պ.գ.թ. Մ. Հովհաննիսյանը՝ ներկայացնելով «Հայոց ցեղասպանության ներկայացման խնդիրները համացանցում» խորագրով զեկույցը: Զեկույցը տեղադրված է ինստիտուտի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղման ներքո (http://armin.am/education/id/181/lng/2):

Պ.գ.թ. Մ. Հովհաննիսյանի կողմից մշակվել և հրատարակվել է «Հայագիտության արդի մարտահրավերները համացանցում» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկ, որի հիման վրա էլ սույն թվականի սեպտեմբերից Պատմության և Ժուռնալիստիկայի ֆակուլտետների մագիստրատուրայում դասավանդման մտցվեց համանուն վերնագրով առարկան:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարան: (Պետական ֆինանսավորում):	Բարսեղյան Հ. Խ.
2. Վաղ միջնադարյան գեղարվեստական արձակի ժանրային համակարգը (5-9-րդ դարեր): (Պետական ֆինանսավորում):	Մաղոյան Ա. Գ.
3. Բառագործածական և քերականական կարծրատիպային շեղումները գրական հայերենից զանգվածային լրատվական միջոցների լեզվում: (Պետական ֆինանսավորում):	Գևորգյան Կ. Հ.

Հայոց լեզվի եւ գրականության ուղղությամբ ինստիտուտում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. 2009 թվականին ավարտվել է բառարանի հինգհատորյակի համառոտագրում-վերախմբագրումը, ինչպես նաև կատարվել են պահանջվող նոր տվյալների մասնակի լրացում-ճշգրտումներ: Ավարտվել է այս ամենի համակարգչային մուտքագրումը: Տպագրվել է բառարանի 1-3 հատորները:

Թեմա 2. Աշխատակիցներն ավարտել են նյութերի դասակարգումը: Բ.գ.թ. Ա. Մաղոյանը պ.գ.թ. Պ. Հովհաննիսյանի հետ համատեղ կազմել և հրատարակության է պատրաստել Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմութիւնը», որը հանձնված է տպագրության: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի այս տարվա 3-րդ համարում լույս կտեսնի բ.գ.թ. Հ. Ալվրցյանի՝ «Հայ հին և միջնադարյան բանաստեղծության գաղափարական-աշխարհայացքային հիմքերը» վերտառությամբ հոդվածը: Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել «Վարք սրբոց» ժողովածուի Ա և Բ հատորները, որ գրաբարից աշխարհաբարի է վերածել բ.գ.դ. Ա. Մաղոյանը: Վերջինս աշխարհաբարի է վերածել նաև «Պապիկ և թոռնիկ» գիրքը, որ ևս հրատարակել է Էջմիածնի տպարանը: Թեհրանում լույս է ընծայվել Ա. Մաղոյանի «Խորհուրդ մեծ և սքանչելի. Հայ մատենագրութիւն բոլորի համար» մենագրությունը:

Թեմա 3. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի շրջանակներում լույս է տեսել «Հեռուստառադիոեթեր (լեզվական մեղանչումներից մինչև անաղարտություն)» աշխատությունը (հեղինակներ՝ Երջանիկ Գևորգյան, Սուսաննա Գևորգյան):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	1	-	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Հովհաննիսյան Մ. Ս.,* Հայագիտության արդի մարտահրավերները համացանցում, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 12 էջ:

ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Թամարյան Ջեննի Լավրենտիի, կրտսեր գիտաշխատող
2. Մանուկյան Վարդուհի Վարազդատի, ավագ լաբորանտ

Համատեղողներ

1. Ափցիաուրի Նինո Կոնստանտինի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

Կենտրոնի հիմնական խնդիրները

Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը, ստեղծել համապատասխան ծրագրեր, անհրաժեշտ դասագրքեր ու ձեռնարկներ, բառարաններ, պատրաստել հայ վրացագետների կադրեր, Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև զարգացնել գիտակրթական կապերը:

Աշխատանքները հիմնականում նվիրված են վրաց գրականության պատմությանը, հայ-վրաց լեզվական-բառարանագրական առնչություններին, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններին, հայ գրականագիտության արձագանքը վրաց գրականությանը և վրաց գրականագիտության արձագանքը հայ գրականությանը, հայ-վրաց գրական-մշակութային կապերին և հարակից այլ խնդիրների:

Վրացագիտության կենտրոնի աշխատանքներն ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ գիտամանկավարժական (վրացագիտություն մասնագիտացող խմբերում (I-IV կուրսեր) վրացագիտական առարկաների դասավանդում) և գիտահետազոտական:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

- Ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը,
- Ստեղծել համապատասխան ծրագրեր, ուսումնական անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, զրուցարաններ, ինքնուսույցներ «Վրացագիտություն» մասնագիտացման համար,
- Պատրաստել հայ վրացագետների կադրեր՝ պետական ապարատում, գիտության, մանկավարժության, դիվանագիտության, թարգմանության և այլ բնագավառներում աշխատելու համար,
- Ծրագրել և անցկացնել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ,
- Ուսումնասիրել, թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները,
- Նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն (պետական ֆինանսավորում):	Բայրամյան Հ. Ս.

2. Ջավախքը հայ և վրաց գրականության և քաղաքականության մեջ. պատմություն և արդիականություն (պետական ֆինանսավորում):	Ափցիաուրի Ն. Կ.
3. Վրաց լեզու. շարահյուսություն (պետական ֆինանսավորում):	Թամարյան Ջ. Լ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. «Ժամանակակից վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն» թեմայի ուսումնասիրությունն արդեն ավարտված է և լույս է տեսել (կատարող՝ Հ. Բայրամյան):

Վրացերենի քերականության բուհական դասագիրքը տեսական և գիտագործնական նշանակություն ունի ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների ուսանողների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների համար:

Թեմա 2. «Ջավախքը հայ և վրաց գրականության և քաղաքականության մեջ. պատմություն և արդիականություն»:

Հաշվետու ժամանակաշրջանում ավագ գիտաշխատող Ն. Ափցիաուրին շարունակել է եռամյա (2008-2010) պլանով նախատեսված թեման: Հավաքել, թարգմանել և վերլուծել է Ջավախքին առնչվող հին, նոր և նորագույն շրջանի գրավոր տեղեկությունները: Ուսումնասիրել է Հայաստանի կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, քաղաքագետների կողմից տվյալ խնդրի արծարծումները: Աշխատանքն ընթացքի մեջ է:

Թեմա 3. «Վրաց լեզու. շարահյուսություն»:

Կրտսեր գիտաշխատող Ջ. Թամարյանը ուսումնասիրել է վրաց և հայ գիտական, գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականությունը, հավաքագրել, թարգմանել և խմբավորել է թեմային առնչվող տեսական և մեթոդական անհրաժեշտ գրականությունը:

Թեմայի շարադրանքը կավարտվի և հրատարակության կպատրաստվի 2010 թ-ին:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հրատարակչական պլանում է և շուտով լույս կտեսնի Հ. Բայրամյանի գիտական հետազոտությունների, գրականագիտական հոդվածների, գրախոսությունների և հարցազրույցների ընտրանին (14-15-հեղ. մամուլ):

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ակադեմիկոս հայագետ, պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց» վրացերեն լույս տեսած աշխատությունը (Թբիլիսի, 1928թ.) թարգմանվել է հայերեն, համեմատվել բնագրի հետ, կատարվել են անհրաժեշտ ուղղումներ և լրացումներ: Գիրքն ամբողջությամբ շարված է (կատարողներ՝ Թամարյան Ջ. Լ., Մանուկյան Վ. Վ.):

Հաշվետու տարում ավագ գիտաշխատող Ն. Ափցիաուրին խմբագրել է Վրացագիտության հայկական կենտրոնի տնօրենի «Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն» ուսումնական ձեռնարկը, մասնակցել է բյուզանդագետների՝ «Կովկասը 10-րդ դարում» խորագրով միջազգային կոնֆերանսին:

Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են Հայաստանում վրաց գրականությանը նվիրված միջոցառումներին, թարգմանել և առանձին գրքով, ինչպես նաև հայկական մամուլում տպագրել են բազմաթիվ գեղարվեստական երկեր՝ պատմվածքներ և նովելներ, հանդես են եկել հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերին վերաբերող դասախոսություններով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	-	3	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Բայրամյան Հ. Ս.,* Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 252 էջ:

Հոդված

1. *Բայրամյան Հ. Ս.,* Հովհաննես Թումանյանը և իր վրացի բարեկամները (նյութեր թումանյանական հանրագիտարանի համար), «Կամուրջ-2009», «Էրովնոլի Մսերլոբա» հրատ., Թբիլիսի, 2010, էջ 330-340:
2. *Թամարյան Ջ. Լ.,* Դարձվածների ոճական արժեքը Շիրազի քնարերգությունում, «Կանթեղ», թիվ 2 (43), «Ասողիկ» հրատ., Երևան, 2010, էջ 61-73:
3. *Թամարյան Ջ. Լ.,* Հովհաննես Շիրազի նորաբանությունների ոճական առանձնահատկությունները, «Կանթեղ», թիվ 3 (44), «Ասողիկ» հրատ., Երևան, 2010, էջ 26-34:

ՕՍՄԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Անի Համլետի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Օսմանագիտության բաժնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության իրականացրած վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական և լեզվական քաղաքականությունը, քննել բռնի իսլամացման փուլերն ու նպատակները, տեղանունների թուրքացման մեթոդները (մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանում և այլ հայաբնակ շրջաններում): Կենտրոնի խնդիրներից է նաև այս հարցերի վերաբերյալ թուրքական պաշտոնական պատմագրության կեղծարարություններին հակադարձելը:

Կենտրոնում ուսումնասիրվում են թյուրքականության գաղափարախոս Զիա Գյոքալփի քաղաքական, մշակութաբանական և տնտեսագիտական հայացքները: Համակողմանի պատմաբանասիրական, աղբյուրագիտական քննության են ենթարկվել Զիա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները», «Թյուրքական քաղաքակրթության պատմություն» հիմնարար աշխատությունները, օսմանական տարբեր հանդեսներում հրատարակված սոցիոլոգիական, մանկավարժական, տնտեսագիտական, լեզվաբանական բնույթի հոդվածները, բանաստեղծությունները:

Շարունակվում են նաև աշխատանքները հայ ուսանողի համար օսմաներեն դասագրքի ստեղծման ուղղությամբ:

Բաժնի գործունեության ուղղությունները

1. Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի տեղանունների թուրքացման քաղաքականությունը:
2. Զիա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները»:

3. Օսմանյան կայսրության հայկական նահանգների ժողովրդագրական շարժերն ըստ օսմանյան աշխարհագիր մատյանների (tahrir defterler), տարեգրքերի (salnameler) և հայկական աղբյուրների համադրությամբ:
4. Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում:
5. Համշեն գավառի հայկական միկրոտեղանունների իմաստակառուցվածքային քննություն:
6. Հայ ուսանողների համար օսմաներեն դասագրքի ստեղծում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

1. Լ. Սահակյանը և Ս. Վարդանյանը հրատարակել, ծանոթագրել են հայ ազատամարտի մասնակից, Ցեղասպանությունը վերապրած զինվոր Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» հուշագրությունը, որը պատմավավերագրական անհերքելի մի փաստաթուղթ է: Գրքին կից հրատարակվել են երկու քարտեզ (որպես ներդիր) և լուսանկարներ:
2. Օսմանագիտության բաժինը կազմակերպել է Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» գրքի շնորհանդեսը ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսի հանրային գրադարանում, ինչպես նաև ԵՊՀ Երկանյանների անվան լսարանում (2010 հունիսի 25-ին):
3. Հրատարակության է պատրաստվել Ալ. Սաֆարյանի «Ջիա Գյոքալփը և թյուրքականության հիմունքները» մենագրությունը (պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյան):
4. 2010 թ. հուլիսին Լ. Սահակյանը դաշտային աշխատանքներ է իրականացրել Արդվինի նահանգի Խոփա գավառի հայախոս կրոնափոխ համշենցիների, ինչպես նաև Ռիզեի նահանգի Արդաշեն և Չամլըհեմշին (հին անունը՝ Ներքին Վիժե) գավառների թրքախոս կրոնափոխ համշենցիների շրջանում, ինչի արդյունքում գրառել է բացառիկ բանահյուսական նյութեր, խաղիկներ, պարեր և Համշենի բարբառով 100-ից ավելի միկրոտեղանուններ, որոնք առաջին անգամ իրենց իմաստակառուցվածքային քննությամբ կներկայացվեն գիտական շրջանակներին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս	Քարտեզ
-	2	-	-	2	1	4 (ներդիր)

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Sahakyan L. S.,* Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey (անգլերեն, հայերեն, ռուսերեն), Published by Arod Books, Montreal, 2010, 70 p.:
2. *Վարդանյան Ս. Գ.,* Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 428 էջ:

Հոդված

1. *Սահակյան Լ. Ս.,* Տրապիզոնի տարածագոտին Օսմանյան կայսրության վարչական բաժանումներում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, «Լուսակն» հրատ., Երևան, 2009, էջ 68-86:

2. *Մելքոնյան Ռ. Հ., Սաֆարյան Ալ. Վ.,* Ակադեմիկոս Վ. Գորդլևսկին Օսմանյան կայսրության բռնի իսլամացումների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, թիվ 6, «Լուսակն» հրատ., Երևան, 2009, էջ 298-304:

Զեկուցումների թեզիս

1. *Сафарян А. С., Согомонян А. С.,* «Героглы-Кер-оглы» в его армянских версиях, Сюжет Героглы и литература Востока (Материалы международной научной конференции), Национальный институт рукописей Академии наук Туркменистана, 2009, с. 320-361 (նույնը՝ թուրքմեներեն, անգլերեն, էջ 135, նույնը՝ անգլերեն, էջ 247-248):

ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Մաղալյան Վլադիմիր Սարգսի, բան. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող
2. Գալստյան Իրինա, կրտսեր գիտաշխատող
3. Հովհաննիսյան Լիլյա Հայկազի, կրտսեր գիտաշխատող
4. Մինասյան Մարինե Պետիկի, կրտսեր գիտաշխատող
5. Սարգսյան Վարդուհի Ֆելիքսի, կրտսեր գիտաշխատող
6. Պողոսյան Էմիլ Էդուարդի, կրտսեր գիտաշխատող
7. Վրթանեսովա Տատյանա Վլադիմիրի, լաբորանտ

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	6	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Մաղալյան Վ. Ս.,* Գրական-մշակութային կյանքը Երևանի համալսարանում (1919-1999 թթ.), ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 236 էջ+32 էջ ներդիր:

Հոդված

1. *Մաղալյան Վ. Ս.,* Երևանի պետական համալսարանի հոբելյանները (199-1999 թթ.), ԲԵՀ, թիվ 2, Երևան, 2009, էջ 204-223:
2. *Մաղալյան Վ. Ս.,* Գրական հեթանոսությունը նոր մեկնաբանությամբ (գրախոս. Խ. Վարդանյանի «Դանիել Վարուժանը և գրական հեթանոսությունը» մենագրության մասին), «Հոգևոր Հայրենիք» ամսաթերթ, թիվ 12, Երևան, 2009, էջ 4:
3. *Մաղալյան Վ. Ս.,* Մեծ եղեռնից մազապուրծ երգնկացիների տոհմագիրքը, «Էջմիածին», թիվ Ժ, «Ս. Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2009, էջ 123-131:

4. *Մաղալյան Վ. Ս.,* Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի պատմությունը, «Էջմիածին», թիվ Ե, «Ս. Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2010, էջ 130-139:
5. *Մաղալյան Վ. Ս.,* Վրաստանի խորհրդահայ միօրյա թերթերի ընդհանուր բնութագիրը, ԲԵՀ, թիվ 131.1 (հայագիտություն), Երևան, 2010, էջ 35-44:
6. *Մաղալյան Վ. Ս.,* Անվանի գրականագետը (պրոֆ. Ա. Մխիթարյանի ծննդյան 90-ամյակի առթիվ), «Հայրենիք», թիվ 2, Երևան, 2010, էջ 5:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող
2. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
3. Աղուզումցյան Աննա Խաչատուրի, ավագ լաբորանտ

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
	3	-	-	-	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Սիմոնյան Հ. Ռ.,* Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 1028 էջ:
2. *Սիմոնյան Հ. Ռ.,* Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ., ապրիլ), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 529 էջ:
3. *Մարքվարթ Յ.,* Հայոց եպիսկոպոսությունների ծագումը: Հայկական ավանդությունների քննական ուսումնասիրություն (գերմաներենից հայերեն թարգմ.՝ Է. Մակարյանի), Թեհրան, 2009, 97 էջ:

Բաժնի հիմնական խնդիրները եւ գործունեության ուղղությունները

Ցեղասպանագիտության բաժնի առջև դրված են հետևյալ խնդիրները. հայտնաբերել, թարգմանել և հրատարակության պատրաստել Հայոց ցեղասպանության վերաբերյալ օտարալեզու հազվագյուտ գրքեր և ժողովածուներ, կազմել Հայոց ցեղասպանության մասին գրքերի մատենագիտական ցանկեր, հրատարակության պատրաստել դրանց վերլուծությունները, կազմել Հայոց ցեղասպանությանը նվիրված մենագրությունների, ժողովածուների և հոդվածների մատենագիտություններ, հավաքել և ՀՀԻ արխիվում կենտրոնացնել Հայոց ցեղասպանության վերաբերյալ աշխարհասփյուռ, բայց առայժմ անհայտ մնացած տարբեր վավերագրեր (լուսանկարներ, հուշագրություններ, ֆիլմեր, փաստաթղթեր և այլն), հավաքել և ՀՀԻ գրադարանում կենտրոնացնել Հայոց ցեղասպանության և առհասարակ ցեղասպանության թեմայի վերաբերյալ տարալեզու գրքեր, փաստաթղթեր և այլ բնույթի նյութեր, ՀՀ և արտասահմանի գիտական պարբերական մամուլում և գիտաժողովներում հանդես գալ գիտական հոդվածներով և զեկուցումներով, համագործակցական կապեր հաստատել աշխարհում ցեղասպանագիտական կենտրոնների ու անվանի ցեղասպանագետների հետ,

ուսումնասիրել Հայոց ցեղասպանությանն առնչվող մի քանի հիմնախնդիրներ, ինչպիսիք են «Հայ դատ» հասկացությունը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարաբերակցությունը, հայկական ինքնությունը և Հայոց ցեղասպանության առնչությունը, Հայոց ցեղասպանության ընդգրկած տարածքը, ժամանակահատվածը, նրա համար պատասխանատվությունը և այլ հարակից հիմնահարցեր:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Շարունակվում են կիլիկիահայության ջարդերի ուսումնասիրման խնդիրը, Հայոց մեծ եղեռնի ականատես գերմանացիների վկայությունների հիման վրա գերմաներեն հրատարակված հուշերի հայերեն թարգմանելու աշխատանքը, ուսումնասիրվում են օտարալեզու տպագիր մամուլում Հայոց ցեղասպանության խնդրին առնչվող նյութերը, հրատարակության է պատրաստվում Հր. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» մենագրության 4-րդ հատորը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի գիտական ղեկավար՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Կենտրոնի հիմնական խնդիրներն են՝

- SS-ների ոլորտում կրթական, մարզման, շարունակական կրթության ծրագրերի և առանձին դասընթացների իրականացում
- SS-ների բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կատարում
- համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համատեղության կարգով)*

Մասնագիտացումներ՝ տեղեկատվական համակարգերի մշակում,
(մագիստրոսական ծրագրեր) տեղեկատվական համակարգերի կառավարում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 81*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	անվճ	վճ	անվճ	վճ	անվճ	վճ	անվճ	վճ
Մագիստրատուրա								
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	8	26	15	32	-	-	-	-

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		անվճ	վճ		
Մագիստրատուրա					
Տեղեկատվ. տեխն.					
1-ին	34	-	9	5	74
2-րդ	47	-	5	15	89
Ընդամենը	81	-	14	20	83

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
		անվճ	վճ		
Մագիստրատուրա					
Տեղեկատվ. տեխն. 1-ին	33	-	3	9	91

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 47, այդ թվում նախորդ տարիներից՝* 0
	մագիստրատուրա
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	47

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կոստանյան Արմեն Հրաչի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մանուկյան Մանուկ Գարուշի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավագյան Արթուր Արամայիսի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Վասիլյան Աշոտ Մորիսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Թոփչյան Ռուբեն Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Գրիգորյան Հայկ Աշոտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Վարդանյան Վալերիկ Արտաշի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Մաթևոսյան Վարդան Ալբերտի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Գրիգորյան Ալվարդ Հասոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Սողոմոնյան Ժաննա Միքայելի, դասախոս
7. Պետրոսյան Ելենա Գրիգորի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Պետրոսյան Ելենա Գրիգորի, ավագ լաբորանտ, գործավար
2. Ավագյան Անի Վահեի, ավագ լաբորանտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Բաշխված միջավայրերում պրոցեսների վերլուծության և օպտիմիզացիայի խնդիրներ (պետական ֆինանսավորում):	Շուքուրյան Ս. Կ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1.

- Շարունակվել է հետազոտվել պրոցեսների համարժեքության խնդիրը, որը պրոցեսների օպտիմիզացիայի ալգորիթմների կարևոր բաղկացուցիչ մասն է: Ստացվել է բազմանդամային բարդության նոր կոմբինատոր՝ ալգորիթմ բազմաժապավեն ավտոմատների համարժեքությունը որոշելու համար, որը զեկուցվել է «Լեզուներ և ավտոմատներ՝ տեսություն և կիրառություն LATA 2010» միջազգային կոնֆերանսում:
- Հետազոտվել են ընդլայնվող տվյալների մոդելի (xdm) համար ժամանակային մոդելի կառուցման խնդիրներ: Այդ հետազոտությունների արդյունքում Ալենի ժամանակային տրամաբանության հենքի վրա առաջարկվել է xdm-ի մի ժամանակային ընդլայնում՝ տվյալների բազաներում ժամանակի կատեգորիան ներկայացնելու համար: Էլեմենտների հաշվի ժամանակային ընդլայնումը բերվել է XPath լեզվի ժամանակային ընդլայնմանը, և սահմանվել է ժամանակային XPath լեզվի ֆորմալ սեմանտիկան:
- Հետազոտվել են Workflow պրոցեսների վերլուծության և վերիֆիկացիայի խնդիրները: Նկարագրվել են Workflow պրոցեսների դասեր, որոնց համար այդ խնդիրները ունեն լուծում: Արդյունքներն ընդունված են տպագրության:
- Հաստատվել է ԱՄՆ արտոնագիրը հիշողության սարքերի կառուցվածքային մոդելի վերաբերյալ: Ստացվել է մինիմալ ալգորիթմ ասոցիատիվ հիշողության սարքերի թեստավորման համար:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Development of Scientific Computing Grid on the Base of Armcluster for South Caucasus Region, 2007-2009. #A-1451 (ISTC)	ԵՊՀ խմբի ղեկավար՝ Շուքուրյան Ս. Կ.
2. ՀԲԸՄ հայկական վիրտուալ քոլեջ, 2009-2010: (AGBU)	Ավագյան Ա. Ա.

Թեմա 1. Մշակվել և ներկայացվել է թեմայի վերջնական հաշվետվությունը:

Թեմա 2. Իրականացվել է «Հայկական համացանցային համալսարանի» կառուցվածքը: Այն ընդլայնվել և հարմարեցվել է միջազգային չափորոշիչներին: Համացանցային ուսուցման համար մշակվել են բազմալեզու ծրագրային շաբլոններ հայոց պատմության, հայկական երաժշտության, հայկական ճարտարապետության և լեզվի ուսուցման համար:

SCORM չափորոշիչների հիմքով մշակվել են հայոց լեզվի արևմտահայերեն և արևելահայերեն *միջին* և *ավագ* մակարդակի հայերենի դասընթացները (32 շաբաթ տևողությամբ մուլտիմեդիա ուսուցման փաթեթներ): Փաթեթները մշակվել են վեց լեզուներով: Կիրառվել են ձայնային, երաժշտական, տեքստային, անիմացիոն և տեսանկարային վիզուալիզացիայի բոլոր միջոցները: Դիտարկված է ձայնային համեմատման ծրագրային միջոցների կիրառումը ուսուցման ընթացքում:

Վեց լեզուներով մշակվել է միջնադարյան և ժամանակակից հայոց պատմության 32 շաբաթվա համար նախատեսված ժամանակակից համացանցային ռեսուրսների հետ կապակցված մուլտիմեդիա ուսուցման դասընթաց:

Վեց լեզուներով մշակվել է հայկական երաժշտության 8 շաբաթվա համար նախատեսված համացանցային բազմաֆունկցիոնալ դասընթացի փաթեթը:

Նախագծվել և իրականացվել են ուսանողների գրանցման և վճարների հավաքագրման ավտոմատացված մոդուլները:

Մասնակցություն միջազգային գիտաժողովների աշխատանքներին

Ս. Կ. Շուքուրյան

- IEEE խորագրով անցկացվող EWDTS'2010 (East-West Design and Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի նախագահ:
- IEEE խորագրով անցկացվող VTS'2010 (VLSI Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:
- IEEE խորագրով անցկացվող PEREL'2010 (Pervasive E-Learning) գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:

Մ. Գ. Մանուկյան

- ACM խորագրով անցկացվող ADBIS'2010 (Advances in Databases and Information Systems) եվրոպական գիտաժողովի ղեկավար մարմնի (Steering Committee) և ծրագրային կոմիտեի անդամ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	7	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Alexander A. Letichevsky, Arsen S. Shoukourian, Samvel K. Shoukourian,* The Equivalence Problem of Deterministic Multitape Finite Automata: A New Proof of Solvability Using a Multidimensional Tape, Proceedings of LATA 2010: Language and Automata Theory and Applications, 4th International Conference, May 24-28, Trier, Germany, 2010, Lecture Notes in Computer Science, 6031, Springer, 2010, p. 392-402.
2. *Manukyan M. G.,* Element Algebra. In Proc. of ADBIS'2009, LNCS 5968, Springer, Berlin, 2009, p. 113-120.
3. *Kostanyan A., Shoukourian S., Varosyan A.,* Solvability of Formal Verification Problem for Business Process Templates, Proceedings of Emerging M&S Applications in Industry and Academia Symposium 2010 (EAIA 2010), SpringSim'2010 Multi-conference of Society for Computer Simulation, ACM Press, 11-15 April, Orlando, FL, USA, 2010.
4. *Harutyunyan G., Melkumyan D.,* Fault Location and Diagnosis algorithm for static and dynamic faults in SRAMs, Newsletter of NAS - Technical Sciences, N 3, 2010.
5. *Aleksanyan K., Amirkhanyan K., Shoukourian S., Vardanian V. and Zorian Yervant,* to Virage Logic Corporation Memory modeling using an intermediate level structural description 07768840 Cl. 365-189.02, US patent issued on August 3, 2010.
6. *Grigoryan H. A., Harutyunyan G. E., Shoukourian S. K., Vardanian V. A., Zorian Y.,* A Minimal March Test Algorithm for Detection of Realistic Faultts in Single Port CAMs, accepted for Proceedings of IEEE EWDTS'2010, 2010.
7. *Kostanyan A., Soghomonyan L.,* A framework for conceptual knowledge representation, In Proc. of 4th Annual Scientific Conference of RAU, Yerevan, 2010, p. 171-176.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավարի պաշտոնակատար՝ *Դանիելյան Նատալյա Ռոբերտի*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Հովհաննիսյան Արփենիկ Գարուշի, ավագ ծրագրորդ
2. Բաղալյան Աննա Գրիգորի, ավագ ծրագրորդ
3. Նալբաչյան Արմինե Աշոտի, ավագ ծրագրորդ
4. Առաքելյան Սեդա Արարատի, ավագ ծրագրորդ
5. Պողոսյան Լիանա Սարգսի, օպերատոր
6. Գասպարյան Դիանա Գագիկի, օպերատոր
7. Առուստամյան Ժաննա Առուստամի, օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մշակվել և ներդրվել է աշխատանքային ուսումնական պլանների պատրաստման բաշխված ծրագիրը,
- Մշակվել և ներդրվել է անհատական ծանրաբեռնվածության պատրաստման բաշխված ծրագիրը,
- Մշակվել և ներդրվել է բակալավրիատի դիպլոմի հավելվածի պատրաստման բաշխված ծրագիրը,
- ԵՊՀ բոլոր ամբիոններում տեղադրվել է Supervision ծրագիրը,
- Կատարվել է Supervision ծրագրի սպասարկում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Գրիգորյան Ալվարդ Հասոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Իրականացվել է ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում բակալավրիատի ծրագրով նախատեսված «Համակարգչից օգտվելու հմտություններ» համահամալսարանական առարկայի դասավանդումը: Դասերն անցկացվում են ՏՏԿՀ կենտրոնի հինգ համակարգչային լսարաններում (ԻԿՄ ֆակուլտետի մասնաշենքի կենտրոնական համակարգչային դահլիճ, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի երկու համակարգչային սրահներ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մասնաշենքի համակարգչային սենյակ, Հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի համակարգչային սենյակ):

2. Բաժինն ապահովել է ԵՊՀ որոշ ֆակուլտետների մագիստրատուրայի «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտության մեջ» առարկայի դասավանդումը:

3. Բաժնի աշխատակիցների կողմից մշակվել են ՀՀ բուհերի և արտերկրի ասպիրանտուրայի (առկա և հեռակա ուսուցման) ընդունելության նախապատրաստական դասընթացի պլան-ծրագիրը, գործնական առաջադրանքների ձեռնարկը, քննության թեստերը, որոնց հիման վրա էլ անցկացվել են նախապատրաստական դասընթացները և ընդունելության քննությունը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Մանուկյան Մանուկ Գարուշի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Կոստանյան Արմեն Հրաչի, առաջատար գիտաշխատող
2. Գրիգորյան Հայկ Աշոտի, կրտսեր գիտաշխատող
3. Զաքարյան Զորայր Ալբերտի, կրտսեր գիտաշխատող
4. Կաղյան Սահակ Իգորի, կրտսեր գիտաշխատող
5. Բաղալյան Աննա Գրիգորի, կրտսեր գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում լաբորատորիայում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Կրթական տվյալների ինտեգրում

IBM-Smarter Planet պլատֆորմի շրջանակում դիտարկվել են *կրթական տվյալների* ինտեգրման խնդիրներ: Որպես մեդիատոր (mediator) ենթադրվում է օգտագործել կրթական հասկացություններով ընդլայնված մի XML տվյալների մոդել: Կրթական տվյալների ինտեգրման դիտարկվող մոտեցումը ենթադրում է նաև, որ *կրթական համակարգը* պետք է լինի վերածրագրավորվող և վերակազմավորվող:

Կոնցեպտուալ գիտելիքների ներկայացման համակարգի մշակում

Մշակվել է կոնցեպտուալ գիտելիքների ներկայացման մի համակարգ, որի հիմքում ընկած են Formal Concept Analysis և Fuzzy Conceptual Graph Model մոտեցումները: Առաջարկված համակարգի հիմնարար հասկացությունն է սիմվոլի հասկացությունը, որի սեմանտիկան սահմանվում է իմաստաբանորեն մոտ և հեռու գտնվող սիմվոլների ոչ հստակ բազմությունների միջոցով: Համակարգը մասնավորապես հնարավորություն է տալիս իրականացնելու հետևյալ գործողությունները.

- տրված սիմվոլներին իմաստաբանորեն առավել մոտ (հեռու) սիմվոլի որոնում,
- տրված սիմվոլների կշռված կոմբինացիան ներկայացնող սիմվոլի կառուցում,
- տրված սիմվոլների իմաստն ընդլայնող առավել մասնավոր սիմվոլի որոնում,
- տրված սիմվոլների միջև իմաստաբանական շղթայի կառուցում:

Առաջարկված համակարգը բնորոշվում է նրանով, որ սիմվոլների սեմանտիկան հստակեցվում է համակարգի օգտագործման ընթացքում: Մշակված համակարգի հիման վրա կառուցվել են իմաստաբանական բառարան, ինչպես նաև տեքստում իմաստաբանական որոնում իրականացնող ծրագրային գործիք:

Հետազոտության արդյունքները տպագրվել են:

Ուսուցման նոր տեխնոլոգիաներ

Մշակվել են ալգորիթմներ և ծրագրային միջոցներ ՀԲԸՄ դրամաշնորհի աշխատանքների շրջանակում:

ՈՒԺԵՂ ԴԱՇՏԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար և տնօրեն՝ *Ավետիսյան Համլետ Կարոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Աշխատակիցների կազմը

1. Ավետիսյան Արա Կարապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող
2. Մկրտչյան Գառնիկ Ֆելիքսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, լաբ. վարիչ
3. Սեդրակյան Խաչիկ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Մարկոսյան Արմենուհի Գևորգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Ավչյան Բաբկեն Ռուբենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
6. Լալայան Ասատուր Ալեքսանդրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, լաբ. վարիչ
7. Խաչատրյան Լուիզա Միքայելի, ինժեներ

Համատեղողներ

1. Մալաքյան Յուրա Պարույրի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Մաթևոսյան Հրանտ Հենրիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Ներսիսյան Հրաչյա Բաղդասարի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Իսրայելյան Սամվել Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
5. Մանուկյան Փիրուզե Էդուարդի, կրտսեր գիտաշխատող

Օժանդակ աշխատակիցներ

1. Վարդանյան Սոֆյա Նապոլեոնի, ավագ լաբորանտ
2. Ազարյան Արթուր Ալբերտի, ավագ լաբորանտ
3. Նազարյան Տիգրան Արայի, լաբորանտ
4. Մարկոսյան Սերգեյ Ստեփանի, լաբորանտ
5. Խառատյան Ռուզաննա Ներսեսի, գործավար

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Ռենտգենյան լազերների և լազերային արագացման ոչ գծային մեխանիզմներ (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.
2. Ատոմական և պլազմային միջավայրերի բազմաֆոտոն փոխազդեցությունը հզոր էլեկտրամագնիսական դաշտերի հետ (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ուսումնասիրվել է լիցքավորված մասնիկների լազերային արագացումը մագնիսական վիգլերում: Շարժման դասական ռելյատիվիստիկ հավասարումների թվային ինտեգրման միջոցով հետազոտվել է լիցքավորված մասնիկի դինամիկան վերջավոր տևողությամբ և ֆոկուսացված իրական տարածաժամանակային պրոֆիլով լազերային փնջի դաշտում: Դիտարկվել է արագացման ոչ գծային ռեժիմը գերկարճ լազերային իմպուլսներով, որը համապատասխանում է դանդաղած ինտերֆերենցիոն ալիքի կողմից մասնիկի «անդրադարձման» և զավթման ոչ գծային երևույթին: Դիտարկվել են նաև էլեկտրոնային փնջի լազերային արագացման ոչ գծային ռեժիմները վակուումում և պլազմայում լազերային փնջի ֆոկուսում, որտեղ առկա է նաև ֆոկուսացման հետևանքով առաջացած ճառագայթային դաշտի երկայնական բաղադրիչը: Մաքսվելի հավասարումների ճշգրիտ լուծման օգնությամբ ուսումնասիրվել է լիցքավորված մասնիկների փնջերի դիֆրակցիոն գերճառագայթումը ընդհանուր երկրաչափության դեպքում՝ իդեալական հաղորդիչ կիսահարթության նկատմամբ մասնիկների անկման կամայական անկյան դեպքում, ինչպես նաև ուսումնասիրվել են կոհերենտ ճառագայթման սպեկտրալ և անկյունային բաշխվածությունների կախումները փնջի բնութագրական մեծություններից՝ առաջարկելով նոր մոտեցումներ փնջերի ոչ դեստրուկտիվ դիագնոստիկայի համար: Ուսումնասիրվել է լազերային թիրախներից ստացված գերխիտ ռելյատիվիստիկ էլեկտրոնային փնջերի ճառագայթումը բյուրեղում, երբ տեղի ունի կանալացման երևույթը: Ցույց է տրվել փափուկ ռենտգենյան տիրույթում այդպիսի փնջերի գերճառագայթման հնարավորությունը, որը թույլ է տալիս քննարկել այս մեխանիզմը որպես գերճառագայթային ազատ էլեկտրոնային ռենտգենյան լազերի իրական սխեմա:

Լուծվել են հավասարաչափ ընդարձակվող, անվերջ հաղորդականությամբ, չեզոք գլանային պլազմայի սահմանի շարժման, էներգիայի տեղափոխման, ինչպես նաև միկրոդաշտերի ֆլուկտուացիայի և սպեկտրալ գծերի ձևերի որոշման խնդիրները երկկոմպոնենտ բախումային և խիստ կապված պլազմաներում, ուժեղ հաստատուն-համասեռ մագնիսական դաշտի առկայության պայմաններում: Ստացված է ճշգրիտ անալիտիկ լուծում նշված տիպի պլազմայի սահմանի շարժման օրենքի համար: Մագնիսական դաշտում պտտվող մասնիկների երկակի բախումների և էներգիայի տեղափոխման խնդիրը ուսումնասիրվել է գրգռումների տեսության երկրորդ կարգում, որը ներառում է մասնիկների ցիկլոտրոն շարժման բոլոր հարմոնիկները, և որի ճշտության բավարար աստիճանը հաստատվել է Մոնտե-Կարլոյի դասական տրաեկտորիաների թվային հաշվարկներով: Ջրածնանման ծանր իոնների ճառագայթման սպեկտրալ գծերի ձևերի որոշման համար միկրոդաշտերի ֆլուկտուացիաները հաշվվել են մոլեկուլյար դինամիկ թվային հաշվարկման կոդով, որը թույլ է տալիս հաշվի առնել նաև իոնների և էլեկտրոնների կորելյացիաները բախումային և խիստ կապված պլազմաներում:

Շարունակվել են աշխատանքները ուսումնասիրվող էլեկտրամագնիսական պրոցեսների և բացահայտված ոչ գծային երևույթների աստղաֆիզիկական կիրառությունների և տիեզերքի էվոլյուցիային առնչվող՝ վերջին տարիներին զարգացված նախաստեղծ նյութի առաջացման նոր վարկածների ու քվանտային սկզբունքների կիրառման վերաբերյալ՝ ելնելով քվանտային ստատիստիկայում սիմետրիայի խախտման և ֆազային անցման ենթադրությունից (Բոզե ստատիստիկայից թռիչքաձև Ֆերմի ստատիստիկայի անցում):

Թեմա 2. Ուսումնասիրվել է բազմաֆոտոն ռեզոնանսային գրգռման միջոցով լազերային դաշտի բարձր հարմոնիկների գեներացիայի խնդիրը մեծ դիպոլային մոմենտով օժտված բևեռային մոլեկուլների համակարգում: Հետազոտվել են հարմոնիկների ճառագայթման ոչ կոհերենտ և կոհերենտ սպեկտրները: Ուսումնասիրվել է մոլեկուլների գերճառագայթման հնարավորությունը ոչ շատ մեծ կարգաթվով հարմոնիկների վրա: Ստացվող ինտենսիվությունները մի քանի կարգով գերազանցում են ատոմներում ավանդական թունելային սխեմայով իրականացվող բարձր կարգի հարմոնիկների գեներացիայի ինտենսիվություններին:

Ուսումնասիրվել է երկմակարդակ մոլեկուլյար (արտաքին համասեռ էլեկտրական դաշտում) և եռամակարդակ ատոմական համակարգերում ՏՀց-ային կոհերենտ ճառագայթման ստացման հնարավորությունը հզոր լազերային դաշտերով հնդուկցված բազմաֆոտոն ռեզոնանսային գրգռման շնորհիվ: Ցույց է տրվել, որ ինչպես ջրածնանման ատոմների-իոնների (պատահական այլասերման պատճառով ինվերսիոն սիմետրիայի՝ ուստի և վիճակների զույգության, խախտման պայմաններում միջին դիպոլ մոմենտով ստացիոնար վիճակների կամ դիպոլային կապով երկու էներգետիկ մոտ մակարդակների գոյություն), այնպես էլ

հաստատուն դիպոլային մեծ մոմենտներով օժտված բևեռային մոլեկուլների և մոլեկուլային իոնների համակարգերի որոշակի դասի համար հնարավոր է ատոմների կամ մոլեկուլների բնակեցվածությունների ռաբի-տատանումներին համապատասխանող հաճախության (բազմաֆոտոն գրգռումների դեպքում՝ ընդհանրացված ռաբի-հաճախության) վրա էֆեկտիվ ճառագայթում, որն ուժեղ լազերային դաշտերում ընկած է ՏՀց տիրույթում: Այսպիսի մեխանիզմով ստացվող կոհերենտ ճառագայթման ինտենսիվությունը հազար անգամ մեծ է ժամանակակից քվանտային-կասկադային ՏՀց լազերների ինտենսիվությունից և միլիոն անգամ գերազանցում է գրականության մեջ վերջերս դիտարկված կիսահաղորդչային համակարգերում սուբմիլիմետր տարածական չափերում պարունակվող քվանտային կետերի վրա սպասվելիք կոհերենտ ՏՀց ճառագայթման ինտենսիվությունը:

Ռելյատիվիստիկ տեսության շրջանակներում ուսումնասիրվել է գերհզոր լազերային ճառագայթման ոչ գծային կլանման պրոցեսը ռելյատիվիստիկ պլազմայում՝ միջուկների/իոնների վրա հարկադրական բազմաֆոտոն արգելակային ցրման պրոցեսում: Ստացվել են կլանման գործակցի էապես նոր ոչ գծային կախումներ դաշտի ինտենսիվությունից և պլազմայի ջերմաստիճանից:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Կատարվել են աշխատանքներ, որոնք վերաբերում են քվանտային օպտիկայի և ինֆորմատիկայի հիմնախնդիրներին, այն է՝ կառավարելի կոհերենտ սուպերպոզիցիոն վիճակների ստեղծում թույլ փորձնական իմպուլսով զուգորդված գերկարճ լազերային իմպուլսների շարասյունով, որոնց կրկնման հաճախությունը և մղող լազերի ինտենսիվությունը կառավարելով՝ կարելի է իրականացնել ընտրված որոշակի անցումը. օրինակ՝ ցույց է տրվել K2 մոլեկուլի տատանողական վիճակների տարբեր սուպերպոզիցիաների ստացումը: Զարգացվել է օպտիկական խոռոչներում անզանազանելի միաֆոտոն իմպուլսների ստեղծման մեխանիզմ, որը հիմնված է քառամակարդակ ատոմի երկու ռամանյան անցումների վրա՝ առանց՝ ֆոտոնի գեներացիայի ընթացքում ատոմի վերամղման անհրաժեշտության:

Կենտրոնում շարունակվել են փորձարարական հետազոտությունները լուծույթներից լազերային ճառագայթահարման միջոցով մետաղական և կիսահաղորդչային մակրոզանգվածներից նանոմասնիկների անջատման, մասնավորապես քվանտային կետերի ստացման համար: Կատարելագործվել է քիմիական այդպիսի էլեմենտներ պարունակող ջրային լուծույթներում կոլոիդ նանոմասնիկների լազերային սինթեզի տեխնոլոգիան: Սպեկտրասկոպիկ չափումների միջոցով հետազոտվել են ստացված նանոմասնիկների ֆիզիկաքիմիական հատկությունները առավելապես կենսաբանական և բժշկական կիրառությունների տեսանկյունից: Կատարվել է փորձարարական հետազոտությունների շարք՝ կապված ջրի ճառագայթման սպեկտրում տատանողական-պտտական մոլեկուլյար անցումների հաճախությունների տերահերցային տիրույթի (λ~1.6մմ) ուսումնասիրման և ստացված սպեկտրալ գծերի ուսումնասիրությունների հետ: Հետազոտվել և մշակվել է բաշխված հակադարձ կապով պիկովայրկյանային լազերի նոր սխեմա, որը թույլ է տալիս ստանալ գեներացիա հաճախությունների լայն՝ ինֆրակարմիր-տեսանելի տիրույթում:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. ISTC - # A-1307, “Laser Induced Generation of Coherent X-ray and Charged Particles Acceleration”.	Ավետիսյան Հ. Կ.
2. CRDF/NFSAT, ECSP-09-072_SASP, “Multiphoton Resonant Excitation and Harmonic Generation in Atomic-Molecular Systems”.	Ավչյան Բ. Ռ.

Նախագիծ 1. 2009 թ-ի դեկտեմբերին ավարտվել է այս նախագիծը, որի հիմնական նպատակն էր զարգացնել նոր ոչ գծային մեխանիզմներ և տեսական մոտեցումներ կարճալիքային տիրույթում ինտենսիվ կոհերենտ ճառագայթման աղբյուրների ստացման համար: Տեսականորեն ուսումնասիրվել են ռենտգենյան լազերի հնարավոր ոչ գծային մեխանիզմներ ռելյատիվիստիկ էլեկտրոնային փնջերի կոհերենտ ճառագայթման շնորհիվ (ազատ էլեկտրոնային լազեր), ինչպես նաև լիցքավորված մասնիկների լազերային-պլազմային արագացման համար (կոմպակտ չափերի նոր տիպի գերբարձր էներգիաների արագացուցիչներ), գերհզոր լազերային դաշտերից էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի ծնման բազմաֆոտոն պրոցեսներ, օպտիկականից

վեր անցումներով ատոմամոլեկուլյար համակարգերում կառավարելի կոհերենտ սուպերպոզիցիոն վիճակների ստեղծման և քվանտային օպտիկայի ու ինֆորմատիկայի հիմնախնդիրներին առնչվող մի շարք կարևոր երևույթներ:

Նախագիծ 2. Երիտասարդ մասնագետների գիտական հետազոտությունների զարգացման համար ԱՄՆ-ի (CRDF), ՀՀ ԳԱՏԱՀ-ի և Գիտության պետական կոմիտեի հատկացրած դրամաշնորհի շրջանակներում նախատեսված այս նախագիծն ընդգրկում է ջրածնանման ատոմների-իոնների և հաստատուն դիպոլ-մոմենտներով մոլեկուլյար-իոնական համակարգերի բազմաֆոտոն ռեզոնանսային գրգռումների և բարձր հարմոնիկների գեներացիայի խնդիրների տեսական ուսումնասիրությունը: Լուծվել են մեծ դիպոլ-մոմենտով բևեռային մոլեկուլի էվոլյուցիայի, ինչպես նաև բարձր հարմոնիկների վրա կոհերենտ ճառագայթման խնդիրները:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	11	12

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Avetissian H. K., Sedrakian Kh. V.,* Nonlinear interaction of charged particles with strong laser pulses in a magnetic undulator, Phys. Rev. ST AB, v. 13, 2010, p. 081301(1) - 081301(6).
2. *Nersisyan H. B. and Das A. K.,* Interaction of fast charged projectiles with two-dimensional electron gas: Interaction and collisional-damping effects, Physical Review E 80, 2009, p. 016402(1) - 016402(14).
3. *Nersisyan H. B.,* An exact solution of the moving boundary problem for the expansion of a plasma cylinder in a magnetic field, Physics Letters A 374, 2010, p. 4049-4053.
4. *Nersisyan H. B. and Zwicknagel G.,* Energy transfer in binary collisions of two gyrating charged particles in a magnetic field, Physics of Plasmas 17, 2010, p. 082314(1) - 082314(13).
5. *Aramyan A. R., Aramyan G. R., Galechyan G. A., Haroyan K. P., Vardanyan A. H., Danelyan G. A., Nersisyan H. B.,* Acoustic component of an antihail gun, Bulletin of IASES 14, 2010, p. 51-55.
6. *Aramyan A. R., Haroyan K. P., Galechyan G. A., Mangasaryan N. R., Nersisyan H. B.,* Predicted thermal superluminescence in low-pressure air, Laser Physics 20, 2010, p. 1554-1558.
7. *Nersisyan H. B., Toepffer C. and Zwicknagel G.,* Microfield fluctuations and spectral line shapes in strongly coupled two-component plasmas, Contributions to Plasma Physics 50, 2010, p. 193-203.
8. *Avetissian A. K.,* Might quantum symmetry breakdown cause supermassive proto-matter according to Ambartsumyan's prediction, "Evolution of Cosmic Objects through their Physical Activity", Proceedings of the International Conference dedicated to Viktor Ambartsumian's 100th anniversary, Yerevan-Byurakan, 2009, p. 1-7.
9. *Gogyan A., Guerin S. and Malakyan Yu.,* Shaping coherent excitation of atoms and molecules by a train of ultrashort laser pulses, Phys. Rev. A, 81, 2010, p. 033401(1)-033401(8).
10. *Gogyan A., Guerin S., Jauslin H.-R. and Malakyan Yu.,* Deterministic source of a train of indistinguishable single-photon pulses with single-atom-cavity system, Phys.Rev. A 82, 2010, p. 023821(1) -023821(7).
11. *Ерицян О. С., Лалаян А. А., Аракелян О. М., Папоян А. А., Костанян Р. Б.,* Кристаллы с открытой поверхностью волновых векторов: особенности отражения и возможности создания плоских линз, Кристаллография, Т. 55, 2010, с. 1196-1201.

Զեկուցումների թեզիս

1. *Avetissian H. K., Markossian A. G., Mkrtchian G. F.,* Nonlinear Absorption of Ultrapower Laser Radiation by Relativistic Underdense Plasma, EOS Annual Meeting 2010, Book of Abstracts, France, Paris, 2010, p. TOM-6.
2. *Avetissian H. K., Avchyan B. R., Mkrtchian G. F.,* Efficient Terahertz radiation generation in molecular systems by strong laser fields, European Conference on Atoms Molecules and Photons (ECAMP X), ECAMP Proceedings, Salamanca, Spain, 2010, p. 167.
3. *Avetissian H. K., Mkrtchian G. F.,* Soft x-ray superradiation in crystals with electron beams of relativistic targets, 32nd International Conference on Free Electron Laser (FEL 2010), Book of Abstracts, Malmo, Sweden, 2010, p. MOP B29.
4. *Avetissian H. K., Avchyan B. R., Markosyan S. S., Mkrtchian G. F.,* Harmonics generation at multiphoton resonant excitation of molecules with giant dipole moments, European Conference on Atoms Molecules and Photons (ECAMP X), ECAMP Proceedings, Salamanca, Spain, 2010, p. 168.
5. *Sedrakian Kh. V.,* Diffraction superradiation of electron beams on metallic screen at arbitrary geometry, 32nd International Conference on Free Electron Laser (FEL 2010), Book of Abstracts, Malmo, Sweden, 2010, p. MOP B34.
6. *Avetissian A. K.,* On the Possibility of Relic Gravitational Radiation, 10th International Conference “Relativistic Astrophysics, Gravitation and Cosmology”, May 25-27, Kiev, 2010, p. 43.
7. *Avetissian A. K.,* The Correlation Between the Masses of the Galactic Nuclei and the Surrounding Disk, RUDN 10th International Conference: “Modern Problems of Gravitation, Cosmology and Relativistic Astrophysics”, 27 June - 3 July, Moscow, 2010, p. 79-80.
8. *Avetissian A. K.,* Several Aspects of the Problems of Cosmomicrophysics, 10th International Gamov Conference-School “Astronomy and beyond: Astrophysics, Cosmology and Gravitation, Cosmomicrophysics, Radio-Astronomy and Astrobiology”, 23-28 August, Odessa, 2010, p. 22.
9. *Malakyan Yu., Gogyan A.,* Optical control of coherent excitation of atoms and molecules via quantum beating in uv generation, 10th European Conference on Atoms Molecules and Photons, 4-9 July, Salamanca, Spain (2010), p. 683.
10. *Malakyan Yu., Gogyan A., Guerin S., Jauslin H.-R,* Indistinguishable single-photon pulses from double-Raman-single-atom-cavity system, 10th European Conference on Atoms Molecules and Photons, 4-9 July, Salamanca, Spain, 2010, p. 538.
11. *Aramyan A. R., Aramyan G. R., Galechyan G. A., Vardanyan A. A., Danelyan G. A., Nersisyan H. B., Hakhumian A. A., Pogosyan N. G., Zakaryan T. V., Aslanyan A. M.,* Propagation of a shock wave in atmosphere, 4th International Renewable and Clean Energy Conference, October 5-7, Yerevan, 2009.
12. *Lalayan A., Aghbalyan Y.,* Water Stream Generator of Millimeter-Wave Radiation, NATO SET-159 Specialists Meeting on "Terahertz and Other Electromagnetic Wave Techniques for Defence and Security", Vilnius, 2010, p. 1-6.

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Ագլյան Վահագ Ռոբերտի, պատմական գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Մաթոսյան Տիգրան Սամվելի, պատմական գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Քարամյան Սևակ Համլետի, քաղաքագիտական գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Քոչարյան Հայկ Մկրտիչի, պատմական գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Գևորգյան Աննա Սերգեյի, կրտսեր գիտաշխատող
6. Մկրտչյան Սաթենիկ Սոկրատի, կրտսեր գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում կենտրոնում կայացել են գիտաուսումնական հետևյալ միջոցառումները.

- Զեկույց-քննարկում՝ «Պատրիարխալիզմ, կոլեկտիվիզմ և օրենքներ, իրադրությունը ժամանակակից Հայաստանում» (22.10.2009): Զեկուցողներ՝ Ա. Թադևոսյան, Տ. Մաթոսյան:
- Զեկույց-քննարկում՝ «Կրոն և աշխարհիկություն» (11.11.2009): Զեկուցող՝ Էնդրյու Ֆեգան (Էսսեքսի համալսարան):
- Զեկույց-քննարկում՝ «Կրոնը ժամանակակից աշխարհում. Հիմնական տենդենցներ» (09.12.2009): Զեկուցող՝ Ալեքսանդր Աղաջանյան (Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան):
- Զեկույց-քննարկում՝ «Հայաստանի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի բնութագրերը» (20.04.2010): Վարող՝ ՀՌԿԿ-Հայաստան ծրագրի տնօրեն Հեղինե Մանասյան:
- Զեկույց-քննարկում՝ «Մշակութային երկխոսություն» (04.02.2010): Վարողներ՝ պրոֆեսոր Դավիթ Հովհաննիսյան (ՔՄՀԿ տնօրեն), Հայկ Քոչարյան (ՔՄՀԿ), Մուհամմադ Ռեզա Շաքիբա (Երևանում ԻԻՀ մշակույթի կենտրոնի տնօրեն), դոկտոր Քյաբիրի, Սաթենիկ Մկրտչյան (ՔՄՀԿ), Աննա Գևորգյան (ՔՄՀԿ):

Հրատարակություններ

Վերլուծական տեղեկագիր	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	-	-	-	10	2

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Վերլուծական տեղեկագիր

1. Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 94 էջ:

Հոդված

1. *Оганесян Д. А.,* Конкурентность региональных систем безопасности, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 23-30:
2. *Ազլյան Վ. Ռ.,* Եվրամիության «Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Ռուսաստանի Դաշնությունը, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 31-38:
3. *Մկրտչյան Ս. Ս.,* Եվրոպական Միության Արևելյան գործընկերությունը վրաստանյան համատեքստում, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 39-44:
4. *Մաթոսյան Տ. Ս.,* Արևելյան գործընկերություն. խոչընդոտներ ճանապարհին, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 45-51:
5. *Հովհաննիսյան Դ. Ա.,* Ազատությունը որպես քաղաքակրթական հենք և հասարակական առաջընթացի գործիք, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 52-62:
6. *Գևորգյան Ա. Ս.,* Իրանի միջուկային ծրագրի զարգացումները Ահմադինեժադ-Խամենեի հարաբերությունների համատեքստում, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 76-81:
7. *Մկրտչյան Ս. Ս.,* Մուսուլմանները Վրաստանում «Վարդերի հեղափոխությունից» հետո. քրիստոնյա մեծամասնություն և մուսուլման փոքրամասնություն, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 82-86:
8. *Քոչարյան Հ. Մ.,* Քրիստոնեական և մուսուլմանական մշակույթների երկխոսության որոշ հիմնահարցեր, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 87-91:
9. *Քոչարյան Հ. Մ.,* Հայերի կարգավիճակը 7-8-րդ դդ. հայ արաբական առնչությունների համատեքստում, «Մերձավոր Արևելք», համար 6, «Լուսակն» հրատ, Երևան, 2009, էջ 278-288:
10. *Գևորգյան Ա. Ս.,* «ԱՄՆ միջուկային զենքի քաղաքականություն» զեկույցի ամփոփում, Վերլուծական տեղեկագիր, № 5, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 92-93:

Զեկուցումների թեզիս

1. *Kocharyan H. M.,* Armenians As Dzimmis in Early Ummah - International Conference: “Armenians in Bilad al-Sham (X-XV centuries)”, Institut français du Proche-Orient, 7-8 October, Aleppo, Syria, 2009.
2. *Hovhannisyan D. A.,* Armenia and South Caucasus: Modern Tendencies, International Conference: “Where are we? Post-Communist and post-Soviet countries over past twenty years”, University of Warsaw, 12-15 July, Warsaw, Poland, 2010.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Ղազինյան Արթուր Գագիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Մարտիրոսյան Վլադիմիր Էդուարդի, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ, փոխտնօրեն
2. Հայրապետյան Գրիգոր Խորենի, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ, տնտեսագետ-փորձագետ
3. Հակոբյան Աննա Ռաֆիկի, իրավաբան-փորձագետ
4. Մաթևոսյան Աննա Գագիկի, իրավաբան-փորձագետ
5. Սարգսյան Արման Գագիկի, իրավաբան-փորձագետ
6. Հակոբյան Լիլիթ Օթարի, փորձագետ
7. Մալյան Նարեկ Բորիսի, փորձագետ
8. Գևորգյան Քրիստինա Շավարշի, փորձագետ
9. Հայրապետյան Արշակ Կարենի, փորձագետ
10. Միրզոյան Լիլիթ Լևոնի, փորձագետ
11. Յորդանյան Օլյա Հովսեփի, փորձագետ
12. Կարապետյան Լիլիթ Սամվելի, մագիստրոսական ծրագրի համակարգող
13. Ալչանյան Նոնա Սամվելի, գրասենյակի օգնական-գրադարանավար
14. Մարդանյան Լուսինե Քաջիկի, գրասենյակի օգնական-գրադարանավար

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 31*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	անվճ	վճ	անվճ	վճ	անվճ	վճ	անվճ	վճ
Մագիստրատուրա								
Եվրոպական ուսումնասիրություններ	4	7	9	11	-	-	-	-

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		անվճ	վճ		
Մագիստրատուրա					
Եվրոպական ուսումնասիրություններ					
1-ին	11	-	-	5	100
2-րդ	20	-	-	1	100
Ընդամենը	31	-	-	6	100

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		անվճ	վճ		
Մագիստրատուրա					
Եվրոպական ուսումնասիրություններ 1-ին	11	-	-	3	100

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 18, այդ թվում նախորդ տարիներից՝ 0*
	մագիստրատուրա
Եվրոպական ուսումնասիրություններ	18

Կենտրոնի 2009-2010 ուստարվա գործունեության հիմնական ուղղությունները՝

- «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագրի կոորդինացում և իրականացում,
- գիտական հետազոտությունների նախաձեռնում և իրականացում եվրոպական իրավունքի, տնտեսության և քաղաքականության ոլորտներում,
- ներպետական, տարածաշրջանային և կարևորագույն ոլորտներին վերաբերող միջմասնագիտական ծրագրերի հետազոտություն, իրականացում,
- կենտրոնում գործող ռեսուրս-կենտրոնի ընդլայնում և կատարելագործում,
- եվրոպական ճանաչված համալսարանների և կենտրոնների հետ համագործակցություն:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված աշխատանքների ամփոփում

2009-2010 ուստարում Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը իրականացրել է հետևյալ միջոցառումները և ծրագրերը.

- ՀՀ-ում եվրոպական ինտեգրման գործընթացի զարգացումը տարբեր ոլորտներում ավելացրել է պահանջը Եվրոպայի վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրման նկատմամբ, և դրանով պայմանավորված՝ 2008 թ-ից սկսած կենտրոնը շարունակում է իրականացնել և կատարելագործել «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագիրը, որի շրջանակներում պատրաստվում են ուսանողներ՝ ԵՄ հաստատություններում, միջազգային կազմակերպություններում, պետական հաստատություններում և խոշոր ընկերություններում աշխատելու և փորձ ձեռք բերելու համար: Երկու տարիների ընթացքում կենտրոնում հիմնադրվել է մասնագիտական գրադարան, կապեր են հաստատվել եվրոպական ուսումնասիրություններով զբաղվող եվրոպական հեղինակավոր համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ, ինչպես նաև իրականացվել են բազմաթիվ փոխայցելություններ առաջադեմ փորձի փոխանակման նպատակով:

-Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում գործում է ԵՄ ռեսուրս կենտրոնը, որն իր կազմում ունի ԵՄ իրավունքի, տնտեսագիտության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի և պատմության ոլորտում ամենահարուստ գրադարանը: Կենտրոնը իր գործընկերների աջակցությամբ ԵՄ հեղինակավոր տպագրատների կողմից թողարկված ԵՄ ուսումնասիրությունների վերաբերյալ գրականությամբ պարբերաբար թարմացնում է գրադարանը: Այն արդեն համալրված է մոտ 1500 անուն տպագիր գրականությամբ:

-Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ընթացիկ գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում հետազոտական բաղադրիչը, որի շրջանակներում կենտրոնի փորձագետները փորձում են

համալիր հետազոտության ենթարկել ՀՀ-ԵՄ և Հարավային Կովկաս-ԵՄ ձևաչափով ընթացող համագործակցության առանձին հիմնախնդիրները: Կենտրոնի փորձագետները ՀՀ-ում առաջին անգամ իրականացվող հետազոտությունների ընթացքում օգտագործում են միջառարկայական մեթոդը, ինչը հնարավորություն է տալիս առաջադրված խնդիրները ուսումնասիրել առարկայական սահմաններից դուրս և ապահովել առավելագույն արդյունք: Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում երկու լեզուներով տպագրել է «Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերներ և հնարավորություններ» միջմասնագիտական հետազոտությունը, «ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում» միջմասնագիտական հետազոտությունը և հայերեն լեզվով «Գլոբալ ֆինանսական ճգնաժամը և դրա հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա» հետազոտությունը:

-Կենտրոնը նաև համագործակցության լայնածավալ ծրագրեր է իրականացնում եվրոպական հեղինակավոր համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ: Ծրագրի նպատակն է իրականացնել փորձի փոխանակում, ուսանողների փոխանակում, համատեղ հետազոտական ծրագրերի իրագործում, ինչպես նաև երկարաժամկետ և փոխշահավետ համագործակցություն համապատասխան հաստատությունների հետ:

2009-2010 ուստարում հրատարակված հետազոտություններ

1. *Ղազինյան Ա. Գ. (խմբագիր), Մարտիրոսյան Վ. Է. (փորձ. խմբի համակարգող), Սարգսյան Ն., Հակոբյան Ա., Սարգսյան Ա., Հայրապետյան Գ., Գևորգյան Կ., Պետրոսյան Լ., Հակոբյան Լ., Գալստյան Ն.,* «Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները» միջմասնագիտական հետազոտություն (հայերեն և անգլերեն), ԵՊՀ հրատ., Երևան, 2009,176 էջ:
2. *Ղազինյան Ա. Գ. (խմբագիր), Մարտիրոսյան Վ. Է. (փորձ. խմբի համակարգող), Հայրապետյան Գ., Ավետիսյան Դ., Գևորգյան Կ.,* «Գլոբալ ֆինանսական /նույնը տե՛ս վերևում/ ճգնաժամը և դրա հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա», «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010, 99 էջ:
3. *Ղազինյան Ա. Գ. (խմբագիր), Մարտիրոսյան Վ. Է. (փորձ. խմբի համակարգող), Գալստյան Ն., Սարգսյան Ա., Հակոբյան Ա., Հակոբյան Լ.,* «Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում» միջմասնագիտական հետազոտություն (հայերեն և անգլերեն), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010,148 էջ:

ՀՈՒՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ԳՐԱԴԱՐԱՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Հակոբյան Լևոն Գեորգիի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի հիմնական խնդիրները

Հունագիտության զարգացումը ԵՊՀ-ում:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Գիտական աշխատանքի ուղղություններն են հայերենի և հունարենի լեզվական ու գրական առնչությունները:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն-գրադարանն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Կատարվել են աշխատանքներ «Հունարեն-հայերեն բառարան»-ի (25.000 բառ) ուղղությամբ (կատարող՝ Լ. Հակոբյան):
2. Շարունակվել է աշխատանքը «Հունարենի գործնական քերականություն» ուսումնական ձեռնարկի ուղղությամբ (կատարող՝ Լ. Հակոբյան):
3. Շարունակվել է աշխատանքը «Հայերեն-հունարեն զրուցարան»-ի պատրաստման համար (կատարող՝ Լ. Հակոբյան):
4. Կենտրոնի ղեկավար Լ. Հակոբյանը 2009 թ-ի նոյեմբերի 20-21-ին «Հունարեն փոխառությունները հայերենում» խորագրով զեկուցումով մասնակցել է Աթենքում կազմակերպված և Եվրախորհրդի հովանավորությամբ իրականացվող «Դու արդեն գիտես հունարեն» ծրագրին նվիրված միջազգային գիտաժողովին:

ԵԳԻՊՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Թութունջյան դր Վարդավան Քրիստիան Անդրանիկի, փիլ. գիտ. դոկտոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Ղարիբյան Նազենի Հենրիկի, արվ. պատմ. դոկտոր, ավագ գիտաշխատող
2. Զախարյան Աշխեն Սամվելի, գրադարանավար-ասիստենտ
3. Առաքելյան Արմինե Ռուբենի, գործավար-օպերատոր

Կենտրոնի հիմնական խնդիրները

Հին Եգիպտոսի քաղաքակրթության ուսումնասիրություն և եգիպտագիտության հայկական դպրոցի հիմնադրում, Հին Եգիպտոս - Միջին Արևելք - Հայաստան մշակութային-քաղաքակրթական առնչությունների ուսումնասիրություն

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Հին Եգիպտոսի բուսաշխարհ և հնէաբուսաբանություն, հիերոգլիֆային տեքստագիտություն և լեզվաբանություն, արվեստ և արվեստի տեխնոլոգիաների ուսումնասիրություն, աստվածաբանության և պատկերագրության համեմատական հետազոտություններ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հին եգիպտական սարկոֆագների պատրաստման, նկարազարդման և տեխնիկական մշակման հետ կապված գիտական վիճահարույց խնդիրների ամբողջական տեսական ուսումնասիրությունը 21-րդ դինաստիայի սարկոֆագներից մեկի գործնական վերակազմության հիման վրա (Սարկոֆագի նախագիծ) (պետական ֆինանսավորում):	Թութունջյան դր Վարդավան Քրիստիան Անդրանիկի

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Սարկոֆագի ծրագրի վերջին՝ երրորդ տարում նախատեսված էր գիտական աշխատանքը կենտրոնացնել սարկոֆագների լաքերի բաղադրության և պատրաստման եղանակի տեսական ուսումնասիրության և փորձարարության շուրջ: Աշխատանքը գրեթե ավարտված է (մի քանի տեխնիկական մանրուքներ դեռևս պետք է ճշտվեն). այսօր մեզ հայտնի են դարձել եգիպտական լաքերի բաղադրությունը և պատրաստման եղանակը, որոնք երկուսն էլ համարվում են գիտական հայտնագործություն: Այսպիսով՝ կարելի է սկսել սարկոֆագի գիտական վերակազմությունը:

Կենտրոնի հնգամյա գիտական ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքը.

- Շարունակվել են «*Codex of Ancient Egyptian Plant Remains*» («*Հին եգիպտական բույսերի հնագիտական նյութերի գիտական տեղեկատու*») աշխատության երկրորդ հրատարակության պատրաստման աշխատանքները: Այս տեղեկատուն կենտրոնի հնգամյա գիտական ծրագրում

ներառված «*Հին Եգիպտոսի բուսաշխարհը» («Flora of Ancient Egypt»)* վերնագրով առաջին երկլեզու պատկերազարդ մեծ ձեռնարկի հիմնական մասն է կազմում:

- 2010 թ-ի մարտին լույս տեսավ *«Եգիպտագիտության առաջընթաց» («Advances in Egyptology»)* եգիպտագիտական նոր հանդեսի առաջին համարը*:*
- Հիերոգլիֆային տեքստերի ուսումնասիրության ոլորտում կատարվել է կարևոր հետազոտություն, որի արդյունքում բացահայտվել է փարավոնների հանապազօրյա սրբազան ծիսակատարության 66 գլխանի տեքստի մեկ գլխի բարդ ու բազմաբնույթ հորինվածքի գրական ոճական կառուցվածքը, որը կհրատարակվի կենտրոնի եգիպտագիտական հանդեսի հաջորդ համարում:
- Լեզվական ոլորտում կատարվել է անհավատալի բացահայտում՝ հին եգիպտերենում հնդեվրոպական կամ նախահնդեվրոպական կամ «nostratic» լեզվի շերտի գոյության վերաբերյալ:
- Համեմատական հետազոտությունների ծրագրում հաշվետու ժամանակաշրջանում սկսվել է քրիստոնեական խաչի աստվածաբանության և խորհրդաբանության եգիպտական ակունքների ուսումնասիրությունը: Հետազոտությունը շարունակվում է և կհրատարակվի եգիպտագիտական հանդեսի երկրորդ համարում:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Կենտրոնի գրադարանում հավաքվել և դասակարգվել է արդեն 2500 անուն հրատարակություն (մեծ մասը՝ էլեկտրոնային ձևաչափով):

Անգլերեն լեզվով շարունակվել է կենտրոնի երկամսյա էլեկտրոնային «AEC-Newsletter» վերտառությամբ լրաթերթի հրատարակությունը (տե՛ս կենտրոնի կայքը՝ www.a-egyptology.atspace.com կամ www.armenian-egyptology-centre.org):

2009-2010 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	5	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ղարիբյան Ն. Հ.,* La Jérusalem Nouvelle et les premiers sanctuaires de l'Armnnie : Méthode pour l'étude de l'église comme temple de Dieu. Isis Pharia, London [ISBN 0-9527827-7-4], 405 էջ:

Հոդված

1. *Թութունջյան դը Վարդավան Ք. Ա.,* Progresses and First Discoveries in the Reconstruction of the Lost Ancient Egyptian Art of Sarcophagus Making, Մեսրոպ Մաշտոց համալսարան, «Լրատու», թիվ 3 (7), Երևան, 2009, էջ 3-15:
2. *Թութունջյան դը Վարդավան Ք. Ա.,* Հին եգիպտական «բաղադրյալ միջնորդավորված լաքերը» կարելի է անվանել «կայսերական»», «Հանդէս Ամսօրեայ», թիվ 123, Վիեննա, 2009, էջ 365-374:
3. *Թութունջյան դը Վարդավան Ք. Ա.,* Snt[r] Means 'Divine/Gogly' Scent, Advances in Egyptology/Եգիպտագիտության առաջընթաց, թիվ 1, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 5-17:
4. *Ղարիբյան Ն. Հ.,* Երուսաղեմի սրբազան հատակագիծը Հայաստանում և Վրաստանում, Հրեաները Հայաստանում, Միջնադար. Հայ-հրեական առնչություններ, գիտաժողովի նյութերի ժողովածու, «Լուսաբաց» հրատ., Երևան, 2009, էջ 71-75:
5. *Ղարիբյան Ն. Հ.,* Կիրառական եկեղեցաբանություն. գիտական նոր մեթոդ քրիստոնեական տաճարաշինության ուսումնասիրության համար, «Հանդէս Ամսօրեայ», թիվ 124, Վիեննա, 2010, էջ 212-252:

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Պողոսյան Գեորգի Սամվելի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Մուրադյան Քնարիկ Էդուարդի

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում կենտրոնում գիտական աշխատանքներ են իրականացվել՝

- տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի հեռանկարային բնագավառներում,
- Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի /ՄՀՄԻ/ հետ համատեղ անցկացվել են գիտական դպրոցներ և միջազգային համաժողովներ՝ նվիրված տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի բնագավառներին,
- ՄՀՄԻ-ից և այլ միջազգային կենտրոններից հրավիրված և բարձր որակավորում ունեցող մասնագետների միջոցով ուսումնական գործընթացի կատարելագործում:

2009-2010 ուստարում կենտրոնում շարունակվել են թաքնված սիմետրիայով սուպերինտեգրվող համակարգերի հետազոտումը ինչպես հաստատուն, այնպես էլ կամայական կորությամբ տարածություններում: Ստացված են մի շարք բարձր արդյունքներ կվազի-ստույգ լուծվող մոդելներում:

Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոնը համագործակցում է ՄՀՄԻ-ի, ինչպես նաև աշխարհի հայտնի գիտական մի շարք կենտրոնների և համալսարանների հետ: Համագործակցության շրջանակներում 2010թ. հուլիսին կենտրոնի հրավերով ԵՊՀ-ում սեմինար է անցկացրել ֆիզմաթ. գիտ. թեկնածու Խաչիկ Աբրահամյանը /ՄՀՄԻ, Դուբնա/:

Կենտրոնում արտերկրի մի շարք գիտնականների հետ (Ալեքսանդր Յախնո և Յուրի Վորոբյով /Մեքսիկա/, Սերգեյ Վինիցկի և Ալեքսանդր Գուսև /Դուբնա, ՌԴ/, Վիլլարդ Միլլեր /ԱՄՆ/, Էռնեստ Կալնինս /Նոր Զելանդիա/ և այլն) կատարվել են համատեղ աշխատանքներ:

Կենտրոնը 2010թ. օգոստոսի 16-ից 22-ը Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ համատեղ «Ալեքսանդր ֆոն Հումբոլդտ» գերմանական ֆոնդի հովանավորությամբ անցկացրել է The XIV International Conference on **Symmetry Methods in Physics** (SYMPHYS-XIV) միջազգային գիտաժողովը /կազմկոմիտեի նախագահ՝ Գեորգի Պողոսյան/: Գիտաժողովին մասնակցել են ավելի քան 10 երկրների 35 ներկայացուցիչներ: Երիտասարդ զեկուցողների շրջանում հայտարարվել էր մրցույթ, որի արդյունքները ամփոփվել են գիտաժողովի ավարտին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	3	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Pogosyan G. S., Yakhno A., Lie Algebra Contractions and Separation of Variables, Three-Dimensional Sphere* Physics of Atomic Nuclei, Vol. 72, Moscow, 2009, p. 836-844.

2. *Pogosyan G. S., Kalnins E. G., Kress J. M., Miller W. Jr., Superintegrability and higher order constants for classical and quantum systems,* Physics of Atomic Nuclei, 73 (3), Moscow, 2010.
3. *Pogosyan G. S., Yakhno A.,* Lie algebra contractions on two-dimensional hyperboloids, Physics of Atomic Nuclei, 73 (3), Moscow, 2010, p. 499-508.

ԿՈՍՄՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Խմբի ղեկավար՝ *Գուրզադյան Վահագն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Խմբի աշխատակիցների կազմը

1. Սեդրակյան Արա Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր
2. Ալլահվերդյան Արմեն Էդուարդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
3. Եգորյան Գեղամ Մերուժանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
4. Խաչատրյան Հարություն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
5. Կուլոդլյան Հովհաննես Էմիլի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
6. Ղահրամանյան Տիգրան Ռազմիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
7. Միրզոյան Սերգեյ Սամվելի
8. Պողոսյան Էմիլ Էդուարդի

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ խմբում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Խմբի գործունեության ուղղություններն են՝ տիեզերական մնացորդային ճառագայթում, տիեզերքում նյութի մեծ տարածքային բաշխում, գրավիտացիոն համակարգերի դինամիկա:

Կենտրոնի հիմնական խնդիրներն են՝ աստղաֆիզիկայի և դիտողական կոսմոլոգիայի դինամիկական խնդիրների հետազոտություն, քառսային երևույթներ, բնութագրիչներ, մոդելավորում, դիտողական տվյալների մշակում:

Հաշվետու ուստարում շարունակվել է տիեզերական մնացորդային ճառագայթման քարտեզների ուսումնասիրությունը Կոլմոգորովի վիճակագրական մեթոդով: Ստացվել է մնացորդային ճառագայթման ստոխաստիկության աստիճանի բաշխման քարտեզը ըստ Կոլմոգորովի ստոխաստիկական պարամետրի՝ օգտագործելով Wilkinson Microwave Anisotropy Probe արբանյակի կողմից հինգ տարվա ընթացքում ստացված տվյալները: Ի հայտ է բերվել Սաքս-Վոլֆի երևույթի ազդեցությունը ջերմաստիճանային քարտեզների հայելային համաչափ հատկությունների վրա փոքր մուլտիպոլների դեպքում՝ ելնելով մնացորդային ճառագայթման ջերմաստիճանի բաշխման վիճակագրական հատկություններից:

Արտածվել է Կոլմոգորովի մնացորդային ճառագայթման քարտեզների կորելյացիոն ֆունկցիան, որը կարող է առնչվել նյութի մեծ տարածքային բաշխման բարիոնային օսցիլյացիաների հատկությունների հետ:

Ցույց է տրվել, որ Կոլմոգորովի բաշխումը մնացորդային ճառագայթման քարտեզներում կարող է ի հայտ բերել կետային ճառագայթման աղբյուրներ, ռադիո և գամմա՝ Ֆերմի արբանյակի կողմից դիտված՝ քվազարներ, բլազարներ, ակտիվ գալակտիկաներ:

GRAAL համագործակցության շրջանակում Եվրոպական սինքրոտրոնի (European Synchrotron Research Facility, Grenoble) տվյալներով ստացվել է լույսի արագության իզոտրոպության առ այսօր ամենաճշգրիտ սահմանը:

Վ. Գուրզադյանի ղեկավարությամբ պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն (S. Ղահրամանյան):

2008-2009 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	9	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Gurzadyan V. G., Ghahramanian T., Kashin A. L., Khachatryan H., Kocharyan A. A., Kuloghlian H., Vetrugno D., Yegorian G.,* Large scale plane-mirroring in the cosmic microwave background maps, “Astr. & Astrophys”, Volume 490, Issue 3, 2009, p. 929-932.
2. *Gurzadyan V. G., Kocharyan A. A.,* Collective relaxation of stellar systems revisited, “Astr. & Astrophys”, Volume 505, Issue 2, 2009, p. 625-627.
3. *Gurzadyan V. G., Kashin A. L., Khachatryan H. G., Kocharyan A. A., Poghosian E., Vetrugno D., Yegorian G.,* The power spectrum of the cosmic microwave background Kolmogorov maps: possible clue to correlation of voids, “Astr. & Astrophys”, Volume 506, Issue 3, 2009, p. L 37-L 40.
4. *Ghahramanyan T., Mirzoyan S., Pogosian E., Yegorian G.,* Probing the statistic in the cosmic microwave background, “Mod. Phys. Lett.”, Volume 24, 2009, p. 1187.
5. *Mirzoyan S., Poghosian E.,* Modeling the cosmic microwave background radiation as a composition of signals with Kolmogorov analysis, “Mod. Phys. Lett.”, Volume 24, Issue 15, 2009, p. 1187-1192.
6. *Gurzadyan V. G., Kashin A. L., Khachatryan H. G., Kocharyan A. A., Poghosian E., Vetrugno D., Yegorian G.,* Kolmogorov analysis detecting radio and Fermi gamma-ray sources in cosmic microwave background maps, “Europhys. Lett.”, Volume 91, Issue 1, 2010, p. 19001.
7. *Poghosian E.,* Studying the stcochasticity in the cosmic microwave background radiation, Proceed. M. Grossmann meeting on General Relativity, Vol. C., World Scientific, 2010, p. 1451.
8. *Gurzadyan V. G., Bellini V., Beretta M., Bocquet J.-P., D'Angelo A., R. Di Salvo, Fantini A., Franco D., Gervino G., Giardina G., Ghio F., Girolami B., Giusa A., Kashin A., Khachatryan H. G., Knyazyan S., Lapik A., P. Levi Sandri, Lleres A., Mammoliti F., Mandaglio G., Manganaro M., Margarian A., Mehrabyan S., Messi R., Moricciani D., Nedorezov V., Rebreyend D., Russo G., Rudnev N., Schaerf C., Sperduto M.-L., Sutera M.-C., Turinge A., Vegna V.,* A new limit on the light speed isotropy from the GRAAL experiment at the ESRF, Proceed. MG12 meeting on General Relativity, Vol. B., World Scientific, 2010, arXiv:1004.2867, p. 2236.
9. *Bocquet J.-P., Gurzadyan V.G., et al,* Limits on light-speed anisotropies from Compton scattering of high-energy electrons, “Phys. Rev. Lett.”, Volume 104, Issue 24, 2010, p. 241601.

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Ներսեսյան Արուսյակ Սերգեյի*
Մեթոդիստ՝ *Երզինկյան Աննա Վիդոկի*

Ռուսական կենտրոնը բացվել է 2008 թ. փետրվարին Երևանի պետական համալսարանի և Ռուսաստանի Դաշնության «Ռուսկի միր» հիմնադրամի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Կենտրոնը ստեղծվել է պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և բոլոր ցանկացողների ռուսաց լեզվի ուսուցմանն օժանդակելու, ռուս գրականության դասական և ժամանակակից ստեղծագործություններին, ինչպես նաև Ռուսաստանի մշակույթին, պատմությանը, արվեստին և կյանքին ծանոթանալու, հայ-ռուսական մշակութային և գիտական կապերն ընդլայնելու նպատակով:

Կենտրոնն ունի ընթերցասրահ, համակարգչային սենյակ և տեսանյութերի դիտման համար նախատեսված սենյակ՝ ապահովված համապատասխան տեխնիկական միջոցներով: Կենտրոնը հագեցած է հանրագիտարաններով, բառարաններով, հանրամատչելի և մասնագիտական գրականությամբ, ունի հարուստ տեսա- և աուդիոֆոնդ, ինչպես նաև համակարգչային ուսումնական ծրագրեր ռուսաց լեզվի ուսուցման և կատարելագործման համար: Կենտրոնում կարելի է ծանոթանալ Ռուսաստանի ԶԼՄ-ների էլեկտրոնային տարբերակներին և օգտվել ռուսական ինֆորմացիոն կայքերից:

Հաշվետու ժամանակահատվածում Ռուսական կենտրոնում անցկացվել են հետևյալ միջոցառումները.

Միջոցառում	Մասնակիցներ	Ժամկետ
1. Միջոցառում՝ «Студент русского мира»	ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի 120 ուսանող	սեպտեմբեր, 2009
2. Մոսկվայի և Պետերբուրգի մասին ֆիլմերի դիտում և քննարկում	ԵՊՀ 720 ուսանող և 300 դպրոցական	2009-2010 ուստարի
3. «Գոգոլյան օրեր» ա) Ցուցահանդես՝ նվիրված մեծ ռուս գրող Գոգոլի ծննդյան 200-ամյակին բ) Գոգոլի ստեղծագործությունների հիման վրա նկարահանված ֆիլմերի դիտում և քննարկում	ուսանողներ և դպրոցականներ	նոյեմբեր-դեկտեմբեր, 2009
4. Վիրտուալ շրջագայություն՝ «Ես եկա Էրմիտաժ» ա) «Էրմիտաժ» վավերագրական ֆիլմի դիտում բ) Կլոր սեղան՝ «Ռուսական արվեստը» թեմայով (Ռուսական արվեստի թանգարանի աշխատակիցների մասնակցությամբ)	ԵՊՀ 140 ուսանող	փետրվար, 2010
5. «Ռուսական մշակույթի օրեր համալսարանում» միջոցառման շրջանակներում կլոր սեղաններ (պատվավոր հյուրերի մասնակցությամբ) ա) «Ռուսաստանի տեսարժան վայրերը» բ) «Ռուսական գիտության և արվեստի խորհրդանիշները» գ) «Ռուսական տոները և ավանդույթները»	ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողներ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողներ ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողներ	մարտ, 2010

դ) «Նոբելյան մրցանակակիրները Ռուսաստանից»	ԵՊՀ քաղաքագիտության բաժնի ուսանողներ	
6. Միջոցառումներ՝ նվիրված ռուսական տոներին	ԵՊՀ ուսանողներ	2009-2010 ուստարի
7. «Հեքիաթների աշխարհում» խորագրով միջոցառում՝ նվիրված Անդերսենի ծննդյան հոբելյանին	Լ. Շանթի անվան դպրոցի աշակերտներ	ապրիլ, 2010
8. Կլոր սեղան՝ «Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի միջոցները» թեմայով	ԵՊՀ քաղաքագիտության բաժնի ուսանողներ	ապրիլ, 2010
9. Մեծ հայրենական պատերազմի 65-ամյակին նվիրված միջոցառումներ Ռուսական կենտրոնում (ֆիլմերի դիտում և քննարկում, գրական երեկոներ) ա) արտագնա միջոցառումներ Երևանի և մարզերի դպրոցներում բ) արտագնա հանդիպում Գավառի պետական համալսարանում գ) Մեծ հայրենական պատերազմի մեդալների և պատվոնշանների ցուցահանդես Ռուսական կենտրոնում դ) հանդիսավոր ցերեկույթ պատվավոր հյուրերի մասնակցությամբ	ԵՊՀ ուսանողներ և դպրոցականներ	ապրիլ-մայիս, 2010
10. Գրական երեկո՝ նվիրված Ֆոնվիզինին	ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանողներ	հունիս, 2010
11. Ռուսաց լեզվի դասընթացներ երեխաների համար	15 երեխա	հուլիս, 2010

Հաշվետու ուստարում Ռուսական կենտրոնի նյութերից օգտվել են 9000 դասախոս, ուսանող և դպրոցական:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ *Ստեփանյան Պերճ Գառնիկի*

Հաշվետու տարին նշանավորվել է ԵՊՀ 90-ամյակի տոնակատարությամբ: 2009թ. աշնանը մեծ շուքով նշվել է հոբելյանը, և այդ առիթով լույս են տեսել 21 անուն գրքեր, որոնց շնորհիվ ուրվագծվում և ամբողջական է դառնում հանրապետության Մայր բուհի ինքնությունը: Առանձնանում են հատկապես «Կենսագրական հանրագիտարանը» (525 անվանի դասախոսների կենսագրությունները), ԵՊՀ «Տարեգրությունը», «Երևանի պետական համալսարան» հոբելյանական գունավոր ալբոմը, Ուսանողական գիտական ընկերության հոբելյանական գիտական նստաշրջանի նյութերի հինգհատորյակը, «Գրական համալսարանի» XI հատորը և այլն:

Զգալի ֆինանսական ներդրում է կատարվել ուսումնական և գիտական հրատարակությունների համար: Հաշվետու տարում լույս են տեսել 23 դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ, ինչպես նաև 15 գիտական մենագրություններ: Ծավալային առումով հաշվետու տարում հրատարակվել է 3400 մամուլ, որն ամենաբարձր ցուցանիշն է ԵՊՀ հրատարակչության ինքնությունը պատմության մեջ:

Շարունակվել է արդյունավետ համագործակցությունը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանի հետ: Հրատարակչությունը «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայագիտական մատենաշարով» լույս է ընծայել 115-րդ հատորը (բոլորն էլ հայագիտական մեծարժեք գրքեր): Հաշվետու տարում այդ մատենաշարով հրատարակվել է 11 անուն գիրք: Պետք է առանձնացնել Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» չորս ստվարածավալ հատորների վերահրատարակությունը, Հրաչիկ Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» պատմագիտական մեծարժեք մենագրության 3-րդ հատորը, «Մատենագիրք Հայոց» մատենաշարի երկու հատորները, Հ. Մանանդյանի «Երկերի» 7-րդ հատորը և այլն:

Պետական պատվերով լույս են տեսել «Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին» ժողովածուն և ԵՊՀ վաստակաշատ դասախոս Սանդրո Սարդարյանի «Ժայռապատկերները»: Հրատարակման փուլում է «Թուրքերը թուրքերի մասին» չորսհատորյակը, որի պատմագիտական և քաղաքական արժեքը դժվար է գերագնահատել:

Հրատարակչությունը շարունակել է գրքերի նվիրատվությունը Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ կրթական հաստատություններին, զինվորական ստորաբաժանումների գրադարաններին, ինչպես նաև արտասահմանյան երկրների համալսարանների հայագիտական ամբիոններին:

Հրատարակչությունը մասնակցել է հանրապետությունում և արտերկրում կազմակերպված գրքի ցուցահանդես-տոնավաճառներին:

2010թ. հրատարակչությունը նշել է ԵՊՀ-ում գրահրատարակչական գործի 90-ամյակը: Առաջին գիրքը համալսարանում լույս է տեսել 1920թ.:

2009-2010 ուստարում հրատարակչության կողմից լույս ընծայված գրքերի ցուցակ

1. *Ավետիսյան Ա.,* Հեռուստատեսային ինքնագովազդի տիպաբանական առանձնահատկությունները
2. *Ավետիսյան Ա.,* Հեռուստատիպաբանություն
3. *Ավետիսյան Ա.,* Հեռուստածրագրերի տիպաբանություն. Հեռուստահաղորդումների դասակարգման չափանիշներ
4. *Ավետիսյան Հ. Գ.,* Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հիմնահարցեր (մենագրություն)
5. *Ավետիսյան Վ. Դ.,* Հռոմեական մասնավոր իրավունք (ուսումնական ձեռնարկ)

6. *Այվազյան Ն. Ա., Օհանյան Մ. Ս.,* Ազատ ընտրություն և հանրաքվե կազմակերպելու հնարավորությունը Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն)
7. *Ապրեսյան Մ., Բագիրյան Դ.,* Մասնագիտական անգլերեն կենսաբանների համար (դասագիրք, անգլերեն)
8. *Միարոնյան Ն. Գ. և ուրիշներ,* Կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների ժողովածու
9. *Առաքելյան Գ.,* Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ստեղծման քաղաքական, տնտեսական և իրավական նախադրյալները (մենագրություն)
10. *Ալեքսանյան Ա.,* Հայ քաղաքական և իրավական միտքը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում (3-9-րդ դդ.)
11. *Առաքելյան Ա.,* Ռադիոտեխնիկական համակարգեր (դասընթացի դասախոսությունների ժողովածու)
12. *Ապրեսյան Մ.,* Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառական ոճի հարաբերության մասին
13. *Ամիրյան Ս. Վ., Սահակյան Ս. Գ., Կարապետյան Մ. Ա.,* Նորմալ ֆիզիոլոգիայի թեստերի շտեմարան
14. Արտաքին քաղաքական տեղեկատվության վերլուծություն, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի ծրագիր (կազմող՝ Սաֆարյան Ա.)
15. Աշխարհաքաղաքական հիմունքներ (ծրագիր, կազմող՝ Աբրահամյան Հ.)
16. *Բայրամյան Հ.,* Հայ-վրացական գրական կապերի պատմությունից (ժողովածու)
17. *Բայրամյան Հ.,* Վրաց լեզու. Հնչյունաբանություն, Բառագիտություն, Ձևաբանություն (դասագիրք)
18. *Բերբերյան Ն., Եղիազարյան Է.,* Գերմաներեն (բուհական դասագիրք)
19. *Բարսեղյան Ռ.,* Սպորտային լրագրության լեզվառճական առանձնահատկությունները (մենագրություն)
20. *Բաում Վիլհելմ.* Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները. նվիրված ԵՄ-ի ընդարձակման բանավեճին (թարգմ.՝ Դորա Սաքայան, Էվելինա Մակարյան)
21. *Գագինյան Ռ. Խ.,* Բնաշխարհագրական տեսություններ (ուսումնական ձեռնարկ)
22. *Գալստյան Ա.,* Ժամանակակից հայոց լեզու. Բառապաշար (գործնական աշխատանքներ)
23. *Գալստյան Լ. Խ. և ուրիշներ,* Օրգանական քիմիայի պրակտիկայում ուսումնական ձեռնարկ (դեղագործական քիմիա մասնագիտության ուսանողների համար)
24. «Ֆրանսիական բանասիրության և ֆրանսերենի՝ որպես երկրորդ լեզվի դասավանդման արդիական խնդիրներ» խորագրով գիտաժողովի (15-16, 04, 2010թ.) զեկուցումներ
25. *Գրիգորյան Գ.,* Երկար ճանապարհից հետո (հուշերի գիրք)
26. *Գրին Է. Ա.,* Դատահոգեբանական փորձաքննություն. Հարցեր, սխալներ, պարզաբանումներ (ուսումնաօժանդակ ձեռնարկ)
27. *Գրիգորյան Հ.,* Գրական արաբերենի տեքստերի ժողովածու (ուսումնական ձեռնարկ)
28. Գիտուն Օշնարի խրատը (թարգմ.՝ Վ. Խաչատրյան)
29. *Դիլբանդյան Ս. Ա.,* Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հիմնախնդիրները քրեական դատավարությունում (գիտագործնական ձեռնարկ)
30. *Եգանյան Ա.,* Մարդկայինի որոնումը կենդանակերպի աշխարհում (Թեդ Հյուզ) (ուսումնամեթոդական ուղեցույց)
31. *Եղիազարյան Ա. Ս.,* Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն)
32. «Եգիպտագիտության առաջընթաց» հանդես
33. Եվրոպական մասնավոր իրավունք, դասընթացի ծրագիր (կազմող՝ Տ. Դավթյան)
34. ԵՊՀ ՈՒԳԸ-ի հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու (նվիրված ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին, հատոր 1, Ֆիզմաթ. գիտություններ)
35. ԵՊՀ ՈՒԳԸ-ի հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու (նվիրված ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին, հատոր 2, Բնական գիտություններ)
36. ԵՊՀ ՈՒԳԸ-ի հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու (նվիրված ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին, հատոր 3, Բանասիրություն)
37. ԵՊՀ ՈՒԳԸ-ի հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու (նվիրված ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին, հատոր 4, Իրավագիտություն, Միջազգային հարաբերություններ և քաղաքագիտություն, Պատմություն)

38. ԵՊՀ ՈՒԳԸ-ի հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու (նվիրված ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին, հատոր 5, Աստվածաբանություն, Ժուռնալիստիկա, Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, Փիլիսոփայություն, Հոգեբանություն)
39. ԵՊՀ-ի ՈՒԳԸ-ի խմբագրական խորհուրդ. «Բնօգտագործումը և բնապահպանությունը Հայաստանի Հանրապետությունում. էկոլոգիական հիմնախնդիրներ» խորագրով հանրապետական ուսանողական գիտաժողովի (31 մայիսի-1 հունիսի, 2010թ.) թեզիսների ժողովածու
40. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հիմնադրման 35-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու
41. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Գիտական հոդվածների ժողովածու»
42. «Էդգար Ալան Պոն և արդիականությունը» խորագրով գիտաժողովի նյութերի ժողովածու (հեղ. խումբ)
43. Ընտանեկան իրավունք, դասընթացի ծրագիր (կազմող՝ Տ. Դավթյան)
44. *Թամրազյան Հ.,* Երկեր, հատոր 3
45. Ժամանակակից մարտահրավերներ (ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի միջբուհական երիտասարդական գիտաժողովի նյութեր)
46. Ժամանակակից քաղաքական համակարգեր դասընթացի ծրագիր քաղաքագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանողների համար (կազմող՝ Հ. Դանիելյան)
47. Իրավաբանական հոգեբանություն դասընթացի ուսումնական ծրագիր (կազմող՝ Դ. Ս. Ամիրյան)
48. *Խաչատրյան Բ. Վ.,* Էլեկտրադինամիկայի հատուկ հարցեր (ձեռնարկ)
49. Խոլիներգիկ սինապսների վրա ազդող դեղեր (կազմող՝ Ա. Վ. Գեղչանյան, ուսումնամեթոդական աշխատանք)
50. Կիլիկիայի Հայկական թագավորության ծագումը, զարգացումը և անկումը (ծրագիր, կազմողներ՝ Առաքելյան Ս., Ալեքսանյան Վ.)
51. Կրոնական կանոնական գրականություն, հատուկ մասնագիտական դասընթացի ուսումնական ծրագիր (կազմող՝ Անուշավան եպս. Ժամկոչյան)
52. *Հովհաննիսյան Պ. Հ.,* Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես - XVIII դարի վերջ), (դասախոսությունների գիրք)
53. *Հովհաննիսյան Պ.,* Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին (ժողովածու)
54. *Հակոբյան Ք. Գ., Դերձյան Տ. Հ.,* Ջրի պարունակության որոշումը տարբեր սննդամթերքներում (ուսումնամեթոդական աշխատանք)
55. *Հայկազյանց Ա.,* Միջազգային մասնավոր իրավունք (դասագիրք)
56. Համակուրսեցի բանասերներ. 60-ականների 50-ամյակը (ժողովածու, կազմող՝ Վ. Գաբրիելյան)
57. Հարկային հարաբերությունների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, դասընթացի ծրագիր (կազմող՝ Ա. Ս. Նիկողոսյան)
58. Հոգեբանություն. Դեմքեր և փաստեր (ուսումնական ձեռնարկ, հեղ. խումբ)
59. Հայ աղանդավորության պատմություն, մագիստրոսական դասընթացի ուսումնական ծրագիր (կազմող՝ Ա. Գ. Մանուչարյան)
60. Հայ ազգային ազատագրական ձգտումները 16-18-րդ դարերում (ծրագիր, կազմողներ՝ Առաքելյան Ս., Ալեքսանյան Վ.)
61. Հայ եկեղեցին և Հայոց պետականությունը, հատուկ մասնագիտական դասընթացի ուսումնական ծրագիր (կազմող՝ Լ. Ա. Սարգսյան)
62. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (դասագիրք, 3-րդ հրատ., հեղ. խումբ)
63. *Միրզոյան Հրաչիկ Ղազարի.* Կենսամատենագիտություն (կազմող՝ Հ. Գ. Հայրապետյան)
64. Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողովի (27-29 ապրիլի, 2010թ.) թեզիսների ժողովածու
65. Հայագիտական հրատարակությունները ԵՊՀ-ում (1990-2010թթ.) (մատենագիտություն, կազմող՝ Պ. Ստեփանյան)
66. Հայագիտության արդի մարտահրավերները համացանցում (կազմող՝ Մ. Ս. Հովհաննիսյան)
67. ՀՀ աշխատանքային իրավունք, դասընթացի ծրագիր (կազմող՝ Գ. Վ. Պետրոսյան)
68. Հոգեմետ նյութեր և թմրանյութեր, ուսումնամեթոդական ձեռնարկ (կազմող՝ Գ. Ս. Մելիքյան)

69. Հուզականային ոլորտի հոգեբանություն (ուսումնական ծրագիր բակալավրիական ուսուցման դասընթացի, կազմող՝ Մ. Պ. Մկրտումյան)
70. *Ղազարյան Գ. Գ.,* Վերլուծական երկրաչափություն (դասախոսություններ, ձեռնարկ)
71. *Ղազարյան Ռ. Ս.,* Լեզվաբանական ուսումնասիրություններ (ժողովածու)
72. *Ղազարյան Ռ.,* Պատանեկության թեման գրողի գեղարվեստական համակարգում (Ջերոմ Դեյվիդ Սելենջեր-Ստեփան Զորյան) (ուսումնամեթոդական ձեռնարկ)
73. *Ղազինյան Գ. Ս., Դիլբանդյան Ս. և ուրիշներ,* Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշները ՀՀ քրեական դատավարությունում (մենագրություն)
74. *Ղարախանյան Գ. Հ.,* Քաղաքացիական կացության ակտերի գրանցում
75. *Մոլիտերնո Ջ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ.,* Իրավաբանական գիր և վերլուծություն (ուսումնական ձեռնարկ, 3-րդ հրատ.)
76. *Մաթևոսյան Հ.,* Կամավորականության սոցիո-տնտեսական արժեքի չափումը Հայաստանում (անգլերեն)
77. *Մանանդյան Հ.,* Երկեր, Է, Բանասիրական ուսումնասիրություններ (կազմող՝ Պ. Հովհաննիսյան)
78. *Մալխասյանց Ստ.,* Հայերեն բացատրական բառարան, հ. I (Ա-Ե)
79. *Մալխասյանց Ստ.,* Հայերեն բացատրական բառարան, հ. II (Զ-Կ)
80. *Մալխասյանց Ստ.,* Հայերեն բացատրական բառարան, հ. III (Հ-Ո)
81. *Մալխասյանց Ստ.,* Հայերեն բացատրական բառարան, հ. IV (Չ-Ֆ)
82. Մատենագիրք Հայոց, Ժ դար, պատմիչներ, հատոր Ժ-Ա
83. Մատենագիրք Հայոց, Ժ դար, պատմիչներ, հատոր Ժ-Ե
84. Մեղրյան Ս. Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերը (մենագրություն)
85. *Միրզոյան Հ. Ղ.,* Նարեկացիագիտական հետազոտություններ (հոդվածների ժողովածու)
86. *Միրզոյան Ք.,* Թյուրքախոս ժողովուրդների կազմավորման խնդիրները
87. *Մկրտչյան Ք.,* Վիլյամ Ֆոլքներ. Մեռնող հարավի տեսիլքը
88. *Մուրադյան Ս.,* Գրական հանգրվաններ, գիրք Գ
89. *Մովսիսյան Ա.,* Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը
90. *Նիկողոսյան Ա.,* Հարկային իրավախախտումներ (գիտագործնական վերլուծություն)
91. Նուկլեոֆիլ վերախմբավորումներ էլեկտրոնադեֆիցիտային կենտրոնների մոտ (ուսումնամեթոդական աշխատանք, կազմող՝ Գ. Գ. Թոքմաջյան)
92. Որոշման ընդունման հոգեբանություն. Տեսությունների վերլուծություն (ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղ. խումբ)
93. *Պետրոսյան Ա.,* Զայրացած երիտասարդների դրամատուրգիան
94. *Պետրոսյան Ա.,* Հարմոնիկ ֆունկցիաներ (ուսումնական ձեռնարկ)
95. *Պողոսյան Ա. և ուրիշներ,* Արաբական երկրների աշխարհագրություն (ուս. ձեռնարկ)
96. *Սաղաթելյան Ռ., Կուլախսզյան Մ.,* Հայոց լեզու և գրականություն (թեստերի ժողովածու)
97. *Սաղիյան Ա. Ս.,* Ամինաթթուների, պեպտիդների և սպիտակուցների քիմիա (դասագիրք)
98. *Սարդարյան Հ. Յ.,* Հայաստանի Հանրապետության անտառային գեոհամակարգերի տարածաժամանակային փոփոխությունները և կառավարման հիմնախնդիրները
99. *Սարգսյան Հ.,* Հնաշխարհագրական ուսումնասիրությունների մեթոդները (ուսումնական ձեռնարկ)
100. *Սարդարյան Ս.,* Ժայռապատկերներ (Հայաստանի քարի-բրոնզի դարերի ժայռապատկերները)
101. *Սեֆերյան Ս.,* Իմաստախոս Շեքսպիրը (2-րդ հրատ.)
102. *Սիմոնյան Հր.,* Ազատագրական պայքարի ուղիներում, 4-րդ հատոր
103. *Սիմոնյան Գ. Ս., Ավետիսյան Ա. Ա., Փիրումյան Է. Գ.,* Կենսածին նյութեր (ուսումնամեթոդական աշխատանք)
104. *Սիմոնյան Գ. Ս., Ավետիսյան Ա. Ա., Փիրումյան Է. Գ.,* Ջրի օրգանոլեպտիկ ցուցանիշները (ուսումնամեթոդական աշխատանք)
105. *Սիրունյան Ա.,* Պետական շահերի դատական պաշտպանությունը (առարկայի ներածություն, ուս. ձեռնարկ)
106. *Վարդանյան Ա. Վ.,* Երկրատեկտոնիկայի գործնական պարապմունքների մեթոդական ձեռնարկ
107. Տարեգիրք **Բ,** Պատմության ֆակուլտետ

108. Տվյալների կառուցվածքներ (ուսումնական ձեռնարկ, հեղ. խումբ)
109. *Փանոսյան Հ. Հ.,* Մոլեկուլային գենետիկական մեթոդների կիրառությունը մանրէների ուսումնասիրության մեջ (ուս. ձեռնարկ)
110. Քաղաքացիական իրավունք-2, դասընթացի ծրագիր (կազմող՝ Տ. Դավթյան)
111. Քամալյան Օ. Ա., Քամալյան Տ. Օ., Աղսորբենտների տեսակարար մակերեսի որոշումը գազային քրոմատոգրաֆիական եղանակով (ուսումնամեթոդական աշխատանք)
112. *Օհանյան Լ. Պ.,* Կրիմինալիստիկա (դասագիրք, 2-րդ հրատ.)
113. *Арутюнян Г. Г.,* Элементы ОТО теории Йордана - Бранса - Дикке (учебное пособие)
114. *Арутюнян В. Н., Мелкумян М. И.,* Русский язык (пособие для юридических факультетов)
115. *Айрумян Л. В.,* Пособие по развитию речи
116. *Айвазян М. К.,* Академические школы в русском литературоведении
117. *Батикян Б. Т.,* Банаховы алгебры и голоморфные функции
118. *Енгибарян В. Г.,* Методика расследования массовых беспорядков (մենագրություն).
119. *Шахбазян Р. М.,* Работы по теории и методике преподавания русского языка (в двух книгах)
120. Всесоюзные газеты о проблеме Нагорного Карабаха (1988-1991гг.) (сост. Агабабян А. С.)
121. *Хачатурян Н.,* Опыты пристального чтения (статьи о переводе и литературе)
122. *Заславская М.,* Проблема оценки социального контекста в социологическом знании

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»

«Բանբեր Երևանի համալսարանի» հասարակական գիտություններ, քառամսյա գիտական հանդեսը մինչև 2009 թ-ի դեկտեմբերի 31-ը հրատարակվել է նախկին ձևով: Ըստ այդմ՝ 2009 թ-ի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում լույս է տեսել հանդեսի տվյալ տարվա հերթական համարը [3(129)]՝ 229 էջ ծավալով:

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ՝ 2010 թ-ի հունվարի 1-ից «Բանբերը» լույս է տեսնում նույն պարբերականությամբ՝ տարեկան երեք անգամ, բայց՝ մասնագիտական վեց շարքով, որոնցից ամեն մեկն ունի կայուն համարանիշ և 5 մամուլ ծավալ: Ավելին՝ 2010 թ-ի հունվարի 1-ից «Բանբերում», հայերենից և ռուսերենից բացի, հոդվածներ են տպագրվում նաև անգլերեն, ուստի յուրաքանչյուր հոդված ունենում է երկու լեզվով ամփոփում:

Այսպիսով՝ 2010 թ-ի «Բանբերի» առաջին համարը լույս է տեսել հետևյալ ձևով.

- «Բանբեր Երևանի համալսարանի», 130.1, «Հայագիտություն»,
- «Բանբեր Երևանի համալսարանի», 130.2, «Բանասիրություն»,
- «Բանբեր Երևանի համալսարանի», 130.3, «Իրավագիտություն»,
- «Բանբեր Երևանի համալսարանի», 130.4, «Փիլիսոփայություն, հոգեբանություն»,
- «Բանբեր Երևանի համալսարանի», 130.5, «Սոցիոլոգիա, տնտեսագիտություն»,
- «Բանբեր Երևանի համալսարանի», 130.6, «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»:

«Բանբերն» ունի խմբագրական ընդհանուր խորհուրդ և գլխավոր խմբագիր, իսկ շարքերից յուրաքանչյուրն ունի նաև տվյալ շարքի խմբագրական խորհուրդ և պատասխանատու խմբագիր:

Առ 2010 թ-ի սեպտեմբերի մեկը, համաձայն սահմանված կարգի, լույս են տեսել բոլոր շարքերի 1-ին և 2-րդ համարները:

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

«Գիտական տեղեկագիր» հանդեսի բնական գիտություններ սերիան հրատարակվում է 1967 թ-ից: 2009 թ-ից, ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ, տեղեկագիրը տրոհվել է 3 հանդեսների:

2009 թ-ի երրորդ քառամսյակում լույս է տեսել.

- Գիտական տեղեկագիր (Proceedings of YSU), Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ (անգլերեն), 3-րդ համարը,
- Գիտական տեղեկագիր, Քիմիա, կենսաբանություն (հայերեն, ռուսերեն), 3-րդ համարը,
- Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն, աշխարհագրություն (հայերեն, ռուսերեն), 3-րդ համարը:

2010 թ-ին արդեն լույս են տեսել նշված 3 հանդեսների 2-ական համարներ:

2009-2010 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ www.ysu.am ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԼՐԱՀՈՍԻ

[01.09.09] **ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՊԱԳԱ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ...**
ԵՊՀ ընդունված առաջին կուրսեցիները մեր երկրի արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցեր ուղղեցին անձամբ ԱԳ նախարարին:

[01.09.09] **ԼԱՎ ՄԱՄՆԱԳԵՏ ԵՎ ԱՐԺԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՌՆԱԼՈՒ ԼԱՅՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
Կառավարության որոշմամբ՝ այս ուսումնական տարում Արեւելագիտության ֆակուլտետ ընդունվեց 138 ուսանող՝ նախատեսված 100-ի փոխարեն:

[01.09.09] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԹԸ ԴԵՊԻ ԵՌԱԲԼՈՒՐ**
«Եռաբլուրում հանգչող տղաների շնորհիվ է, որ դառը սխալների ցավից կծկվելու փոխարեն այսօր Գիտելիքի օր ենք տոնում»:

[04.09.09] **«ՌԱԶՄԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ» ՄԵԿՆԱՐԿԸ**
Պաշտպանության նախարարը Ժուռնալիստիկայի ֆակուլտետում կարդաց առաջին դասախոսությունը «Ռազմական ժուռնալիստիկա» առարկայից:

[07.09.09] **VIVAcell-Ն ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է...**
Այսօր «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողների հյուրն էր:

[09.09.09] **ԵՐԲ ՌՈՒՍԵՐԵՆ ԽՈՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳԱԼԻՍ**
Այսօր ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները նվերներ ստացան «Ռուսկի միր» ֆոնդի կողմից:

[11.09.09] **«ՎԱՐԴԱՆԱՆՔԸ»՝ ՎԱՐԴԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**
Այսօր լրացավ 17 տարի առաջ զոհված համալսարանական ազատամարտիկ՝ Վարդան Հովհաննիսյանի մահվան տարելիցը:

[12.09.09] **ԳԻՆԵՁՈՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ**
Ժուռնալիստիկայի ֆակուլտետը միանգամից երեք գրքի ծնունդ էր նշում:

[15.09.09] **ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐՈՒՄ...**
Այս տարվա հուլիս ամսին համալսարանականները միջազգային երկու օլիմպիադաներում հայտնվեցին լավագույնների շարքում: Հուլիսի 15-18-ը ԵՊՀ ուսանողները մասնակցեցին Իրանում անցկացվող ամենամյա միջազգային մաթեմատիկական օլիմպիադային, իսկ հուլիսի 25-30-ը՝ Բուդապեշտում անցկացված IMC (International Mathematics Competition) միջազգային մրցույթին:

[16.09.09] **ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ**
Այս տարի ԵՊՀ ընդունված ուսանողները սեպտեմբերի 15-ը դեռ երկար կհիշեն, քանի որ հենց այդ օրը նրանք տվեցին առաջին կուրսեցու իրենց երդումը:

[17.09.09] **ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
ԵՊՀ ուսանողներն ու շրջանավարտները աշխատանքային պրակտիկան կանցկացնեն տարբեր գերատեսչություններում ու կազմակերպություններում:

[17.09.09] **ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՊՀ-Ի ԱՀՔԵՐՈՎ**
Այսօր ԵՊՀ հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչությունը կազմակերպել էր «Համալսարանական խնդիրների լուսաբանումը հայկական ԶԼՄ-ներում» թեմայով քննարկում: Միջոցառման ընթացքում լրատվամիջոցների ներկայացուցիչներին ներկայացվեց «Երեւանի պետական համալսարանի մասին հայկական ԶԼՄ-ներում հրապարակված եւ հեռարձակված նյութերի վերլուծություն 2008 թ. սեպտեմբեր - 2009 թ. հուլիս» հետազոտությունը:

[22.09.09] **ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԸ՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**
Այս տարի լրանում է մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի 70-ամյակը: Այդ առթիվ մաեստրոյին հյուրընկալել էր ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

[23.09.09] **ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ, ԹԵ՞ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՕՐ**
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն ՀՀ անկախության 18-րդ տարեդարձին նվիրված միջոցառում էր կազմակերպել, որին հյուրընկալվել էր ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը:

[24.09.09] **ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇԱՆՍՈՆԸ՝ «ՀԱՅԵՐԵՆ»**
«Հայաստանում ես աշխարհի չափ ջերմ սրտեր եմ գտել»: Այսօրինակ տպավորություններով կիսվեց իր ֆրանկոֆոն հանդիսատեսի հետ ֆրանսիական շանսոնի հայազգի հայտնի երգչուհի Վալերի Ամբլուազը:

[24.09.09] **«ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ» ԵՊՀ ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻՆ**
ԵՊՀ ռեկտորն ու համալսարանական պատվիրակությունն այցելեցին Գյումրի, որտեղ հիմնադրման սկզբում գործել է Մայր բուհը:

[25.09.09] **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ**
Այսօր Իրավագիտության ֆակուլտետում մեկնարկեց «Քաղաքացիական օրենսդրության զարգացումը ԱՊՀ երկրներում» խորագրով գիտաժողովը:

[25.09.09] **ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալել էր հայաստանյան ԶԼՄ-ների ներկայացուցիչներին: Ասուլիսի ժամանակ ԵՊՀ ռեկտորը ամփոփեց հոբելյանական տարին, լրագրողներին տեղեկացրեց մանրամասներ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ, ներկայացրեց հոբելյանական տարվա շրջանակում հրատարակված գրքերի մի մասը:

[26.09.09] **ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿ**
Այսօր համալսարանականներն ու հանրապետության նախագահը «Աջակցություն երիտասարդ համալսարանականների բնակարանաշինությանը» ծրագրով իրականացվող նորակառույցի շինհրապարակում էին:

[26.09.09] **ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ**
Սեպտեմբերի 26-ին ԵՊՀ ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում անցկացվեց ծրագրավորման ամենամյա օլիմպիադա, որն այս տարի նվիրված էր Մայր բուհի 90-ամյակին:

[28.09.09] **ԱՎՍՏՐԻԱՑԻ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ՝ «ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍ»**
ԵՊՀ միջազգային ֆակուլտետում այսօր դասախոսություն կարդաց ավստրիացի դիվանագետ Ալֆրեդ Միսսոնգին:

[29.09.09] **ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ**
Սեպտեմբերի 29-ին ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ Մայր բուհի 90-ամյակին նվիրված գրքերի շնորհանդեսը:

[29.09.09] **ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ**
Սեպտեմբերի 29-ին Մայր բուհի 90-ամյակի կապակցությամբ ոսկե մեդալներ շնորհվեցին մի շարք համալսարանականների:

[29.09.09] **ՖՈՒՐՄԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆՑԻ. ՀԻՇԱՏԱԿԻ 17 ՏԱՐԻ**
«Զոհուեց 92-ի Սեպտեմբերի 29-ին, յատուկ առաջադրանքի ուղարկուած ուղղաթիռի վթարից նահատակուած ընկերների՝ Ժորայի, Մայիսի, Մաքսիմի հետ»:

[01.10.09] **ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ**
18 տարվա ընդմիջումից հետո կրկին իր դռները բացեց Երեւանի պետական համալսարանի պատմության թանգարանը:

[02.10.09] **ԵՊՀ-Ն ՄԱՅՐԱԲԱՐ ՀԱՄԱԽՄԲԵՑ…**
«Օրհնյալ լինի այն մարդը, ով 90 տարի առաջ մտածեց, որ պետք է ստեղծել համալսարան…»: Հոկտեմբերի 1-ին ԵՊՀ-ում գիտխորհրդի ոչ ավանդական նիստի ժամանակ քննարկվող հարցերի ու խնդիրների փոխարեն հնչում էին շնորհավորանքներ: Չէ՞ որ հայաստանյան բոլոր բուհերը հավաքվել էին նշելու իրենց «սկզբնաղբյուրի»՝ Մայր համալսարանի 90-ամյա հոբելյանը: Բուհերի ղեկավարները եկել էին շնորհավորական ուղերձներով ու նվերներով:

[02.10.09] **ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ Է ԵՊՀ ՌԵԿՏՈՐԸ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն իր աշխատասենյակում ընդունեց արտասահմանյան համալսարաններից ժամանած պատվիրակությունների ներկայացուցիչներին:

[02.10.09] **ԵՐԿՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՊՀ-ՈՒՄ**
Այսօր մեկնարկեց «Համալսարանական կրթությունը 21-րդ դարում» խորագրով միջազգային գիտաժողովը:

[03.10.09] **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՊՀ-ԱԿԱՆՆԵՐԻՆ**
Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ խորհրդի եւ գիտական խորհրդի միացյալ հանդիսավոր նիստը: ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը եւ այլ պաշտոնատար այրեր:

[03.10.09] **ՊԱՏՄՈՒՃԱՆՆԵՐՈՎ ԵՐԹ**
ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակից համալսարանի ղեկավարները, ուսանողները եւ արտերկրյա բուհերի ներկայացուցիչները երթով շարժվեցին դեպի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, որտեղ տեղի ունեցավ ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված հոբելյանական համերգը:

[03.10.09] **ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՊՀ-ԻՆ**
ԵՊՀ 90-ամյակին նվիրված միջոցառումների շքերթն ամփոփվեց տոնական մեծ համերգով, որը տեղի ունեցավ Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

[05.10.09] **ԱՄՓՈՓՎԵՑ TEMPUS ԾՐԱԳԻՐԸ**
Բարձրագույն կրթության որակի բարելավման հիմնախնդիրները քննարկվեցին ԵՊՀ-ում անցկացվող երկօրյա գիտաժողովի ընթացքում:

[05.10.09] **ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ԵՊՀ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ**
ԵՊՀ ռեկտորը համալսարանի բարեկամներից մի քանիսին պարգեւատրեց Մայր բուհի ոսկե մեդալով:

[06.10.09] **ԳԵՐՄԱՆԻԱՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ**
Այսօր ԵՊՀ-ում էին Գերմանիայի Բունդեսթագի ներկայացուցիչները, ովքեր ընտրելու են այս տարվա կրթաթոշակակիրներին:

[08.10.09] **ԱԿՏԻՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է**
«Համալսարանը շատ երկրների հետ է համագործակցում, սակայն Եգիպտոսի հետ բարեկամությունը մեր ֆակուլտետի համար անխախտ է»,- ասաց Արեւելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանը:

[09.10.09] **ԵՐԵՎԱՆԸ 2791 ՏԱՐԵԿԱՆ Է**
Այսօր ԵՊՀ-ում տոնում էին Երեւանի հիմնադրման 2791-րդ տարեդարձը:

[09.10.09] **LINGVO, FINEREADER ԾՐԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ՝ ԵՊՀ-ՈՒՄ**
ABBYY ընկերության հիմնադիր Դավիթ Յանը հաջողության հասնելու իր գաղտնիքները բացահայտեց հայ ուսանողներին:

[09.10.09] **ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ ԱՆԻՎՆԵՐԻ ՎՐԱ**
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց Հարավկովկասյան երրորդ կինոփառատոնը՝ «Ես մարդ եմ» խորագրով, որը տեւելու է 3 օր:

[10.10.09] **ԻՐԱԶԵԿՈՒՄ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
Հոկտեմբերի 10-ին ԵՊՀ փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժնում նշվեց «Հոգեկան առողջության միջազգային օրը»:

[13.10.09] **ՆԱՏՕ-Ն ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՆ Է**
Հոկտեմբերի 13-ից 15-ը ԵՊՀ գրադարանում կգործի ՆԱՏՕ-ում հայ խաղաղապահներին նվիրված լուսանկարների ցուցադրություն:

[16.10.09] **ԼԻՏՎԱ-ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ**
Հոկտեմբերի 14-18-ը Հայաստանում է Լիտվայի ակադեմիական պատվիրակությունը:

[19.10.09] **ԿՐԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ**
Կրթական տեղեկատվական ցուցահանդեսը ԱՄՆ-ում սովորելու հնարավորություն է ընձեռում:

[22.10.09] **ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՓՐԿԵԼ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ**
«Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամը դոնորագրեց նաեւ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ուսանողներին:

[23.10.09] **ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԿՏՈՒԱԼ ԵՆ**
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց «Անձի զարգացման հիմնախնդիրները» խորագիրը կրող միջազգային երկօրյա գիտաժողովը:

[27.10.09] **ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ՝ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ գրադարանի տնօրեն Աշոտ Ալեքսանյանի «Արեւմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգեր. տեսություն ու արդիականություն» գրքի շնորհանդեսը:

[27.10.09] **ԵՍ ՉԵՄ ԳՆԱՑԵԼ**
«Չէ՞ որ ես չեմ կտրվել, չեմ գնացել: Կարող եմ ասել, որ երբեմն-երբեմն Փարիզ եմ գնում, ոչ թե՝ հակառակը»,- ասում է հայտնի դերասանուհի, գրող, թարգմանչուհի, հրապարակախոս Անահիտ Թոփչյանը:

[28.10.09] **«ԱՍՊԵՏՆԵՐԸ» ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑԱՆ**
«Իրականության մեջ դուք մեր ասպետներն եք: Համաշխարհային տնտեսական դաշտում ուսումն ու գիտությունն են, որ հաղթանակ են բերում»,- ասում է «Վարդանանց ասպետներ» միության ներկայացուցիչ Սարո Խաչիկյանը:

[28.10.09] **ՄԱԿ-Ը ԳՐՔԵՐ ՆՎԻՐԵՑ ԵՊՀ-ԻՆ**
ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը ԵՊՀ ՄԱԿ-ի ավանդապահ գրադարանին մոտ 2000 միավոր գիրք նվիրեց:

[28.10.09] **ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ**
«Բնության դեմ անզոր ենք, մեր եռագույնն Իրանի Իսլամական Հանրապետությունում»: Այս արտահայտությունը Ս. Թադեի վանքը պատկերող լուսանկարներից մեկի խորագիրն էր:

[29.10.09] **ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ՝ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ**
Երեւանի պետական համալսարանն արդեն տասը տարուց ավելի է, ինչ բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար իրականացնում է վերապատրաստման դասընթացներ՝ «հոգեբանություն» մասնագիտությամբ:

[30.10.09] **ԽՈՍՈՒՄ ԷԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՎ...**
Հոկտեմբերի 29-ին ԵՊՀ ուսանողների հյուրը Բելառուսի ԱԳ նախարար Սերգեյ Մարտինովն էր:

[30.10.09] **MESI-Ն ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՀԱՅ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ**
Սկսվեց համագործակցության նոր փուլ ռուս գործընկերների հետ:
Մոսկվայի պետական տնտեսագիտության, վիճակագրության եւ ինֆորմատիկայի համալսարանի (MESI) ներկայացուցիչների եւ հայաստանյան բուհերի ռեկտորների մասնակցությամբ հոկտեմբերի 30-ին Երեւանի պետական համալսարանում քննարկվեցին ռուս-հայկական կրթական հաստատություններին վերաբերող հարցեր:

[30.10.09] **ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ 10 ՏԱՐԵԿԱՆ Է**
Այսօր Ժուռնալիստիկայի ֆակուլտետում միաժամանակ մի քանի հոբելյան էին նշում:

[31.10.09] **ԵՊՀ-ԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ՆԱԵՎ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ**
Հոկտեմբերի 31-ին Գյումրու Բայրոնի անվան համար 20 դպրոցում անցկացվեց ծրագրավորման միջբուհական օլիմպիադա՝ նվիրված ԵՊՀ 90-ամյակին:

[03.11.09] **ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**
Մասնագիտություն ընտրելու հարցում դիմորդներին օգնում են համալսարանականների կարդացած դասախոսությունները:

[03.11.09] **ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԵԽ-Ի ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**
Եվրախորհրդի երիտասարդության եւ սպորտի հարցերով տնօրենության ղեկավար Ռալֆ Ռենե Վայնգարդներին հանդիպեց ԵՊՀ ուսանողների հետ:

[03.11.09] **ԷԿՈՒՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԷՐ**
Էկոլոգիական թեմաներով դասախոսություններ ներկայացրին Նորվեգիայի Ֆրիտյոֆ Նանսենի անվան ինստիտուտի առաջատար մասնագետները:

[03.11.09] **ՀՀ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ԵՊՀ**
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հյուրը ՀՀ ոստիկանության ղեկավար անձնակազմն էր:

[05.11.09] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՆ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐԸ**
Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մի խումբ ուսանողներ մեկնաբանում են հայկական հեռուստաեթերի հեղինակային հաղորդումների որակը:

[06.11.09] **ԵՊՀ-Ն ՑՈՒՑԱԴՐՈՒՄ Է ԻՐ ՆՎԵՐՆԵՐԸ**
ԵՊՀ պատմության թանգարանի ժամանակավոր ցուցահանդեսների սրահում տեղի ունեցավ ԵՊՀ 90-ամյակին նվիրված հոբելյանական հուշանվերների ցուցահանդեսի բացման արարողությունը:

[06.11.09] **ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ ԷՐ ԽՈՍՈՒՄ ԴԵՍՊԱՆԸ**
Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Չարլզ Լոնսդեյլը հանդիպեց ԵՊՀ ուսանողների հետ:

[06.11.09] **ՖԻԶԻԿՈՄՆԵՐԻ ՀԵՏ՝ ՈՉ ՖԻԶԻԿԱՅԻ ԼԵԶՎՈՎ**
«Հայկական Stonehenge-ի առեղծվածը բացահայտված է. Քարահունջ»:
Այսօր ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի կոնֆերենց դահլիճում այս թեմայով զեկուցում կարդաց Ռուս-հայկական պետական համալսարանի դասախոս, մաթեմատիկոս Վաչագան Վահրադյանը:

[10.11.09] **ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՆԱԵՎ ՄՐՑՈՒՄ ԵՆ**
Այսօր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում անցկացվեց ֆակուլտետի 5-ամյակին նվիրված ուսանողական գիտաժողով, որի ընթացքում ներկայացված աշխատանքները կգնահատի մասնագիտական հանձնաժողովը:

[11.11.09] **ԵՊՀ-ՈՒՄ ՆՇԵՑԻՆ ՎԱՐՈՒԺԱՆԻ 125-ԱՄՅԱԿԸ**
Մեծանուն գրող Դանիել Վարուժանի ծննդյան 125-ամյակը ԵՊՀ-ում նշանավորվեց գիտական նստաշրջանով եւ թատերական հանդիսությամբ:

[12.11.09] **ՍԵՄԻՆԱՐԻ ԹԵՄԱՆ IELTS-Ն ԷՐ**
Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում անցկացվեց սեմինար՝ նվիրված IELTS քննական համակարգին:

[12.11.09] **«ՄԻ՛ ՎԱԽԵՑԵՔ ԽԵՆԹ ԵՐԵՎԱԼՈՒՑ»**
ԵՊՀ ուսանողների հետ հանդիպման ժամանակ ասաց ժամանակակից արվեստի քննադատ, ազգությամբ իտալացի Ֆրանչեսկո Գալլոն:

[13.11.09] **ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ**
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետը 5 տարեկան է:

[14.11.09] **ՔԱՐՎԱՃԱՌԻՆ ԵՊՀ-ԱԿԱՆ ՇՈՒՆՉ ՏՎԵՑԻՆ**
«Յուրաքանչյուր ծառ մի հայ ոգի է ավելացնում, մի նոր հայկական կամք, նոր հայկական շունչ այս լեռներին ու տեղի բնակիչներին»: Շահումյանի շրջանի Քարվաճառ շրջկենտրոնում ծառատունկը կազմակերպվել էր ԵՊՀ-ի եւ ԼՂՀ-ի ղեկավարության համատեղ ջանքերով: Ներկա էր նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը:

[16.11.09] **ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ Է ԱՊՀ ՄԽՎ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ**
«Հիշե՛ք, ԱՊՀ-ն ազատ առեւտրի գոտի է, հետեւաբար կառույցից դուրս գալը նշանակում է կորցնել այդ շուկան»,- նշեց ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղար Միխայիլ Կրոտովը:

[16.11.09] **ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑԻՆ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՌՈՒՍ «ԴԵՍՊԱՆՆԵՐԸ»**
ԵՊՀ ռեկտորն իր աշխատասենյակում հյուրընկալեց Սանկտ Պետերբուրգի համալսարանի արեւելյան ֆակուլտետի ներկայացուցիչներին:

[16.11.09] **ՌՈՒՍԱԿԱՆ TV-Ն ԷԿՐԱՆԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ**
«Պրոֆեսիոնալ լրագրությունը մեծ մասնագիտություն է, մեծ արվեստ ու մեծ առաքելություն»,- վստահեցրեց «Ռուսաստանյան հեռուստատեսության ակադեմիա» հիմնադրամի նախագահ, միջազգային մշակութային համագործակցության գծով ՌԴ նախագահի ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկոյը:

[17.11.09] **ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՆ**
1939 թ-ի այս օրը հռչակվեց որպես Ուսանողների միջազգային օր:

[17.11.09] **ՈՒԽ-Ն ԱՅՍՕՐ՝ ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ**
«Այսօրվա ուսանողը մեր երկրի ապագան է, եթե չասենք՝ արդեն ներկան»,- ասում է ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը Ուսանողի միջազգային օրվա կապակցությամբ «Անի» հյուրանոցում տեղի ունեցած «Ուսանողն այսօր» խորագրով ուսանողական համաժողովի ժամանակ:

[17.11.09] **ԱՅՍՕՐ ՈՒՍԱՆՈՂԻ ՏՈՆՆ Է**
ԵՊՀ մեծ դահլիճում այսօր տեղի ունեցավ «Ուսանող-2009» մրցանակաբաշխությունը՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան:

[19.11.09] **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ**
«Մեր ժամանակը շատ տարբեր ու գրեթե տարբեր չէ մեր պապերի ժամանակից»:

[20.11.09] **«ՍԱ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է, ԵՎ ՎԵՐՋ»**
Այս վեհ գաղափարի կրողն է եղել Արցախյան պատերազմի նահատակ Լեոնիդ Ազգալդյանը թե՛ մարտի դաշտում, թե՛ առհասարակ կյանքում:

[23.11.09] **ԲԱՐՁՐ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է**
««Մեր նպատակը երիտասարդների մրցունակությունը բարձրացնելն է»: ԵՊՀ շրջանավարտների եւ կարիերայի կենտրոնը ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում կազմակերպել էր երկօրյա սեմինար-պարապմունք՝ «Աշխատաշուկայի մարտահրավերները եւ դրանց արձագանքելու ուղիները» թեմայով: Մասնակցում էին ԵՊՀ բարձր կուրսերի 35 ուսանողներ եւ շրջանավարտներ:

[24.11.09] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՏԵՐ**
ԵՊՀ ուսանողները դատապարտում են մշակութային ցեղասպանությունը:

[25.11.09] **«ԻՄ ՔԱՆԴԱԿՆԵՐՆ ԻՄ ՋԱՎԱԿՆԵՐՆ ԵՆ»**
Անվանի քանդակագործ, արվեստի վաստակավոր գործիչ Լեւոն Թոքմաջյանը հանդիպեց ապագա հոգեբանների հետ:

[25.11.09] **ԵՊՀ-Ն «ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ» ԳՈԳՈԼԻՆ**
Այս տարի նշվում է ռուս մեծ գրող Նիկոլայ Գոգոլի ծննդյան 200-ամյակը:

[26.11.09] **ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ՝ ՆՈՐՈՎԻ**
Արամ Մանուկյանի գործունեությանը գնահատականներ են տալիս ուսանողները:

[27.11.09] **«ԹԱՓՎԱԾ ԱՐՅՈՒՆԸ ԵՐԲԵՔ ԱՌՈՒԾԱԽԻ ՉԻ ԵՆԹԱՐԿՎԻ»**
Այսօր ԵՊՀ աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետի զոհված ուսանող, ազատամարտիկ Մհեր Ջուլհաճյանի անվան լսարանում տեղի ունեցավ հերոսի հիշատակին նվիրված հուշ-երեկո:

[27.11.09] **ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ. ԷԴԳԱՐ ԱԼԱՆ ՊՈ**
«Էդգար Պոյին պետք է կարդալ զգուշորեն»: Ամերիկացի մեծանուն գրող Էդգար Ալան Պոյի ծննդյան 200-ամյակին նվիրված գիտաժողովի բացման արարողության ժամանակ մասնակիցներին Շ. Բոդլերի այս խոսքերին հետեւելու կոչ արեց ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Արա Առաքելյանը:

[27.11.09] **ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ**
ԵՊՀ ուսխորհրդի հերթական նիստն այս անգամ անցկացվեց Իջեւանի մասնաճյուղում:

[29.11.09] **ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ ԵՊՀ-ԻՑ**
ԵՊՀ-ում անցկացվեց բազկամարտի ներբուհական առաջնություն:

[30.11.09] **ՖԻԶԻԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑ**
Նոյեմբերի 28-ին Ֆիզիկայի ֆակուլտետում համալսարանականների եւ բարձր դասարանի աշակերտների միջեւ անցկացվեց ֆիզիկայի անհատական օլիմպիադա:

[30.11.09] **ԲԵՌԼԻՆՅԱՆ ՊԱՏ. 20 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ**
Բեռլինյան պատի փլուզման 20-ամյակի կապակցությամբ ԵՊՀ-ում բացվեց ցուցահանդես:

[03.12.09] **ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ**
Մեդալակիրներին հյուրընկալեցին ապագա ժուռնալիստները: Մարզական ժուռնալիստիկա առարկայի շրջանակներում ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների հյուրերն էին ծանրամարտի աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր Առաքել Միրզոյանը եւ բրոնզե մեդալակիր Հռիփսիմե Խուրշուդյանը:

[07.12.09] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԴՈՆՈՐ**
Երեւանի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին «Անվարձահատույց դոնորություն» ակցիային:

[08.12.09] **«ՀՈՒՅՍ ԱՐՏԱՀԱՆՈՂԸ»**
«Ամենաթանկ ու կարեւոր բանը, որ արտահանում է ԱՄՆ-ն, հույսն է»,- վստահեցնում է քաղաքագիտության պրոֆեսոր Գրեգորի Գլիսոնը:

[09.12.09] **ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԸ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում անցկացվեց ամենամյա միջբուհական գիտաժողովը:

[09.12.09] **ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ Ջոն Կիրակոսյանի 80-ամյակին նվիրված հոբելյանական նիստ:

[09.12.09] **ՓՈՐՁՈՒՄ ԵՆՔ «ՈՉ» ԱՍԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ**
Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 9-ը ՄԱԿ-ը հռչակել է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր: ԵՊՀ շրջանավարտների եւ կարիերայի կենտրոնն իր գործունեության ընթացքում իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են ԵՊՀ շրջանավարտների՝ հայաստանյան աշխատաշուկայում առավել ապահով զգալուն:

[10.12.09] **ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՅՑ ԵՊՀ**
Դեկտեմբերի 10-ին Լատվիայի Հանրապետության նախագահն այցելեց Երեւանի պետական համալսարան:

[11.12.09] **ՁՄԵՌԱՅԻՆ ԴՊՐՈՑՆ ԱՎԱՐՏՎԵՑ**
ԵՊՀ Պալեանների դահլիճում իր աշխատանքներն ամփոփեց «Բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանումը» թեմայով ձմեռային դպրոցը:

[11.12.09] **«ԻՐԱՎԱԿԱՆ» ԻՆՏԵԼԵԿՏՆ ԱՄԵՆԱՈՒԺԵՂՆ ԷՐ**
Համահամալսարանական «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղում ուժեղագույնը Իրավագիտության ֆակուլտետի թիմն էր:

[12.12.09] **ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է**
ԵՊՀ առաջին ֆակուլտետը տոնում է իր հիմնադրման 90-ամյակը:

[21.12.09] **ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ ԳՆԱՑ ԵՊՀ**
Հայաստանի Ուժային եռամարտի բաց առաջնությունում հաղթող ճանաչվեց ԵՊՀ ուսանող Արման Խաչատրյանը:

[21.12.09] **ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ 1-ԻՆ ՔԱՅԼԸ**
ԵՊՀ-ում հետազոտական նոր կենտրոն է բացվում: «Հայաստանի Հանրապետության եւ Հնդկաստանի Հանրապետության կառավարությունների միջեւ հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոն հիմնելու մասին» ծրագրի շրջանակում ստորագրվեց համագործակցության համաձայնագիր:

[21.12.09] **ՀԱՅ ՄՏՔԻ ՈՒ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ**
ԵՊՀ-ում պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի «Երիտասարդական համալսարանականներ» միավորման եւ «Սյունյաց արծիվներ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ տեղի ունեցավ Գարեգին Նժդեհի մահվան տարելիցին նվիրված միջոցառում:

[23.12.09] **ՆՇՈՒՄ ԷԻՆ ՄԻԱՆԳԱՄԻՑ ԵՐԿՈՒ ՀՈԲԵԼՅԱՆ**
ԵՊՀ պատմության ֆակուլտետը նշում էր ֆակուլտետի երկու ականավոր դասախոսների հոբելյանը՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Յուրի Սկրտումյանի ծննդյան 70 եւ հնագետ, պրոֆեսոր Ստեփան Եսայանի ծննդյան 80-ամյակները:

[25.12.09] **ԿԱՅԱՑԱՎ ԵՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ**
ԵՊՀ խորհուրդն այսօր ամփոփեց 2009 թվականը: ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հակիրճ ներկայացրեց ԵՊՀ 2009 թ-ի եկամուտների ու ծախսերի կատարողականը (հունվար-նոյեմբեր), 2010 թ-ի ֆինանսական տարվա ֆինանսների եւ ծախսերի նախահաշիվն ու ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը (2010-2014 թթ):

[28.12.09] **ԱՆՑԱԾԻ ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆԻ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ**
ԵՊՀ 7-րդ գումարման ՈՒԽ-ի ընդլայնված նիստով եզրափակվեց ուսումնական տարին:

[11.01.10] **ՏՈՆԵՐԻՆ ՀԱՋՈՐԴՈՒՄ ԵՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ-ի բոլոր ֆակուլտետներում մեկնարկեց 2009-2010 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանը:

[19.01.10] **ԲԱՔՎՈՒՄ ԿՈՏՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ...**
Բաքվում իրականացված հայերի ջարդերը դատապարտում են նաեւ ԵՊՀ ուսանողները:

[20.01.10] **ՏԵՄՊՈՒՍ IV ԾՐԱԳՐԻ 3-ՐԴ ՄՐՑՈՒՅԹԸ**
ԵՊՀ գիտխորհրդի դահլիճն այսօր լեփ-լեցուն էր: Հայաստանյան շուրջ 50 բուհերի ներկայացուցիչներ հավաքվել էին ծանոթանալու «Բարձրագույն կրթության բարեփոխումներ միջազգային համագործակցության միջոցով» խորագիրը կրող Տեմպուս IV ծրագրի 3-րդ մրցույթի պայմաններին:

[25.01.10] **ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ 18 ՏԱՐԵԿԱՆ Է**
Այսօր ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը Երեւանի պետական համալսարանում հանդիպեց բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների հետ:

[29.01.10] **ԱՅՑԵԼԵՑԻՆ ԵՌԱԲԼՈՒՐ**
Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, համալսարանականներ, մի խումբ պատգամավորներ, «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության ներկայացուցիչները հանդիսավոր երթով այցելեցին Եռաբլուր պանթեոն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Արցախյան հերոսամարտում զոհվածներին:

[30.01.10] **ԵՐԲ ՄԵՐ ԵՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԱՂՋԻԿՆԵՐԸ**
ԵՊՀ ուսանողական խորհուրդը նշում է Սուրբ Սարգսի տոնը:

[01.02.10] **ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՆ**
Գերմանիայի Բունդեսթագի «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ 2011» ծրագրի շրջանակներում հայաստանյան բուհերի երեք շրջանավարտներ հնարավորություն կունենան մասնակցելու ծրագրին:

[01.02.10] **ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ**
Մոսկվայում անցկացվող ֆորումին մասնակցել են նաեւ ներկայացուցիչներ ԵՊՀ-ից: 2005 թվականից յուրաքանչյուր տարվա հունվարի 25-ից 26-ը Մոսկվայում անցկացվում է Ուսանողական եւ երիտասարդական կազմակերպությունների լիդերների ֆորումը:

[04.02.10] **ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ԵՊՀ ՌԵԿՏՈՐԸ**
Արամ Սիմոնյանը փետրվարի 20-ին նշվելիք Մայրենիի տոնի կապակցությամբ այցելեց Նիկոլ Աղբալյանի անվան համար 19 դպրոց:

[08.02.10] **ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՄԿՍԵՑԻՆ ԱԳՆ-ԻՑ**
«Միջազգային կազմակերպություններ» դասընթացի առաջին դասն անցկացվեց Արտաքին գործերի նախարարությունում:

[10.02.10] **ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՊՀ-ՈՒՄ**
ԵՊՀ Պալեանների դահլիճում փետրվարի 26-28-ը տեղի կունենա ճապոնական իկեբանա ծաղկարվեստի և թեյախմության ցուցադրություն:

[10.02.10] **ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԱՄԵՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ**
Հանրային խորհրդի անդամները մտահոգված են հեռուստաեթերի թերություններով:

[11.02.10] **ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԷՐՄԻՏԱԺՈՒՄ**
Փետրվարի 18-ին լրանում է Էրմիտաժի բացման 158-րդ «տարեդարձը»:

[11.02.10] **«ՄԻ ԿՏՈՐ» ՉԻՆԱՍՏԱՆ ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ**
Այսօր ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի գրեթե բոլոր անկյուններից չինական երաժշտություն էր լսվում:

[15.02.10] **ԽԱՐՈՒՅԿԻ ՇՈՒՐՋ**
ԵՊՀ-ում Տեառնընդառաջի տոնը նշեցին տոնական խարույկով ու ավանդական գաթայով:

[18.02.10] **ԵՊՀ-Ն ՆՇԵՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ**
Ամեն տարի Բուն բարեկենդանի տոնին նախորդող հինգշաբթի օրը Հայ առաքելական եկեղեցին նշում է Վարդանանց հիշատակի օրը:

[19.02.10] **ԵՍ ԵԿԱ ԷՐՄԻՏԱԺ**
Էրմիտաժի գանձերն այնքան էլ անհաս չեն ԵՊՀ ուսանողներին: ԵՊՀ ռուսական կենտրոնի նախաձեռնությամբ փետրվարի 16-ից 18-ը կազմակերպվել էր «շրջագայություն» Էրմիտաժում: Չորս օրերի ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել ֆիլմերի միջոցով ծանոթանալու Էրմիտաժի պատմությանն ու գանձերին:

[19.02.10] **2010-ԻՆ ՈՒԽ-Ն ԱՇԽԱՏԵԼՈՒ Է ԱՎԵԼԻ ՄԵԾ ԵՌԱՆԴՈՎ**
Այսօր կայացավ ԵՊՀ ՈՒԽ-ի համագումարը:

[19.02.10] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱԿ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ**
Այսօր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները ՄԱԿ-ի երևանյան գրասենյակում էին:

[19.02.10] **ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼԸ ՏՈՆ Է**
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում այսօր գրեթե մասնագիտական տոն էր:

[22.02.10] **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓՎՈՒՄ ԵՆ**
Փետրվարի 20-ին ԵՊՀ-ի բակում ուսանողների փոխարեն աշակերտներ էին հավաքվել: Արդեն երկրորդ տարին է, ինչ Երեւանի պետական համալսարանի մինչհամալսարանական կրթության կենտրոնը կազմակերպում եւ անցկացնում է համահանրապետական օլիմպիադա ավարտական դասարաններում սովորող աշակերտների համար:

[22.02.10] **ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵՑ**
Ընտրվեցին ԵՊՀ ՈՒԽ նախագահը, փոխնախագահը եւ պատասխանատու քարտուղարը:

[22.02.10] **ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ**
Այսուհետ համալսարանականների աշխատանքային փոխհարաբերությունները կհամակարգվեն Կոլեկտիվ պայմանագրով:

[22.02.10] **ԵՊՀ-Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՏՆՏԵՍԱԳԵՏԻՆ**
Հայազգի տնտեսագետ Ա. Աղանբեկյանը վերլուծեց ճգնաժամի ազդեցությունը Ռուսաստանի Դաշնությունում եւ Հայաստանի Հանրապետությունում:

[24.02.10] **ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՄՍԱԳՐԵՐԻ ՏԵՍՔՈՎ**
Հումանիտար համագործակցության միջպետական ֆոնդի (ՀՀՄՖ) կազմակերպած մրցույթում ԵՊՀ գրադարանը շահել է դրամաշնորհ:

[25.02.10] **ԵՊՀ-Ն ՇԱԽՄԱՏՈՒՄ ԷԼ ԱՌԱՋԻՆԸ ՃԱՆԱՉՎԵՑ**
Խաղատախտակի մոտ մրցում են ԵՊՀ-ն եւ Հայաստանում ֆրանսիական համալսարանը:

[26.02.10] **ԿՆՔՎԵՑ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՊՀ-Ի ԵՎ ՓԱԲ-Ի ՄԻՋԵՎ**
Փորձաքննության ազգային բյուրոն անկախ փորձաքրեագիտական կառույց է, որն ստեղծվել է ՀՀ Կառավարության որոշմամբ 2005 թվականին:

[26.02.10] **ՄԵԴԱԼՆԵՐԸ «ՏԵՂ ՀԱՍԱՆ»**
2009 թվականի դեկտեմբերի 19-ին անցկացված Միջազգային մաթեմատիկական ուսանողական 5-րդ ինտերնետ օլիմպիադային մասնակցած՝ ԵՊՀ-ն ներկայացնող բոլոր ուսանողներն արժանացել էին մեդալների, որոնց պարգեւատրեց նաեւ ԵՊՀ ռեկտորը:

[26.02.10] **ՀԱՂԹՈՂՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ**
ԵՊՀ մեծ դահլիճում այսօր ավելի քան 200 աշակերտ էր հավաքվել: Անցկացվեց ԵՊՀ-ի կողմից կազմակերպվող դպրոցականների օլիմպիադայի ամփոփման եւ մրցանակակիրների պարգեւատրման արարողությունը:

[26.02.10] **ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ**
Ռուբեն Հախվերդյան. «Երանի նրանց, ովքեր ապրում են 50-ից առաջ»:

[27.02.10] **ՈՒԽ-Ն ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է**
Սումգայիթյան ջարդերի 22-րդ տարելիցի օրը ԵՊՀ ուսանողական խորհուրդն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

[03.03.10] **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՑ ՀԱԼԵՊ**
Հայ եւ սիրիացի ուսանողների փոխայցելությունները շարունակվում են:

[04.03.10] **«ԵՊՀ-ԱԿԱՆ» ՌՈԲՈՏՆԵՐԻ «ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ»**
Օրվա հերոսները ռոբոտներն էին: ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի կոնֆերենց դահլիճում համալսարանականները հյուրընկալել էին «Արմ Ռոբոտիքս» մրցույթի մենեջեր Մարիամ Նահապետյանին:

[09.03.10] **«DEUTSCHE WELLE»-Ն ՀԱՄՆՈՒՄ Է ԵՐԵՎԱՆ**
Գերմանական ալիքի մասնագետները երկու շաբաթ փորձելու են հայ լրագրողներին փոխանցել գերմանական փորձը:

[09.03.10] **ԳԻՏԱԺՈՂՈՎ 75-ԱՄՅԱ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**
Աշխարհագրության և երկրաբանության ՈՒԳԸ-ն ֆակուլտետի 75-ամյակին նվիրված գիտաժողով էր կազմակերպել:

[10.03.10] **ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ Է ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ**
Ապագա երկրաբաններն իրենց մասնագիտության ուսումնասիրությունն սկսում են Երկրաբանական թանգարանից:

[11.03.10] **ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԱՐՏՈՆՅԱԼ» ՍԵՐՆԴԻ ՀԵՏ**
ԵՊՀ-ն հյուրընկալեց ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախկին ու ներկա նախագահներին:

[11.03.10] **ԷԼԴԱ ԳՐԻՆԸ ՀԱՐԱԶԱՏ ԴՊՐՈՑՈՒՄ**
««Ինձ համար այս դպրոցի օդը, շունչը եւ ամեն ինչ շատ հարազատ են: Ուրախ եմ, որ ինձ են փոխանցվել այս դպրոցի կուլտուրան եւ այն գիտելիքները, որ մինչեւ հիմա չեն մարել»,- ասաց Էլդա Գրինը Ա. Ս. Պուշկինի անվան դպրոցի 10-րդ դասարանցիների հետ հանդիպման ժամանակ:

[12.03.10] **«ԿԱՆԱՉ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ»**
ԵՊՀ դասախոս Վահե Արսենի երկրորդ գիրքը տպագրվել է նաեւ հոլանդերեն:

[12.03.10] **ՉԱՐԵՆՑՅԱՆ «ՀԱՄՏԵՍ»**
ԵՊՀ Չարենցի դահլիճում այսօր «ֆիլմի պրեմիերա» էր: ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ ուսանողների հյուրն այսօր արձակագիր, սցենարիստ Վահրամ Մարտիրոսյանն էր: Մեծանուն գրողի ծննդյան նախօրեին կազմակերպված միջոցառման «հերոսը» Չարենցն էր: Վահրամ Մարտիրոսյանն ուսանողներին ներկայացրեց իր վերջին սցենարը, որը գրել է գրողի մասին նկարահանվող ֆիլմի համար:

[13.03.10] **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ-Ի ԵՎ ՎՊՄԻ-Ի ՄԻՋԵՎ**
Այսօր ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության պատվիրակությունը մեկնել էր Վանաձոր՝ մասնակցելու Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակի կապակցությամբ կազմակերպված հանրապետական ուսանողական գիտաժողովում ներկայացված գիտական զեկուցումների ժողովածուի շնորհանդեսին:

[15.03.10] **ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ**
«Ակտուար» ամսագիրն ակտուալ է ոլորտի մասնագետների համար:

[16.03.10] **ԲՈԼՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼԻ ԵՆ**
Եվրոպական գրեթե բոլոր երկրներում կրթական խնդիրները միատեսակ են:
«Բոլոնյան գործընթացի տասնամյակի ամփոփում. ձեռքբերումներ եւ խնդիրներ» խորագրի շրջանակներում Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանն ու Ռեկտորների խորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը լրագրողներին ներկայացրին Բուդապեշտ եւ Վիեննա կատարած այցերին վերաբերող մանրամասներ:

[17.03.10] **ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՊՀ-ԱԿԱՆՆԵՐՆ ԷԼ ՈՂՋՈՒՆԵՑԻՆ**
Ռուսական հոգեւոր պատվիրակությանը Հայաստանյայց առաքելական եկեղեցու սպասավորները դիմավորեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

[17.03.10] **ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԿԵՆԴԱՆԻ ԼԵԶՈՒ**
ԵՊՀ լեզվաբանները մտահոգված են արեւմտահայերենի վաղվա օրով:

[18.03.10] **ԿԻՐԻԼ Ա-Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ**
«Այստեղ ես ինձ զգում եմ տանը, ոչ թե ինչպես տանը»,- ԵՊՀ մեծ դահլիճում հայտարարեց Համայն Ռուսիո եւ Մոսկվայի պատրիարքը:

[18.03.10] **«VIRAGE LOGIC»-Ը ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է**
ԵՊՀ ուսանողներն այսօր ծանոթացան «Virage Logic»-ի հետ:

[22.03.10] **ԱՅՍՕՐ ՋՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՆ Է**
«Մաքուր ջուր՝ առողջ աշխարհի համար»: Այս կարգախոսի համատեքստում այսօր Թեքեյան կենտրոնում քննարկվում էին ջրային ոլորտի՝ Հայաստանում առկա բացթողումներն ու արձանագրված առաջընթացը: Կլոր սեղան-քննարկման կազմակերպիչների թվում էր նաեւ ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը:

[23.03.10] **ԵՐԵՍՈՒՆ ԵՊՀ-ԱԿԱՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ԱՆՑԵԼ**
ԵՊՀ շրջանավարտների եւ կարիերայի կենտրոնի վերջին երկու շաբաթվա աշխատանքի շնորհիվ համալսարանի 30 ուսանողներ եւ շրջանավարտներ անցել են աշխատանքի:

[23.03.10] **«ԺԱՄԱՆԱԿՆ Է ԽՈՍԵԼ ՌՈՒՍԵՐԵՆ»**
ԵՊՀ ռուսական կենտրոնը արդեն մի քանի օր անցկացնում է հանդիպում-քննարկումներ՝ «Ժամանակն է խոսել ռուսերեն» խորագրով:

[24.03.10] **ԳԱՎԱԹԸ ՄԵԿ ՏԱՐԻ ԿՊԱՏԿԱՆԻ ԻԿՄ-ԻՆ**
Երեկ ավարտվեց ԵՊՀ բասկետբոլի փոխանցիկ գավաթի առաջնությունը:

[24.03.10] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԱՄՆ-ՈՒՄ**
«Համալսարանների կառավարման աջակցության դրամաշնորհային ծրագիրը» (ՀԿԱԾ) իրականացվում է տարբեր բուհերի աշխատակիցների համար:

[25.03.10] **ԿՐԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ**
Արդեն երկրորդ տարին է, որ Մայր բուհի բոլոր ֆակուլտետների ուսանողները հնարավորություն ունեն հրաձգարանում կրակելու դասեր առնելու:

[25.03.10] **ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է**
Այսօր ԵՊՀ-ն հյուրընկալեց Վիկտոր Կրիվոպուսկովին ու Զորի Բալայանին:

[25.03.10] **«ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՍԸ» 90 ՏԱՐԵԿԱՆ Է**
Մեծանուն մանկավարժ, լեզվաբան, գիտնական Հովհաննես Բարսեղյանն այսօր դարձավ 90 տարեկան:

[26.03.10] **ԿԵՑՑԵ՛ ՖՐԱՆՍԵՐԵՆԸ. ԱՌԱ՛Ջ, ՖՐԱ՞ՆՍԻԱ**
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում Հայաստանում Ֆրանկոֆոնիայի միամսյակի շրջանակում տեղի ունեցավ ֆրանսիական երգի փառատոն:

[30.03.10] **ԲԱՐԻ ԵՐԹ ՄԱՂԹԵՑԻՆ «ԲԱՐԻ ԵՐԹ»-ՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾՆԵՐԻՆ**
Ուսանողական գրական ներուժը հավաքվել էր Մայր բուհի հարկի տակ՝ մասնակցելու գրքի շնորհանդեսի:

[31.03.10] **ԿՐԿԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԷԻՆՔ**
Մարտի 26-29-ը արդեն երկրորդ անգամ ԵՊՀ ղեկավարության եւ Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ Մայր բուհի ներկայացուցիչներն այցելեցին Լեռնային Ղարաբաղ:

[01.04.10] **ՀԱՎԱՔՎԵԼ ԷԻՆ ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում-սեմինար:

[02.04.10] **«ՄՈՐՍ ԲԱԺԱՆԵԼ ԵՄ ԻՄ ԲՈԼՈՐ ՖԻԼՄԵՐՈՒՄ»**
Ճանաչված ռեժիսոր եւ սցենարիստ Ալբերտ Մկրտչյանն այսօր ԵՊՀ ուսանողների հյուրն էր:

[06.04.10] **ՆՈՐ ՈՐԱԿ ԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԵԶՈՒՄ**
Շուրջ 4 տասնյակ բուհերի 135 ներկայացուցիչներ այսօր մասնակցեցին «Որակի ապահովման բուհական համակարգեր» թեմայով սեմինարին:

[06.04.10] **ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԼԻՆԵԼԸ ԶԵՐԾ Է ՊԱՀՈՒՄ ԹՐԱՖԻՔԻՆԳԻՑ**
Ուսանողները տեղեկատվություն ստացան թրաֆիքինգի հետեւանքով առաջացած վտանգների եւ դրանցից խուսափելու վերաբերյալ:

[06.04.10] **ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ՝ ՈՒՂԵԳԻՐ ԴԵՊԻ ՉԻՆԱՍՏԱՆ**
Հ ԵՊՀ-ում ամփոփվեցին «Չինաստանի ուղին» մրցույթի արդյունքները: Մրցույթին մասնակցում էին մի քանի տասնյակ ուսանողներ հայաստանյան տարբեր բուհերից, այն մեկնարկել էր դեռեւս 2009 թ-ին: Մրցույթին մասնակցում էր նաեւ Հայաստանում ՉԺՀ դեսպան Տիան Չանչուն:

[12.04.10] **ՄԿՍՎԵՑ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ**
Ապրիլի 12-16-ը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի կունենա միջբուհական ուսանողական գիտաժողով:

[12.04.10] **ԵՊՀ-Ն ՑԱՎԱԿՑՈՒՄ Է ԼԵՀ ԺՈՂՈՎՐԴԻՆ**
ԵՊՀ ուսանողներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին լեհական ավիավթարի զոհերի հիշատակին:

[14.04.10] **ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԸ 45 ՏԱՐԵԿԱՆ Է**
Ապրիլի 21-ին ՀՀ Ազգային հերոս, ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող-ազատամարտիկ Թաթուլ Կրպեյանը կդառնար 45 տարեկան:

[15.04.10] **ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՖՐԱՆՍԵՐԵՆԻՆ**
Խոսում են միայն ֆրանսերեն, խոսում են Ֆրանսիայի եւ ֆրանսիական բանասիրության մասին:

[15.04.10] **ՀԱՂԹՈՂՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ**
Ամփոփվել են «I Saw Thee Weep» բանաստեղծության թարգմանության մրցույթի արդյունքները:

[15.04.10] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՆ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ-ի մինչհամալարանական կրթության կենտրոնի աշխատակիցները եւ ԵՊՀ դասախոսները այցելել էին Աշտարակի համար 5 դպրոց:

[15.04.10] **«ԵՐԿՐԻ ՕՐ-2010. ՀԱՅԱՍՏԱՆ»**
Այսօր ԵՊՀ Պալեանների դահլիճում տեղի ունեցավ «Ինչպես ապրել կանաչ եւ կանգնեցնել կլիմայի փոփոխությունը» խորագրով սեմինար:

[16.04.10] **ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԷԹԻԿԱՆ ՎՏԱՆԳՎԱ՞Ծ**
Ապրիլի 15-16-ը Ժուռնալիստիկայի ֆակուլտետում անց է կացվում ֆակուլտետի ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված առաջին գիտաժողովը:

[16.04.10] **ԶԵԿՈՒՅՈՒՄ ԵՆ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ գիտաժողով:

[16.04.10] **ՆՇՈՒՄ ԵՆ ՖԻԶԻԿՈՍԻ ՕՐԸ**
ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում այսօր մասնագիտական տոն է:

[16.04.10] **«ՆՐԱ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԵՆԹՈՒԹՅԱՆ ԷՐ ՀԱՄՆՈՒՄ»**
ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ամենամեծ լսարաններից մեկն այսուհետ կրելու է Արցախյան ազատամարտի հերոս «26-ի Յուրայի» անունը:

[19.04.10] **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ**
Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցը հայ ու գերմանացի գիտնականների քննարկման օրակարգում է:

[19.04.10] **ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԵԼԸ ՊԱՐՏԱԴԻ՞Ր Է**
Ապրիլի 16-18-ը ԵՊՀ ուսանողները Ծաղկաձորում ծանոթանում էին կարիերա ստեղծելու եւ հաջողությունների հասնելու «գաղտնիքներին»:

[20.04.10] **ՍՊԱՍՎԱԾ ԴԱՍԱԳԻՐՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
«Էկոլոգիայի եւ բնության պահպանության հիմունքներ» առարկան այսուհետ ուսանողները կսովորեն մեկ ընդհանրական դասագրքով:

[21.04.10] **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**
Հայոց ցեղասպանության պատմական դասերը քննարկվեցին միջբուհական ուսանողական գիտաժողովի շրջանակներում:

[21.04.10] **ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր, ԹԱԹՈ՛ՒԼ**
Այսօր ազգային հերոսը կդառնար 45 տարեկան, սակայն նա հարազատների, ընկերների սրտերում մնացել է որպես 26-ամյա առույգ, նպատակասլաց երիտասարդ, ով զոհվեց գիտակցաբար:

[22.04.10] **117-ՐԴ ՏԱՐԸԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ Է**
Աշխարհահռչակ ֆիզիկոս Յուրի Հովհաննիսյանը հյուրընկալվեց ԵՊՀ-ում:

[23.04.10] **ԱՅՍՕՐ ՇԵՔՍՊԻՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՈՒ ՄԱՀՎԱՆ ՕՐՆ Է**
Ռոմանագերմանական ֆակուլտետում այսօր Վիլյամ Շեքսպիրին նվիրված կլոր սեղան էր կազմակերպվել:

[23.04.10] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԵՐԿՐԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**
ԵՊՀ ուսանողական խորհուրդը հայտարարություն է տարածել, որում իր աջակցությունն է հայտնում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: «Երեւանի պետական համալսարանի ուսանողական խորհուրդն իր աջակցությունն է հայտնում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի հետ կապված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ ապրիլի 22-ի ուղերձում հնչած դրույթներին»:

[24.04.10] **ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ԵՎՍ ՀԻՇՈՒՄ Է 1915 Թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻՆ**
Այսօր առավոտյան ԵՊՀ վարչակազմը եւ ուսանողներն այցելեցին Մեծ եղեռնի հուշակոթող՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու 1915 թվականի զոհերի հիշատակին:

[24.04.10] **ԵՊՀ-ԱԿԱՆՆԵՐԸ ԹԱՐՄԱՑՆՈՒՄ ԵՆ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ**
Ամեն տարի ապրիլի 24-ին Արտին լեռան վրա վառված խարույկով են կարսեցիները ողջունում իրենց Կարսին:

[27.04.10] **ԱՊՐԵԼ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՈԳՈՎ**
Այսօր լրացավ «Տիգրան Մեծ» աշխարհազորային գնդի շտաբի պետ Տիգրան Սարգսյանի ծննդյան 45-ամյակը:

[27.04.10] **300.000 ՀԱՅԵՐ ԿՐՈՆԱՓՈԽ ԵՆ ԵՂԵԼ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**
Այսօր տեղի ունեցավ թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի «Հայերի բռնի իսլամացումը Ցեղասպանության տարիներին. ընթացքը եւ հետեւանքները» գրքի շնորհանդեսը:

[27.04.10] **ԳԻՏԱԿԱՆ ԵՌՕՐՅԱ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**
Հայոց ցեղասպանության տարելիցին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողովն սկսված է:

[03.05.10] **ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄԸ**
Ախալցխայի պետական համալսարանի հետ համագործակցության առաջին քայլն արված է:

[04.05.10] **ՌՈՒՍԵՐԵՆՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ**
ԵՊՀ ռուսական կենտրոնը շարունակում է Մեծ հայրենական պատերազմի 65-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

[04.05.10] **«ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ» ԹԱՏՐՈՆ-ՍՏՈՒԴԻԱՆ 5 ՏԱՐԵԿԱՆ Է**
2005 թվականին հիմնադրված «Համալսարանական» թատրոն-ստուդիան սկզբում գործել է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ի կազմում:

[05.05.10] **ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԵՏ ՃԱԿԱՏԱԳՐՈՎ ԿԱՊՎԱԾՆԵՐԸ**
«Եռատոնի» նախօրեին ԵՊՀ-ում հավաքվեցին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, համալսարանականները եւ վետերանները:

[07.05.10] **ԶՐՈՒՅՑ ՕՐԵՆՔԻ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ**
Այսօր ապագա իրավաբանների ու դիվանագետների հյուրն էր Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանը:

[10.05.10] **ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**
Մայիսի 7-ին Թբիլիսիում մեկնարկեց «Հանդուրժողականությունը՝ որպես համագործակցության նախապայման» թեմայով հայ-վրացական գիտաժողովը:

[10.05.10] **ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՇՈՒՇԻՆ 18 ՏԱՐԵԿԱՆ Է**
Մայիսյան հաղթանակներից անմասն չմնացին նաեւ համալսարանականները: Այսօր Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողները կազմակերպել էին համերգ՝ նվիրված Շուշիի ազատագրման 18-ամյակին:

[10.05.10] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՈՐՈՒՄ ԵՊՀ-Ի ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ**
Այս անգամ հանդիպման վայրը Բելառուսի մայրաքաղաք Մինսկն էր: Այս տարվա սկզբին Մոսկվայում ԱՊՀ տարածաշրջանի երկրների երիտասարդական, ուսանողական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները համաձայնության էին եկել այն մասին, որ բոլոր երկրներում պետք է մեծ շուքով նշվի Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակը:

[10.05.10] **«ՕՐՀՈՒՍ» ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՎԱՂՎԱ ՕՐԸ**
«Օրհուս» կենտրոնների համակարգողները մինչ օրակարգային թեմաներին անդրադառնալը քննարկեցին իրենց համար օրակարգային խնդիրներ:

[10.05.10] **ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ ՊԱՏՐԱՍՏ Է**
ԵՊՀ գրադարանի նախաձեռնությամբ համալսարանականներին ներկայացվեց ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Սաղիյանի հեղինակած «Ամինաթթուների, պեպտիդների եւ սպիտակուցների քիմիա» բուհական դասագիրքը:

[11.05.10] **ԳԻՏԱԿԱՆ 5-ՀԱՏՈՐՅԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ**
ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության ջանքերով հրատարակվեց հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների 5 հատորանոց ժողովածուն:

[11.05.10] **ՆՇՎԵՑ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ 65-ԱՄՅԱԿԸ**
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «Великая отечественная война-память сердца» խորագրով միջոցառում:

[12.05.10] **ՏԻԳՐԱՆ ՄԵԾԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ**
Երեւանի պետական համալսարանում մեկնարկեց Տիգրան Մեծի ծննդյան 2150-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

[13.05.10] **ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԹԻՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է**
Իրավագիտության ֆակուլտետի «ԵՊՀ-2» թիմը սահմանադրական իրավունքի օլիմպիադայի քառակի հաղթողն է:

[13.05.10] **CEU-ԻՆ ԸՆԴԱՌԱՋ**
ԵՊՀ-ականները ծանոթանում են Կենտրոնական եվրոպական համալսարանին:

[13.05.10] **ՄԵԾ ՀԱՅԱՍԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**
Այսօր լրանում է Ֆրիտյոֆ Նանսենի մահվան 80-րդ տարելիցը:

[17.05.10] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ**
Քրեական դատավարության արդի հիմնախնդիրներով մտահոգված են իրավաբան ուսանողները:

[18.05.10] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԸՆՏՐԱՆԻՆ**
«Լավագույն ուսանող-2010» ամենամյա մրցանակաբաշխությունն անցկացվեց ԵՊՀ հիմնադրման 91-ամյակի օրը:

[19.05.10] **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԽՐԱԽՈՒՄՎԵՑԻՆ**
«Երիտասարդների գիտատեխնիկական եւ գիտահետազոտական նախագծերի ամենամյա մրցույթ»-ի հաղթողները պարգեւատրվեցին:

[01.06.10] **ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ՓՈՒԼ**
Վոլգոգրադի եւ Երեւանի պետական համալսարաններն առաջիկա տարվա ընթացքում կիրականացնեն համատեղ ծրագրեր:

[02.06.10] **ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ Է**
ԵՊՀ շրջանավարտների եւ կարիերայի կենտրոնը խրախուսում է ուսանող կամավորների գործունեությունը:

[04.06.10] **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՆ ԱՎԱՐՏՎԵՑ**
Այսօր ՈՒԳԸ-ականները ամփոփում էին անցած աշխատանքային կիսամյակը:

[07.06.10] **ՆՐԱՆՔ ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԵՆ**
Հունիսի 5-ին մի խումբ ուսանողներ այցելեցին Երեւանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն:

[07.06.10] **ՀԱՂԹԵՑԻՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԸ**
Փոխանցիկ գավաթը մեկ տարի կմնա Իրավագիտության ֆակուլտետում:

[09.06.10] **ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ**
ԵՊՀ-ում մեկնարկեց սոցիալական նոր ծրագիր: Երեւանի պետական համալսարանի Արհեստակցական կազմակերպության նախագահի առաջարկով եւ Արհկոմիտեի 07.06.2010 թվականի նիստի որոշմամբ՝ համալսարանի հաստիքային աշխատողներին առաջին երեխայի ծնվելու կապակցությամբ այսուհետ ԵՊՀ Արհկոմիտեի բյուջեից տրամադրվելու է միանվագ դրամական աջակցություն 35 հազար դրամի չափով:

[10.06.10] **ՄԻ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔ ԵՊՀ-ՈՒՄ ԵՎ ԵՊՀ-Ի ՀԱՄԱՐ**
«Գրիշա Ալեքսանովիչը կարող է վստահորեն ասել, որ իր կյանքը ստացվել է, ապրած տարիները իզուր չեն եղել»,- պնդում են նրան ճանաչողները:

[15.06.10] **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ընդունեց Ռոստոկի համալսարանի քիմիայի ինստիտուտի օրգանական քիմիայի բաժնի վարիչ Պետեր Լանգերին:

[15.06.10] **ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՆՈՒՄ Է ԵԳԻՊՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**
«Հայաստանի եւ Եգիպտոսի պատմությունները երբեմն հատվում են եւ շատ նմանություններ ունեն»: Այսպես ասաց ՀՀ-ում Եգիպտոսի արտակարգ եւ լիազոր դեսպան Վահիդ Էլ Դին Իսմայիլ Ջալալը ԵՊՀ կատարած այցելության ժամանակ:

[16.06.10] **ԵՊՀ-Ն ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ Է**
«Որակի ապահովման գործիքներ միջազգայնացման կառավարման համար» ծրագրի շրջանակներում ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է եվրոպական գործընկեր համալսարաններում անցկացված երկշաբաթյա ուսուցողական դասընթացներին:

[19.06.10] **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ**
Այսօր Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանը եւ Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ռեկտոր Նիկոլայ Կրոպաչյովը ստորագրեցին համագործակցության ծրագիր:

[22.06.10] **ՏՊԱԳՐՎԵԼ Է ՍՊԱՍՎԱԾ ԺՈՂՈՎԱԾՈՒ**
ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի նախաձեռնությամբ տպագրվել է Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունքի իրավական ակտերի ժողովածուի 3-րդ լրամշակված տարբերակը:

[24.06.10] **ԵՐԿՈՒ ՀՈԲԵԼՅԱՆ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**
Այսօր լրանում է ԵՊՀ դասախոս, պրոֆեսոր Նորայր Բեյլերյանի 80 եւ Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տարիել Ղոչիկյանի 60-ամյակները:

[25.06.10] **ՄԻ ԱՄԲՈՂՋ ԱԶԳԻ «ՀՈՒՇԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ»**
ԵՊՀ Երկանյանների անվան լսարանում այսօր տեղի ունեցավ Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» գրքի շնորհանդեսը:

[29.06.10] **ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**
Մայր բուհն այսօր համախմբեց հանրապետության կարիերայի ոլորտի մասնագետներին:

[29.06.10] **ԵՊՀ-Ն ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ԱՇՔԵՐՈՎ**
ԵՊՀ ռեկտորն այսօր հյուրընկալեց Սանկտ Պետերբուրգի լրագրողների պատվիրակությանը:

[30.06.10] **ԵՊՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**
Հանրությանն է ներկայացվում ԵՊՀ 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները:

[30.06.10] **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԵՏՆԵՐ՝ ԱՅՍՈՒՀԵՏ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄՈՎ**
Այսօր Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մագիստրանտները ստացան իրենց՝ մագիստրոսի որակավորումը հավաստող փաստաթղթերը:

[01.07.10] **«ԵՍ ՇԱՏ ԲԱԽՏԱՎՈՐ ԵՄ, ԳԻՏԵ՞Ք»**
ԵՊՀ-ում նշվեց մեծանուն դերասանուհի Լեյլի Խաչատրյանի ծննդյան 80-ամյակը:

[06.07.10] **ԿԱՍՈՒՐՋ-ՖՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՄՓՈՓՈՒՄ**
Հայկական վիրտուալ համալսարանը հունիսի 2-ին ամփոփեց իր աշխատանքային առաջին տարին:

[08.07.10] **ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ**
Հուլիսի 12-15-ը Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում կանցկացվի միջազգային կոնֆերանս՝ նվիրված հետխորհրդային երկրների հիմնախնդիրներին:

[13.07.10] **ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԹԵՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ**
Հուլիսի 2-ից 9-ը համալսարանականները Ուկրաինայում մասնակցեցին Ամառային միջազգային տնտեսագիտական դպրոցին:

[22.07.10] **ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**
Չեխիայի Հանրապետության բուհերում կարող են սովորել նաեւ ԵՊՀ ուսանողները:

[23.07.10] **ՄՐՑՈՒՅԹ ԱՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Մոսկվայի էկոնոմիկայի բարձրագույն դպրոցը հայտարարում է լավագույն գիտահետազոտական աշխատանքների մրցույթ:

[19.08.10] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԳՈՐԾԻ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ**
ԵՊՀ-ում բացվեց Ղազախական լեզվի, պատմության եւ մշակույթի կենտրոն:

[30.08.10] **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՊՀ-Ի ԵՎ Գ. ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ**
Այսօր Գալուստ Կյուլպենկյան ֆոնդի եւ Երեւանի պետական համալսարանի միջեւ ստորագրվեց պայմանագիր 2010-2011 թվականների համար: